ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոս Իգնատի Բրյանչանինով

Մաս Առաջին

Ռուսերենից թարգմանեց Գայանե Թերզյանը

Խմբագիր Աշոտ Արևշատյան

Աշակերտ – Տո՛ւր պատրանքի մասին ճշգրիտ և մանրամասն բացատրություն. ի՞նչ է նշանակում պատրանք:

Ծեր – Պատրանքը ստի հետևանքով մարդկային բնության խեղումն է: Բոլոր մարդիկ, առանց բացառության, միանշանակ գտնվում են պատրանքի մեջ՝ մեր նախահայրերի անկման հետևանքով: Մենք բոլորս ինչ որ չափով պատրանքի մեջ ենք և դրա գիտակցումը ամենալավ պահպանումն է պատրանքից: Ամենամեծ պատրանքը ինքդ քեզ պատրանքից լիովին ազատ համարելն է: Մենք բոլորս էլ խաբված ենք՝ գտնվելով հմայքի և մոլորության մեջ և կարիք ունենք ազատագրվել ճշմարտության միջոցով: Իսկ ճշմարտությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է: Յուրացնենք այդ ճշմարտությունը Նրա հանդեպ հավատով, աղոթքով աղաղակենք այդ ճշմարտությանը և Նա մեզ դուրս կբերի ինքնահմայության անդունդից և դիվական խաբկանքից: Ցավալի է մեր վիճակը. այն զնդան է, որից մեր հոգիների ազատագրման համար մենք աղոթում ենք, քանզի «Մեր օգնությունը Տիրոջ անունից է» (Սղմ. 123:8): Սա այն մռայլ երկիրն է, ուր գահավիժել է մեր կյանքը՝ մեզ նախանձող և հալածող թշնամու կողմից: Այն մարմնավոր իմաստություն է և մոլորված բանականություն, որով վարակված է ամբողջ աշխարհը, որ չընդունելով իր հիվանդությունը՝ իրեն պատկերացնում է կատարյալ առողջ: Այն մարմին ու արյուն է, որ Աստծո թագավորությունը ժառանգել չի կարող (Ա Կորնթ. 15:50): Այն հավիտենական մահ է, որը ոչնչացվում է Տեր Հիսուսի կողմից, Ով «հարությունն է և կյանքը» (Հովհ. 11:25): Այսպիսին է մեր վիճակը, այն ճանաչելը մեզ համար լացի նոր առիթ է: Լացով աղաղակենք Տեր Հիսուսին, որպեսզի Նա մեզ դուրս բերի բանտից, երկրի անդունդներից, դուրս քաշի մահվան ճիրաններից: «Մեր Տեր Հիսուս Քրիստոսը, - ասում է Սիմոն Նոր Աստվածաբանը, - իջավ մեզ մոտ, որովհետև ցանկացավ ազատել մեզ գերությունից և երկրային պատրանքից»:

Աշակերտ – Այս բացատրությունը ինձ լիովին հասկանալի չէ, կարիք ունեմ ավելի պարզ բացատրության՝ ավելի հարիր իմ ընկալմանը:

Ծեր – Մարդկային ցեղի կործանման միջոց հանդիսացավ ընկած հրեշտակի կողմից գործածված զենքը՝ սուտը (Ծննդ. 3:13): Այդ պատճառով Աստված սատանային սուտ կոչեց. «ստի հայր է և ի սկզբանէ մարդասպան» (Հովհ. 8:44): Ստի մասին հասկացողությունը Տերը սերտորեն կապեց մարդասպանության գաղափարի հետ, որովհետև վերջինս պարտադիր հետևանք է առաջինի: «Ի սկզբանէ» բառը ցույց է տալիս, որ սուտը հենց սկզբից դևի համար ծառայել է որպես զենք մարդասպանության՝ մարդու կործանման համար: Չարիքի սկիզբը կեղծ միտքն է, ինչը և հանդիսանում է ինքնահմայության և դիվային պատրանքի աղբյուր: Ստի միջոցով դևը հավիտենական մահվամբ հարվածեց մարդկության բուն արմատին՝ նախահայրերին: Մեր նախահայրերը պատրվեցին (պատրվել՝ նշանակում է պատրանքի մեջ ընկնել), այսինքն՝ սուտը ճշմարտության դիմակի տակ ընդունելով, վնասեցին իրենց անբուժելի մահաբեր մեղքով, ինչը հաստատեց նաև մեր նախամայրը. «Օձը խաբեց ինձ, - ասաց նա, - և ես կերա» (Ծննդ. 3:13): Այդ ժամանակից ի վեր մեր բնությունը, չարության թույնով վարակված, կամա թե ակամա ձգտում է դեպի չարը՝ այն դնելով բարու տեղ և զգալով հաճույք աղավաղված կամքից, խեղաթյուրված բանականությունից, սրտի այլասերված զգացումներից: Կամա, որովհետև մեր մեջ դեռևս կա բարին ու չարը ընտրելու ազատության մասունք. ակամա, որովհետև ազատության այդ մասունքը չի գործում որպես լիարժեք ազատություն, այն գործում է վնասատու մեղքի անքակտելի ներգործությամբ: Մենք

ծնվում ենք այդպիսին: Մենք չենք կարող այդպիսին չլինել, որովհետև բոլորս էլ, առանց բացառության, գտնվում ենք ինքնահմայության և դիվական պատրանքի մեջ. բարու և չարի հետ մարդկանց հարաբերության այս վիճակից, որը միանշանակ վերաբերում է բոլորին, բխում է պատրանքի մասին հետևյալ սահմանումը, ինչը բավարար պարզաբանում է այն. «Պատրանքը՝ ստի մեջ մարդու հաստատվելն է, երբ նա այն ընդունում է որպես ճշմարտություն»: Պատրանքը նախ ազդում է մտքի գործունեության վրա՝ աղավաղելով այն, ինչը անմիջապես հաղորդվում է սրտին, որն իր հերթին աղավաղելով սրտի զգացողությունը, ապա գրավելով մարդու էությունը՝ տարածվում է նրա ամբողջ գործունեության մեջ, թունավորում բուն մարմինը, ինչը Արարչի կողմից անքակտելիորեն կապված է հոգու հետ: Պատրանքի վիճակը կործանման կամ հավիտենական մահվան վիճակ է:

Մարդու անկումից ի վեր սատանան հնարավորություն ստացավ մշտապես ազատորեն մերձենալ նրան: Այդ մոտեցման իրավունքը սատանան ունի, քանզի նրա իշխանությանը և նրան հնազանդվելուն մարդն իրեն ենթարկեց կամովի՝ մերժելով Աստծուն հնազանդվելը: Աստված թողություն տվեց մարդուն: Թողություն ստացած մարդուն ազատություն տրվեց ենթարկվել կամ Աստծուն կամ սատանային, իսկ որպեսզի այդ ազատությունը գործի ոչ պարտադրաբար, թույլ տրվեց սատանային՝ մոտենալ մարդուն: Շատ բնական է, որ սատանան բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի մարդուն պահի իր հետ նախկին հարաբերության մեջ և նույնիսկ ավելի ցածր ստրկության ենթարկի: Դրա համար նա գործադրում է իր նախկին և մշտական զենքը՝ սուտը: Նա ջանում է գայթակղել և խաբել մեզ՝ օգտվելով մեր ինքնահմայված վիճակից: Մեր կրքերը՝ այդ հիվանդագին հակումները, նա շարժման մեջ է դնում, դրանց կործանարար պահանջները շպարում է բարեպաշտությամբ և զորացնում է կրքերին հագուրդ տալու ցանկությունը: Աստծո Խոսքին հավատարիմները իրենց թույլ չեն տալիս բավարարել այդ, նրանք սանձում են կրքերը և ետ են մղում թշնամու հարձակումները (Հակ. 4:7): Ավետարանի առաջնորդությամբ դիմակայելով սեփական ինքնահմայվածությանը, սանձահարելով կրքերը, դրանով իսկ կամաց – կամաց ոչնչացնելով ընկած ոգիների ազդեցությունն իր վրա, նա հետզհետե դուրս կգա պատրանքի վիճակից դեպի ճշմարտության և ազատության ոլորտ (Հովհ. 8:32), ինչի լիություն տրվում է Աստվածային շնորհի միջոցով: Քրիստոսի ուսմունքին անհավատարիմը հետևելով իր կամքին և բանականությանը, ենթարկվում է թշնամուն և ինքնահմայությունից անցնելով դիվային պատրանքի՝ կորցնում է իր ազատության մնացորդները ու մտնում սատանայի կատարյալ ենթակայության տակ: Տարբեր կերպով է արտահայտվում դիվային պատրանքի ներգործությունը մարդկանց վրա. դա համապատասխանում է այն կրքին և տվյալ կրքի աստիճանին, որից մարդը հմայված է ու գերված, և ինչ չափով որ մարդը ստրկացած է տվյալ կրքին: Բայց բոլոր նրանք, ովքեր ընկել են դիվային պատրանքի ազդեցության տակ, սատանայի հետ հարաբերության մեջ մտնելով և նրան ստրկանալով, հաստատվում են պատրանքի մեջ՝ դառնալով դևերի համար տաճար և զենք, հավիտենական մահվան զոհեր, դժոխքի բանտախցերի համար նախատեսված կյանքեր:

ՀՈԳԵՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՎՈՐ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանականը պետք է չափազանց զգույշ լինի մարմնավոր և շնչավոր նախանձախնդրությունից, ինչը արտաքնապես բարեպաշտության կերպարանքով է հանդես գալիս, իսկ ըստ էության այն անխոհեմ է և հոգեկործան: Աշխարհիկ մարդիկ և շատ վանականներ իրենց անգիտության պատճառով շատ են գովաբանում այդպիսի նախանձախնդրությունը՝ չհասկանալով, որ դրա բուն աղբյուրները

մեծամտությունն ու հպարտությունն են: Այդ նախանձախնդրությունը նրանք մեծարում են որպես հավատից բխող նախանձախնդրություն՝ համարելով եկեղեցու և Աստծո կամքին համահունչ բարեպաշտություն: Այն պարունակում է շատ թե քիչ չափով դաժան դատապարտում և մերկացում մերձավորներին՝ նրանց գործած բարոյական սխալների համար, դատապարտում և մերկացնում է նաև եկեղեցու բարեվայելչության ու աստիճանակարգի դեմ գործած նրանց մեղանչումները: Նախանձախնդրության մասին կեղծ գաղափարներով խաբվելով՝ անխոհեմ նախանձախնդիրները մտածում են, որ տրվելով դրան՝ կնմանվեն սուրբ հայրերին և նահատակներին, մոռանալով, որ իրենք՝ նման նախանձախնդիրները, սրբեր չեն, այլ՝ մեղավորներ: Եթե սրբերը մերկացրել են մեղավորներին և անօրեններին, ապա մերկացրել են Աստծո հրամանով, ըստ իրենց պարտականության, ոչ թե իրենց կրքերի և դևերի, այլ Սուրբ Հոգու ներշնչմամբ: Իսկ ով որոշում է ինքնակամ մերկացնել կամ նկատողություն անել եղբորը, նա հստակ ապացուցում է, որ, մերկացնելով նրան՝ իրեն համարում է խելամիտ և առաքինի, ինչը ցույց է տալիս, որ սա գործում է կրքերից և դիվային խորհուրդներից մղված: Պատշաճ է հիշել Փրկչի պատվիրանը. «Ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես տեսնում. կամ ինչպես քո եղբորն ասում ես՝ թող որ հանեմ այդ շյուղը քո աչքից, և ահա քո աչքում գերան կա: Կեղծավոր, նախ հանիր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7: 3-5): Ի՞նչ է նշանակում գերանը: Դա մարմնավոր իմաստությունն է, հաստ՝ ինչպես գերանը, որը զրկում է տեսողական ուժի բոլոր միջոցներից ու կանոններից, ինչը Արարչի կողմից տրվել է սրտին ու մտքին: Մարմնավոր իմաստությամբ առաջնորդվող մարդը երբեք չի կարող ճիշտ դատել ո՛չ իր ներքին, և ո՛չ էլ մերձավորների վիճակի մասին: Նա իր և մյուսների մասին դատում է այնպես, ինչպես պատկերացնում է ինքն իրեն, ինչպես պատկերացնում է մերձավորին՝ դատելով արտաքինից, ըստ իր մարմնավոր սխալական իմաստության, այդ պատճառով Աստծո Խոսքը ճշմարտացիորեն նրան «կեղծավոր» է կոչում: Քրիստոնյան Աստծո Խոսքով և Աստծո Հոգով բժշկվելուց հետո է ստանում ճշմարիտ ընկալում իր և մերձավորի հոգևոր վիճակի կարգավորման վերաբերյալ: Մարմնավոր իմաստությունը գերանով հարվածելով մեղանչող մերձավորին՝ մշտապես խռովեցնում է նրան, հաճախ՝ կործանում, երբեք օգուտ չի տալիս և չի կարող տալ, և բնավ որևէ ազդեցություն չի ունենում մեղքի վրա: Դրան հակառակ, հոգևոր իմաստությունը գերազանց գործում է մերձավորի հոգևոր տկարության վրա՝ փայփայելով, բժշկելով և փրկելով նրան: Արժե նշել, որ հոգևոր բանականություն ձեռք բերելու դեպքում մերձավորի թերություններն ու սխալները սկսում են շատ չնչին թվալ՝ որպես Փրկչի կողմից քավված և ապաշխարության միջոցով դյուրությամբ բժշկվող, և դրանք հենց այն սխալներն ու թերություններն են, որոնք մարմնավոր բանականությամբ թվում էին անսահման մեծ և կարևոր: Ակնհայտ է, որ մարմնավոր իմաստությունը, ինչը լինելով հենց բուն գերանը, դրանց այդքան հսկայական նշանակություն էր տալիս: Մարմնավոր իմաստությունը մերձավորի մեջ տեսնում է նաև այնպիսի մեղքեր, ինչպիսիք նա ընդհանրապես չի գործել. այդ պատճառով էլ անզգուշորեն հրապուրվելով նման նախանձախնդրությամբ՝ սրանք հաճախ ընկել են մերձավորին զրպարտելու մեջ և մերժված հոգիների համար դարձել զենք ու խաղալիք: Սուրբ Պիմեն Մեծը պատմում էր, որ մի վանական նախանձախնդրությունից հրապուրված՝ ենթարկվում է հետևյալ փորձության. «Նա տեսավ մի վանականի՝ կնոջ հետ պառկած, և երկար պայքարեց խորհուրդների դեմ, որոնք ստիպում էին նրան՝ սաստել մեղսագործներին, և վերջապես պարտվելով՝ նրանց ոտքով հրեց և ասաց. «Դադարե՛ք, վերջապես»: Այդ ժամանակ պարզվեց, որ դրանք ընդամենը խոտի երկու խուրձեր էին»: Սուրբ Աբբա Դորոթեոսը պատմում էր, որ հայր Սերիդի վանքի հանրակացարանում բնակվելու ժամանակ մի եղբայր զրպարտեց մի ուրիշ եղբոր՝ բռնված լինելով անմիտ նախանձախնդրությամբ, ինչը միշտ ուղեկցվում է կասկածամտությամբ և ընդունակ է դարձնում հորինվածքների: Մեղադրողը ամբաստանյալի հանդեպ մեղադրանք էր ներկայացնում, որ նա առավոտ

կանուխ այգուց թուզ է գողացել և կերել. վանահոր կատարած հետազոտությամբ պարզվեց, որ զրպարտվողը այդ առավոտյան վանքում ընդհանրապես չի էլ եղել, այլ գտնվել է հարևան գյուղերից մեկում, ուր նրան ուղարկել էր տնտեսը, և վանք է վերադարձել միայն այն ժամանակ, երբ վերջանում էր Սուրբ և Անմահ Պատարագը (Աբբա Դորոթեոսի 9 – րդ ուսուցումից): Եթե ցանկանում ես լինել ուղղափառ Եկեղեցու հավատարիմ և նախանձախնդիր զավակ, ապա հասի՛ր դրան՝ մերձավորին վերաբերվող ավետարանյան պատվիրանները պահելով: Մի՛ համարձակվիր մերկացնել և սովորեցնել նրան, մի՛ համարձակվիր դատապարտել և հանդիմանել նրան. դրանք հավատքի գործեր չեն, այլ՝ անխոհեմ նախանձախնդրության, ինքնավստահության և հպարտության: Պիմեն Մեծին հարցրին՝ ի՞նչ է հավատքը: Մեծը պատասխանեց. «Հավատքն այն է, որ մնան խոնարհության մեջ և ողորմություն անեն», այսինքն՝ խոնարհվեն մերձավորների առջև և ներեն նրանց բոլոր անարգանքները, վիրավորանքներն ու հանցանքները: Քանի որ անմիտ նախանձախնդիրներն իրենց նախանձախնդրության սկզբնաղբյուր համարում են հավատը, ուրեմն թող իմանան, որ իրական հավատը, հետևաբար և իրական նախանձախնդրությունը (այստեղ հասկացվում է գործնական հավատքը, այլ ոչ թե դոգմատիկ), պետք է արտահայտվի մերձավորի հանդեպ խոնարհությամբ և ողորմածությամբ: Մարդկանց դատելն ու մերկացնելը թողնենք նրանց, որոնց վրա դրված է իրենց եղբայրներին դատելու և նրանց առաջնորդելու պարտականությունը: «Կեղծ նախանձախնդրություն ունեցողը, - ասում է սուրբ Իսահակ Ասորին, - հիվանդանում է ծանր հիվանդությամբ: Ո՞վ մարդ, որ նախանձախնդրորեն հետամուտ ես ուրիշների ցավերին դարման անելուն, իմացիր, որ դրանով սեփական անձիդ առողջացմանն ես արգելք հանդիսանում: Եռանդով ջանա՛ քո հոգու առողջության համար: Իսկ եթե ցանկանում ես բժշկել տկարներին, ապա իմացի՛ր, որ հիվանդներն առավել կարիք ունեն խնամքի, քան դաժան մերկացման: Բայց դու, նրանց օգուտ չտալով, ինքդ քեզ ես գցում դժվար և տանջալի հիվանդության մեջ: Մարդկանց մեջ այդ նախանձախնդրությունը նկատվում է ոչ թե որպես իմաստության մի տեսակ, այլ դասվում է հոգու հիվանդությունների շարքում, դա նշան է հոգևոր գիտակցության պակասի, նշան է ծայրահեղ տգիտության: Աստծո իմաստության սկիզբը անդորրությունն ու հեզությունն է և մարդկային տկարությունները կրելը, ինչը հատուկ է մեծ և ամուր հոգուն, հաստատուն մտքին. «Մենք, որ ուժեղ ենք, - ասվում է Սուրբ Գրքում, - պարտավոր ենք թույլերի տկարությունը տանել» (Հռոմ. 15:1): «Եթե ձեզնից մեկը ինչ – որ հանցանքի մեջ բռնվի, վերահաստատեք նրան հեզության հոգով» (Գաղ. 6:1): Խաղաղությունն ու համբերատարությունն Առաքյալը դասում է Սուրբ Հոգու շնորհների շարքին» (Խոսք 89):

Մի այլ խոսքում սուրբ Իսահակն ասում է. «Մի՛ ատիր մեղավորին, որովհետև մենք բոլորս մեղավորներ ենք: Եթե դու հանուն Աստծո նրա (մեղավորի) դեմ ես գործում, ապա նրա համար արցունքներ հեղիր: Ինչո՞ւ ես ատում նրան: Ատի՛ր նրա մեղքերը, իսկ իր համար աղոթիր և դրանով կնմանվես Քրիստոսին, Ով չբարկացավ մեղավորների վրա, այլ աղոթեց նրանց համար: Չե՞ս տեսնում, արդյոք, թե ինչպես Նա լացեց Երուսաղեմի համար: Իսկ մենք շատ հաճախ սատանայի համար ծառայում ենք որպես ծաղր ու ծանակի առարկա: Ուրեմն ինչո՞ւ ենք ատում նրան, ում ծաղրում է սատանան: Ինչո՞ւ ես դու, ով մարդ, ատում մեղավորին: Միգուցե նրա համար, որ նա այնքան արդար չէ՞, որքան դու: Իսկ ո՞ւր է քո արդարությունը, երբ դու սեր չունես: Ինչո՞ւ դու նրա համար չես լալիս, այլ հալածում ես նրան: Ոմանք մեծամտությամբ կարծում են, թե ողջախոհ են և դատում են մեղավորներին և բարկանում նրանց վրա, սակայն այդպես են գործում իրենց տգիտության պատճառով»: Մեծ չարիք է մեծամտությունը: Մեծագույն աղետ է խոնարհամտության մերժումը: Մեծ չարիք է այն հոգևոր կարգն ու վիճակը, որի դեպքում վանականը կանչված և հարց ստացած չլինելով, ըստ իր սեփական գիտակցության կարևորելով իր արժանիքները, սկսում է սովորեցնել, մերկացնել և կշտամբել մերձավորներին: Եթե որևէ մեկը ինչ – որ բան հարցնի, կամ հրաժարվի՛ր խորհուրդ տալուց և քո կարծիքը հայտնելուց, ինչպես ոչինչ չիմացող, կամ, ծայրահեղ

դեպքում, ասա՛ չափազանց զգուշությամբ և համեստությամբ, որպեսզի քեզ չխոցես սնափառությամբ և հպարտությամբ, իսկ մերձավորիդ՝ դաժան խոսքով և անխոհեմությամբ: Երբ քո ջանքերի շնորհիվ Աստված արժանացնի քեզ հոգուդ մեջ զգալ Աստվածային նախանձախնդրություն, այդ ժամանակ հստակ կտեսնես, որ այդ նախանձախնդրությունը կդրդի քեզ մերձավորիդ առաջ լռության և խոնարհության, նրա հանդեպ սիրուն, գթալուն, կարեկցելուն, ինչպես ասաց սուրբ Իսահակ Ասորին: Աստվածային նախանձախնդրությունը հուր է, այլ ոչ թե արյան եռք: Այն խաղաղեցնում է այդ եռքը և բերում հանդարտ վիճակի: Մարմնավոր իմաստության նախանձախնդրությունը միշտ կապված է արյան եռքի, ինչպես նաև բազմաթիվ խորհուրդների և երազանքների ներխուժման հետ: Եթե մերձավորը հակառակվում է մեզ, ապա մենք կույր և տգետ նախանձախնդրության պատճառով զայրույթ, հիշաչարություն և վրեժխնդրություն ենք ցուցաբերում նրա նկատմամբ, իսկ եթե հնազանդվում է, ապա մեր մեջ գլուխ է բարձրացնում ինքներս մեզանից սնափառորեն գոհանալը, բորբոքում և բազմապատկում է մեր մեծամտությունն ու փառամոլությունը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ ԿԱՐԴԱԼԻՍ ՊԵՏՔ Է ԶԳՈՒՅՇ ԼԻՆԵԼ

Վանական կյանքի մասին սուրբ հայրերի գրքերը պետք է կարդալ մեծ զգուշավորությամբ: Ակնհայտ է, որ սկսնակները չեն կարողանում նման գրքերն ընդունել իրենց եղած դիրքի համեմատ, այլ անխուսափելիորեն տարվում են գրքի ուղղվածությամբ: Եթե գիրքը պատմում է մենակյացների մասին և ցույց տալիս հոգևոր պտուղների առատությունը, որը հավաքվում է խոր անապատում, ապա սկսնակի մոտ անպայման ի հայտ է գալիս անապատ հեռանալու և մենակյացությանը տրվելու մեծագույն ցանկություն: Եթե գիրքը պատմում է հոգևոր հորը անվերապահ հնազանդության մասին, ապա սկսնակի մեջ իսկույն ի հայտ է գալիս ծայրագույն ճգնության ցանկություն՝ անմնացորդ հնազանդության տրվելու միջոցով: Աստված չի տվել մեր ժամանակների համար ո՛չ այս և ո՛չ էլ այն ապրելաձևերը, բայց սուրբ հայրերի գրքերը, որոնցում գրված է այս ապրելաձևերի մասին, կարող են սկսնակի վրա այնքան ուժգնորեն ներգործել, որ նա իր անփորձության և անգիտության պատճառով որոշի թողնել իր բնակության վայրը, որտեղ բոլոր հարմարություններն ունի փրկվելու և հոգեպես առաջադիմելու ավետարանյան պատվիրանները պահելու միջոցով, կատարյալ կենցաղավարության հասնելու անհիրականանալի երազանքի փոխարեն, ինչը պատկերվում է նրա երևակայության մեջ՝ գեղարվեստորեն և գայթակղիչ: Սուրբ Հովհաննես Սանդուղքը «Միայնակեցության մասին» խոսքում ասում է. «Բարի եղբայրության ճաշկերույթի ժամանակ միշտ ներկա է մի շուն (դև), որը ջանում է հաց հափշտակել, այսինքն՝ վանականին, հետո երախում պահելով՝ փախչում է և խժռում այն առանձնության մեջ»: Հնազանդության մասին խոսքում վանականներին ասում է. «Սատանան հնազանդության մեջ ապրողների սրտում դնում է իրենց համար անհնարին առաքինությունների ենթարկվելու ցանկություն: Նման ձևով նաև միանձնության մեջ գտնվողներին այնպիսի առաքինությունների է դրդում, որոնք հատուկ չեն նրանց: Բացահայտի՛ր սկսնակ վանականների (մոնթերի) մտածելակերպը և այնտեղ կգտնես գաղափարներ՝ ծնված ինքնահմայությունից, կգտնես խստագույն միայնակեցության և պահեցողության, չսավառնող աղոթքի, կատարյալ անփառամոլության, մահվան մասին անդադար հիշողության, մշտական խանդաղատանքի, ամենակատարյալ անզայրույթության, խոր լռության, հիանալի մաքրության ցանկություն: Նրանք խաբվելով՝ զուր տեղը ցատկում են (եղբայրական հանրակացարանից անցնում են խոր առանձնության), սկզբնական շրջանի համար վերոհիշյալ առաքինություններն Աստծո հատուկ կամեցողությամբ չունենալով

իրենց մեջ: Թշնամին սովորեցրեց նրանց ժամանակից շուտ ձգտել այդ առաքինություններին, որպեսզի նրանք նույնիսկ իր ժամանակին չարժանանան դրանց: Գայթակղիչը (սատանան) միայնակյացների առաջ գովաբանում է հյուրասեր վանականներին, նրանց ծառայությունը, եղբայրասիրությունը, հանրակացարանային կյանքը, հիվանդներին խնամելը, որպեսզի երկրորդներին, ինչպես նաև առաջիններին դարձնի անհամբեր» (Ճառ 4 – րդ): Ընկած հրեշտակը ջանում է խաբել և կործանել վանականներին, ոչ միայն առաջարկելով մեղքը իր տարբեր դրսևորումներով, այլև նրանց ոչ հատուկ, բարձրագույն առաքինությունների մեջ ներքաշելով: Մի՛ վստահեք, եղբայրներ, ձեր խորհուրդներին, հասկացողությանը, երազանքներին, հակումներին, թեև դրանք ձեզ շատ բարի են թվում, պատկերվում են ձեր առջև՝ որպես սուրբ վանական կյանքի գրավիչ տեսարան: Եթե այն վանքը, որտեղ դուք ապրում եք, ձեզ հնարավորություն է տալիս ապրել ավետարանական պատվիրանների համաձայն, եթե դուք չեք գլորվում մահացու մեղքերի գայթակղությունից, ապա մի՛ թողեք վանքը: Մեծահոգաբար, համբերատարությամբ կրեք նրա և՛ հոգևոր, և՛ նյութական թերությունները, մի՛ մտածեք զուր տեղը առաքինությունների ասպարեզ փնտրել, ինչը մեր ժամանակների համար Աստծո կողմից տրված չէ: Աստված ցանկանում և փնտրում է բոլորիս փրկությունը: Նա նաև միշտ փրկում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են փրկվել կենցաղային և մեղսառատության ծովում խորտակվելուց, բայց միշտ չէ, որ փրկում է նավում կամ հարմարավետ, բարեկարգ նավահանգստում: Նա փրկություն խոստացավ սուրբ Պողոս Առաքյալին և նրա բոլոր ուղեկիցներին ու շնորհեց այդ փրկությունը, բայց Առաքյալը և նրա ուղեկիցները փրկվեցին ոչ թե նավի մեջ՝ ինչը խորտակվեց, այլ մեծ դժվարությամբ, մի մասը՝ լողալով, մյուսները՝ տախտակների և նավի տարբեր կտորների միջոցով (Գործք. 27:21-49):

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԸ ՄԱՐԴՈՒ ԸՆԿԱԾ ԲՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Եթե քեզ մոտ ինչ-որ բարի միտք առաջ գա՝ կանգնեցրու, ոչ մի դեպքում մի՛ ձգտիր կատարել այն հապճեպ և առանց մտածելու: Եթե սրտումդ որևէ բարի մղում ես զգում՝ կանգնեցրու, չհամարձակվես հրապուրվել դրանով: Ստուգի՛ր Ավետարանով: Քննի՛ր՝ քո բարի միտքը և սրտիդ բարի մղումները, թե համաձա՞յն են արդյոք Տիրոջ ամենասուրբ ուսմունքների հետ: Շուտով կտեսնես, որ ոչ մի համաձայնություն չկա ավետարանյան և ընկած մարդկային բնության բարու միջև: Մեր մարդկային ընկած բնության բարին խառնված է չարի հետ, հենց այդ պատճառով էլ այդ բարին դարձավ չար, ինչպես թունավոր է դառնում համեղ և առողջ կերակուրը, եթե դրա հետ թույն են խառնում: Պահի՛ր քեզ ընկած բնության բարին գործելուց: Այդ բարին գործելով կնմանվես դևերին և կողբաս քո անկման, ինքնավստահության և հպարտության համար: Իսկ եթե, ընդհակառակը, կատարելով ավետարանյան բարին՝ որպես Աստվածամարդու ճշմարիտ և հավատարիմ աշակերտ, կդառնաս Նրա նման. «Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:25): «Եթե մեկը կամենում է գալ Իմ ետևից, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա Իմ ետևից, որովհետև ով կամենում է ազատել իր անձը, այն պիտի կորցնի, իսկ ով կորցնի իր անձը Ավետարանի համար, պիտի ազատի այն» (Մարկ. 8: 34-35): Աստված պատվիրում է ամբողջովին ուրանալ ընկած բնությանը, ատել նրա մղումները, ոչ միայն բացահայտ չարը, այլև ամեն ինչ առանց բացառության, նաև կեղծ բարին: Ընկած բնության ճշմարտությանը հետևելը մեծ չարիք է, դրա հետ է կապված Ավետարանի, Փրկչի, փրկության մերժումը. «Ով չատի իր անձը, չի կարող Իմ աշակերտը լինել» (Ղուկ.

14:26), - ասում է Աստված: Բացատրելով վերը բերված Տերունական խոսքերը՝ Բարսիլիկոս Մեծն ասում է. «Ինչպե՞ս է ուրանում մարդն ինքն իրեն: Երբ թողնում է բնական ցանկությունը և հետևում Աստծուն: Դրա համար էլ Տերն ասում է այստեղ հենց բնականի մասին, այլ ոչ թե անբնականի, որովհետև եթե մեկը թողնի միայն անբնականը, ուրեմն նա դեռևս ոչինչ չի թողել իր սեփականից Աստծո համար, որովհետև անբնականը իրեն չի պատկանում: Իսկ նա, ով թողել է բնականը, միշտ Պետրոս Առաքյալի հետ ասում է. «Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո ետևից, արդ, մենք ի՞նչ կունենանք» (Մատթ.19: 27-29), և լսում է Տիրոջ երանելի ձայնը, որ խոստումով հաստատում է՝ արժանացնելու հավիտենական կյանք ժառանգելուն: Ի՞նչ թողեց Պետրոսը հարուստ չլինելով հանդերձ և ինչո՞վ գովաբանվեց, եթե ոչ իր բնական ցանկությունները թողնելով: Որովհետև, եթե մարդը չմեռնի մարմնի համար, ապրելով հոգով՝ նա չի կարող հարություն առնել հոգեպես: Ինչպես մեռելը ընդհանրապես ոչ մի բնական ցանկություն չունի, այդպես էլ այն չկա հոգեպես մարմնի համար մեռածների մեջ: Եթե դու մեռել ես մարմնի համար, ապա ինչպե՞ս կարող են քո մեջ բնական ցանկություններն ապրել: Իսկ եթե դու չես հասել հոգևոր տարիքի, այլ դեռ մանուկ ես մտքով, ապա խոնարհվիր ուսուցչիդ առաջ, «թող խրատի քեզ ողորմությամբ» (Սղմ. 140:5) և «առանց խորհրդի ոչինչ մի՛ արա» (Սիրաք 32:21), եթե նույնիսկ այդ մտադրությունը արտաքինից քեզ բարի է թվում, որովհետև դևերի լույսը հետագայում վերածվում է խավարի» (Պատասխան 59): Ճիշտ այդպես պետք է ասել նաև մարդկային ընկած բնության լույսի մասին: Այդ լույսին հետևելը և այն իր մեջ զարգացնելը հոգում առաջացնում է կատարյալ մթագնում և ամբողջովին օտարեցնում է Քրիստոսից: Այն, ինչ որ օտար է քրիստոնեության համար, օտար է Աստծուն:

Մեր դարերում մարդկանց մեծամասնությունը՝ հպարտ իրենց առաջադիմություններով, իրենց հռչակում են քրիստոնյա և առատ բարեգործություններ կատարող, ձգտում են դեպի ընկած բնության ճշմարտության կատարմանը՝ արհամարհանքով մերժելով ավետարանյան ճշմարտությունները: Այդ մեծամասնությունը թող լսի Աստծո վճիռը. «Այս ժողովուրդը շրթունքներով է Ինձ մեծարում, բայց իրենց սիրտը հեռացած, բաժանված է Ինձնից. զուր են Ինձ պաշտում. մարդկանց կողմից պատվիրված վարդապետություն են ուսուցանում» (Մատթ. 15:8-9): Մարդկային ճշմարտությանը հետևողը լի է մեծամտությամբ, ինքնահմայությամբ, նա քարոզում է, փողհարում իր և իր գործերի մասին՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով Աստծո արգելքին (Մատթ. 6:1-18), ատելությամբ և վրեժխնդրությամբ է վճարում նրանց, ովքեր համարձակվում են բացել իրենց բերանը ամենահիմնավոր և ուղղամիտ հակաճառությամբ նրա ճշմարտության դեմ: Դրան հակառակ ավետարանյան պատվիրանները կատարողը միշտ ընկղմված է խոնարհության մեջ՝ իր գործունեությունը համեմատելով վեհ և մաքուր ամենասուրբ պատվիրանների հետ: Նա միշտ այդ ջանքերը համարում է չափազանց անբավարար, անարժան Աստծուն: Նա իրեն արժանի է համարում ժամանակավոր և հավիտենական տանջանքի՝ իր մեղքերի, անկման և սատանայի հետ անքակտելիորեն կապված լինելու պատճառով, ինչը համայն մարդկությանն է վերաբերվում և, վերջապես, ամենաանբավարար և հաճախ խեղաթյուրված կերպով պատվիրանները կատարելու պատճառով: Աստծո նախախնամությամբ ուղարկված յուրաքանչյուր վշտի դեպքում նա հնազանդությամբ խոնարհում է գլուխը՝ իմանալով, որ Աստված իր ծառաներին ուսուցանում և կրթում է վշտերով՝ իրենց երկրային ընթացքի ժամանակ: Նա գթասիրտ է իր թշնամիների հանդեպ և աղոթում է նրանց համար, ինչպես եղբայրների, որոնք տրվել են դիվական խորհուրդներին, ինչպես մի ընդհանուր մարմնի անդամների համար, որոնք վնասել են իրենց հոգին և հիվանդացրել այն, աղոթում է որպես իր բարեգործների, որպես Աստծո նախախնամությամբ նախատեսված գործիքների:

ԵՐԱՉԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դևերը մարդկային հոգին վնասելու և վրդովելու համար ի գործ են դնում երազատեսությունը, այդպես նաև անփորձ վանականները, ուշադրություն դարձնելով երազների վրա՝ վնասում են իրենց, այդ պատճառով էլ անհրաժեշտ է այստեղ հստակ եզրահանգում տալ այն մարդու երազատեսությանը, որի բնությունը դեռ չի նորոգվել Սուրբ Հոգով:

Մարդկային քնի ժամանակ քնած մարդու վիճակը Աստված այնպես է կարգավորել, որ մարդն ամբողջովին գտնվում է լիարժեք հանգստի մեջ: Այդ հանգիստն այնքան լիարժեք է, որ մարդն այդ ընթացքում կորցնում է իր գոյության գիտակցությունը, գտնվում է ինքնամոռացության վիճակում: Քնած ժամանակ աշխատանքի հետ կապված և մտքի ու կամքի կամավոր ղեկավարումից բխող բոլոր գործողությունները դադարում են, մնում են միայն այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են գոյության համար և չեն կարող բաժանվել նրանից: Մարմնում արյունը շարունակում է իր շարժումը, ստամոքսը մարսում է կերակուրը, թոքերը մղում են օդը, մարդը քրտինք է արտադրում, հոգում շարունակում են գործել մտքերը, երազանքներն ու զգացմունքները, բայց ոչ թե բանականությունից և կամքից կախված, այլ՝ անգիտակից բնության ազդեցությամբ: Հատուկ մտածողությամբ և զգացողությամբ ուղեկցվող այդպիսի երազանքներից է բաղկացած երազատեսությունը: Այն հաճախ լինում է սարսափելի՝ որպես մարդու կամավոր և մտադրված երազանքների ու մտորումների համակարգին չպատկանող, բայց հանդիսանում է որպես ինքնաբերաբար և քմահաճ՝ բնության օրենքներին ու պահանջներին համապատասխան: Երբեմն երազատեսությունը իր վրա կրում է կամավոր մտորումների ու երազանքների անկապ հետքերը, իսկ երբեմն էլ լինում է բարոյական տրամադրության հետևանք: Նման ձևով երազատեսությունը ինքն իրենով չի կարող և չպետք է որևէ նշանակություն ունենա: Ուրեմն ծիծաղելի է և միանգամայն անտրամաբանական, երբ ոմանք ցանկանում են իրենց ցնորական երազներում տեսնել գուշակություններ իրենց կամ մյուսների ապագայի, կամ մի որևէ այլ բանի մասին: Դևերը մեր հոգիներին մոտենալու հնարավորություն ունեն և՛ արթուն, և՛ քնած ժամանակ: Քնած ժամանակ նրանք նույնպես գայթակղում են մեզ մեղքով՝ մեր երազանքներին խառնելով իրենց երազանքները: Ուշադիր հսկելով մեզ նաև քնած ժամանակ՝ նրանք ջանում են, որ մենք մեր երազներին նշանակություն տանք և այդ ցնորքների հանդեպ մեծ ուշադրություն են բորբոքում մեր մեջ՝ աստիճանաբար վստահություն մտցնելով դրանց հանդեպ: Այդպիսի վստահությունը միշտ զուգակցված է սեփական կարծիքի վրա վստահ լինելու հետ, իսկ դա մեր մտավոր հայացքը սևեռում է մեզ վրա՝ ամենակեղծ կարծիք ստեղծելով մեր մասին, ինչի պատճառով մեր ամբողջ գործողությունները զրկվում են ճշմարտությունից, ինչն էլ հարկավոր է դևերին: Ովքեր առաջադիմում են իրենց սեփական կարծիքը միանշանակ ճշմարիտ համարելու մեջ, նրանց դևերը սկսում են հայտնվել լուսավոր հրեշտակների, նահատակների և սրբերի, նույնիսկ Աստվածամոր և հենց Քրիստոսի կերպարանքով, գովաբանում են նրանց կենցաղավարությունը, խոստանում երկնային պսակներ՝ դրանով գագաթնակետին հասցնելով ինքնավստահությունը և հպարտությունը: Այդպիսի բարձրությանը հետևում է կործանարար անկում: Մեզ անհրաժեշտ է իմանալ, որ մեր դրության մեջ, դեռևս շնորհով չնորոգված, մենք ընդունակ չենք տեսնել այլ երազներ՝ բացի հոգու ցնորքներից ու դևերի զրպարտությունից բաղկացած երազներից: Ինչպես արթուն ժամանակ մեր մեջ միշտ և անդադար մտքեր ու ցանկություններ են առաջանում ընկած բնության պատճառով, կամ դևերի կողմից ներմուծված, այնպես էլ քնած ժամանակ մենք տեսնում ենք միայն երազանքներ՝ ընկած բնության և դևերի գործունեության պատճառով: Ինչպես մեր մխիթարությունը արթուն ժամանակ կազմված է գորովանքից՝ ծնված մեր մեղքերի գիտակցությունից, մահվան և Աստծո դատաստանի մասին հիշողությունից, նման մտքերն առաջադիմում են մեր մեջ միայն Աստծո շնորհի հետևանքով՝ տնկված սուրբ մկրտությամբ և տրվում են

մեզ Աստծո հրեշտակների կողմից, այդպես էլ քնի մեջ, չափազանց հազվադեպ, ծայրահեղ կարիքի դեպքում, մեզ երևում են Աստծո հրեշտակները, կամ մեր վախճանը, կամ դժոխքի տառապանքները, կամ էլ ահեղ դատաստանը: Այսպիսի երազատեսությամբ մեր մեջ առաջանում է Աստծո հանդեպ երկյուղ, խանդաղատանք, լաց սեփական անձի համար: Բայց այդպիսի երազատեսությունը տրվում է չափազանց հազվագյուտ ճգնավորներին կամ նույնիսկ ակնհայտ և անգութ մեղավորին՝ Աստվածային հատուկ նախախնամությամբ, տրվում է չափազանց հազվադեպ, ոչ թե մեր հանդեպ Աստվածային շնորհի ժլատության պատճառով. ո՛չ, այլ այն պատճառով, որ մեզ հետ կատարվող այն ամենը, ինչը դուրս է ընդհանուր կարգից, մեզ բերում է ինքնավստահության և տատանում է մեր մեջ խոնարհությունը, որը այդքան կարևոր է մեր փրկության համար: Աստծո կամքը, որի կատարման մեջ է մարդու փրկությունը, Սուրբ Գրքում այնքան հստակ է ներկայացված, այնքան ուժգին, այնքան մանրամասնորեն, որ մարդու միջամտությունը փրկության գործում ընդհանուր կարգ ու կանոնի խախտմամբ դառնում է ավելորդ և անպիտան: Այն խնդրանքին, որ մեռելներից հարություն առնի և ուղարկվի նրա եղբայրների մոտ, որպեսզի համոզի նրանց լայն ճանապարհից անցնել դեպի նեղը, ասվեց. «Նրանք ունեն Մովսես և մարգարեներ, թող նրանց լսեն»: Իսկ երբ խնդրողն առարկեց. «Բայց եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, նրանք կապաշխարեն», ապա ստացավ հետևյալ պատասխանը. «Եթե Մովսեսին և մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկ. 16:27-31): Փորձը ցույց է տվել, որ շատերը, ովքեր արժանացել են երազում չարչարանքներ, ահեղ դատաստան և հետմահու այլ սարսափներ տեսնելուն, միայն կարճ ժամանակ են երազից ցնցված մնացել, այնուհետև զվարճացել են, մոռացել տեսածի մասին և անհոգ կյանք վարել, հակառակ այն մարդկանց, որ ոչ մի տեսիլք չեն տեսել, այլ ջանադիր կերպով սովորել են Աստծո պատվիրանները, աստիճանաբար Աստծո հանդեպ երկյուղ են ձեռք բերել, հասել հոգևոր առաջադիմության և խնդության, որը ծնվում է փրկության ավետիսից, սրանք երկրավոր աշխարհի վշտերից անցան դեպի երանելի հավիտենականություն: Սուրբ Հովհաննես Սանդուղքը վանականների երազներում դևերի մասնակցության մասին հետևյալ կերպ է խոսում. «Երբ մենք հանուն Տիրոջ թողնում ենք տունն ու ընտանիքը և Աստծո սիրո համար մտնում վանք, այդ ժամանակ դևերը վրեժխնդրությամբ լցված, փորձում են հուզել մեզ երազատեսությամբ՝ ներկայացնելով մեր հարազատներին կամ լացելիս, կամ մահամերձ, կամ բանտարկված և մեր պատճառով հարձակման ենթարկված: Նման երազներին հավատացողը իր ստվերին հետապնդող և նրան բռնել փորձող է: Փառասիրության դևերը մարգարեներ են երազների մեջ: Լինելով թափանցող և խցկվող՝ նրանք գալիքի մասին կողմնորոշվում են արտաքին պարագաներից և իրավիճակներից ելնելով, և այն հայտնում են մեզ, որպեսզի մենք այս տեսածն արդեն կատարված տեսնելով՝ զարմանանք և համարենք, որ արդեն մոտ ենք պայծառատեսության շնորհին և մեծամտանանք ներքուստ: Ովքեր հավատում են դևին, նրանց համար սա հաճախ լինում է որպես մարգարե, իսկ ովքեր արհամարհում են նրան՝ այդպիսիների հանդեպ նա միշտ դուրս է գալիս որպես ստախոս: Որպես ոգի, նա տեսնում է դեպքերն օդային տարածությունից և նկատելով, օրինակ, որ ինչ-որ մեկը մահանում է, նա այդ հայտնում է թերահավատին՝ երազի միջոցով: Դևերը ոչինչ չգիտեն գալիքի մասին նախատնօրինությամբ, բայց հայտնի է, որ կախարդներն էլ կարող են կանխատեսել մոտալուտ մահը: Դևերը փոխակերպվում են լուսավոր հրեշտակների, հաճախ նահատակների կերպարանքն են ընդունում և երազատեսությամբ ցույց են տալիս մեր ընդհանրությունը սրբերի հետ, իսկ երբ արթնանում ենք, մեզ ներքաշում են ուրախության և մեծամտության մեջ: Դա թող լինի քեզ համար որպես պատրանքի նշան (դիվային խաբկանքի): Սուրբ հրեշտակները ցույց են տալիս տանջանքներ, դատաստան, մահ, որի պատճառով մենք արթնանալով՝ լցվում ենք երկյուղով ու վշտով: Եթե սկսենք դևերին խոնարհվել երազներում, ապա նրանք կսկսեն ծաղրել մեզ նաև արթուն ժամանակ: Երազներին հավատացողները լրիվ անփորձ են, իսկ երազներին բոլորովին չհավատացողները՝ ճշմարիտ

իմաստասերներ: Վստահի՛ր միայն այն երազներին, որոնք քեզ հայտնում են տանջանքների և դատաստանի մասին, իսկ եթե դրանց պատճառով սկսում ես հուսահատության մեջ ընկնել, ապա իմացիր, որ այդպիսի երազները նույնպես դևերից են» (Սուրբ Հովհաննես Սանդուղք, քարոզ 3 – րդ): Սուրբ Քասիանոս Հռոմեացին պատմում էր մի վանականի մասին, որը բնիկ Միջագետքից էր. նա վարում էր ամենամեկուսացած և պահեցողական կյանք, բայց կործանվեց դիվային երազներին տեղի տալու պատճառով: Դևերը տեսնելով, որ վանականը բավարար ուշադրություն չի դարձնում իր հոգևոր աճին, այլ ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել է մարմնական սխրագործությունների վրա և հիմնական արժեքը տալիս է դրանց, հետևաբար նաև իրեն, սկսեցին նրան ներկայացնել երազներ, որոնք դիվային չարանենգության պատճառով իրականում կատարվեցին: Երբ վանականը վստահություն ձեռք բերեց երազների և ինքն իր հանդեպ, ապա դևը նրան մի գայթակղիչ տեսիլք ցույց տվեց երկնային երանությունները վայելող հրեայի և դժոխքի տանջանքների մեջ չարչարվող քրիստոնյայի մասին: Դրանից հետո դևը, իհարկե հրեշտակի կամ Հին Կտակարանյան որևէ մարգարեի կերպարանքով, վանականին խորհուրդ տվեց հրեականություն ընդունել, որպեսզի հնարավորություն ստանա մասնակից լինելու հրեաների երանությանը, ինչը վանականն առանց փոքր-ինչ հապաղելու կատարեց: Բավականին ասվեց եղբայրներին և վանականներին բացատրելու համար, թե որքան մեծ անզգուշություն է երազներին ուշադրություն դարձնելը, առավել ևս վստահելը, և թե ինչ սարսափելի վնաս կարելի է կրել դրանց հանդեպ ունեցած վստահությունից: Երազատեսության հանդեպ ունեցած ուշադրությունից անպայման հոգու մեջ ծածուկ վստահություն է առաջանում դրա նկատմամբ և այդ պատճառով էլ խստիվ արգելվում է ուշադրության նման սևեռումը:

Սուրբ Հոգով նորոգված բնությունը, ի տարբերություն ընկած բնությունը, լիովին ղեկավարվում է այլ օրենքներով: Նորոգված մարդու ղեկավարը Սուրբ Հոգին է. «Նրանց լուսավորել է Աստվածային Հոգու շնորհը, - ասում է սուրբ Մակար Մեծը» (Քարոզ 7, 12 – րդ գլուխ), և հանգրվանել նրանց գիտակցության մեջ: Թե՛ արթուն, և թե՛ քնած ժամանակ նրանք Տիրոջ հետ են՝ հեռու մեղքից, երկրային և մարմնավոր խորհուրդներից ու ցանկություններից: Նրանց խորհուրդներն ու ցանկությունները քնած ժամանակ դուրս են գտնվում բանականության ղեկավարումից և մարդկային կամքից, ուրիշ մարդկանց մոտ գործելով անգիտակցաբար՝ ըստ բնության պահանջի, նրանց մոտ գործում են Հոգու առաջնորդությամբ և այդպիսի մարդկանց երազները հոգևոր նշանակություն ունեն: Այդպես բարեպաշտ Հովսեփին երազում ուսուցանվում է Աստծո Խոսքի մարդեղության խորհուրդը, երազում պատվիրվում է նրան փախչել Եգիպտոս և վերադառնալ այնտեղից (Մատթ. 2): Աստծո կողմից ուղարկված երազներն իրենց մեջ կրում են անդիմադրելի համոզմունք: Այդ համոզմունքը հասկանալի է Տիրոջ սրբերի, և անհասկանալի՝ դեռևս կրքերի հետ պայքարի մեջ գտնվողների համար:

ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախորդ գլխում փշրանքներ համարվեց այն հոգևոր կենցաղավարությունը, որը Աստծո նախախնամությամբ բաժին ընկավ մեր ժամանակներին: Փրկության գործում նման կենցաղավարությունը հիմնավորվում է Սուրբ Գրքի և սուրբ հայրերի աշխատություններով՝ պարզաբանված ժամանակակից հայրերի և եղբայրների խորհուրդներով և խրատներով: Իրականում սա նման է հին վանականների հնազանդությանը, սակայն հարմարեցված մեր մարմնավոր և հատկապես՝ հոգևոր տկարությանը: Հին վանականներին իրենց հոգեկիր վանահայրերը հաղորդում էին Աստծո կամքն անմիջապես և ուղիղ, այսօրվա վանականները պետք է անձամբ փնտրեն և գտնեն Աստծո կամքը Սուրբ Գրքում, այդ պատճառով

էլ ենթարկվում են հաճախ և շարունակաբար տարակուսանքի և վրիպումների: Այն ժամանակ առաջադիմությունը արագ էր լինում՝ կապված գործի հատկությունից, այսօր այն քարացած է՝ նորից կապված գործի հատկությունից: Այդպես բարեհաճ է մեր հանդեպ մեր Տերը, մենք պարտավոր ենք ենթարկվել Նրան և երախտագիտությամբ պատկառենք Նրանից: Մեր ժամանակակից վանական կյանքը, ըստ Սուրբ Գրքի և հայրերի ու եղբայրների խրատների, լուսավորված է սուրբ Անտոն Մեծի վանականներին ուղղված ուղերձով: Նա հնազանդության մեջ չի եղել ծերի մոտ, այլ իր սկսնակ եղած ժամանակից ի վեր առանձին է ապրել և խրատները փոխ է առել Սուրբ Գրքից, տարբեր հայրերից ու եղբայրներից, մեկից ժուժկալություն է սովորել, մյուսից՝ հեզություն, համբերություն, խոնարհություն, մեկ ուրիշից՝ խիստ հսկողություն սեփական անձի վրա, լռություն՝ ջանալով սեփականացնել յուրաքանչյուր առաքինի վանականի առաքինությունը, հնարավորության դեպքում բոլորի հանդեպ հնազանդություն ցուցաբերելով՝ բոլորի առջև խոնարհվելով և անդադար Աստծուն աղոթելով: Դո՛ւ էլ այդպես վարվիր, սկսնակ, վանահորը և վանքի մյուս ղեկավարներին առանց կեղծավորության մարդահաճության հնազանդություն ցուցաբերիր, հնազանդություն՝ զերծ շողոքորթությունից և հաճոյությունից, հնազանդություն հանուն Աստծո: Հնազանդություն ցուցաբերիր բոլոր հայրերի և եղբայրների կարգադրությունների հանդեպ, մի՛ հակառակվիր Աստծո օրենքներին, վանքի կարգ ու կանոնին և առաջնորդների կարգադրություններին: Բայց երբեք մի՛ հնազանդվիր չարությանը, եթե նույնիսկ պատահի համբերատարությամբ կրել որոշ նեղություններ՝ անմարդահաճության և բարու մեջ ամուր կանգնելուդ համար: Խորհրդակցի՛ր առաքինի և խելացի հայրերի հետ, բայց յուրացրո՛ւ նրանց խորհուրդները չափազանց զգուշությամբ և շրջահայացությամբ: Քեզ վրա եկող խորհուրդների առաջին իսկ ազդեցությամբ մի՛ հրապուրվիր: Քո կրքոտության և կուրության պատճառով մեկ ուրիշի կրքոտ և վնասակար խորհուրդը կարող է քեզ դուր գալ միայն քո անգիտության և անփորձության, կամ էլ այն պատճառով, որ գոհացնում է քո մեջ բնակվող մի որևէ թաքուն, քեզ անհայտ կրքի: Լացով և հոգոցներով խնդրիր Աստծուն, որպեսզի Նա թույլ չտա քեզ հեռանալ Իր ամենասուրբ կամքից՝ հետևելու համար մարդկային ընկած կամքին, քո կամ մերձավորիդ և կամ խորհրդակցիդ: Ինչպես քո մտքերի, այնպես էլ մերձավորիդ մտքերի ու խորհուրդների մասին խորհուրդ առ Ավետարանից: Սնափառությունն ու ինքնահավանությունը սիրում են սովորեցնել ու խրատել: Նրանք հոգ չեն տանում իրենց տրված խորհրդի որակի մասին, չեն մտածում, որ կարող են մերձավորին անբուժելի վերք հասցնել տրված անհեթեթ խորհրդով, ինչը ընդունվում է անփորձ սկսնակի կողմից կատարյալ վստահությամբ: Նրանց պետք է միայն հաջողություն, ինչպիսին էլ լինի այդ հաջողության արդյունքը: Նրանց պետք է ընդամենը տպավորություն առաջացնել սկսնակի մեջ և բարոյապես հնազանդեցնել իրենց: Նրանց մարդկային գովեստ է պետք: Նրանց պետք է ձեռք բերել սրբի, պայծառատես ծերի և ուսուցչի համբավ: Նրանց պետք է հագեցնել իրենց անհագ սնափառությունը, իրենց հպարտությունը: Մարգարեի աղոթքը ճշմարիտ է և անսխալական, այն հատկապես արդիական է մեր այս օրերի համար. «Փրկիր ինձ, Տեր, քանզի սուրբ չմնաց, նվազեց ճշմարտությունը մարդկանց որդիների մեջ: Ստությամբ խոսեց մարդը մարդու հետ, սրտերը հաղորդակցվեցին նենգ շրթունքներով» (Սղմ.11:2-3): Սուտ և նենգ խոսքը չի կարող չլինել չար և վնասակար: Այդպիսի իրավիճակի դեմ հարկավոր է զգուշության միջոցներ ձեռնարկել: «Սովորիր Սուրբ Գրքից, - ասում է Սիմոն Նոր Աստվածաբանը, - և սուրբ հայրերի գրքերից, հատկապես այն խոսքերը, որոնք կապված են կենցաղավարության հետ, որպեսզի նրանց ուսուցման հետ համեմատելով քո ուսուցչի և ծերի ուսուցումն ու վարքը, դու կարողանաս դրանք (ուսուցումն ու վարքը) տեսնել ինչպես հայելու մեջ, և հասկանալ՝ համաձա՞յն է արդյոք Սուրբ Գրքի հետ և յուրացնել ու մտքում պահել, իսկ սուտն ու վատը ճանաչել և մերժել, որպեսզի խաբված չլինել: Իմացի՛ր, որ մեր օրերում շատ խաբեբաներ և սուտ վարդապետներ են հայտնվել»: Սուրբ Սիմոնը ապրել է Քրիստոսի ծնունդից հետո՝ 10 – րդ դարում, մեր ժամանակներից 9 դար առաջ, և ահա դեռ այն ժամանակ

արդարի ձայնը լսվեց Քրիստոսի սուրբ եկեղեցում՝ ճշմարիտ Հոգեկիր առաջնորդների պակասի և բազում սուտ վարդապետների մասին: Ժամանակի ընթացքում կամաց – կամաց պակասում էին վանքերի խելամիտ վարդապետները: Այդ ժամանակ սուրբ հայրերը սկսեցին ավելի ու ավելի մատնանշել Սուրբ Գիրքը և Հայրաբանական գրքերը՝ որպես ուղեցույց: Սուրբ Նիլ Սորցին հիմնվելով իրենից առաջ եղած հայրերի գրականության վրա՝ ասում էր. «Փոքր սխրանք չէ գտնել պատրանքից զերծ վարդապետի, որն այս հրաշալի գործողությանը տեղյակ լինի (վանականներին հատուկ ճշմարիտ մտային աղոթքին): Նրանք պատրանքի մեջ չէին համարում նրան, ով Սուրբ Գրքով հիմնավորված գործեր ու իմաստություն ուներ և ձեռք էր բերել հոգևոր բանականություն: Այն էլ, - ասում էին սուրբ հայրերը, - այդ ժամանակ հազիվ էր հնարավոր գտնել այդպիսի պարագայում պատրանքի մեջ չգտնվող ուսուցչի, իսկ այժմ, երբ նրանք ծայր աստիճան նվազել են, պետք է մեծ ջանքով փնտրել: Իսկ եթե չեն գտնվի, ապա սուրբ հայրերը պատվիրում են սովորել Սուրբ Գրքից՝ լսելով հենց Աստծուց, Ով ասում է. «Քննեցեք գրքերը և նրանցում հավիտենական կյանք կգտնեք» (Հովհ. 5:39): «Ուրեմն ինչ որ գրվեց, գրվեց, որ մենք սովորենք» (Հռոմ. 15:4): Սուրբ Նիլն ապրել է 15 – րդ դարում, նա մենաստան հիմնեց Սպիտակ լճից ոչ հեռու, ուր և առանձնության մեջ զբաղվեց աղոթքով: Օգտակար է լսել նոր ժամանակների ծերերին: Ինչպիսի խոնարհությամբ և ինքնազոհաբերությամբ է խոսում սուրբ Նիլն այն ուսմունքի մասին, ինչը նա քարոզում է եղբայրներին. «Ոչ ոք չպետք է թաքցնի Աստծո խոսքը ծուլությունից, այլ խոստովանի իր տկարությունը և դրա հետ մեկտեղ չթաքցնի Աստվածային ճշմարտությունը, որպեսզի մենք չմեղանչենք և հանցավոր չհամարվենք Աստծո պատվիրանների հանդեպ. չթաքցնենք Աստծո խոսքը, այլ ազդարարենք այն: Սուրբ Գրքի և սուրբ հայրերի ճառերը ծովի ավազների չափ բազմաթիվ են, չծուլանալով հետևել դրանց՝ քարոզում ենք մեզ մոտ եկողներին և դրանց կարիքն ունեցողներին: Ավելի ճիշտ՝ մենք չենք քարոզում, որովհետև մենք արժանի չենք դրան, այլ քարոզում են երանելի սուրբ հայրերը Սուրբ Գրքից» (ավելորդ չէր լինի այստեղ նշել, որ սուրբ Նիլ Սորցին թեև ուներ Աստծո շնորհը, բայց չէր համարձակվում Սուրբ Գիրքն ինքնուրույն մեկնել, այլ հետևում էր հայրերի կողմից կատարված մեկնություններին: Խոնարհության ճանապարհը փրկության միակ ճանապարհն է): Ահա ժամանակակից խրատի հիանալի կերպը: Այն լիովին հոգեշահ է խրատողի և խրատվողի համար, այն ճշմարիտ վիճակ է չափավոր առաջադիմության համար, այն միավորված է սեփական անձի վրա մեծ կարծիք ունենալու, չափազանց լկտիության և հանդգնության մերժման հետ, ինչի մեջ ընկնում են նրանք, ովքեր միայն արտաքնապես են Բարսիլիկոս Մեծին և մյուս դրոշակակիր հայրերին ձգտում նմանվել՝ չունենալով այն շնորհը, որ տրված է նրանց: Հայրերի նման արտահայտություններում առկա էր Սուրբ Հոգու լի ներկայությունը, իսկ այդ անմիտ, կեղծավոր նմանակողների արտահայտություններում առկա է տգիտության, ինքնախաբեության, հպարտության և հանդգնության առատությունը: Սիրելի հայրեր, Աստծո խոսքը հայտնենք մեր եղբայրներին ամեն կերպ խոնարհությամբ և երկյուղածությամբ՝ մեզ թերի համարելով այս ծառայության համար, պահպանելով ինքներս մեզ սնափառությունից, որը ուժգին հարվածում է կրքոտ մարդկանց, երբ նրանք սովորեցնում են եղբայրներին: Մտածեք, որ մենք պատասխան ենք տալու յուրաքանչյուր պարապ խոսքի համար (Մատթ. 12:36), առավել ծանր պատասխան ենք տալու Աստծո խոսքի համար, երբ այն արտասանվում է սնափառությամբ և դրա դրդմամբ. «Տերը կոչնչացնի բոլոր նենգ շրթունքներն ու լեզուները մեծախոս, որոնք ասացին. «Երկարացնենք մեր լեզուները, մենք շրթունք ունենք, արդ՝ ո՞վ է մեր Տերը»» (Սղմ. 11:4-5): Տերը կոչնչացնի նրանց, ովքեր իրենց փառքն են փնտրում, այլ ոչ թե Աստծունը: Զարհուրե՛նք Աստծո հանդիմանությունից: Խրատական խոսքն արտասանենք միայն էական անհրաժեշտության դեպքում, ոչ իբրև ուսուցիչներ, այլ որպես խրատի կարիք ունեցողներ և ջանացողներ դառնալ մասնակիցը այն ուսուցման, որ Աստծո կողմից տրվում է Իր ամենասուրբ Խոսքի միջոցով. «Յուրաքանչյուր ոք ինչպիսի շնորհ որ ընդունել է, ուրիշի հանդեպ թող նույնը մատակարարի որպես Աստծո շնորհների բարի տնտես:

Եթե մեկը խոսի, թող այդ լինի Աստծո պատգամների նման: Եթե մեկը մատակարարի, թող այդ լինի այն զորությունից, որն Աստված շնորհում է, որպեսզի ամեն ինչում Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի միջոցով» (Ա Պետր. 4: 10-11): Ինքն իրենից գործողը սնափառության համար է գործում թե՛ իրեն և թե՛ իր ունկնդրին զոհաբերելով սատանային, Տիրոջով գործողը գործում է Տիրոջ փառքի համար՝ իրագործելով իր և իր մերձավորի փրկությունը Տիրոջով՝ մարդկության միակ Փրկչով: Վախենանք սկսնակին մի որևէ չմտածված խրատ տալուց, ինչը հիմնված չէ Աստծո Խոսքի և դրա ճշգրիտ հոգևոր ընկալման վրա: Ավելի լավ է խոստովանենք մեր անգիտությունը, քան հոգեվնաս գիտություն ցուցաբերենք: Պահպանենք մեզ մեծ աղետից՝ դյուրահավատ սկսնակին Աստծո ծառայից վերածելով մարդու ծառայի, ամենասուրբ Աստծո կամքը կատարելու փոխարեն ներգրավելով նրան ընկած մարդու կամքը կատարելու մեջ: Խորհրդատուի և խրատ ընդունողի համեստ հարաբերությունը բոլորովին այլ է, քան ծերի և իրեն անվերապահորեն հնազանդվող Աստծո ծառայի հարաբերությունը: Խորհուրդը իր մեջ չպիտի պարունակի անպատճառ կատարելու պայման, այն կարող է կատարվել կամ չկատարվել: Խորհրդատուն ոչ մի պատասխանատվություն չի կրում իր խորհրդի համար, եթե նա տվել է այն Աստծո երկյուղով և խոնարհամտությամբ, ոչ ինքնակամ, այլ միայն՝ երբ հարցրել են և պարտադրել, որ պատասխանի: Այդպես էլ խորհուրդ ստացողը չի կառչում դրանից, այլ նրա կամքի և բանականության վրա է մնում ստացած խորհրդի կատարումը կամ չկատարումը: Ակնհայտ է, որ խորհրդի ճանապարհը և Սուրբ Գրքին հետևելը հարիր է հոգևոր անկում ապրող մեր այս ժամանակներին: Նշենք, որ սուրբ հայրերն արգելում են խորհուրդներ տալ մերձավորին սեփական դրդմամբ՝ առանց մերձավորի հարցման, ինքնակամ խորհուրդ տալը նշան է իրեն գիտուն և հոգևոր արժանիքների տեր համարելուն, որի մեջ բացահայտ հպարտություն և ինքնահմայություն կա: Դա չի վերաբերվում վանահայրերին և ղեկավարներին, որոնք պարտավոր են ամեն ժամ, յուրաքանչյուր պահանջի դեպքում և նույնիսկ առանց հարցնելու խրատել իրենց հանձնված եղբայրներին (Բ Տիմ. 4:2): Բայց ուրիշ վանքեր այցելելու ժամանակ նրանք պետք է առաջնորդվեն սուրբ Մակար Ալեքսանդրացու խորհրդով՝ տրված սուրբ Պախոմ Մեծին: Պախոմը հարցրեց Մակարին՝ եղբայրներին խրատելու և նրանց դատելու մասին: Աբբա Մակարը պատասխանեց. «Ուսուցանիր և դատիր քո հպատակներին, իսկ օտարներից ոչ ոքի մի դատիր» (Հարանց Վարք): Այս կանոնը պահել և պահում են Աստծուն հաճելի լինել ցանկացող բոլոր վանահայրերը:

ՃԳՆԱՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Սիրելի եղբայրներ, ձեզնից թող ծածկված չլինի այն, որ վանական տարատեսակ ապրելակերպերը, ինչպիսիք են՝ ճգնավորությունը անապատի խորքերում կամ միանձնյաների արգելափակումը խցում, ինչպես նաև Աստվածակիր ծերերի մոտ անվերապահ հնազանդության տրվելը պատահականորեն չի լինում ո՛չ ինքնակամորեն և ո՛չ էլ մարդկային գիտակցության համեմատ, այլ Աստծո հատուկ հոգածությամբ, դասակարգմամբ, կոչմամբ և հայտնությամբ: Անտոն Մեծը՝ վանականության գլուխը, որը անապատաբնակության հիմնադիրն է, հեռացել էր անապատ արդեն երկնային զորությամբ զգեստավորված, կանչվելով Աստծո կողմից և ոչ այլ կերպ: Չնայած դա հստակ չի ասվում նրա վարքում, բայց սրբի կյանքի հետագա իրադարձությունները հստակորեն ապացուցում են այդ: Այն էլ, որ խոր (ներքին) անապատում խստագույն մենակյացության համար նա կարգվել էր Աստվածային ձայնով և հրամանով, ինչը ասվում է նաև նրա վարքում: Սուրբ Մակար Մեծին, ով սուրբ Անտոնի ժամանակակիցն էր՝ նրանից մի քիչ կրտսեր, հայտնվեց Քերովբեն, ցույց տվեց անպտուղ, վայրի հարթավայրը՝ հետագայում նշանավոր եգիպտական Սկիտը, պատվիրեց այնտեղ տեղավորվել՝ բնակություն հաստատելու համար, և

խոստացավ, որ անապատային հարթավայրը կբնակեցվի բազմաթիվ վանականներով: Արսեն Մեծը, գտնվելով թագավորական պալատներում, աղոթեց Աստծուն, որպեսզի իրեն ցույց տրվի փրկության ճանապարհը և ձայն լսեց. «Արսեն, փախի՛ր մարդկանցից և կփրկվես»: Արսենը հեռացավ վերոհիշյալ Սկիտ, այնտեղ նորից խնդրեց Աստծուն՝ ցույց տալ իրեն փրկության ճանապարհը և նորից ձայն լսեց. «Արսեն, փախի՛ր մարդկանցից, մի՛ խոսիր, միայնակեցության մեջ մնա՛, դա է անմեղության արմատը» (Հարանց Վարք): Սուրբ Մարիամ Եգիպտացին ճգնավորության էր կոչված Անդրհորդանանյան անապատ՝ Աստվածային հրամանով: Աստված միայնակեցության և ճգնավորության կանչելով Իր ընտրյալներին, այսինքն՝ նրանց, ում Նա նախատեսել էր որպես միայնակեցության և ճգնավորության ընդունակ մարդիկ, նման կենցաղավարության համար այնպիսի միջոցներ էր տվել, ինչպիսիք մարդն ինքն իրենով ունենալ չէր կարող: Դեռ այն ժամանակ, երբ վանականությունը ծաղկում էր, երբ բազում էին Հոգեկիր առաջնորդները, միայն հազվագյուտներն ընդունակ համարվեցին միայնակեցության, հատկապես՝ ճգնավորության: «Իրական խելամիտ միանձնության, - ասում է սուրբ Հովհաննես Սանդուղքը, - կարող են տրվել քչերը և հատկապես միայն նրանք, ովքեր Աստվածային հորդոր են ստացել՝ որպես խրախուսանք սխրագործություններում և օգնություն՝ պատերազմներում» (Խոսք 4, գլուխ 120): «Միայնակեցությունը կործանում է անփորձներին» (Խոսք 27, գլուխ 5): Արգելականները և ճգնավորները հաճախ ենթարկվել են հոգևոր մեծագույն արհավիրքի, հատկապես նրանք, ովքեր խուց են մտել ինքնակամ՝ առանց Աստծո կանչի:

Վանականության մասին գրված գրքում կարդում ենք հետևյալը. «Պաղեստինում կար մի վանք, մեծ ու բարձր ժայռի ստորոտին, իսկ վանքից վերև՝ ժայռի վրա, կար մի քարայր: Այդ վանքի վանականները պատմում էին. «Սրանից որոշ ժամանակ առաջ մեր եղբայրներից մեկի մոտ ցանկություն առաջացավ ապրել քարայրում, որը լեռան վրա էր և այդ մասին խնդրեց վանահորը: Վանահայրը կշռադատության պարգև ուներ: Նա ասաց եղբորը. «Զավակս, դու ինչպե՞ս ես ցանկանում միայնակ ապրել քարայրում, երբ դեռ նույնիսկ փոքր-ինչ չես հաղթահարել այն խորհուրդները, որոք բորբոքում են քո մեջ մարմնավոր և հոգևոր կրքեր: Միայնակեցությամբ ապրել ցանկացողը պետք է լինի ուսուցչի ղեկավարության տակ, այլ ոչ թե անձամբ առաջնորդի ինքն իրեն: Դու դեռ բոլորովին չհասած պատշաճ հասակի, խնդրում ես ինձ՝ տկարիս, որպեսզի թույլ տամ քեզ միայնակ ապրել քարայրում, իսկ ես մտածում եմ, որ դու դեռ ունակ չես ըմբռնել դիվային տարբեր խարդավանքները: Քեզ համար ավելի լավ է ծառայել հայրերին, նրանց աղոթքներով Աստծուց օգնություն ստանալ, նրանց հետ նշանակված ժամին փառաբանել և գովերգել բոլորի Տիրոջը, քան միայնակ պայքարել պիղծ և չարանենգ խորհուրդների դեմ: Մի՞թե չես լսել, թե ինչ է ասում սուրբ Հովհաննեսը՝ «Սանդուղք» գրքի հեղինակը. «Վա՜յ միանձնության մեջ ապրողին, որովհետև եթե նա ընկնի ձանձրույթի կամ ծուլության մեջ, ապա ո՞վ կարող է ոտքի կանգնեցնել նրան: Իսկ որտեղ երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անվան համար, այնտեղ Ես նրանց հետ եմ, - ասաց Տերը»: Այդպես պատասխանեց նրան վանահայրը, բայց չկարողացավ ցրել վանականի հոգեկործան խորհուրդները: Տեսնելով եղբոր անդիմադրելի ցանկությունը և նրա թախանձագին խնդրանքը՝ վանահայրը վերջապես թույլատրեց նրան ապրել քարայրում: Ուղեկցվելով վանահոր աղոթքով՝ նա բարձրացավ քարայր: Ճաշի ժամին կերակուրը նրա համար քարայր էր բերում վանքի եղբայրներից մեկը, իսկ մենակյացը քարայրում մի զամբյուղ ուներ, որը իջեցնում և ընդունում էր ուտելիքը: Երբ նա որոշ ժամանակ ապրեց քարայրում, դևը, որը միշտ պայքարում է աստվածահաճո կյանք ապրել ցանկացողների դեմ, սկսեց գիշեր – ցերեկ շփոթեցնել նրան չար խորհուրդներով, իսկ մի քանի օր անց լուսավոր հրեշտակի կերպարանքով հայտնվեց նրան և ասաց. «Թող քեզ հայտնի լինի, որ հանուն քո մաքրության և բարության Աստված ինձ ուղարկեց քեզ ծառայելու»: Վանականը պատասխանեց. «Ես ի՞նչ բարի բան եմ արել, որ հրեշտակները ծառայեն ինձ»: Դևն առարկեց. «Այն ամենը, ինչ դու արել ես, մեծ է և վեհ: Դու

թողեցիր աշխարհի գեղեցկությունը և վանական դարձար՝ ճգնելով պահքով, աղոթքներով և հսկումներով, իսկ հետո թողեցիր վանքը և տեղափոխվեցիր ապրելու այստեղ, ուրեմն ինչպե՞ս կարող են հրեշտակները չծառայել քո սրբությանը»: Այսպիսի խորհուրդներով հոգեկործան օձը նրան մեծամտության ու հպարտության հասցրեց և սկսեց մշտապես հայտնվել նրան: Մի օր գողերի կողմից կողոպտված մի մարդ եկավ վանականի մոտ: Պիղծ դևը, որը հմայել էր նրան, հրեշտակի կերպարանքով երևաց և ասաց. «Այդ մարդը կողոպտվել է գողերի կողմից, գողացածը թաքցված է այսինչ տեղում, ասա նրան, որ գնա այնտեղ և վերցնի դրանք»: Մարդը գալով քարայր՝ խոնարհվեց, իսկ վանականը վերևից ասաց նրան. «Լավ է, եղբայր, որ եկար: Ես գիտեմ, որ քեզ հետ դժբախտություն է պատահել, որովհետև քեզ մոտ գողեր են մտել և այս ու այն գողացել: Մի՛ տխրիր: Նրանք գողացածը այսինչ տեղում են պահել, գնա այնտեղ և ամեն ինչ կգտնես, իսկ ինձ համար աղոթի՛ր»: Մարդը զարմանքով լսեց նրան և գտավ գողացվածը: Նա գովաբանեց վանականին այդ ամբողջ երկրով մեկ՝ ասելով, թե քարայրում ապրող վանականը մարգարե է: Վանականի մոտ բազմաթիվ մարդիկ սկսեցին հավաքվել, լսելով սրան՝ նրանք զարմանում էին այն խոսքերից, ինչը նա արտաբերում էր դևերի ներշնչմամբ: Նա գուշակում էր և նրա գուշակություններն իրականանում էին: Թշվառը բավական ժամանակ անցկացրեց այդ հմայության մեջ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման երկրորդ շաբաթվա երկրորդ օրը պիղծ դևը երևաց վանականին և ասաց. «Իմացիր, հայր, որ հանուն քո անարատ և հրեշտակային վարքի, ուրիշ հրեշտակներ կգան և քեզ մարմնով երկինք կբարձրացնեն, այնտեղ բոլոր հրեշտակների հետ կվայելես Տիրոջ աննկարագրելի գեղեցկությունը»: Դևն այս ասելով՝ անհետացավ: Բայց մարդասեր և բազմողորմ Տերը, որ չի ցանկանում մարդկության կործանումը, վանականի սրտի մեջ դրեց, որ պատահածի մասին հայտնի վանահորը: Երբ եկավ եղբայրը, ով սովորաբար հաց էր բերում մենակյացին, նա դուրս նայեց քարայրից և ասաց նրան. «Եղբայր, գնա վանահորն ասա՛, որ գա ինձ մոտ»: Եղբայրը դա փոխանցեց վանահորը: Վանահայրը շտապեց գնալ և աստիճաններով բարձրացավ քարայր՝ մենակյացի մոտ, և ասաց նրան. «Ի՞նչ պատճառով ես, զավակս, պատվիրել ինձ՝ գալ այստեղ»: Նա պատասխանեց. «Ինչո՞վ փոխհատուցեմ քեզ, սուրբ հայր, այն ամենի համար, ինչ դու արեցիր ինձ՝ անարժանիս համար»: Վանահայրն ասաց. «Ի՞նչ բարի բան եմ արել քեզ համար»: Վանականը պատասխանեց. «Ճիշտն ասած, հայր, քո միջնորդությամբ ես արժանացա մեծ ու բազում բարիքների: Քո շնորհիվ ես հրեշտակային կերպարանքով զգեստավորվեցի, քեզ եմ պարտական, որ հրեշտակների եմ տեսնում և զրուցում նրանց հետ և որ կանխատեսության և մարգարեության պարգև ստացա»: Վանահայրը լսելով այդ՝ զարմացավ և ասաց. «Դժբախտ մարդ, մի՞թե դու հրեշտակներ ես տեսնում: Մի՞թե դու կանխատեսության պարգևի ես արժանացել: Վա՜յ քեզ, դժբախտ թշվառիդ: Մի՞թե ես քեզ չասացի՝ մի՛ գնա քարայր, որպեսզի դևերը քեզ հմայության մեջ չգցեն»: Երբ վանահայրն այդ ասաց, եղբայրը նրան առարկեց. «Այդպես մի՛ ասա, արդար հայր, քո սուրբ աղոթքների շնորհիվ ես հրեշտակներ եմ տեսնում, վաղը նրանք ինձ մարմնով երկինք են բարձրացնելու: Թող իմանա սրբությունդ, որ ես ուզում եմ խնդրել մեր Տեր Աստծուց, որպեսզի քեզ էլ վերցնեն հրեշտակները և դու էլ ինձ հետ լինես երկնային փառքում»: Լսելով այդ՝ վանահայրը սպառնալից ասաց նրան. «Դու հմայվել ես դևերի կողմից, դժբախտ մարդ: Սակայն, եթե ես այստեղ եմ եկել, ապա չեմ գնա այստեղից: Կմնամ այստեղ՝ տեսնելու, թե ի՞նչ է կատարվելու քեզ հետ: Գարշելի դևերին, որոնց դու հրեշտակ ես անվանում, ես չեմ տեսնի, բայց դու, երբ տեսնես, որ նրանք եկել են, ասա՛ ինձ»: Վանահայրը պատվիրեց հեռացնել աստիճանը և մնաց քարայրում պատրվածի հետ՝ պահքով և անդադար սաղմոսերգությունների մեջ հարատևելով: Երբ հասավ այն ժամը, որ պատրվածը իբր երկինք պիտի բարձրանար, նա տեսավ մոտեցող դևերին և ասաց. «Եկան, հայր»: Այդ ժամանակ վանահայրը գրկեց նրան և աղաղակեց. «Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, օգնի՛ր պատրանքի մեջ գտնվող Քո ծառային և թույլ մի՛ տուր, որ պիղծ դևերը հաղթեն նրան»: Երբ վանահայրն այս ասաց, դևերը բռնեցին և սկսեցին քաշել պատրանքի մեջ գտնվողին՝ ջանալով հանել նրան վանահոր

գրկից: Վանահայրը թույլ չտվեց դևերին: Նրանք, պոկելով պատրվածի փարաջան նրա վրայից՝ անհետացան: Փարաջան տեսանելիորեն վեր բարձրացավ և, վերջապես, անհետացավ: Սակայն բավական ժամանակ անց փարաջան նորից երևաց ներքև իջնելիս և ընկավ գետին: Այդ ժամանակ ծերն ասաց պատրվածին. «Անխելք և դժբախտ, տեսա՞ր, թե ինչպես վարվեցին դևերը քո փարաջայի հետ, այդպես էլ նրանք մտադրվել էին վարվել քեզ հետ: Նրանք մտադրվել էին քեզ, ինչպես Սիմոն կախարդին, օդ բարձրացնել և ցած թողնել, որպեսզի դու ջախջախվեիր և հոգիդ կորցնեիր»: Վանահայրը կանչեց վանականներին, պատվիրեց նրանց՝ աստիճան բերել, պատրվածին քարայրից վանք տարավ և նրան հացի փռում, խոհանոցային և վանքի այլ գործերում ծառայության նշանակեց, որպեսզի խոնարհվեն նրա խորհուրդները: Նման ձևով նա փրկեց այդ եղբորը»:

Մեր հայրենակիցներ երանելի Իսահակ և Նիկիտա Պեչորսկիները դաժան փորձության ենթարկվեցին վաղաժամ մենակեցության մեջ մտնելու պատճառով: Սուրբ Իսահակի՝ սուրբ Անտոնի և Թեոդոսի ժամանակակցի կենսագրությունից հայտնի է, որ նա մենակեցության մեջ մտել է սեփական կամքով: Նա անցել է մարմնական մեծ սխրանքների միջոցով, առավել հզոր սխրագործությունների ձգտումը նրան ներշնչեց փակվել Կիևո-Պեչորսկի վանքի ամենաանհարմար խցերից մեկում: Նրա ուտելիքը նշխարքն էր, իսկ ըմպելիքը՝ ջուրը, և այս աղքատիկ կերակուրը նա ընդունում էր օրը մեջ: Մարմնավոր ճգնությունների այսպիսի սաստկացման և սխրագործությունների ու հոգևոր պատերազմի փորձառության մասին անբավարար գիտելիքներ ունենալու պատճառով կցանկանայինք որոշ գնահատական տալ թե՛ իր սխրագործություններին, և թե՛ իրեն: Սովորաբար ճգնավորի ներքին վիճակի վրա հիմնվելով են դևերը փորձության ենթարկում նրան: «Եթե մարդը, - ասում է սուրբ Մակար Եգիպտացին, - դևերին առիթ չտա իրեն ենթարկել նրանց ազդեցությանը, ապա սատանան ոչ մի կերպ չի կարող ուժով իշխանություն ձեռք բերել նրանց վրա» (Խոսք 4, գլուխ 12): Դևերը Իսահակին ներկայացան լուսավոր հրեշտակների կերպարանքով. նրանցից մեկը մյուսներից առավել շատ էր փայլում, և դևերը նրան «Քրիստոս» կոչեցին ու ճգնավորից պահանջեցին՝ երկրպագել նրան: Ճգնավորը, ինչպես վայել է երկրպագել միայն Աստծո առջև, այդպես երկրպագեց սատանային՝ այդ կերպ ենթարկելով իրեն դևերին, որոնք տանջեցին նրան՝ բռնի այս ու այն կողմ տարուբերելով ստիպեցին այնքան պար գալ, մինչև կիսամեռ ընկավ գետին: Սուրբ Անտոնը, որը ծառայում էր մենակյացին, սովորականի նման նրան կերակուր բերելու եկավ, բայց տեսնելով, որ մենակյացը ոչ մի ձայն չի հանում, և հասկանալով, որ նրա հետ ինչ-որ առանձնահատուկ բան է կատարվել, մյուս վանականների օգնությամբ քանդեց Իսահակի քարայրի դուռը, որը ամուր փակված էր: Նրան դուրս բերեցին իբրև մեռել և դրեցին քարայրի առաջ. նկատելով, որ նա դեռ ողջ է՝ տարան խուց և դրեցին անկողնու վրա: Անտոնն ու Թեոդոսը հերթով խնամում էին նրան: Իսահակը փորձության պատճառով մտքով և մարմնով թուլացել էր, չէր կարողանում ո՛չ կանգնել, ո՛չ նստել, ո՛չ պառկած այս ու այն կողմ շրջվել: Եվ երկու տարի անշարժ պառկեց՝ խուլ ու համր: Երրորդ տարում նա խոսեց և խնդրեց, որ իրեն բարձրացնեն և ոտքի կանգնեցնեն: Այնուհետև սկսեց քայլել սովորել երեխայի նման, բայց ոչ մի ցանկություն, նույնիսկ միտք չարտահայտեց եկեղեցի գնալու մասին. սակայն մեծ դժվարությամբ և ուժով հարկադրում էին նրան, և նա կամաց – կամաց սկսեց Աստծո տաճար գնալ: Դրանից հետո սկսեց գնալ նաև ընթրիքներին և հետզհետե սովորեց ուտել. այն երկու տարիներին, որ նա անշարժ պառկած էր, չէր ընդունում ո՛չ հաց, ո՛չ ջուր: Վերջապես նա կատարելապես ազատվեց այդ սարսափելի ու տարօրինակ ազդեցությունից, որոնք առաջացել էին դևերի հայտնության և գործունեության պատճառով: Հետագայում Իսահակը մեծ սրբության հասավ: Սուրբ Նիկիտան սուրբ Իսահակից փոքր էր, բայց նրա ժամանակակիցն էր: Նախանձախնդրությամբ տարված՝ նա խնդրեց վանահորը, որ օրհնի իրեն մենակեցության մեջ ապրելու համար: Վանահայրն այդ ժամանակ Նիկոնն էր, որն արգելեց նրան՝ ասելով. «Որդյա՛կ իմ, քեզ համար օգտակար չէ երիտասարդ վիճակում պարապության մեջ մնալ: Եղբայրների հետ ապրելն ավելի

լավ է: Նրանց ծառայելով դու չես կորցնի քո վարձը: Ինքդ էլ գիտես, թե ինչպես քարայրաբնակ Իսահակը միայնության մեջ գտնվելով՝ հմայվեց դևերի կողմից: Նա հավանաբար կկործանվեր, եթե Աստծո առանձնահատուկ շնորհը մեր սուրբ հայրեր Անտոնի և Թեոդոսի աղոթքների միջոցով չփրկեր նրան»: Նիկիտան պատասխանեց. «Ես նման բաներով երբեք չեմ պատրվի, այլ ցանկանում եմ ամուր կանգնել դիվային խարդավանքների դեմ և աղոթել մարդասեր Աստծուն, որպեսզի Նա ինձ էլ պարգևի հրաշագործության շնորհ, ինչպես Իսահակ մենակյացին, ով մինչև այժմ էլ բազում հրաշքներ է գործում»: Վանահայրը նորից ասաց. «Քո ցանկությունը ուժերիցդ վեր է, հսկիր, որպեսզի բարձրանալով՝ վայր չընկնես: Ես դրան հակառակ քեզ պատվիրում եմ ծառայել եղբայրներին և քո հնազանդության համար Աստծուց պսակ կստանաս»: Նիկիտան սաստիկ հրապուրված լինելով միայնակեցությամբ՝ ոչ մի ուշադրություն չէր ցանկանում դարձնել վանահոր խոսքերին: Նա իրագործեց իր որոշումը. փակեց իրեն խցում և մնաց աղոթքի մեջ ու դուրս չեկավ այնտեղից: Անցավ որոշ ժամանակ. մի օր աղոթքի ժամին նա ձայն լսեց, որն աղոթում էր իր հետ, և անուշահոտություն բուրեց: Խաբվելով այդ նշաններից՝ նա ինքն իրեն ասաց. «Եթե սա հրեշտակ չլիներ, ապա չէր աղոթի ինձ հետ և Սուրբ Հոգու անուշահոտությունը չէր բուրի»: Այնուհետև Նիկիտան սկսեց ջանասիրաբար աղոթել՝ ասելով. «Տեր, անձամբ հայտնվիր ինձ, թող տեսնեմ Քեզ»: Այդ ժամանակ նա ձայն լսեց. «Դու երիտասարդ ես: Չեմ երևա քեզ, որպեսզի դու մեծամտանալով չընկնես»: Մենակյացն արցունքներով պատասխանեց. «Տեր, ես երբեք պատրանքի մեջ չեմ ընկնի, որովհետև վանահայրը սովորեցրեց ինձ ուշադրություն չդարձնել դիվային պատրանքի վրա, այլ կանեմ այն ամենը, ինչ որ Դու ինձ կպատվիրես»: Այդ ժամանակ հոգեկործան օձը նրա վրա իշխանություն ստանալով՝ ասաց. «Հնարավոր չէ, որ մարմնի մեջ գտնվող մարդը ինձ տեսնի, բայց, ահա, ես ուղարկում եմ իմ հրեշտակին, որպեսզի նա քեզ մոտ մնա, դու կատարի՛ր նրա կամքը»: Այդ խոսքերից հետո դևը մենակյացի առջև կանգնեց հրեշտակի կերպարանքով: Նիկիտան ընկավ նրա ոտքերը՝ երկրպագելով նրան իբրև հրեշտակի: Դևն ասաց. «Այսօրվանից դու արդեն մի՛ աղոթիր, այլ գրքեր կարդա, որից հետո անդադար զրույցի մեջ կմտնես Աստծո հետ և հնարավորություն կստանաս հոգեշահ խոսքեր քարոզել քեզ մոտ եկողներին, իսկ ես անդադար կաղոթեմ բոլորի Արարչին քո փրկության համար»: Մենակյացը հավատալով այդ խոսքերին՝ առավել ևս պատրվեց. նա դադարեց աղոթել, զբաղվեց ընթերցանությամբ, տեսավ անդադար աղոթող դևին, ուրախացավ՝ ենթադրելով, թե հրեշտակն աղոթում է իր համար: Այնուհետև նա սկսեց իր մոտ եկողների հետ շատ խոսել Սուրբ Գրքից և քարոզել վերոբերյալ պաղեստինցի միայնակյացի նման: Նրա համբավը հասավ աշխարհային մարդկանց և իշխանական տուն: Նա անձամբ չէր մարգարեանում, այլ եկողներին ասում էր այն տեղեկությունը, ինչ ստանում էր իր մոտ գտնվող դևից, թե որտեղ է գտնվում գողացվածը, թե իրենից հեռու որտեղ ինչ է պատահել: Այս կերպ նա իմաց տվեց մեծ իշխան Իզյասլավին Նովգորոդի իշխան Գլեբի սպանության մասին և խորհուրդ տվեց Նովգորոդ ուղարկել մեծ իշխանի որդուն՝ այնտեղ իշխելու: Դա բավական էր աշխարհային մարդկանց համար, որպեսզի մենակյացին մարգարե հռչակեին: Ակնհայտ է, որ աշխարհայինները և հենց վանականները, ովքեր հոգևոր դատողություն չունեն, գրեթե միշտ հմայվում են խաբեբաներով, կեղծավորներով և դիվային պատրանքի մեջ գտնվող մարդկանցով՝ նրանց համարելով «սրբեր» և «շնորհալիներ»: Ոչ ոք չէր կարող Հին Կտակարանի իմացությամբ հավասարվել Նիկիտային, բայց նա տանել չէր կարողանում Նոր Կտակարանը, երբեք իր զրույցներում փոխ չէր առնում Ավետարանից և Առաքելական Ուղերձներից, թույլ չէր տալիս, որ իր այցելուներից որևէ մեկը ինչ-որ բան հիշատակի Նոր Կտակարանից: Նրա ուսմունքի այդ տարօրինակ ուղղության պատճառով Կիևո–Պեչորսկի վանքի հայրերը հասկացան, որ նա պատրվել է դևերի կողմից: Այդ ժամանակ վանքում բազում սուրբ վանականներ կային՝ զարդարված շնորհալի պարգևներով: Նրանք իրենց աղոթքների միջոցով դևին վտարեցին Նիկիտայի միջից: Նիկիտան դադարեց նրան տեսնել: Հայրերը դուրս բերեցին Նիկիտային խցից և նրան ինչ-որ բան

հարցրին Հին Կտակարանից, բայց նա երդումով պնդում էր, որ երբեք չի կարդացել այդ գրքերը, որոնք նախկինում անգիր գիտեր: Պարզվեց, որ նա դիվական պատրանքի պատճառով մոռացել է նույնիսկ կարդալը և հազիվ, մեծ դժվարությամբ նորից սովորեց ընթերցել: Սուրբ հայրերի աղոթքներով գիտակցության գալով՝ նա ընդունեց և խոստովանեց իր մեղքը, դառը արտասուք թափեց, ապա եղբայրների հետ խոնարհությամբ ապրելով՝ հասավ սրբության և հրաշագործության շնորհի: Հետագայում սուրբ Նիկիտան ձեռնադրվեց Նովգորոդի եպիսկոպոս:

Նորագույն հետազոտությունները հաստատում են այն, ինչ հստակորեն ապացուցել են հին ժամանակների հետազոտությունները: Այսօր էլ պատրանքը, ինչը վանական լեզվով կոչվում է ինքնահմայություն (կամ՝ ինքնախաբեություն), միավորված դիվական խաբկանքների հետ, միանշանակ հետևանք է վաղաժամ խոր միանձնության հեռանալու կամ խցային առանձնության մեջ մտնելու հատուկ սխրագործության: Այն ժամանակ, երբ այս պատանիների հետ կապված ճգնավորական եղելությունների մասին գրողը 1824 – 1825 թթ. այցելեց Ալեքսանդր Նևսկիի մայրավանք, իր խորհուրդների մասին խորհրդակցելու Հովհաննիկե վանականի՝ մայրավանքի դպիրի հետ, որը Թեոդորոսի և Լեոնիդի աշակերտն էր, այդ վանականի մոտ հոգևոր խորհրդակցության համար գալիս էին շատ աշխարհականներ, որ վարում էին ճգնավորական կյանք: Նրա մոտ էր գալիս նաև Պավլովյան գնդից մի զինվորական՝ Պավել անունով, սա վերջերս էր դարձի եկել աղանդավորականությունից, շատ գրագետ էր և նախկինում այդ աղանդավորների մոտ որպես ուսուցիչ էր հանդես գալիս: Պավելի դեմքը փայլում էր ուրախությունից: Բայց նա, իր մեջ բռնկված մեծ ջերմեռանդության հետևանքով, տրվեց չափից ավելի և իրեն չհամապատասխանող մարմնավոր ճգնությունների՝ չունենալով հոգևոր սխրանքների մասին բավարար գիտելիք: Մի անգամ գիշերով Պավելը աղոթքի կանգնեց: Հանկարծ սրբապատկերի մոտ հայտնվեց արևանման լույս, և լույսի մեջտեղում՝ փայլփլուն սպիտակ աղավնի: Աղավնուց ձայն լսվեց. «Ընդունիր ինձ: Ես Սուրբ Հոգին եմ, եկել եմ, որ քեզ իմ տաճարը դարձնեմ»: Պավելը ուրախությամբ համաձայնեց: Աղավնին նրա մեջ մտավ բերանից, իսկ Պավելը, պահքերից և հսկումներից հյուծված, հանկարծ իր մեջ շնության ուժգին կիրք զգաց. նա թողեց աղոթքը և վազեց անառականոց: Նրա քաղցած կիրքը նման կերպով հագեցնելն այն դարձրեց ավելի մոլեգին: Անառականոցները դարձան նրա մշտական այցելատեղիները: Վերջապես նա ուշքի եկավ: Դիվական հմայվածության և պատրանքի հետևանքով գործած իր մեղանչումները շարադրեց վարդապետ Լեոնիդին ուղղված նամակում, որն այդ ժամանակ ապրում էր Ալեքսանդր – Սվիրսկի վանքում: Վարդապետ Լեոնիդը 1828թ. գարնանը Սվիրսկի վանքից տեղափոխվեց սկզբում Պլոշչանսկի, այնուհետև՝ Օպտինայի անապատ: Նա այցելեց նաև Կալուժյան և Օռլովի թեմերին պատկանող մի քանի վանքեր: Երբ նա գտնվում էր հռչակավոր Բելոբերեժյան անապատում, այդ ժամանակ այնտեղ ճգնավորական կյանքի մեջ մեծ համբավ ուներ փարաջայակիր վանական Սրապիոնը, ով միայնակեցության մեջ իր խցում տեսնում էր հրեշտակի: Ոչ միայն աշխարհականները, այլ նաև վանականները փառաբանում էին Սրապիոնին (քանի որ մեզ մոտ՝ Ռուսաստանում, գերիշխում է մարմնավոր սխրանքը, իսկ հոգևորը գրեթե կորցրել է իր իմաստը) և ցույց էին տալիս որպես վանական կյանքի օրինակ: 1829թ. Սրապիոնը հոգեկան խանգարման պատճառով տեղափոխվեց Օպտինայի անապատ, որպեսզի վարդապետ Լեոնիդի խորհուրդներով ղեկավարվի: Ծերի մոտ հերթական խորհրդակցության ժամանակ նա պոկեց ծերի մորուքի զգալի մասը: Սրապիոնը, որ Օպտինա անապատում էր ապրում իր նախկին ճգնավորական փառքի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով, մի անգամ գիշերով եկավ անապատի առաջնորդ վարդապետ Անտոնի մոտ և ասաց, թե իբր Հովհաննես Կարապետը քիչ առաջ հայտնվեց իրեն և պատվիրեց մորթել Անտոնին, վարդապետ Լեոնիդին, վարդապետ Գաբրիելին և կալվածատեր Ժելաբովսկուն, որն այդ ժամանակ հյուրընկալվել էր անապատում: «Իսկ ո՞ւր է քո դանակը», - հարցրեց նրան հնարամիտ և անվախ Անտոնը: «Իմ մոտ դանակ

չկա», - պատասխանեց պատրվածը: «Ուրեմն, ինչո՞ւ ես առանց դանակի եկել», - ասաց Անտոնը և պատրվածին ուղարկեց խուց: Ի վերջո ստիպված էին նրան հոգեբուժարան տանել, որտեղ էլ նա մահացավ: Ասում են՝ մահվանից առաջ Սրապիոնն ուշքի եկավ և այս աշխարհից հեռացավ փրկության հույսով: Պետք է նշել, որ ընկած ոգին ցանկանալով տիրել Քրիստոսի ճգնավորին՝ չի գործում իշխողաբար, այլ փորձում է մարդու ուշադրությունը սևեռել իր առաջարկած խաբկանքի վրա, և համաձայնություն ստանալով՝ նոր միայն տիրում է նրան: Սուրբ Դավիթը, պատկերելով ընկած հրեշտակի հարձակումը մարդու վրա, նկարագրում է այն ամբողջ ճշտությամբ՝ ասելով. «Դարանակալում է հափշտակելու աղքատին և ճանկելու նրան: Նրան կգցի իր որոգայթը» (Սղմ. 9:30): Սուրբ Հոգին ինքնակամ է գործում. որպես Աստված՝ գալիս է հենց այն ժամանակ, երբ իրեն խոնարհեցրած և նսեմացրած մարդը երբեք չի սպասում Նրա գալստյանը: Հանկարծ փոխվում է գիտակցությունը, փոխվում սիրտը: Իր գործունեությամբ ընդգրկում է մարդու ողջ կամքն ու ընդունակությունները, որը չունի կարողություն՝ խորհելու իր մեջ կատարվող գործունեության մասին: Երբ շնորհը իջնում է մեկի վրա, այն որևէ սովորական կամ զգայական բան ցույց չի տալիս, այլ թաքուն սովորեցնում է այն, ինչ անձը նախապես ոչ տեսել և ոչ էլ երբևէ պատկերացրել է: Այդ ժամանակ միտքը թաքուն սովորում է բարձր և ծածուկ խորհուրդներ, որոնք, ըստ Աստվածային Պողոսի, չի կարող տեսնել մարդկային աչքը, առավել ևս՝ միտքն ինքն իրենով ըմբռնել: Մարդկային միտքը ինքն իրենով, միավորված չլինելով Աստծո հետ, դատում է ըստ իր կարողությունների: Իսկ երբ միավորվում է Աստվածային կրակի և Սուրբ Հոգու հետ, այդ ժամանակ ամբողջությամբ տիրացած է լինում Աստվածային Լույսին, ամբողջությամբ լույս է դառնում, բոցավառվում է Ամենասուրբ Հոգու բոցով, լցվում Աստվածային բանականությամբ և հնարավոր չէ, որ նա Աստվածային հրի ներքո մտածի իր մասին և այն մասին, ինչ որ ինքը կցանկանար: Այդպես էր ասում սուրբ Մաքսիմ Կապսոկալիվը սուրբ Գրիգոր Սինայեցուն:

Դրան հակառակ, դիվային հայտնության ժամանակ միշտ մարդուն ազատություն է տրվում՝ հայտնությունը քննելու, ընդունելու կամ մերժելու համար: Դա երևում է դևերի հարձակումներից, որոնք ջանում են պատրել Աստծո սրբերին: Մի անգամ, երբ սուրբ Պախոմ Մեծն առանձնության մեջ էր՝ վանքից դուրս, նրան երևաց դևը լույսերի մեջ և ասաց. «Ուրախացի՛ր, Պախոմ, ես Քրիստոսն եմ և եկել եմ քեզ մոտ՝ որպես իմ ընկերոջ»: Սուրբն ինքն իր մեջ խորհելով՝ մտածեց. «Քրիստոսի այցը մարդուն միավորված է լինում ուրախությամբ՝ օտար սարսափից: Այդ ժամանակ անմիջապես անհետանում են մարդկային բոլոր խորհուրդները, միտքն ամբողջովին սևեռվում է տեսիլքի վրա: Բայց ես, տեսնելով այս հայտնությունը՝ լցվեցի շփոթությամբ և սարսափով: Սա Քրիստոսը չէ, այլ՝ սատանան»: Այդ մտորումներից հետո սուրբը համարձակությամբ ասաց հայտնվածին. «Սատանա, հեռացիր ինձանից, անիծյալ լինես դու, քո տեսիլքը և քո նենգավոր խորամանկ ծրագրերը»: Դևն անմիջապես հեռացավ՝ խուցը լցնելով գարշահոտությամբ (Հարանց Վարք):

Անհնար է, որ մարդը, դեռևս գտնվելով մարմնավոր իմաստության շրջանում և դեռ չստացած հոգևոր տեսություն մարդկային ընկած բնության հանդեպ՝ որոշ գնահատական չտա իր գործերին և իրեն որոշ արժանիքներ չվերագրի, որքան էլ որ այդ մարդը խոնարհության խոսքեր ասի և արտաքնապես խոնարհ երևա: Ճշմարիտ խոնարհությունը հատուկ չէ մարմնավոր իմաստությանը և անհնար է նրա համար, խոնարհությունը պատկանում է հոգևոր բանականությանը: Սուրբ Մակար Ճգնավորն ասում է. «Նրանք, ովքեր իրենց չեն համարում Քրիստոսի բոլոր պատվիրաններին պարտապաններ, պատվում են Աստծո օրենքը մարմնավորապես, չհասկանալով ո՛չ այն, ինչ խոսում են, ո՛չ էլ այն, ինչի վրա հիմնվում են, դրա համար էլ աշխատում են կատարել այն արտաքին գործերով»: Սուրբ հոր խոսքերից երևում է, որ իրեն որևէ բարի գործ վերագրողը գտնվում է ինքնահմայության վիճակում, որը ծառայում է որպես հիմք դիվային պատրանքի համար: Ընկած հրեշտակը հանգրվան է գտնում քրիստոնյայի կեղծ, հպարտ հասկացողության

մեջ. դրա վրա էլ շատ հարմար պատվաստվում է խաբկանքը, իսկ խաբկանքի միջոցով մարդուն ենթարկում է իր իշխանությանը, նրան գցում, այսպես կոչված, դիվական պատրանքի մեջ: Վերը բերված օրինակից երևում է, որ պատրվածներից ոչ մեկն իրեն անարժան չհամարեց հրեշտակ տեսնելուն, հետևաբար իր մեջ որոշ արժանիքներ էր տեսնում: Հակառակ դեպքում իրեն մարմնավոր և հոգևոր առաքինություններ չէր վերագրի: Այդ պատճառով սուրբ հայրերն ասում են, որ միայնակեցությունը կործանում է բոլոր այն ճգնավորներին, որոնք բավարար հոգևոր կրթություն չունեն և հեռու են շնորհից:

Ուսանելի է սուրբ Բարսիլիկոս Մեծի և իր ընկեր Հովհաննես մարգարեի ուսուցումը, որ վերաբերում էր արգելականներին և միայնակեցությանը, քանզի իրենք էլ արգելականներ էին սուրբ Սերիդի վանքում: Այդ վանքի բոլոր եղբայրները կամ նրանց մեծամասնությունը առաջնորդվում էին Աստծո այդ մեծ հաճոյակատարների խրատներով, որոնք լցված էին Աստծո Հոգով: Նրանց խրատներով էր առաջնորդվում նաև հենց Սերիդ վանահայրը, որին Բարսիլիկոս Մեծը «որդի» էր կոչում: Սերիդը ծառայում էր նաև սուրբ հորը, ով խցից դուրս չէր գալիս, և իր մոտ ընդունում էր միայն Սերիդին ու նրա միջոցով գրավոր պատասխաններ էր տալիս մյուս եղբայրներին: Վանքի եղբայրներն առաջնորդվելով Աստծով ոգեշնչված մարդու խրատներով՝ ցուցաբերում էին արագ և հարուստ հոգևոր առաջադիմություն: Նրանցից ոմանք ընդունակ դարձան միանձնության կյանքի, ոմանք էլ՝ Աստծո կողմից կանխատեսության շնորհը ստացան: Այսպես՝ Բարսիլիկոս Մեծը նախ կանխատեսեց Հովհաննեսի համար, որ Աստծո կողմից նրան միանձնություն է նախասահմանված, և այդ վանականին եղբայրների շրջապատում նախապատրաստելով ավետարանյան պատվիրաններով՝ հնազանդության բովով անցկացնելով, Աստծո կողմից սահմանված ժամանակին նրան խուց մտցրեց: Հովհաննեսին ուղղված Բարսիլիկոս Մեծի նամակից երևում է, որ Հովհաննեսը խուց մտնելուց հետո էլ ալեկոծվում էր կրքոտ խորհուրդների պատճառով: Մյուս վանականները, որոնց թույլատրված էր խցում մնալ, կրքերից առավել շատ էին վրդովվում, բայց խցում արգելափակվելը նրանց չարգելվեց: Դրան հակառակ՝ սուրբ աբբա Դորոթեոսին, որն աչքի էր ընկնում աշխարհային և հոգևոր իմաստությամբ, ընդունակ լինելով առաջնորդել մյուս վանականներին և գործով ապացուցած լինելով այդ հոգևոր պարգևը, Հոգեկիր ծերերը արգելեցին խցում փակվել, որքան էլ նա ցանկանում էր այդ: «Միայնակեցությունը, - ասացին ծերերը նրան, - մարդու համար ավելի մեծամտությա՛ն պատճառ է, քան վաստակի, այսինքն՝ անարատության: Միայն այն ժամանակ է միայնակեցությունը իրական, երբ մարդն արդեն խաչ է կրել: Ուրեմն, եթե կարեկցես մերձավորին, ապա օգնություն կստանաս, իսկ եթե քեզ հետ պահես ուրիշին կարեկցելուց՝ ցանկանալով մտնել այն բանի մեջ, ինչը քո ուժերից վեր է, ապա իմացիր, որ կորցնում ես նաև այն, ինչ ունես: Մի՛ շեղվիր ո՛չ ներս, ո՛չ դուրս, այլ մնա մեջտեղում՝ մտածելով, որ դրանում Տիրոջ կամքը կա, «Քանզի օրերը չար են» (Եփես. 5:16)»:

Խոսքիս նշանակությունը հետևյալն է. «Չհանդգնես միայնության մեջ մտնել և անհոգության մատնել քեզ. երբ եղբայրների շրջապատում ես գտնվում, սա է միջին ճանապարհը՝ ապահով անկումներից: Միայնակեցության մեջ պետք է լինի խոնարհություն, սեփական անձի հոգացության հանդեպ՝ հսկում և սեփական խորհուրդների սանձում: Այս ամենը չի սահմանափակվում մի ինչ – որ սահմանված ժամանակի մեջ: Յուրաքանչյուրը պետք է գոհությամբ կրի այն, ինչ որ ըստ անհրաժեշտության պատահում է նրա հետ: Որքան շատ է մարդը խոնարհվում, այնքան առաջադիմում է: Խցում ապրելը քեզ փորձառու չի դարձնի, որովհետև դու ապրում ես այնտեղ առանց սովորական, տեսանելի վշտերի, իսկ անտեսանելի պայքարը դևերի հետ խցում փակվածին այնպիսի ծանր վշտի ու պայքարի մեջ է գցում, ինչի մասին հանրակացարանում ապրող վանականն ընդհանրապես պատկերացում չունի: Իսկ դրա միջոցով, որ ժամանակից առաջ ուզում ես թողնել բոլոր արտաքին հոգացությունները, թշնամին քեզ համար հանգիստ չի պատրաստում, այլ առավել խռովք, այնպես, որ վերջ ի վերջո քեզ կպարտադրի ասել. «Ավելի լավ կլիներ, որ ծնված չլինեի»: Աբբա Դորոթեոսը, որին Տիեզերական Եկեղեցին սրբերի դասին է կարգել, մեկն

է այն առաջիններից, ովքեր գրել են ճգնավորական կյանքի մասին, եղբայրների հետ ապրել է վանքի հանրակացարանում և սուրբ ուսուցիչների մահվանից հետո հիմնել է իր վանքը և դարձել այնտեղի վանահայր: Սուրբ Հովհաննես Սանդուղքը նշում է, որ մեծամտությանը և մյուս այլ կրքերին հակված մարդը ոչ մի դեպքում չպետք է իր համար առանձին բնակավայր ընտրի, այլ պետք է ապրի եղբայրների հետ և փրկվի պատվիրանները կատարելու միջոցով, որովհետև յուրաքանչյուր բնակության վայր, լինի դա անապատ թե հանրակացարան, երբ այն Աստծո կամքի համաձայն է և եթե նրա նպատակը Աստծուն հաճելի լինելն է, երանելի է: Ժամանակից շուտ առանձնության մեջ փակվելուց առաջանում է դիվային պատրանք, ոչ միայն բացահայտ, այլև արտաքինից անտեսանելի՝ մտային, բարոյական, անհամեմատ ավելի վտանգավոր, քան առաջինը, որովհետև շատ դժվարությամբ է բժշկվում, իսկ հաճախ նաև անբուժելի է: Պատրանքի այդ տեսակը, որ հիմնվում է մեծամտության վրա, սուրբ հայրերի կողմից կոչվում է «կարծիք», այսինքն՝ «սեփական կարծիք՝ հեռու Աստվածային շնորհից» (Սուրբ Գրիգոր Սինայեցի) և կայանում է նրանում, երբ ճգնավորն ընդունում է սխալ հասկացողություն հոգևոր առարկաների և իր մասին: Սուտ պատկերացմանը և հայեցողությանը, բնական հայեցողության և մտքից սիրտ ու սրտից միտք գործակցությանն անպայման ընկերակցում են խաբեպատիր զգացումները: Այս պատրանքով վարակվածները դարձել են սուտ ճգնավորական ուսմունքի քարոզիչներ, իսկ երբեմն նաև հերետիկոսապետ՝ իր և իր մերձավորի հավիտենական կործանման համար: Սուրբ Իսահակ Ասորին 55–րդ քարոզում հիշատակում է, որ ոմն Մալտաս հոգևոր բարձր վիճակի հասնելու նպատակով խստագույն ճգնավորական կյանք էր վարում և ընկավ մեծամտության ու ակնհայտ դիվային պատրանքի մեջ, դարձավ եվկդիտյան աղանդի հնարողն ու գլխավորը: Որպես պատրանքի վիճակում գրված, այսինքն՝ «կարծիք անվանվող» ճգնավորական գրքի օրինակ, կարելի է մեջբերել Թովմա Գեմբացու հնարած «Նմանություն Հիսուս Քրիստոսի» անվամբ գիրքը, որից նրբին ցանկասիրություն և մեծամտություն է փչում, որը կույր և կրքերով լցված մարդկանց հաճույք է պատճառում՝ նրանց կողմից համարվելով Աստվածային շնորհի ճաշակում: Դժբախտներ և մթագնածներ: Նրանք չեն հասկանում, որ հոտոտելով իրենց մեջ ապրող կրքերի նուրբ բուրմունքը՝ վայելում են այդ, իրենց կուրության պատճառով համարելով դա շնորհի անուշահոտություն: Նրանք չեն հասկանում, որ հոգևոր վայելքի ընդունակ են միայն սրբերը, որ հոգևոր վայելքին պետք է նախորդի ապաշխարությունը և կրքերից մաքրվելը, որ մեղավորն ընդունակ չէ հոգևոր վայելքի, որ նա իրեն անարժան պիտի համարի այդ վայելքին, մերժի այն, եթե սկսի ի հայտ գալ իր մոտ, որպես իրեն ոչ հատուկ բան, իբրև բացահայտ և կործանարար հրապուրանք, որպես սնափառության նուրբ շարժում, մեծամտություն և ցանկասիրություն:

Ներկայումս մեզ մոտ ճգնավորականությունը անմարդաբնակ անապատում կարելի է համարել բացարձակապես անհնարին, իսկ խցում փակվելը՝ շատ դժվար, առավել վտանգավոր և առավել անհամատեղելի, քան երբևէ: Դրա մեջ պետք է տեսնել Աստծո կամքը և հնազանդվել դրան: Եթե ցանկանում ես հաճելի լինել Աստծուն լռակեցությամբ, սիրի՛ր լռությունը և բազում ջանքերով վարժեցրո՛ւ քեզ դրան: Թույլ մի՛ տուր քեզ՝ դատարկախոսել ո՛չ եկեղեցում, ո՛չ ընթրիքի ժամանակ, ո՛չ խցում, թույլ մի՛ տուր քեզ վանքից դուրս գալ, այլ միայն չափազանց կարևորության դեպքում և ամենակարճ ժամանակով, թույլ մի՛ տուր քեզ՝ ծանոթություն անել, հատկապես մտերմիկ, ո՛չ վանքի ներսում, ո՛չ էլ դրսում, թույլ մի՛ տուր քեզ ազատ վարվելակերպ և կործանարար զվարճություններ: Քեզ պահիր ինչպես օտարական և եկվոր թե՛ վանքում և թե՛ հենց այս երկրավոր կյանքում, և կհամարվես Աստծո կողմից սիրելի միայնակյաց, անապատաբնակ, ճգնավոր: Եթե Աստված քեզ արժան համարի անապատում կամ խցում փակվելու համար, ապա Ինքը Իր անճառելի կամքով քեզ կուղարկի անապատ՝ միայնակեցության, ինչպես ուղարկեց Սերաֆիմ Սարովսկուն, կամ կառաջնորդի խցում փակվել, ինչպես առաջնորդեց երանելի Գեորգիին՝ Զադոնի վանքի մենակյացին:

ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ
Մաս երկրորդ

Աշակերտ – Թվարկիր դիվային պատրանքի ձևերը, որոնք առաջանում են սխալ աղոթքի վարժանքից:

Ծեր – Դիվային պատրանքի բոլոր ձևերը, որոնց ենթարկվում է աղոթող ճգնավորը, առաջանում են նրանից, որ աղոթքի հիմքում դրված չէ ապաշխարությունը և այն չի դարձել աղբյուր, հոգի և աղոթքի նպատակ: «Եթե մեկը, - ասում է սուրբ Գրիգոր Սինայեցին վերը բերված հոդվածում, - ինքնավստահությամբ, ինչը հիմնված է սեփական կարծիքի վրա, ցանկանում է հասնել բարձր աղոթային վիճակի և ձեռք է բերում ոչ ճշմարիտ նախանձախնդրություն, այլ՝ սատանայական, նրան սատանան հեշտությամբ խճճում է իր ցանցերով՝ դարձնելով իր ծառան»: Յուրաքանչյուրը, ով ջանում է մտնել Աստծո Որդու առագաստի մեջ ոչ թե ապաշխարությամբ հարդարված մաքուր և պայծառ հագուստներով, այլ հենց իր ցնցոտիներով՝ ադամական հնությամբ, մեղավորությամբ և ինքնազմայլված, այդպիսիներին նետում են դուրս՝ շոշափելի խավարի մեջ: «Արդ, մի խորհուրդ տամ քեզ, - ասում է Փրկիչը, - ա՛ռ, գնի՛ր Ինձնից կրակի բովով անցած ոսկի, որ հարստանաս, գնի՛ր սպիտակ զգեստներ, որ հագնես, որպեսզի քո մերկության անվայելչությունը չերևա, և քո աչքերին դեղ դի՛ր, որ տեսնես: Ում սիրում եմ, նրան հանդիմանում եմ և խրատում: Նախանձախնդիր եղիր, ուրեմն և՝ ապաշխարի՛ր» (Հայտ. 3:18-19): Ապաշխարությունը և այն ամենը, ինչից այն բաղկացած է՝ կոտրված և կարեկից հոգին, սրտի լացը, արցունքները, ինքնադատապարտումը, մահվան, Աստծո դատաստանի և հավիտենական տանջանքների մասին հիշողություններն ու կանխազգացումները, Աստծո ներկայության զգացողություն և Աստծո հանդեպ երկյուղ՝ Աստծո պարգևներն են, մեծ արժեք ունեցող պարգևներ, սկզբնական և հիմնական, որոնք երաշխիքն են բարձրագույն և հավիտենական պարգևների: Առանց կանխավ դրանք ստանալու՝ հետագա պարգևների շնորհումն անհնար է: «Որքան էլ գերազանց լինեն մեր սխրագործությունները, - ասում է սուրբ Հովհաննես Սանդուղքը, - եթե մենք ձեռք չբերենք կոտրած սիրտ, ապա այդ սխրագործությունները և՛ սուտ են, և՛ ապարդյուն»: Ապաշխարությունը, փշրված հոգին և լացը նշաններ են և վկայություններ ճիշտ աղոթական սխրանքի, իսկ դրանց բացակայությունը նշան է կեղծ ուղղությամբ շեղվելու, նշան է ինքնահմայության, պատրանքի կամ անպտղության: Այս կամ այն, այսինքն՝ պատրանքը կամ անպտղությունը առաջանում են ոչ ճիշտ աղոթային վիճակի անխուսափելի հետևանքներից, իսկ սխալ աղոթային վիճակն ինքնահմայությունից անբաժան է:

Ոչ ճիշտ աղոթքի ամենավտանգավոր կերպն այն է, որ աղոթողը հորինում է իր երևակայական ուժով երազանքներ կամ այլ պատկերներ, վերցնելով դրանք Սուրբ Գրքի դրվագներից, իսկ իրականում այն վերցնում է իր սեփական հոգեվիճակից, իր ընկած, մեղանչական և պատրված վիճակից, այդ պատկերներով շողոքորթելով իր ինքնասիրությունը և փառամոլությունը, իր մեծամտությունը և հպարտությունը, այսպես խաբելով ինքն իրեն: Ակնհայտ է, որ այն ամենը, ինչ հորինվում է մեր ընկած բնության երևակայության պատճառով, իրականում գոյություն չունի, մտացածին է և սուտ, այնքա՛ն հատուկ, այնքա՛ն սիրելի ընկած հրեշտակի համար: Երազկոտն աղոթքի հենց առաջին պահից դուրս է գալիս իրականությունից և մտնում ստի, այսինքն՝ սատանայի տիրույթ՝ ինքնակամ ենթարկվելով սատանայի ազդեցությանը: Սուրբ Սիմոն Նոր Աստվածաբանը երազողի աղոթքներն ու նրա պտուղները հետևյալ կերպ է նկարագրում. «Նա երկինք է բարձրացնում ձեռքերը, աչքերն ու միտքը, Կլոպշտոկի և Միլտոնի նման իր մտքում պատկերացնում է Աստվածային խորհրդակցություններ, երկնային բարիքներ,

սուրբ հրեշտակների աստիճանակարգեր, սրբերի բնակավայրեր, մի խոսքով՝ պատկերացնում է այն ամենը, ինչ լսել է Սուրբ Գրքից և տեսնում աղոթքի ժամանակ, երկինք է նայում, դրանով իր հոգուն հրահրելով դեպի Աստվածայինի հանդեպ ցանկությանն ու սիրույն՝ երբեմն արցունքներ հեղելով: Նման ձևով կամաց – կամաց մեծամտանում է նրա սիրտը. մտքով չհասկանալով այդ՝ նա կարծում է, թե իր հետ կատարվածն Աստվածային շնորհի պտուղ է իրեն մխիթարելու համար, և աղոթում է Աստծուն, որ իրեն արժանացնի միշտ այդ վիճակում մնալ: Դա պատրանքի նշան է: Այդպիսի մարդը, եթե նույնիսկ առանձնանում է, չի կարող չենթարկվել մտագարության և խելագարության: Իսկ եթե դա չպատահի նրա հետ, այնուամենայնիվ՝ նա երբեք չի կարող հասնել հոգևոր բանական աստիճանի և առաքինության կամ անկրքության: Նման ձևով հմայվեցին՝ մարմնավոր աչքերով տեսնելով լույսը և դրա փայլը, սեփական քթով անուշահոտություն զգալով, սեփական ականջներով ձայներ լսելով: Նրանցից ոմանք դիվահարվեցին և, մտային խանգարում ստացած, մի վայրից մյուսն էին տեղափոխվում, մյուսները լուսավոր հրեշտակի կերպարանքով դևին ընդունեցին, հմայվեցին և նույնիսկ մինչև վերջ անբուժելի մնացին՝ եղբայրներից ոչ մեկի խորհուրդը չընդունելով, նրանցից ոմանք էլ դևի դրդմամբ ինքնասպան եղան, ոմանք անդունդը գլորվեցին, ոմանք էլ խեղդվեցին: Եվ ո՞վ կարող է թվարկել դիվական տարաբնույթ պատրանքները, որով նա պատրում է, և որոնք անքննելի են: Սակայն մեր պատմածներից յուրաքանչյուր խելացի մարդ կարող է ուսանել, թե ի՛նչ վնաս է առաջանում աղոթքի այդ կերպից: Իսկ եթե մեկը կիրառում է դա և վերը ասված դժբախտություններից որևէ մեկին չի ենթարկվում, դա միայն եղբայրների հետ բնակվելու պատճառով է, որովհետև դրան ամենից ավելի ենթարկվում են այն ճգնավորները, որոնք առանձին են ապրում, այդպիսիներն իրենց ամբողջ կյանքն ապարդյուն են անցկացնում»:

Բոլոր սուրբ հայրերը նկարագրելով մտային աղոթքի սխրագործությունը՝ արգելում են ոչ միայն ինքնակամ երազանքներ հորինելը, այլև երազանքներին ու տեսիլքներին կամեցողությամբ և համակրությամբ վերաբերելը, որոնք կարող են հայտնվել մեզ անսպասելիորեն՝ մեր կամքից անկախ: Եվ դա պատահում է մեր աղոթական սխրագործության ժամանակ՝ հատկապես, երբ լռության մեջ ենք: Գրիգոր Սինայեցին ասում է. «Եթե ինչ-որ բան տեսնես զգայական աչքերով կամ մտքով, քո ներսում կամ դրսում, լինի դա Քրիստոսի կերպարանք, թե հրեշտակի, կամ որևէ սրբի, կամ եթե լույս տեսնես, երբեք մի՛ ընդունիր . . . Ուշադիր և զգույշ եղիր: Քեզ թույլ մի՛ տուր որևէ բանի վստահել, համակրանք և համաձայնություն մի՛ ցուցաբերիր, հապճեպ մի՛ վստահիր հայտնվածին, եթե նույնիսկ դա լինի ճշմարիտ և բարի, նրա հանդեպ սառը և օտար եղիր՝ միտքդ մշտապես աննյութական և անստացիկ պահիր՝ ոչ մի կերպարանք չստեղծելով և չտպավորելով: Մտքով կամ զգացողությամբ որևէ բան տեսնողը և անմիջապես ընդունողը, եթե նույնիսկ դա լինի Աստծուց, պատրանքի մեջ է ընկնում, կամ էլ, համենայն դեպս, ցույց է տալիս պատրանքի հանդեպ իր հակումներն ու ընդունակությունները՝ որպես հայտնությունն արագ և թեթևամտորեն ընդունող: Սկսնակը պետք է ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի սրտի շարժումների վրա. միայն այդ շարժումներն են հեռու պատրանքից, մնացածները պետք չէ ընդունել, մինչև մարդը հասնի անկրքության: Աստված չի բարկանում նրա վրա, ով պատրանքից զգուշանալով՝ չափազանց զգուշավորությամբ զննում է այդ, և եթե նա նույնիսկ չի ընդունում Աստծո կողմից ուղարկվածը, մանրազնին կերպով քննելով այն և, չնայած դրան, Աստված գովաբանում է այդպիսի մարդուն իր խելամտության համար»: Սուրբ Ամփիլիանոսը պատանի հասակում մտնելով վանք՝ հասունանում է և ծերությունն անցկացնում անապատում՝ ճգնավորական կյանք վարելով: Փակվելով խցում՝ նա միանձնության է վարժվում և հասնում մեծ առաջադիմության: Երբ լրանում է նրա ճգնավորական կյանքի 40 տարին, գիշերով նրան հայտնվում է հրեշտակը և ասում. «Ամփիլիանոս, գնա՛ քաղաք և արածեցրո՛ւ հոգևոր հոտին»: Ամփիլիանոսն ուշադիր էր իր հանդեպ և ուշադրություն չդարձրեց հրեշտակի հրամանին: Հաջորդ գիշեր նորից է հայտնվում հրեշտակը և կրկնում հրամանը՝ ավելացնելով, որ ինքը Աստծուց է: Եվ նորից Ամփիլիանոսը չհնազանդվեց

հրեշտակին՝ վախենալով լինել խաբված և հիշելով Առաքյալի խոսքերը, թե՝ սատանան էլ կարող է կերպարանափոխվել լուսավոր հրեշտակի պես (2 Կորնթ. 11:14): Երրորդ գիշերը նորից է հայտնվում հրեշտակը և Ամփիլիանոսին հավաստիացնելու համար փառաբանում Աստծուն, ինչը անտանելի է մերժված հոգիների համար, ծերին ձեռքերի վրա դնելով դուրս է հանում խցից, բերում մոտակա եկեղեցին: Եկեղեցու դռները ինքնաբերաբար բացվում են և եկեղեցին լուսավորվում է երկնային լույսով, այնտեղ բազմաթիվ սուրբ այրեր կային՝ սպիտակ հագուստներով, արևանման դեմքերով: Նրանք Ամփիլիանոսին ձեռնադրում են Իկոն քաղաքի եպիսկոպոս: Դրան հակառակ վարք են ունեցել երանելի Իսահակ և Նիկիտա Պեչյորսկիները. նոր և անփորձ լինելով ճգնավորական կյանքի մեջ՝ սարսափելի վշտերի ենթարկվեցին՝ չմտածված կերպով վստահելով իրենց հայտնված տեսիլքին: Առաջինին լույսերով պատված դևեր հայտնվեցին. դևերից մեկը Քրիստոսի կերպարանքն էր ընդունել, մյուսները՝ հրեշտակների: Երկրորդին դևը հմայեց սկզբից իբր Աստվածային անուշահոտությամբ և ձայներով, այնուհետև բացահայտ կերպով ներկայացավ նրան որպես Հրեշտակ: Վանական կյանքում փորձառություն ունեցող վանականները, իսկապես սուրբ վանականները, առավել շատ են վախենում պատրանքից, առավել շատ իրենց չեն վստահում, քան սկսնակները, հատկապես նրանք, ովքեր սխրագործության հանդեպ խանդաղատանքով են լցված: Անկեղծ սիրով պատրանքից զգուշանում է սուրբ Գրիգոր Սինայեցի միայնակյացը, ինչի մասին իր գրքում գրված է. «Ուզում եմ, որ դու որոշակի գաղափար ունենաս պատրանքի մասին, դա այն պատճառով եմ ուզում, որպեսզի դու կարողանաս քեզ պահպանել պատրանքից, որպեսզի հայտնություն ունենալու անպատշաճ ձգտումը քեզ մեծագույն վնաս չպատճառի և հոգիդ չկործանի: Մարդու ազատակամությունը հեշտությամբ հարաբերության մեջ է մտնում մեր հակառակորդների հետ, հատկապես անփորձների ազատակամությունը, որոնք նոր – նոր են մտնում սխրագործությունների մեջ, երբ դեռ լիովին չեն ազատվել դևերի իշխանությունից»: Սա իսկապես ճշմարիտ է: Հակվում, ձգտում է մեր ազատ կամքը պատրանքին, որովհետև յուրաքանչյուր պատրանք սիրաշահում է մեր մեծամտությանը, մեր սնափառությանը և հպարտությանը: «Դևերը մոտ են և շրջապատում են սկսնակներին և ինքնագլուխներին՝ խորհուրդների և կործանարար երազանքների թակարդներ սփռելով և անկման անդունդներ պատրաստելով: Այսպիսին է սկսնակների քաղաքը, նրանցից յուրաքանչյուրի ամբողջ էությունը դեռ գտնվում է բարբարոսների տիրապետության տակ, թեթևամտությամբ շուտափույթ մի՛ տրվիր նրան, ով քեզ կներկայանա, այլ ծանր պահիր քեզ, երկար քննելուց հետո ամուր բռնիր բարուց՝ մերժելով նենգությունը: Իմացի՛ր, որ շնորհի ներգործությունները հստակ են, դևը չի կարող դրանք տալ, նա չի կարող տալ ո՛չ հեզություն, ո՛չ հանդարտություն, ո՛չ խոնարհություն, ո՛չ աշխարհի հանդեպ ատելություն. նա չի սանձում կրքերն ու ցանկությունները, ինչպես դա անում է շնորհը»: Իսկ դիվական ներգործություններն են՝ գոռոզությունը, ճոռոմությունը, մեծամտությունը, վախկոտությունը, մի խոսքով՝ չարության բոլոր տեսակները: Ըստ ներգործության՝ կարող ես զգալ՝ քո հոգին լուսավորող լույսը Աստծուց է, թե՞ սատանայից: Հարկավոր է իմանալ, որ այդպիսի քննությունը պատկանում է փորձառու վանականներին, բայց ո՛չ երբեք սկսնակներին: Սուրբ Սինայեցին թեև խոսում է սկսնակների հետ, բայց՝ միայնակեցության մեջ գտնվող սկսնակների, որոնք և՛ վանականության մեջ էին փորձառու, և՛ տարեց էին, ինչպես երևում է գրքից:

Աշակերտ – Քեզ հետ չի՞ պատահել, արդյոք, տեսնել մեկին, որ աղոթքի վարժության ժամանակ զարգացող երազանքների պատճառով ընկել է դիվական պատրանքի մեջ:

Ծեր – Պատահել է: Սանկտ-Պետերբուրգում ապրող մի աստիճանավոր զբաղված էր խիստ աղոթական սխրագործությամբ և դրանից ընկավ մի անսովոր վիճակի մեջ: Իր սխրագործության և դրա հետևանքների մասին խոստովանեց այդ ժամանակվա Սբ. Աստվածածնի եկեղեցու ավագ քահանային, որը Կոլոմնում էր: Քահանան այցելելով Սանկտ – Պետերբուրգի թեմի վանքերից մեկը՝ մի վանականի խնդրեց՝ զրուցել

աստիճանավորի հետ: «Աստիճանավորը սխրագործության պատճառով տարօրինակ վիճակի մեջ է ընկել, - ասաց ավագ քահանան, - օգտակար կլինի լսել վանքի բնակիչների բացատրությունները՝ որպես ճգնավորական սխրագործությունների մանրամասնություններին և դիպվածներին առավել գիտակների»: Վանականը համաձայնվեց: Որոշ ժամանակ անց աստիճանավորը եկավ վանք: Վանականների հետ նրա զրույցի ժամանակ ներկա էի նաև ես: Աստիճանավորը անմիջապես սկսեց պատմել իր տեսիլքների մասին, որ ինքը միշտ աղոթքի ժամանակ սրբապատկերներից բխող լույս է տեսնում, անուշահոտություն է առնում, բերանում անսովոր քաղցրություն է զգում, և այդպես՝ շարունակ: Վանականը լսելով այդ պատմությունը՝ աստիճանավորին հարցրեց. «Արդյոք ձեզ մոտ ինքնասպանության մտքեր չե՞ն առաջացել»: «Իհարկե, - ասաց աստիճանավորը, - ես ինձ նետեցի ջրավազանը, բայց ինձ դուրս քաշեցին»: Պարզվեց, որ աստիճանավորը կիրառել է սուրբ Սիմոնի նկարագրած աղոթքի ձևը՝ տաքացնելով երևակայությունը և արյունը, որի ժամանակ մարդը շատ ընդունակ է դառնում խիստ պահքի և հսկումների: Կամավոր ընտրած ինքնախաբեության վիճակին սատանան միացրել է իրենը, ինչը գործունեության նմանակն է, և այդպիսով մարդկային ինքնախաբեությունը փոխարինվել է բացահայտ դիվային պատրանքի: Աստիճանավորը մարմնավոր աչքերով էր լույսը տեսնում, անուշահոտությունն ու քաղցրությունը, որ նա զգում էր, նույնպես զգայական էին: Սրան հակառակ՝ սրբերի տեսիլքները և նրանց գերբնական վիճակը կատարյալ հոգևոր է. ճգնավորը դրանց ընդունակ է դառնում միայն այն ժամանակ, երբ Աստվածային շնորհի առջև բացվում են հոգու աչքերը, որի դեպքում կենդանանում են նաև հոգու մյուս զգացողությունները, որոնք մինչ այդ թմբիրի մեջ էին գտնվում և մասնակից են դառնում սրբերի շնորհալի տեսիլքներին և մարմնավոր զգացողություններին, բայց միայն այն ժամանակ, երբ մարմինը կրքոտ վիճակից անցնում է անկրքության: Վանականը սկսեց համոզել աստիճանավորին, որ նա թողնի իր կողմից կիրառվող աղոթքի ձևը՝ բացատրելով աղոթքի սխալ կերպը և ոչ ճիշտ վիճակը: Աստիճանավորը համառորեն հակառակվեց խորհրդին. «Ինչպե՞ս հրաժարվեմ բացահայտ շնորհից», - առարկեց նա:

Լսելով աստիճանավորի պատմածը՝ ես անբացատրելի խղճահարություն զգացի նրա հանդեպ. միաժամանակ նա ինձ ծիծաղելի էր թվում: Օրինակ՝ նա վանականին հետևյալ հարցը տվեց. «Երբ լիառատ քաղցրությունից բերանումս թուքը քաղցրանում է, ապա այն սկսում է գետնին կաթել: Արդյոք մեղք չէ՞ դա»: Ճիշտ է, դիվային պատրանքի մեջ գտնվողները իրենց հանդեպ խղճահարություն են առաջացնում՝ որպես իրենք իրենց չպատկանող և գերի դարձած նենգ, մերժված ոգուն: Նրանք առաջացնում են նաև ծիծաղելի տեսարան՝ իրենց տիրած նենգ ոգու կողմից ծաղր ու ծանակի մատնվելով, որը նրանց ստոր վիճակի մեջ է գցում՝ պատրելով սնափառությամբ և մեծամտությամբ: Ո՛չ իրենց գերությունը, ո՛չ տարօրինակ վարքը պատրվածները չեն հասկանում, որքան էլ դրանք ակնհայտ լինեն. այդպիսին է նրանց տարօրինակ վարվելակերպը: 1828 – 1829թթ. ձմեռը ես անցկացրի Պլոշչանսկի անապատում: Այդ ժամանակ այնտեղ մի ծեր էր ապրում, որը պատրանքի մեջ էր գտնվում: Նա կտրեց իր ձեռքի թաթը՝ կարծելով, թե դրանով կատարում է ավետարանյան պատգամը, և պատմում էր բոլոր նրանց, ովքեր ականջ էին դնում իրեն, որ կտրած թաթը դարձել է սուրբ մասունք և այն պահպանվում է ու բարեկեցությամբ պատվվում Մոսկվայի Սիմոնով վանքում, որ ինքը՝ ծերը, գտնվելով Պլոշչանսկի անապատում՝ 500 վերստ հեռու Սիմոնյան վանքից, զգում է, թե երբ է Սիմոնյան վանքի վարդապետը եղբայրների հետ մոտենում ձեռքին: Ծերը ցնցումների մեջ էր ընկնում, այնուհետև սկսում շատ բարձր ֆշշացնել: Նա այդ ընդունում էր որպես աղոթքի պտուղ, բայց ականատեսների համար դա խեղաթյուրվածություն էր՝ արժանի միայն խղճահարության և ծիծաղի: Վանքի որբանոցում ապրող երեխաները զվարճանում էին այդ տեսարանով և ընդօրինակում ծերի առաջ: Ծերը բարկանալով՝ մեկ մի տղայի հետևից էր ընկնում, մեկ՝ մյուսի, քաշում էր նրանց մազերը: Վանքի պատկառելի վանականներից ոչ ոք չկարողացավ համոզել պատրվածին, որ ինքը գտնվում է խաբեության, հոգեկան խանգարումների մեջ:

Երբ աստիճանավորը գնաց, ես հարցրի վանականին, թե՝ որտեղի՞ց իր մոտ միտք հղացավ աստիճանավորին հարցնել ինքնասպանության փորձի մասին: Վանականը պատասխանեց. «Ինչպես Աստծո համար լացի ընթացքում խղճի յուրահատուկ հանգստության րոպեներ են լինում, այդպես էլ դիվային պատրանքից առաջացած կեղծ քաղցրության ժամանակ այնպիսի րոպեներ են լինում, որոնց ընթացքում պատրանքը դիմակազերծվում է և թույլ է տալիս իրեն ճանաչել այնպես, ինչպես ինքը կա: Այդ րոպեները սարսափելի են: Դրանց դառնությունը և այդ դառնությունից բխող հուսահատությունը անտանելի է: Այն վիճակը, որին հանգեցնում է պատրանքը, շատ հեշտությամբ ճանաչել է տալիս պատրվածին, ինչից ելնելով սա կարող է միջոցներ ձեռնարկել իր բժշկության համար: Ցավոք, պատրանքի սկիզբը հպարտությունն է, իսկ դրա պտուղը՝ ծայրաստիճան հպարտությունը, ինչը թույլ չի տալիս ինքն իրեն պատրված տեսնել:

Պատրվածը իրեն համարելով Աստվածային շնորհների անոթ՝ արհամարհում է մերձավորների փրկարար նախազգուշացումները, ինչպես դա նկատեց սուրբ Սիմիոնը: Մինչդեռ հուսահատության նոպան դառնում է ավելի ու ավելի ուժգին, վերջապես հուսահատությունը վերածվում է խելագարության և պսակվում ինքնասպանությամբ: Մեր դարասկզբին (18 – րդ դար) Սոֆրոնիայի անապատում գործում էր ավագ վանական Ֆեոդոսին, որը վայելում էր և՛ եղբայրների և՛ խստաբարո աշխարհականների հարգանքը, մեծարվում էր բնակչության կողմից: Մի անգամ իրեն թվաց, թե Դրախտ է համբարձվել: Տեսիլքի ավարտից հետո նա գնաց վանահոր մոտ, մանրամասն պատմեց հրաշքի մասին և ափսոսանք հայտնեց, որ ինքը Դրախտում միայն իրեն է տեսել, եղբայրներից ոչ ոքի չի տեսել: Այդ հանգամանքը վրիպեց վանահոր ուշադրությունից. նա կանչեց եղբայրներին, վշտացած հոգով պատմեց նրանց ավագ վանականի տեսիլքի մասին և հորդորեց՝ առավել նախանձախնդիր և աստվածահաճո կյանք վարել: Որոշ ժամանակ անց ավագ վանականի գործողությունների մեջ տարօրինակություններ նկատվեցին: Այդ ամենն ավարտվեց նրանով, որ ավագ վանականին իր խցում կախված գտան»:

Ինձ հետ պատահել է հիշատակության արժանի հետևյալ դեպքը. մի անգամ ինձ այցելեց Աթոսի վանականներից մեկը: Մենք նստեցինք իմ խցի ընդունարանում, և նա սկսեց խոսել. «Աղոթիր ինձ համար, հայր, ես շատ եմ քնում, շատ եմ ուտում»: Այդ ժամանակ ես իրենից դուրս եկող տաքություն զգացի, այդ պատճառով էլ պատասխանեցի նրան. «Դու ո՛չ շատ ես ուտում և ո՛չ էլ շատ ես քնում, բայց չկա՞, արդյոք, քո մեջ որևէ այլ աչքի ընկնող բան», և խնդրեցի նրան, որ մտնենք իմ ներքին խուցը: Նրա ետևից գնալով և փակելով ներքին խցի դուռը՝ ես մտքումս աղոթում էի Աստծուն, որ Նա շնորհի իմ սովյալ հոգուն՝ օգուտ քաղել Աթոսյան վանականից, եթե նա իսկապես Տիրոջ ծառան է: Իրոք, ես նրա մեջ ինչ – որ առանձնահատուկ բան նկատեցի: Ներքին խցում մենք նորից նստեցինք զրուցելու, և ես խնդրեցի նրան. «Գթասիրտ եղիր, ինձ աղոթել սովորեցրու: Դու աղոթում ես աշխարհի առաջին վանականության վայրերից մեկում հազարավոր վանականների մեջ, այդպիսի տեղում և բազմաթիվ վանականների հավաքում անպայման կգտնվեն մեծ աղոթողներ՝ աղոթքի գաղտնի ներգործությունն իմացող և դա մերձավորներին քարոզող, Գրիգոր Սինայեցու, Պալամայի և Աթոսյան բազում այլ լուսավորիչների օրինակով»: Վանականն անմիջապես համաձայնեց դառնալ իմ ուսուցիչը և, օ՜ սարսափ, նա մեծ խանդավառությամբ սկսեց ցույց տալ վերը բերված զմայլելի, երևակայական աղոթքի եղանակը: Տեսնում եմ, որ նա սարսափելի բորբոքվել է. տաքացել է նրա և՛ արյունը, և՛ երևակայությունը: Նա ինքնահմայության և պատրանքի մեջ է: Թույլ տալով, որ նա արտահայտվի, ես կամաց – կամաց սկսեցի, ըստ իմ վարդապետական աստիճանի, առաջարկել աղոթքի մասին սուրբ հայրերի ուսմունքը՝ ցույց տալով նրան «Բարեպաշտություն» գիրքը (Դոբրոտոլյուբյա) և խնդրելով՝ բացատրել ինձ այդ ուսուցումը: Աթոսացին տարակուսանքի մեջ ընկավ. ես հասկացա, որ նա բոլորովին ծանոթ չէ աղոթքի մասին հայրերի ուսմունքին: Զրույցի ընթացքում ես նրան ասացի. «Տե՛ս, ծեր, եթե ապրես Սանկտ-Պետերբուրգում, ոչ մի դեպքում չտեղավորվե՛ս բարձր հարկերում,

տեղավորվի՛ր միայն ցածր հարկերում»: «Ինչո՞ւ», - հակառակվեց Աթոսացին: «Որովհետև, - պատասխանեցի ես, - եթե հրեշտակները մտածեն հանկարծակի քեզ հափշտակել՝ Սանկտ-Պետերբուրգից տեղափոխվելով Աթոս, և եթե քեզ վերցնեն ու տանեն բարձր հարկից և հանկարծ վայր գցեն, մահացու կվիրավորվես, իսկ եթե վերցնեն ցածր հարկից և վայր գցեն՝ միայն թեթև կվիրավորվես»: «Պատկերացրու, - պատասխանեց Աթոսացին, - արդեն քանի անգամ, երբ ես աղոթքի եմ կանգնած եղել, իմ մոտ միտք է հղացել, որ հրեշտակներն ինձ վեր կբարձրացնեն և կտանեն Աթոս»: Պարզվեց, որ վանականը շղթաներ է կրում, գրեթե չի քնում, հաց քիչ է ուտում, մարմնում այնպիսի ջերմություն է զգում, որ ձմռանը տաք շորերի կարիք չի զգում: Զրույցի վերջում ինձ մոտ միտք հղացավ հետևյալ կերպ վարվել. ես սկսեցի խնդրել Աթոսացուն, որ նա, որպես ծոմապահ և ճգնավոր, իր վրա փորձի սուրբ հայրերի կողմից առաջադրված մեթոդը, այն է՝ աղոթքի ժամանակ բոլորովին մերժի ամեն տեսակ երևակայություն, ամբողջ ուշադրությամբ խորասուզվի աղոթքի բառերի մեջ՝ պարփակվելով և կենտրոնանալով, ըստ սուրբ Հովհաննես Սանդուղքի, աղոթքի բառերին:

Այդժամ սիրտը սովորաբար օգնում է մտքին հոգեշահ զգացումով ընդդեմ մեղքերի, ինչպես ասում է սուրբ Մակար ճգնավորը. «Անզբաղ աղոթողի միտքը ճնշում է սրտին, իսկ կոտրած և խոնարհ սիրտը Աստված չի արհամարհում» (Սղմ. 50:19):

«Երբ դու փորձես դա քեզ վրա, - ասացի ես Աթոսացուն, - ապա ինձ էլ տեղեկացրու փորձառության պտուղների մասին, ինձ նման փորձը հարիր չէ այս կյանքի զբաղվածությունների պատճառով, որ ես կրում եմ»: Աթոսացին սիրով ընդունեց իմ առաջարկությունը: Մի քանի օր անց նա ինձ մոտ եկավ և ասաց. «Դու այդ ի՞նչ արեցիր ինձ հետ»: «Իսկ ի՞նչ է պատահել»: «Ես հենց փորձեցի ուշադրությամբ աղոթել՝ միտքս կենտրոնացնելով աղոթքի բառերի վրա, իմ բոլոր տեսիլքները չքվեցին, և այլևս չեմ կարողանում վերադառնալ դրանց»: Աթոսացու հետ հետագա զրույցի ընթացքում ես չտեսա այն ինքնավստահությունն ու համարձակությունը, որ շատ նկատելի էր նրա մոտ առաջին հանդիպման ժամանակ, և որը սովորաբար նկատվում է պատրված մարդկանց մոտ, ովքեր կարծում են, թե իրենք սուրբ են, կամ գտնվում են հոգևոր առաջադիմության մեջ: Աթոսացին նաև ցանկացավ լսել իմ խղճուկ խորհուրդը. երբ ես նրան խորհուրդ տվեցի՝ արտաքին կենցաղավարության կերպով չտարբերվել մյուս վանականներից, որովհետև այդպիսի տարբերությունը մեծամտության է հանգեցնում, նա հանեց իր շղթաները և ինձ տվեց: Մի ամիս անց նա նորից ինձ մոտ եկավ և ասաց, որ իր մարմնի տաքությունն անցել է, ինքը տաք հագուստների կարիք է զգում և ավելի շատ է քնում: Ասաց նաև, որ Աթոսում կան շատերը, որոնք նույնպես սրբերի համբավ ունեն և աղոթում են այնպես, ինչպես ես էին աղոթում և դա սովորեցնում են նաև ուրիշներին: Զարմանալի չէ, որ սուրբ Սիմիոն Նոր Աստվածաբանը, որ ապրում էր մեզանից 7 դար առաջ, ասում էր, որ շատ քչերն են ուշադրությամբ աղոթում: Սուրբ Գրիգոր Սինայեցին, ապրելով Քրիստոսի Ծնունդից 14 դար հետո, երբ եկավ Աթոս լեռ, տեսավ, որ այնտեղի վանականները ոչ մի գաղափար չունեն մտային աղոթքի մասին, այլ զբաղվում են միայն մարմնավոր սխրագործություններով՝ աղոթելով միայն բանավոր և երգեցողությամբ: Սուրբ Նիլ Սորսցին, ապրելով 15 – րդ դարի վերջին և 16 – րդ դարի սկզբին, նույնպես այցելելով Աթոս լեռ՝ ասում է, որ իր ժամանակ կենտրոնացած աղոթողների թիվը նույնպես շատ քիչ էր:

Մեծ վարդապետ Պահսիա Վելիչկովսկին Մոլդավայից տեղափոխվեց Աթոս լեռ 1747թ.: Նա հպանցիկ ծանոթացավ բոլոր վանքերի ու ճգնավորների հետ, զրուցեց բազմաթիվ ծերերի հետ, որոնք համարվում էին փորձառու և սուրբ վանականներ: Իսկ երբ սկսեց հարցնել այդ վանականներին սուրբ հայրերի գրքերում գրված մտային աղոթքի մասին, պարզվեց, որ նրանք ոչ միայն տեղյակ չէին այդպիսի գրքերի գոյության մասին, այլև չգիտեին նույնիսկ հեղինակների անունները, այդ ժամանակ «Դոբրոտոլյուբյա» գիրքը դեռևս հունարենով տպագրված չէր:

Ուշադիր և կենտրոնացած աղոթքը պահանջում է ինքնաուրացում, իսկ այդ ուղին բռնել՝ համարձակվում են շատ քչերը: Ուշադրությամբ իր վրա սևեռվածը սեփական մեղավորության տեսությունից ընկնում է մի տեսակ շփոթմունքի մեջ և անընդունակ է դառնում շատախոսության և ընդհանրապես էֆեկտների և դերասանության համար, գաղտնաբար կատարվող սխրանքն անգետը համարում է որպես տարօրինակություն, հանելուկային մի բան՝ բոլոր կողմերով անբավարար: Մի՞թե հեշտ է հրաժարվել աշխարհի կարծիքից: Նաև՝ աշխարհն ինչպե՞ս կարող է ճանաչել իրական աղոթքի սխրագործին, երբ հենց այդ սխրագործությունն ընդհանրապես հայտնի չէ աշխարհին: Բոլորովին այլ է պատրանքի մեջ գտնվող. նա չի ուտում, չի խմում, չի քնում, ձմռանը միայն փարաջայով է ման գալիս, շղթաներ է կրում, տեսիլքներ է տեսնում, բոլորին սովորեցնում և մերկացնում է հանդուգն լկտիությամբ՝ առանց որևէ իրավունքի, անօգուտ և անիմաստ՝ արյան, նյութական, կրքոտ եռքի մղմամբ, և այս ամենը միայն այդ ողբալի, կործանարար եռքի պատճառով: Կողքից նայողը կասի, թե՝ սա կատարյալ սուրբ է:

Մարդկության շրջանում վաղուց նկատվում են այդպիսի հակումներ ու ձգտումներ: Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղված թղթում գրում է. «Հանդուրժում եք, եթե մեկը խաբում է ձեզ, ծառայի տեղ է դնում, եթե մեկն ուտում է ձեր ունեցվածքը, վերցնում է, ինչ որ ձերն է, եթե մեկը հոխորտում է, հարվածում է ձեր երեսին» (Բ Կորնթ. 11:20): Այնուհետև սուրբ Առաքյալն ասում է, որ ինքը լինելով Կորնթոսում՝ իրեն հանդուգն ու լկտի չպահեց, նրա վարվելակերպը արտահայտված էր համեստությամբ, Քրիստոսի հեզությամբ և հանդարտությամբ (Բ Կորնթ. 10:1): Արևմտյան եկեղեցու ճգնավորների մեծ մասը, որոնք նրա կողմից հռչակված են որպես մեծագույն սրբեր, Արևելյան եկեղեցուց բաժանվելու և նրանից Սուրբ Հոգու հեռանալու պատճառով աղոթում էին և հասնում տեսիլքների, պարզ է, որ կեղծ՝ ըստ վերը իմ կողմից հիշատակված կերպերին հետամուտ լինելով: Այս կարծեցյալ սրբերը գտնվում էին սարսափելի դիվային պատրանքի մեջ: Պատրանքով բռնված լատին ճգնավորների վարքը միշտ մոլեգին է՝ անսովոր, նյութականության և կրքոտ բորբոքվածության պատճառով: Այդ վիճակում էր գտնվում Իգնատիոս Լոյլան՝ ճիզվիդ օրդենի հիմնադիրը: Նրա երևակայությունն այնքան էր բորբոքված ու սրված, որ, ինչպես ինքը հաստատեց, իրեն մնում էր միայն ցանկանալ և որոշ ջանք գործադրել, և անմիջապես իր աչքերի առաջ կհայտնվեր, ըստ իր ցանկության, դժոխքը կամ Դրախտը: Դժոխքի կամ Դրախտի հայտնվելը կատարվում էր ոչ միայն մարդկային երևակայության արդյունքում, քանզի դա բավարար չէ, այլ՝ դևերի ներգործությամբ, սրանք միավորում են իրենց առատ ներգործությունը մարդկային անբավարար գործունեության հետ, հիմք ունենալով մարդու ազատ կամքը՝ ով իր համար ընտրել և սեփականացրել է սուտ ուղղվածությունը: Հայտնի է, որ իրական տեսիլքը սրբերին տրվում է Տիրոջ բարեհաճությամբ ու ներգործությամբ, այլ ո՛չ թե մարդու կամքով և նրա սեփական ջանքերով, շնորհվում է անսպասելիորեն, շատ հազվադեպ, հատուկ կարիքի դեպքում՝ Տիրոջ հրաշալի հայեցողությամբ, և ոչ թե՝ ինչպես պատահի: Պատրվածի ուժգին սխրանքի կողքին սովորաբար կանգնած է խոր այլասերվածությունը: Այլասերությունը ծառայում է որպես գնահատական այն բոցին, ինչով բարբոքվում են պատրվածները: Դա հաստատում են հայրերի թե՛ վարքերը, թե՛ ուսմունքները: «Պատրանքի հոգով հայտնություններ տեսնողը, - ասում էր սուրբ Մաքսիմ Կափսոկալովը, - շատ հաճախ տրվում է զայրույթի և բարկության, խոնարհության և աղոթքների անուշահոտությունը կամ իրական արցունքները նրանում տեղ չունեն: Դրան հակառակ, նա միշտ պարծենում է իր առաքինություններով, ամբարտավանում է և շարունակաբար հանդգնությամբ տրվում անիրավ կրքերին»:

Աշակերտ - Աղոթքի այդ մեթոդի սխալ լինելը և նրա կապը ինքնախաբեության և պատրանքի հետ պարզ է, ասա՛ ինձ նաև սխալ աղոթքի մյուս ձևերի և նրա հետ կապված կեղծ վիճակների մասին:

Ծեր – Ինչպես մտքի սխալ գործունեությունը բերում է ինքնախաբեության և պատրանքի, այդպես էլ այդ նույն բանին է բերում նաև սրտի սխալ գործունեությունը: Անմիտ հպարտությամբ է լցված այն

ցանկությունը և ձգտումը, որ ջանում է մտովի հոգևոր տեսիլքներ տեսնելը, երբ դեռ մաքրված չէ կրքերից, նորոգված չէ և չի աճել Սուրբ Հոգու աջի ներքո: Նման հպարտությամբ լցվածն ուզում է իր սրտին հաճույք պատճառել սուրբ, հոգևոր, Աստվածային զգացումներով, երբ դեռ ընդհանրապես ընդունակ չէ նման բերկրանք վայելելու: Ինչպես անմաքուր միտքը, ցանկանալով տեսնել Աստվածային տեսիլքներ և դրանց հնարավորությունը չունենալով, իր համար տեսիլքներ է հորինում՝ խաբելով և հմայելով իրեն, այդպես էլ սիրտը, ձգտելով ճաշակել Աստվածային քաղցրությունները և մյուս զգացողությունները, և դրանք չգտնելով իր մեջ, հորինում է դրանց՝ հաճույք պատճառելով իրեն, հմայում, խաբում, կործանում է ինքն իրեն՝ մտնելով ստի տիրապետության տակ, հարաբերության մեջ մտնելով դևերի հետ, ենթարկվելով նրանց ազդեցությանը, հպատակվելով նրանց իշխանությանը:

Չնայած որ սրտի զգացողությունների ակունքը ադամական հնությունն է, սակայն դրանցից մեկը կարելի է գործածել անտեսանելի Աստվածպաշտության մեջ, որն է տրտմություն մեղքերի և մեղավորության, անկման և սեփական անձի կործանման համար, ինչը և կոչում են լաց, ապաշխարություն և փշրված հոգի: Սա վկայված է Սուրբ Գրքով. «Եթե ուզեիր՝ պատարագ կմատուցեինք, բայց Դու ողջակեզներ չես սիրում» (Սղմ. 50:18), այսինքն՝ սրտի յուրաքանչյուր զգացողություն առանձին է, իսկ դրանք բոլորը միասին Քեզ հաճելի չեն, ինչպես մեղքով պղծված և անկմամբ այլասերված. «Խոնարհ հոգին է պատարագն Աստծո, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սղմ. 50:19): Սա պատարագ է՝ ընդունելի պատարագ, այդ զոհաբերումով ինքնըստինքյան վերանում են մյուս բոլոր զոհերը, ապաշխարության զգացողության ժամանակ լռում են մյուս բոլոր զգացումները: Պետք է նախապես վերականգնվեն մեր ավերված Երուսաղեմի պարիսպները, որպեսզի մյուս զգացողությունները Աստծուն հաճելի դառնան: Տերն արդար է, ամենասուրբ, մարդկային նորոգված բնությունն է միայն ընդունակ արդար և մաքուր պատարագի, ինչն էլ հաճելի է արդար և ամենասուրբ Տիրոջը:

Ապականված զոհերն ու ողջակիզումները Նրան հաճելի չեն: Հոգանք, որպեսզի մաքրվենք ապաշխարությամբ. «Այնժամ Դու կհավանես արդարության պատարագները և, իբրև ուխտի զոհեր, Քո սեղանին հորթեր կմատուցեն» (Սղմ. 50:21), այսինքն՝ մարդու նորելուկ զգացողությունները, որոնք նորոգված են Սուրբ Հոգով:

Փրկչի կողմից ամբողջ մարդկությանը տրված առաջին պատվիրանը ապաշխարությունն է. «Հիսուսը սկսեց քարոզել և ասել. «Ապաշխարեցեք, որովհետև Երկնքի Արքայությունը մոտեցել է»» (Մատթ. 4:17): Այս պատվիրանն իր մեջ ընդգրկում է մյուս բոլոր պատվիրանները: Այն մարդկանց, ովքեր չեն հասկացել ապաշխարության նշանակությունն ու ուժը, Փրկիչը բազմիցս ասել է. «Գնացեք, սովորեք, թե ինչ է նշանակում՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ» (Մատթ. 9:13): Դա նշանակում է, որ Տերը, գթասիրտ լինելով ընկած և կործանվող մարդկանց հանդեպ, տվել է ապաշխարությունը՝ որպես փրկության միակ միջոց, որովհետև բոլորը բռնված են անկմամբ և կորստով: Նա չի պահանջում, նույնիսկ չի ցանկանում նրանցից զոհ ընդունել, ինչին նրանք ընդունակ չեն, այլ ցանկանում է, որ իրենց անձի հանդեպ գթասիրտ լինեն, գիտակցեն իրենց չարիքը և ազատվեն դրանից ապաշխարությամբ: Հիշյալ խոսքին Տերն ավելացնում է. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ մեղավորներին՝ ապաշխարության»: Ովքե՞ր են այդ արդարները, այն դժբախտ, կույր մեղավորները, որոնք սեփական կարծիքին հետամուտ լինելու պատճառով խաբված, չեն համարում, որ ապաշխարությունը կարևորություն ունի իրենց համար, այդ պատճառով էլ կամ մերժում են այն, կամ անփույթ են գտնվում դրա հանդեպ: Օ՜, դժբախտություն: Դրա համար Փրկիչը հրաժարվում է նրանցից, վատնում են նրանք փրկության գանձը: «Վա՜յ այն հոգուն, - ասում է սբ. Մակար Մեծը, - որ չի զգում իր խոցված լինելը և մեծ, անսահման չարությամբ վնասված լինելու պատճառով իրեն համարում է, որ իր համար լիովին խորթ է չարիքի կողմից վնասվելու հավանականությունը: Այդպիսի հոգիներին այլևս չի այցելում և չի բժշկում բարի Բժիշկը՝ որպես կամավոր

իրենց խոցերի հոգսը անտես անողներ, որոնք կարծում են, թե իրենք առողջ են և անարատ: «Առողջներին բժիշկ պետք չէ, - ասաց Նա, - այլ՝ հիվանդներին»» (Մատթ. 9:12): Սարսափելի դաժանություն է սեփական անձի հանդեպ ապաշխարության մերժումը: Սարսափելի սառնություն է, սեփական անձի հանդեպ ատելություն է ապաշխարությունն արհամարհելը: Սեփական անձի հանդեպ դաժան լինողը չի կարող դաժան չլինել մերձավորի հանդեպ: Սեփական անձի հանդեպ գթասիրտ լինողը ապաշխարության ընդունման հետ միասին ողորմած է դառնում նաև մերձավորի հանդեպ: Դրանից էլ երևում է սխալի ամբողջ վտանգավորությունը՝ հափշտակել սրտից Աստծո կողմից պատվիրված, էապես և տրամաբանորեն սրտի համար անհրաժեշտ ապաշխարության զգացումը, և զորացնել սրտում կարգերի հանդեպ ըմբոստությունը, Աստծո կարգ ու կանոնի հանդեպ հակառակությունը: Հոգևոր բնույթի մասին մարմնավոր մարդը ոչ մի պատկերացում չի կարող ունենալ, որովհետև զգացողությունների պատկերացումը մշտապես հիմնվում է սրտին արդեն ծանոթ զգացողությունների վրա, իսկ հոգևոր զգացողությունը լիովին օտար է այն սրտի համար, որը ծանոթ է միայն մարմնավոր և շնչավոր զգացողություններին: Այդպիսի սիրտը չգիտի նույնիսկ հոգևոր զգացողությունների գոյության մասին:

Բոլորին հայտնի է, թե ինչպիսի հոգեկան չարիք առաջացավ հրեա դպիրների և փարիսեցիների սխալ հոգեկան վիճակի պատճառով: Նրանք ոչ միայն օտարվեցին Աստծուց, այլև դարձան Նրա մոլեգին թշնամիներ, աստվածասպաններ: Այդպիսի չարիքի են ենթարկվում նաև այն աղոթողները, որոնք իրենց սխրագործությունից հեռացնելով ապաշխարությունը, փորձում են իրենց սրտում Աստծո հանդեպ սեր առաջացնել՝ ջանալով հաճույք և զմայլանք զգալ, սակայն դրանով նրանք խթանում են իրենց անկմանը և օտարանում Աստծուց, հարաբերության մեջ են մտնում սատանայի հետ, ատելությամբ են համակվում Սուրբ Հոգու հանդեպ: Պատրանքի այս տեսակը սարսափելի է. սա նույնպես հոգեկործան է, ինչպես առաջինը, բայց առավել քիչ է հայտնի, այն հազվադեպ ավարտվում է խելագարությամբ, ինքնասպանությամբ, բայց վերջնականապես ապականում է միտքն ու սիրտը: Նրանց մտքի ինքնակամության վիճակը հայրերն անվանում էին «կարծիք» (սուրբ Գրիգոր Սինայեցի, սուրբ Հովհան Կարպաֆիսկի): Պատրանքի այդ ձևը մատնանշում է նաև Պողոս Առաքյալը, երբ ասում է. «Թող ձեզ չխաբի ոչ ոք, որին հաճելի է խոնարհ ձևանալով, հրեշտակներին պաշտամունք մատուցելով, դեռ չտեսած բաներին միջամուխ լինելով՝ անտեղի հպարտանալ մարմնական մտածումներով» (Կողոս. 2:18): Այդ պատրանքով բռնվածն իր մասին մեծ կարծիք ունի, ենթադրում է, թե ինքը շատ առաքինություններ ու արժանիքներ ունի, նույնիսկ, որ ինքը հարուստ է Սուրբ Հոգու շնորհներով: Այդ կարծիքը կազմված է կեղծ պատկերացումներից և սուտ զգացողություններից, իր այդ հատկությամբ սա լիովին պատկանում է ստի հայր ու ներկայացուցիչ սատանային: Աղոթողը, ջանալով իր սրտում բացել նոր մարդու զգացողությունը և դրա համար ոչ մի հնարավորություն չունենալով, դրանք փոխարինում է իր հորինած կեղծ զգացողություններով, որոնց չի դանդաղում միանալ մերժված հոգիների գործունեությունը: Ընդունելով իր և դիվային սխալ զգացողությունները որպես իրական և շնորհի արդյունք, նա ստանում է համապատասխան զգացողությունների պատկերացումը: Սիրտը այդ զգացողությունները մշտապես յուրացնելով և նրանցում ամրապնդվելով՝ սնում և բազմացնում է կեղծ ընկալումներ: Բնական է, որ այդպիսի սխալ սխրագործությունից առաջանում է ինքնախաբեություն և դիվական պատրանք՝ «կարծիք»: «Կարծիքը» թույլ չի տալիս ճշմարիտ վիճակի մեջ մնալ դրանցով գերվածին, - ասում է սուրբ Սիմոն Նոր Աստվածաբանը (Խոսք 4):

Նա, ով կարծում է, որ ինքը անկիրք է, երբեք չի մաքրվի կրքերից, նա, ով կարծում է, թե ինքը լցված է շնորհով, երբեք շնորհի չի արժանանա, նա, ով կարծում է, թե ինքը սուրբ է, երբեք սրբության չի հասնի: Իրեն հոգևոր գործեր, առաքինություններ, արժանիքներ, շնորհալի պարգևներ վերագրողը շողոքորթում է ինքն իրեն և զվարճացնում «կարծիքով», դրանով նա փակում է իր մեջ դուռը հոգևոր գործերի,

քրիստոնեական առաքինությունների, Աստվածային շնորհի առաջ՝ լայն դուռ բացելով մեղքի և դևերի առաջ: «Կարծիքով» վարակվածի համար այլևս հոգևոր առաջադիմությունների ոչ մի հնարավորություն չկա: Նրանք ոչնչացրել են այդ ընդունակությունը՝ ստի զոհասեղանի առջև բերելով մարդու գործունեության հենց սկիզբը և նրա փրկությունը, այսինքն՝ հասկացողությունը փրկության մասին: Անսովոր ճոռոմություն է առաջանում պատրանքի այդ տեսակով հիվանդացածների մեջ: Նրանք կարծես զմայլված են իրենցով, իրենց ինքնահրապուրված վիճակով՝ դա շնորհի հետևանք համարելով: Նրանք հագեցված են, լցված մեծամտությամբ և հպարտությամբ, սակայն ներկայանում են իբրև խոնարհ նրանց, ովքեր արտաքինից են միայն դատում՝ չկարողանալով ճանաչել գործերից, ինչպես պատվիրել է Փրկիչը (Մատթ. 7:16, 12:33), առավել ևս հոգևոր զգացողությունից, որի մասին հիշեցնում է Առաքյալը (Եբր. 5:14): Եսայի Մարգարեն պատկերավոր է ներկայացրել մերժված հրեշտակի «կարծիք» պատրանքի գործունեությունը: «Դու, - ասում է Մարգարեն սատանային, - մտքիդ մեջ ասում էիր. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր, կնստեմ բարձր լեռան վրա. կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին»: Բայց, ահավասիկ, իջնելու ես դժոխք և երկրի խորքերը» (Եսայի 14:13-15):

«Կարծիքով» վարակվածին Տերն այսպես է մերկացնում. «Քանի որ ասում ես. «Հպարտ եմ և առավել հարստացա ու ոչ մի բանի կարոտ չեմ», բայց չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ ու աղքատ, մերկ և կույր» (Հայտն.3:17): Տերը պատրվածին հորդորում է ապաշխարության, առաջարկում է հենց Իրենից գնել անհրաժեշտ պարագաները, որոնցից կազմվում է ապաշխարությունը (Հայտ. 3:18): Գնելը ստիպողական կարիք է, առանց դրա փրկություն չկա: Չկա փրկություն առանց ապաշխարության, իսկ Աստված նրանց ապաշխարությունն է ընդունում, ովքեր քավություն ստանալու համար վաճառում են իրենց ողջ ունեցվածքը, հրաժարվում են այն ամենից, ինչը ստությամբ ձեռք է բերվել «կարծիքի» միջոցով:

Աշակերտ - Արդյոք դու չե՞ս հանդիպել նման պատրանքով վարակվածների:

Ծեր - «Կարծիք» կոչված պատրանքով վարակվածներ շատ են հանդիպում: Յուրաքանչյուրը, ով չունի փշրված հոգի և համարում է, որ ինքը ունի ինչ – որ արժանապատվություն և արժանիքներ, յուրաքանչյուրը, ով անշեղորեն չի պահում Ուղղափառ Եկեղեցու ուսմունքը, այլ կամավոր կերպով քննարկում է որևէ դոգմա կամ ավանդույթ, ըստ իր տեսակետի կամ ոչ ուղղափառ ուսուցմամբ, գտնվում է այդ պատրանքի մեջ: Շեղման և շեղվածության մեջ համառելու չափով որոշվում է պատրանքի աստիճանը:

Տկար է մարդը: Ծածուկ կերպով մեր մեջ է մտնում «կարծիքը» իր որևէ տեսքով և հեռացնում մեզանից Աստծո շնորհը: Ինչպես, ըստ սուրբ Մակար Մեծի դիտողության, չկա որևէ մարդ, որ կատարյալ ազատ լինի հպարտությունից, այնպես էլ չկա որևէ մարդ, որ կատարյալ ազատ լինի իր մեջ ներգործող «կարծիք» կոչվող նրբին պատրանքից:

Նման մի վիճակի մեջ ընկավ նաև Պողոս Առաքյալը և բժշկվեց Աստծո թույլտվությամբ իր վրա եկած ծանր սպեղանիներով: «Որովհետև, եղբայրներ, - գրում է Առաքյալը կորնթացիներին, - ուզում եմ, որ դուք իմանաք Ասիայում մեզ պատահած այն նեղության մասին, որը մեր կարողությունից ավելի ծանր տարանք, մինչև իսկ կյանքից մեր հույսը կորցնելու աստիճան. մենք մեր անձի վրա իսկ կրեցինք մահվան վճիռը, որպեսզի չապավինենք մեզ, այլ՝ Աստծուն, որ հարություն է տալիս մեռելներին» (Բ Կորնթ. 1:8-9): Այդ պատճառով պետք է աչալրջորեն քննես ինքդ քեզ, որպեսզի քո սեփական անձին չվերագրես ոչ մի բարի գործ, գովելի հատկություն կամ մարդկային բնության համար առանձնահատուկ ընդունակություն, նույնիսկ շնորհալի վիճակ, եթե անգամ առաջադիմել ես, կարճ ասած՝ որպեսզի սեփական անձիդ ոչ մի արժանիք չվերագրես: «Ի՞նչ բան ունես, - ասում է Առաքյալը, - որ ստացած չլինես» (Ա Կորնթ. 4:7) Աստծուց: Աստծով ունենք և՛ կյանք, և՛ վերստին կյանք, և՛ բոլոր բնական հատկությունները, ունակությունները թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր: Մենք պարտական ենք Աստծուն: Մեր պարտքը

անվճարելի է: Սեփական անձի հանդեպ նման տեսողությունից մեր հոգու համար ինքնըստինքյան գոյանում է այնպիսի վիճակ, ինչը հակառակ է «կարծիքին», իրավիճակ, որ Տերը կոչեց հոգու աղքատություն, ինչը քարոզեց և հորդորեց մեզ ունենալ: Մեծ չարիք է Եկեղեցու դոգմատիկական և բարեպաշտական վարդապետությունից, Սուրբ Հոգու մասին ուսմունքից շեղվել որևէ այլ խորհրդածությունների կողմը: «Քանդում ենք գաղտնի մտածումները, Աստծո գիտության դեմ գոռոզացած ամեն ծառացում և գերելով բոլոր մտքերը՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին» (Բ Կորնթ. 10:5):

Աշակերտ - Արդյոք որևէ կապ կա՞ այդ երկու պատրանքների միջև:

Ծեր - Այդ երկու պատրանքների միջև անպայման կապ կա: Առաջին տեսակի պատրանքը միշտ միավորված է երկրորդ տեսակի պատրանքի՝ «կարծիքի» հետ:

Պատրանքի երկրորդ տեսակը սեփական «կարծիքն» է, որը գործում է առանց հմայիչ պատկերներ հորինելու, նա բավարարվում է կեղծ շնորհի զգացողություններ և վիճակներ հորինելով, որոնցից առաջանում են սուտ և աղավաղված գաղափարներ ընդհանրապես բոլոր հոգևոր սխրագործությունների մասին: «Կարծիք» կոչված պատրանքի մեջ գտնվողն իրեն շրջապատող ամեն ինչի հանդեպ կեղծ տեսակետներ է ձեռք բերում: Նա իրեն խաբում է և՛ ներքուստ, և՛ արտաքուստ: Երևակայությունն ուժգնորեն գործում է պատրվածի մեջ «կարծիքով», բայց գործում է բացառապես վերացականության բնագավառում: Նա կա՛մ ընդհանրապես չի զբաղվում, կամ՛ բացառապես զբաղվում է Դրախտը, վերին օթևանները և պալատները, երկնային լույսը և անուշահոտությունը, Քրիստոսին, հրեշտակներին և սրբերին երևակայության մեջ պատկերելով, նա մշտապես հորինում է կեղծ հոգևոր վիճակ, սերտ ընկերություն Քրիստոսի հետ, ներքին զրույց Նրա հետ, խորհրդավոր հայտնություններ, ձայներ, հաճույքներ, դրանցով կեղծ գաղափար է ստեղծում իր և քրիստոնեական սխրագործությունների մասին, ընդհանրապես ստեղծում է մտքերի սխալ ուղղվածություն և սրտի կեղծ տրամադրվածություն՝ ընկնելով մե՛կ ինքնահիացման, մե՛կ բորբոքման և զմայլության մեջ: Այդ բազմատեսակ զգացողություններն առաջանում են սնափառության և ցանկասիրության նուրբ ներգործությունից, դրանից էլ արյունը ստանում է մեղանչական, խաբեական շարժում՝ ներկայացվելով այդ իբր շնորհի հետևանք: Իսկ սնափառությունն ու ցանկասիրությունն առաջացնում են մեծամտություն, ինչը «կարծիքի» անբաժան ուղեկիցն է: Սարսափելի հպարտությունը, որ նման է դևերի հպարտությանը, տիրապետող հատկություն է նրանց համար, ովքեր ընկել են թե՛ այս և թե՛ մյուս պատրանքի մեջ: Պատրանքի առաջին ձևով գերվածներին հպարտությունը հասցնում է բացահայտ խելագարության, պատրանքի երկրորդ ձևը նույնպես մտախեղում է առաջացնում՝ Սուրբ Գրքում կոչվելով «մտքի ապականություն» (Բ Տիմ. 3:8). այն քիչ նկատելի է, քանզի հագած լինելով խոնարհության, բարեպաշտության և իմաստության դիմակ, ճանաչվում է միայն իր դառը պտուղներից: «Կարծիքով» վարակվածներն իրենց «արժանիքների», հատկապես իրենց «սրբության» համար ընդունակ են և պատրաստ ամեն տեսակ խարդավանքների, կեղծավորության, նենգության, ստի և այլ չարագործությունների: Նրանք անհաշտ թշնամությամբ են տրամադրված ճշմարտության ծառաների հանդեպ, կատաղի ատելությամբ հարձակվում են նրանց վրա, երբ սրանք չեն ընդունում պատրվածների այն վիճակը, ինչն իրենք են իրենց վերագրում և ի ցույց դնում «կարծիքով» կուրացած աշխարհին՝ ի ամոթ իրենց:

Աշակերտ – Չէ՞ որ գոյություն ունի հոգևոր վիճակ, որը առաջանում է Աստվածային շնորհի ներգործությամբ, երբ ճաշակում են հոգևոր քաղցրություն և ուրախություն, երբ բացվում են քրիստոնեական խորհուրդները, որի դեպքում սրտում զգում են Սուրբ Հոգու ներկայությունը, վիճակ, որի դեպքում Քրիստոսի ծառան արժանանում է հոգևոր տեսիլքների:

Ծեր - Անկասկա՛ծ, գոյություն ունի, բայց միայն այնպիսի քրիստոնյաների մեջ, որոնք քրիստոնեական կատարելության են հասել՝ նախապես մաքրվելով և ապաշխարությամբ պատրաստվելով:

Ապաշխարության աստիճանաբար կատարող ներգործությունները, որ արտահայտվում են խոնարհության բոլոր կերպերով, հատկապես այնպիսի աղոթքով, որ արվում է հոգու աղքատությամբ և լացով, աստիճանաբար թուլացնում են մարդու մեջ մեղքի ազդեցությունը: Դրա համար զգալի ժամանակ է հարկավոր, և այն տրվում է իրական, ուղղամիտ ջանասերին՝ անքուն կերպով մեզ հսկող Աստծո նախախնամությամբ: Կրքերի դեմ պայքարը չափազանց օգտակար է, այն ամենից արագ է բերում հոգու աղքատության: Մեր օգտի համար է, որ Դատավորն ու Տերը շատ համբերատար է մեր հանդեպ և միայն իր ժամանակին է լսում և պատասխանում (Ղուկ. 18:7): Երբ կրքերը սկսում են շատ թուլանալ, ինչը շատ հաճախ տեղի է ունենում կյանքի վերջին շրջանում, կամաց – կամաց սկսում է երևան գալ իրական հոգևոր վիճակը, ինչն անսահմանորեն տարբերվում է հորինված «կարծիքից»: Սկզբում հոգու տաճարի մեջ է մտնում շնորհալի լացը՝ լվանալով և ճերմակեցնելով այն պարգևների ընդունման համար, ինչը հաջորդում է լացին հոգևոր օրենքների կարգավորմամբ: Մարմնավոր մարդը երբեք, ոչ մի կերպ չի կարող նույնիսկ պատկերացնել հոգևոր վիճակի մասին, չի կարող որևէ գաղափար կազմել շնորհի հետևանքով առաջացած լացի մասին, այդ վիճակների ճանաչումը ձեռք են բերում ոչ այլ ոք, քան փորձառուները: Հոգևոր պարգևները տրվում են Աստվածային իմաստությամբ, որը հսկում է, որպեսզի բանական անոթը, պարտավոր լինելով իր մեջ ընդունել պարգևը, կարողանա առանց վնասի իր մեջ կրել պարգևի զորությունը. «Նոր գինին պատռում է հին տիկերը» (Մատթ. 9:17): Նկատելի է, որ ներկա ժամանակներս հոգևոր պարգևները տրվում են մեծագույն չափավորությամբ՝ համեմատ այն տկարության, որով այսօր համակված է ընդհանրապես քրիստոնեությունը: Այդ պարգևները բավարարում են գրեթե միայն փրկության պահանջներին: Դրան հակառակ «կարծիքը» վատնում է իր պարգևները լիառատությամբ և մեծ շտապողականությամբ:

Հոգևոր վիճակի ընդհանուր հատկանիշը մեծ խոնարհությունն ու խոնարհամտությունն է՝ բոլոր մերձավորներին իրենից գերադասելու զգացումով, նրանց հանդեպ Ավետարանային սիրո տրամադրվածությամբ և աշխարհից հեռանալով: «Կարծիքն» այդտեղ քիչ դեր ունի, որովհետև խոնարհությունն արտահայտվում է սեփական բոլոր արժանիքների մերժմամբ՝ Փրկչին էապես խոստովանելով որպես իր ամբողջ հույսն ու հենարանը, իսկ «կարծիքն» այն է, երբ սեփական անձին են վերագրում Աստծո կողմից տրված արժանիքներն ու իրենց համար հորինում գոյություն չունեցող արժանիքներ: Դրա հետ միավորված է սեփական անձի վրա հույս դնելը, սառը և մակերեսորեն Փրկչին խոստովանելը: Աստծուն փառաբանելը ծառայեցնում է սեփական փառքի համար, ինչպես փառաբանում էր փարիսեցին (Ղուկ. 18:11): «Կարծիքով» բռնվածները մեծ մասամբ տրվում են ցանկասիրությանը, չնայած նրան, որ իրենց վերագրում են մեծագույն հոգևոր վիճակներ՝ ճշմարիտ ուղղափառության մեջ անօրինակ սխրագործություններ, նրանցից քչերն են խուսափում ցանկասիրության բիրտ ստրկացումից, որից ետ պահողը միայն նրանց մեջ գերիշխող, մեղքերի գլուխ հանդիսացող հպարտությունն է:

Աշակերտ – Կարո՞ղ են, արդյոք, «կարծիք» կոչվող պատրանքի հետևանքով առաջանալ ինչ – որ շոշափելի, տեսանելի դժբախտ հետևանքներ:

Ծեր – Պատրանքի այս ձևից են առաջացել կործանարար հերետիկոսությունները, աղանդները, անաստվածությունը, աստվածանարգությունը: Այո, այն ունի ամենադժբախտ, տեսանելի հետևանքներ, սխալ, չարաղետ ազդեցություններ իր և իր մերձավորների համար. չնայած իր հստակությանը և ընդարձակությանը, սա քիչ նկատվող է և քիչ հասկացվող: «Կարծիքով» վարակված աղոթքի մշակի մոտ միշտ չէ, որ այդ մոլորությունը ակնհայտ երևում է, որովհետև «կարծիքը» մտքին սարսափելի մոլորության մեջ է գցում, սակայն խելագարության չի հասցնում, ինչպես այդ անում է խանգարված երևակայությունը: Վալաամի հեռավոր անապատական խրճիթում ապրում էր վանական Պորֆիրը, որին ես հանդիպեցի: Նա զբաղվում էր աղոթքի սխրագործությամբ: Թե ինչ բնույթի էր այդ սխրագործությունը և դրա սխալ լինելը,

կարելի էր կռահել վանականի նախընտրած ընթերցանությունից. նա մեծ գնահատական էր տալիս արևմտյան գրող Թովմա Գեմբացու «Նմանություն Հիսուսի» գրքին և դրանով էր առաջնորդվում, իսկ այդ գիրքը «կարծիքից» է գրված: Պորֆիրը մի աշնանային երեկո այցելում է Սկիտի ծերերին, որից քիչ հեռու գտնվում էր իր անապատը: Երբ նա հրաժեշտ տվեց ծերերին, նրանք նախազգուշացրին նրան՝ ասելով. «Մտքովդ չանցնի սառույցի վրայով անցնել, այն նոր է գոյացել և շատ բարակ է»: Պորֆիրի անապատը Սկիտից բաժանվում էր Լադոժյան շրջանի խոր ծովածոցով, որը պետք էր շրջանցել: Վանականը զուտ արտաքին համեստությամբ ցածր ձայնով պատասխանեց. «Ես արդեն թեթև եմ դարձել»: Նա գնաց: Կարճ ժամանակ անց սաստիկ ճիչ լսվեց: Սկիտի ծերերը տագնապահար դուրս վազեցին: Մութ էր, ուշ գտան այն վայրը, որտեղ դժբախտություն էր պատահել, ուշ գտան նաև սուզվածին հանելու միջոցը, և երբ դուրս բերեցին մարմինը՝ հոգին արդեն ավանդել էր:

Աշակերտ - Դու խոսում ես «Նմանություն» գրքի մասին, որ գրված է պատրված վիճակում, բայց այն բազմաթիվ ընթերցողներ ունի նույնիսկ Ուղղափառ Եկեղեցու զավակների մեջ:

Ծեր - Դրանք այն ընթերցողներն են, ովքեր հիացել են նրա արժեքով և պատմում են այդ արժեքի մասին՝ ոչինչ չհասկանալով դրանից: «Նմանություն» գրքի Մոսկվայում տպագրված 1834թ. ռուսերեն թարգմանության նախաբանում գրված է. «Ռուս Ուղղափառ Եկեղեցու մի կրթված այր ասել է. «Եթե պետք լիներ իմ կարծիքը, ապա ես կհամարձակեի Սուրբ Գրքից հետո դնել Գեմբացու «Նմանություն Հիսուս Քրիստոսի» գիրքը»: Նման վճռական հայտարարությամբ ոչ ուղղափառ հեղինակին կատարյալ նախապատվություն է տալիս Ուղղափառ Եկեղեցու բոլոր սուրբ հայրերից, և իր տեսակետը նախապատվում է ողջ եկեղեցու սահմանումից, որը սուրբ ժողովներում ընդունեց Աստվածաշնորհ սուրբ հայրերի գրվածքները և ավանդ թողեց դրանց ընթերցանությունը ոչ միայն որպես հոգեշահ իր բոլոր զավակների համար, այլև եկեղեցական հարցերի որոշման ժամանակ՝ որպես ուղեցույց: Հայրերի գրվածքներում պահպանվում են հոգևոր, քրիստոնեական և եկեղեցական գանձեր, նաև սուրբ եկեղեցու դոգմատիկական և բարեպաշտական ավանդությունը: Ակնհայտ է, որ «Նմանություն» գիրքը վերոհիշյալ անձնավորությանը բերել է այնպիսի տրամադրվածության, որի պատճառով նա այդքան անշրջահայաց, սխալ, տխուր կերպով է արտահայտվել: Դա ինքնախաբեություն է՝ պատրանք: Այն կազմված է թյուր ըմբռնումից, կեղծ պատկերացումներից և ոչ ճիշտ զգացողություններից, ինչը արտահայտված է գրքում: Գրքում բնակվում և գրքից բխում է չար ոգու օծումը՝ շողոքորթելով ընթերցողին, որը հիմնվելով նրա թունավոր ստին՝ հաճույք է ստանում նրբությամբ համեմված մեծամտությունից, փառամոլությունից և ցանկասիրությունից: Գիրքն իր ընթերցողներին միանգամից, առանց ապաշխարությամբ նախապես մաքրման՝ Աստծո հետ հարաբերության մեջ է մտցնում, այդ պատճառով էլ իր հանդեպ առանձնահատուկ համակրանք է առաջացնում կրքոտ մարդկանց մոտ, ովքեր չգիտեն ապաշխարության ճանապարհը, պաշտպանված չեն ինքնախաբեությունից և պատրանքից, ճշմարիտ կենցաղավարության ուսմունքով խրատված չեն Ուղղափառ Եկեղեցու սուրբ հայրերի կողմից: Գիրքն ուժգին ազդեցություն է գործում արյան և նյարդերի վրա, գրգռում է դրանք, դրա համար էլ հատկապես դուր է գալիս զգացմունքներին ստրկացած մարդկանց, գրքից կարելի է հաճույք ստանալ՝ չհրաժարվելով զգայական բիրտ հաճույքներից: Մեծամտությունը, նրբին ցանկասիրությունը և սնափառությունը գրքում ներկայացվում են իբրև Աստծո շնորհի ներգործություն: Մարմնավոր մարդիկ տարվելով իրենց ցանկասիրության նուրբ ներգործությամբ՝ բերկրանքի մեջ են ընկնում հաճույքից, զմայլանքից՝ գուրգուրելով իրենց անկումը, դրանք շփոթելով հոգևոր բերկրանքի հետ, ինչն անհնար է ձեռք բերել առանց ջանքի, ինքնամերժման, ապաշխարության, «առանց մարմինը խաչը հանելու կրքերով և ցանկություններով հանդերձ» (Գաղատ. 5:24): Առաջնորդվելով իրենց կուրությամբ և հպարտությամբ՝ սրանք ուրախությամբ անցնում են անասնական սիրո մահճից առավել հանցավոր սիրո մահիճ, ուր տիրում է մերժված ոգիների անառականոցը: Ոմն մեկը, որ ըստ

աշխարհական դիրքի պատկանում է բարձր և կրթված հասարակությանը, իսկ արտաքնապես Ուղղափառ Եկեղեցուն՝ հետևյալ կերպ է արտահայտվում մի լութերականուհու մահվան մասին, որին սրբուհի է համարում. «Նա կրքոտ կերպով սիրում էր Աստծուն, մտածում էր միայն Աստծո մասին, կարդում էր միայն Ավետարանը և «Նմանությունը», ինչը երկրորդ Ավետարանն է»: Այս խոսքերով արտահայտվում է հատկապես այն վիճակը, որի մեջ ընկած են «Նմանություն» կարդացողները: Իր էությամբ վերոհիշյալ մեջբերման հետ նույնն է հանրաճանաչ ֆրանսուհի գրողի՝ դը Սևինեի գրածը հանրահայտ ֆրանսիացի գրող Ռասին ավագի մասին. «Նա սիրում է Աստծուն, - թույլ տվեց իրեն ասել դը Սևինեն, ինչպես նախկինում սիրում էր իր հարճերին»: Հայտնի քննադատ Լա-Գարպը, սկզբից լինելով անաստված, հետո գալով սխալ և իր կողմից այլասերված քրիստոնեության, հավանություն տալով դը Սևինեի այդ արտահայտությանը՝ ասում է. «Սիրտը, որով սիրում են Արարչին և արարածին, նույնն է, սակայն հետևանքները այնքան են տարբերվում իրարից, որքանով տարբեր են առարկաները»: Ռասինը անառակությունից անցավ «կարծիք» կոչված պատրանքի: Այդ պատրանքը իր ամբողջ հստակությամբ արտահայտվում է հեղինակի վերջին երկու ողբերգություններում՝ «Եսթեր»-ում և «Գոթոնիել»-ում: Ռասինի քրիստոնեական բարձր մտքերն ու զգացողությունները մեծ տեղ գտան մուսաների և Ապոլոնի տաճարում, թատրոնում, դրանք հիացմունք և ծափահարություններ էին առաջացնում: «Գոթոնիել»-ը, որը ճանաչված էր որպես Ռասինի ամենամեծ ստեղծագործություն, քառասուն անգամ անընդմեջ ներկայացվեց: Այս ողբերգության ոգին նույնն է, ինչ – որ «Նմանության»-ը: Մենք հավատում ենք, որ մարդկային սրտում անասնական ցանկասիրություն կա, որը նրա մեջ ներմուծվել է անկման պատճառով, ինչը հարաբերության մեջ է մերժված հոգիների ցանկասիրության հետ. մենք հավատում ենք, որ սրտում կա նաև հոգևոր ցանկասիրություն, որը ստեղծվել է մեզ հետ միասին, որով Աստծուն և մերձավորներին սիրում ենք բնականորեն և ճշմարտապես, որը ներդաշնակության մեջ է գտնվում սուրբ հրեշտակների ցանկասիրության հետ: Աստծուն և Աստծով մերձավորին սիրելու համար անհրաժեշտ է մաքրվել անասնակերպ ցանկասիրությունից: Մաքրագործումը իրականացնում է Սուրբ Հոգին այն մարդու մեջ, ով մաքրագործման ձգտում է ցուցաբերում: Հատկապես «սիրտ» են կոչում բարոյական տեսանկյունով ցանկասիրությունը և այլ հոգևոր զորությունները, այլ ոչ թե մարմնի մաս կազմող սիրտը:

Մարմնավոր մարդկանց զգացողություններին հակառակ՝ հոգևոր այրերը, զգալով բարի ձևացող չարության գարշահոտությունը, անմիջապես զզվանք են զգում այն գրքերի հանդեպ, որոնք իրենցից նման գարշահոտություն են արձակում: Ծեր Եսայի վանականի համար, որը միայնակյաց էր Նիկիֆորյան անապատում և առաջադիմում էր մտային աղոթքի մեջ արժանանալով Աստծո օրհնությանը, մի հատված կարդացվեց «Նմանություն» գրքից: Ծերը անմիջապես ընկալեց այդ գրքի էությունը: Նա ժպտաց և բացականչեց. «Օ՜, դա գրված է «կարծիքից»: Այստեղ ոչ մի ճշմարտություն չկա: Այստեղ ամեն ինչ մտացածին է: Թովման փորձառությամբ չճանաչելով իրական հոգևոր վիճակները՝ հորինել է դրանք և այդպես էլ նկարագրել: Պատրանքը, որպես դժբախտություն, իրենից ներկայացնում է ցավալի, անհեթեթ և ծիծաղելի երևույթ: Իր խստագույն կյանքով հայտնի Կիրիլո – Նովոեզերկովյան վանքի վարդապետը, սրտի պարզությամբ զբաղվելով գրեթե միայն մարմնավոր սխրագործություններով և հոգևոր սխրագործության մասին ունենալով ամենաչափավոր գաղափարներ՝ սկզբում իրենից խորհուրդ հարցնող և իր ղեկավարության տակ գտնվող մարդկանց առաջարկում էր կարդալ «Նմանություն» գիրքը. իր մահից մի քանի տարի առաջ սկսեց արգելել այդ գրքի ընթերցանությունը՝ սուրբ պարզությամբ ասելով. «Նախկինում ես այդ գիրքը հոգեշահ էի համարում, բայց Աստված ինձ հայտնեց, որ դա հոգեվնաս է»: Նմանության մասին նման կարծիք ուներ և հոգևոր կյանքում փորձառություն ունեցող, հայտնի վանական Լեոնիդը, ով Օպտինայի անապատում սկիզբ դրեց բարոյական բարեկարգմանը: Վերոհիշյալ բոլոր ճգնավորներն ինձ անձամբ ծանոթ են եղել: Ուղղափառության ոգով դաստիարակված մի կալվածատեր, մասամբ ճանաչելով,

այսպես կոչված, բարձր խավին, այսինքն՝ աշխարհիկ բարձր շերտերին, մի անգամ տեսավ «Նմանություն» գիրքը իր աղջկա ձեռքին: Նա արգելեց կարդալ այդ՝ ասելով. «Ես չեմ ցանկանում, որ դու հետևես նորաձևությանը, չեմ ուզում, որ դու կոտրատվես (կոկետություն ցուցաբերես, սեթևեթես) Աստծո առջև». ահա այդ գրքի մասին ամենաճիշտ գնահատականը:

Աշակերտ – Պատրանքի ուրիշ ձևեր կա՞ն, արդյոք:

Ծեր – Ինքնախաբեության և դիվային խաբեության բոլոր առանձին ձևերը վերաբերում են վերը ասված երկու գլխավոր կերպերին և առաջանում են կամ մտքի, կամ էլ սրտի սխալ գործունեությունից, մանավանդ՝ «կարծիքի» ընդարձակ գործունեությունից: Անհիմն չէ մեր վերաբերմունքն ինքնախաբեության և պատրանքի մեջ գտնվող այն վանականների հոգևոր վիճակի հանդեպ, ովքեր մերժելով Հիսուսի աղոթքի վարժանքը և ընդհանրապես մտային գործունեությունը՝ բավարարվում են միայն արտաքին աղոթքով, այսինքն՝ բաց չթողնելով եկեղեցական ծառայություններին մասնակցելը և խցային օրենքները կատարելը, ինչը բաղկացած է բացառապես սաղմոսերգությունից և աղոթագրքի աղոթքներից, որ կատարվում են բանավոր և երգեցողությամբ: Նրանք չեն կարող խուսափել «կարծիքից», ինչպես դա բացատրում է սուրբ Գրիգոր Սինայեցու գրքի նախաբանում հիշատակված Բարսեղ ծերը՝ առավելապես մատնանշելով սուրբ հեղինակների գրքերը, դրանցից՝ Գրիգորինը և Սիմոն Նոր Աստվածաբանինը: «Կարծիքի» առկայության նշանը ճգնավորների մեջ ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ նրանք մտածում են իրենց մասին, թե ուշադիր կյանք են վարում, հաճախ հպարտության պատճառով մյուսներին արհամարհում են և վատ խոսում նրանց մասին, իրենց կարծիքով իրենք արժանի են հոտի հովիվ և ղեկավար լինելու՝ նմանվելով կույրի, որը հանձն է առել ճանապարհ ցույց տալ մեկ ուրիշ կույրի: Բանավոր և երգեցիկ աղոթքը պտղաբեր է, երբ միավորված է ուշադրության հետ, ինչը շատ հազվադեպ է հանդիպում, որովհետև ուշադրությունը ձեռք է բերվում առավելապես Հիսուսի աղոթքի վարժանքի ժամանակ:

ՃՇՄԱՐԻՏ և ՍՈՒՏ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Թող ձեզ ոչ ոք չխաբի՝ խոնարհ ձևանալով» (Կողոս 2:18), - ասում է սուրբ Պողոս Առաքյալը:

Ճշմարիտ խոնարհամտությունը հնազանդվելու և Քրիստոսին հետևելու մեջ է (Փիլիպ. 2:5-8):

Ճշմարիտ խոնարհամտությունը հոգևոր բանականությունն է: Այն Աստծո պարգևն է, այն Աստվածային շնորհի ներգործությունն է մարդու մտքի և սրտի մեջ:

Կարող է լինել նաև կամավոր խոնարհամտություն. դա իր համար ստեղծում է փառամոլ, հմայված և սուտ ուսմունքով խաբված հոգին, ինքնահրապուրված, աշխարհից գովեստներ փնտրող, ամբողջովին երկրային հաջողությունների և հաճույքների ձգտող հոգին, հավիտենականության և Աստծո մասին մոռացած հոգին:

Ինքնակամ, հատուկ հորինած խոնարհամտությունը բաղկացած է բազմաթիվ և զանազան խորամանկություններից, որոնցով մարդկային հպարտությունը ջանում է խոնարհությամբ փառք որսալ կուրացած, իրեններին սիրող և արատները փառաբանող աշխարհից, երբ արատը հանդես է գալիս առաքինության դիմակով, առաքինությունները ատող աշխարհից, երբ առաքինությունը նրա աչքի առջև է իր սուրբ պարզությամբ և Ավետարանին սուրբ ու ամուր հնազանդությամբ:

Ոչինչ այնքան դեմ չէ Քրիստոսի խոնարհությանը, որքան ինքնակամ խոնարհամտությունը, որը մերժելով Քրիստոսին հնազանդվելու լուծը Աստծուն ծառայելու կեղծավորության քողի տակ՝ սրբապղծությամբ ծառայում է սատանային:

Եթե մենք անդադար նայենք մեր մեղքերին և ջանանք քննել այն մանրամասնորեն, ապա մեր մեջ ոչ մի առաքինություն և խոնարհամտություն չենք գտնի:

Ճշմարիտ խոնարհամտությամբ է ծածկված իրական, սուրբ առաքինությունը. այդպես ողջախոհ կույսն է ծածկոցով փակում իր գեղեցկությունը, այդպես Սրբություն Սրբոցն է ժողովրդի աչքից ծածկված վարագույրով:

Ճշմարիտ խոնարհամտությունն ավետարանյան բնույթն է, ավետարանյան բարքերը և մտածելակերպը:

Ճշմարիտ խոնարհությունն Աստվածային խորհուրդ է՝ գաղտնիք, ինչը անհասանելի է մարդկային ձեռքբերումների համար: Լինելով բարձրագույն գերիմաստություն՝ այն մարմնավոր բանականության համար թվում է վայրագություն:

Աստվածային խոնարհության խորհուրդը բացում է Տեր Հիսուսն Իր հավատարիմ այն ծառային, ով ծնկի իջած անդադար կենտրոնացած է Իր կենսատու խոսքի վրա: Եվ չնայած հայտնի, այն մնում է ծածուկ, այն բացատրելի չէ բառերով և երկրային լեզվով, մարմնավոր բանականության համար անըմբռնելի է և ընկալելի է դառնում հոգևոր բանականությամբ, և այդ ըմբռնելին էլ նույնիսկ ինչ-որ չափով դեռ մնում է անըմբռնելի:

Խոնարհությունը երկնային կյանք է երկրի վրա:

Աստծո մեծավայելչության սքանչելի, Աստվածաշնորհ հայտնությունը և մարդկանց հանդեպ Աստծո անհամար բարիքները, Փրկչին ճանաչելու շնորհը, ինքնամերժմամբ Նրան հետևելը, կորուսյալ անդունդի տեսությունը, ուր գահավիժեց մարդկային ցեղը՝ ահա՛ խոնարհության աներևույթ նշանները, ահա՛ այդ հոգևոր ապարանքի նախասրահները՝ ստեղծված Աստվածամարդու կողմից:

Խոնարհն իրեն խոնարհ չի տեսնում. ընդհակառակը՝ իր մեջ մեծ հպարտություն է տեսնում: Նա հոգ է տանում, որպեսզի իր մեջ փնտրի հպարտության բոլոր ճյուղերը, և գտնելով՝ տեսնում է, որ դեռ պետք է շատ աշխատել մնացած ճյուղերն էլ հայտնաբերելու համար:

Սուրբ Մակար Եգիպտացին, որ եկեղեցու կողմից Մեծ է կոչվել գերազանց առաքինությունների և հատկապես մեծ խոնարհության համար, հայր խաչակիր և Հոգեկիր, իր բարձրագույն, սուրբ, խորհրդավոր քարոզների ժամանակ ասել է, թե ամենամաքուր և կատարյալ մարդու մեջ էլ հպարտության որոշ դրսևորումներ կան (Զրույց 7, գլուխ 4):

Այդ աստվածահաճո մարդը հասել է քրիստոնեական կատարելության բարձրագույն աստիճանի, ապրել է այն ժամանակաշրջանում, երբ բազում սրբեր կային, տեսել է սուրբ վանականներից բարձրագույնին՝ Անտոն Մեծին, և ասել է, որ ինքը չի տեսել այնպիսի մարդու, որը բառիս բուն իմաստով կարող լիներ կատարյալ կոչվելու (Զրույց 8, գլուխ 5): Սխալ խոնարհություն է իրեն խոնարհ տեսնելը, ծիծաղելի և խղճալի՝ մխիթարվել այդ խաբուսիկ, հոգեկործան երևույթով:

Սատանան լուսավոր հրեշտակի կերպարանք է ընդունում, նրա առաքյալներն ընդունում են Քրիստոսի առաքյալների տեսք (Բ Կորնթ. 11:13-15), նրա ուսմունքն էլ հանդես է գալիս Քրիստոսի ուսմունքի տեսքով, վիճակը, որը առաջանում է մոլորություններից, ընդունում է հոգևոր, շնորհալի տեսք, իր հպարտությունը և սնափառությունը, ինչը բխում է ինքնախաբեությունից և պատրանքից՝ Քրիստոսի խոնարհության տեսք է ընդունում: Ա՜խ, որտե՞ղ է թաքնվում դժբախտ երազողներից, որոնք ցավալիորեն գոհ են իրենցից, իրենց հմայված վիճակից, երազողներից, որոնք մտածում են հաճույքներ և երանություններ ստանալու մասին, ո՞ւր են ծածկվում նրանցից Փրկչի խոսքերը. «Երանի նրանց, որ այժմ լալիս են, որովհետև պիտի ծիծաղեն, վայ ձեզ, որ այժմ հագեցած եք, վայ ձեզ, որ այժմ ծիծաղում եք» (Ղուկ. 6:21, 25):

Խիստ ուշադիր, անաչառ կերպով նայիր հոգուդ, սիրելի՛ եղբայր: Ավելի ճիշտ չէ՞ հոգու համար ապաշխարությունը, քան հաճույքները, ավելի ճիշտ չէ՞ սեփական անձի համար լացել երկրի վրա՝

հատկապես լացի համար նախատեսված այս վշտալի աշխարհում, քան հորինել իր համար վաղաժամ, հրապուրիչ, անհեթեթ, կործանարար հաճույքներ:

Ապաշխարության և մեղքերի համար լացը հավիտենական երանություն է պարունակում, դա հայտնի է, ստույգ է և հաղորդված է Տիրոջ կողմից: Ուրեմն ինչո՞ւ դու չընկղմվես այս սուրբ վիճակի մեջ, ինչո՞ւ չմնաս դրա մեջ, այլ քեզ համար հաճույքներ հորինես, դրանցով հագենաս, բավարարվես, ոչնչացնես քո մեջ Աստվածային ճշմարտության երանելի փափագն ու ծարավը, երանելի ու փրկարար տրտմությունը սեփական մեղքերիդ և մեղավոր վիճակիդ համար:

Աստծո ճշմարտության հանդեպ փափագն ու ծարավը վկայում են հոգու աղքատության մասին: Լացը՝ խոնարհության արտահայտությունը, նրա ձայնն է: Լացի բացակայությունը, ինքն իրենով հագենալը և իր երևակայական հոգևոր վիճակից հաճույք ստանալը ի հայտ է բերում սրտի հպարտությունը:

Վախեցիր, որ դատարկ, հրապուրիչ հաճույքների պատճառով չժառանգես հավիտենական սուգը, ինչը խոստացված է Տիրոջ կողմից այսօրվա կամավոր հագեցմանդ համար, ինչը հակառակ է Աստծո կամքին:

Սնափառությունը և նրա որդին՝ հոգևոր կեղծ հաճույքները, որոնք գործում են հոգում և չեն գոյացել ապաշխարության միջոցով, ստեղծում են խոնարհության ուրվական. այդ ուրվականով է փոխարինում հոգու ճշմարիտ խոնարհությանը: Ճշմարտության այդ ուրվականը, զբաղեցնելով հոգու տաճարը՝ իրական Ճշմարտության դեմ փակում է հոգու տաճարի բոլոր դռները:

Ավա՜ղ, անձ իմ, Աստվածակառույց տաճար ճշմարտության, ընդունելով քո մեջ ճշմարտության ուրվականը, Ճշմարտության փոխարեն խոնարհվելով ստին՝ դու դառնում ես կռատուն: Կռատանը կուռք է կանգնեցված՝ «կարծիքից» առաջացած կեղծ խոնարհությունը: «Կարծիքի» խոնարհությունը հպարտության սարսափելի տեսակ է: Դժվարությամբ է վանվում հպարտությունը, երբ նույնիսկ մարդը հասկանում է, որ այն իսկապես հպարտություն է, էլ ուր մնաց, երբ հպարտությունն իրեն խոնարհություն է թվում:

Այդ չարաբաստիկ կռատունը «սարսափելի սրբապղծությունն է» (Մատթ. 24:15):

Այդ մեհյանում տարածվում է կռապաշտության խունկը, երգվում են երգեր, որոնցով ուրախանում է դժոխքը: Այնտեղ խորհուրդներն ու շնչավոր զգացմունքները ճաշակում են կուռքերին զոհաբերվող, արգելված կերակուրները, հարբում են մահաբեր թույնով խառնված գինով: Մեհյանը, որը կուռքերի և ամեն տեսակ պղծությունների բնակավայր է, անմատչելի է ոչ միայն Աստվածային շնորհների, հոգևոր պարգևների համար, այլև անհասանելի է ամեն տեսակ ճշմարիտ առաքինությունների և ավետարանյան պատվիրանների համար:

Կեղծ խոնարհությունը այնպես է կուրացնում մարդուն, որ ստիպում է նրան՝ ո՛չ միայն մտածել սեփական անձի մասին, ակնարկել ուրիշներին, որ ինքը խոնարհ է, այլ բացահայտ ասել այդ և բարձրաձայն քարոզել:

Դաժանորեն ծաղրում է մեզ սուտը, երբ նրանից խաբված՝ նրան ընդունում ենք որպես ճշմարտություն:

Շնորհալի խոնարհությունն անտեսանելի է, ինչպես այն շնորհող Աստվածը: Այն ծածկված է լռությամբ, պարզությամբ, ազատությամբ, անկեղծությամբ, անբռնազբոսությամբ:

Կեղծ խոնարհությունն ինքն իրենն է ներկայացնում:

Կեղծ խոնարհությունը սիրում է ներկայացումներ, դրանցով նա խաբվում է և խաբում: Քրիստոսով խոնարհությունը զգեստավորված է փարաջայով և շուրջառով (Հովհ. 19:24)՝ ամենապարզ հագուստներով. այդպես ծածկված՝ նա մարդկանց կողմից չի ճանաչվում և ուշադրության չի արժանանում:

Խոնարհությունը գրավական է սրտում, սուրբ, անպատրանք, սրտագին հատկություն է, Աստվածային ունակություն, որ ծնվում է հոգում աննկատելի կերպով՝ ավետարանյան պատվիրանների կատարման հետևանքով (Երանելի Աբբա Դորոթեոս, ուսուցում 2):

Խոնարհության գործողությունները կարելի է համեմատել արծաթասիրության կրքի գործողությունների հետ: Ապականացու գանձերի հանդեպ հավատքի և սիրո հիվանդությամբ վարակվածը որքան շատ է դրանք կուտակում, այնքան դառնում է դրանց հանդեպ ագահ և անկուշտ, որքան շատ է հարստանում, այնքան ինքն իր համար լինում է աղքատ, չքավոր: Այդպես էլ խոնարհությամբ առաջնորդվողը. որքան ավելի է հարստանում առաքինություններով և հոգևոր պարգևներով, այնքան ինքն իր աչքին դառնում է ողորմելի ոչնչություն:

Դա բնական է, որովհետև մարդը արժեքավորում է մեղքով պղծված իր սեփական բարին, քանի դեռ հաղորդակից չի դարձել վերին բարությանը: Իսկ երբ նա ճաշակում է Աստվածային բարին, հոգևորը, այդ ժամանակ դրանց առաջ անարժեք է դառնում իր սեփական բարին, որ միավորված և խառնված է չարիքի հետ:

Աղքատի համար թանկ է պղնձադրամների քսակը, քանզի այն հավաքել է ժամանակի ընթացքում ջանքով և տքնությամբ: Հարուստը նրա քսակի մեջ լցրեց բազմաթիվ մաքուր հարյուրանոցներ, և աղքատն արհամարհանքով մի կողմ նետեց պղնձադրամները՝ որպես մի ծանր բեռ:

Բարեպաշտ, բազմաչարչար Հոբը, կրելով անտանելի փորձություններ՝ աստվածտեսության արժանացավ: Այդ ժամանակ նա ասաց Աստծուն. «Սրանից առաջ ես ականջներովս էի լոկ լսել, բայց հիմա աչքերս էլ տեսան հենց Քեզ»: Եվ ինչպիսի՞ պտուղներ աճեցին բարեպաշտի հոգում աստվածտեսության շնորհիվ. «Այդ պատճառով, - շարունակում և եզրափակում է իր աղոթքը Հոբը, - ես ինձ նվաստ համարեցի ու հալվեցի: Ինքս ինձ հող ու մոխիր եմ դիտում» (Հոբ 42:5-6):

Ցանկանո՞ւմ ես, արդյոք, խոնարհություն ձեռք բերել. կատարի՛ր ավետարանյան պատգամները, և դրանց հետ միասին քո սրտում կներբնակվի սուրբ խոնարհությունը, այսինքն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հատկությունը:

Խոնարհության սկիզբը հոգու աղքատությունն է, միջնամասը՝ նրանում առաջադիմելը, այսինքն՝ Քրիստոսի խաղաղությանը հասնելը, ինչը վեր է ամեն մտքից, վերջն ու կատարելությունը՝ Քրիստոսի սերը:

Խոնարհությունը երբեք չի բարկանում, մարդահաճություն չի անում, տրտմության չի տրվում, ոչնչից չի սարսափում:

Կարո՞ղ է, արդյոք, դժբախտությունից սարսափել նա, ով նախօրոք իրեն արժանի է համարել ամեն տեսակ վշտերի, ով դրանց նայում է որպես իր փրկության միջոց:

Աստվածահաճո մարդիկ սիրեցին խելամիտ ավազակի խոսքը, որը խաչված էր Տիրոջ կողքին: Նրանք իրենց վշտերի ժամանակ սովորեցին ասել. «Մենք իրավացիորեն արժանի հատուցում ենք ստանում: Հիշի՛ր մեզ, Տեր, երբ գաս Քո թագավորությամբ» (Ղուկ. 23:41-42): Ամեն տեսակ վշտի ժամանակ նրանք իրենց արժանի են համարում դրան (Աբբա Դորոթեոս, ուսուցում 2): Խոնարհության խոսքերի հետ սուրբ խաղաղություն է մտնում նրանց սրտերի մեջ: Նա հոգևոր մխիթարության գավաթ է բերում մահճին գամված հիվանդին, բանտում փակվածին և մարդկանց ու դևերի կողմից հալածվածին: Մխիթարության գավաթը բերվում է խոնարհության ձեռքով և տրվում խաչի վրա գամվածին, իսկ աշխարհը կարող է նրան տալ միայն «լեղախառն գինի» (Մատթ. 27:32):

Խոնարհը չարություն և ատելություն ունենալու ընդունակ չէ: Եթե որևէ մեկը վիրավորում է նրան, նա այդ մարդուն համարում է որպես արդարադատության զենք կամ Աստծո նախախնամություն:

Խոնարհն իրեն ամբողջովին հանձնում է Աստծո կամքին:

Խոնարհն ապրում է ոչ թե իր սեփական կյանքով, այլ՝ Աստծով:

Խոնարհը հեռու է սեփական անձի վրա հույս դնելուց, այդ պատճառով էլ նա մշտապես անդադար աղոթքով փնտրում է Աստծո օգնությունը:

Պտղաբեր ճյուղը կռանում է գետնին՝ ճնշվելով իր պտուղների առատության և ծանրության պատճառով: Անպտուղ ճյուղն աճում է դեպի վեր՝ բազմացնելով իր անպտուղ շիվերը:

Ավետարանյան առաքինություններով հարուստ հոգին ավելի ու ավելի խորն է ընկղմվում խոնարհության մեջ, և այդ ծովի խորքերում գտնում է թանկարժեք մարգարիտները՝ Սուրբ Հոգու պարգևները:

Փուչ կրքերին գերի մարդու հավաստի և բնորոշ նշանը հպարտությունն է, սրա մեջ Քրիստոսի ուսմունքը ներթափանցելու ոչ մի հնարավորություն չի գտնում:

Մի՛ դատիր մարդուն նրա արտաքին կերպարանքից. «Աչքներիդ երևացածի պես մի՛ դատեք, այլ իրենց գործերից ճանաչեք նրանց» (Հովհ. 7:24, Մատթ. 7:16): Տերը պատվիրել է ճանաչել մարդկանց իրենց գործերից, վարքից, իրենց գործերի հետևանքներից:

«Ես գիտեմ քո մեծամտությունը և սրտի չարությունը» (Ա Թագ. 17:28), - ասաց Դավթին իր եղբայրը, բայց Աստված վկայեց Դավթի մասին. «Գտա Իմ Դավիթ ծառային, սուրբ ժողովով օծեցի նրան» (Սղմ. 88:21): «Աստված այնպես չի նկատում, ինչպես նկատում են մարդիկ. մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին» (Ա Թագ. 16:7):

Կույր դատավորները հաճախ են կեղծավոր և ստոր մարդահաճոներին խոնարհ համարում. դա սնափառության անդունդ է:

Դրան հակառակ, այդ տգետ դատավորների համար հպարտ է թվում մարդկանցից գովասանք ու պարգև չակնկալողը, որն այդ պատճառով էլ չի քծնում մարդկանց առաջ, և նա՛ է Աստծո ճշմարիտ ծառան, նա զգացել է Աստծո փառքը, ինչը տրվում է միայն խոնարհներին, զգում է մարդկային փառքի գարշահոտությունը և շուռ է տալիս դրանից թե՛ իր աչքերը և թե՛ իր հոգու հոտոտելիքը:

«Ի՞նչ է նշանակում՝ հավատալ», - հարցրին մի մեծ աստվածահաճո ծերի և նա պատասխանեց. «Հավատալ՝ նշանակում է մնալ խոնարհության և գթասրտության մեջ» (Պիմեն Մեծ):

Խոնարհությունը հույսը դնում է Աստծո, ո՛չ թե իր կամ մարդու վրա, այդ պատճառով էլ նա իր վարվելակերպի մեջ հասարակ է, ուղիղ, ամուր և վեհ: Աշխարհի կուրացած որդիները դա հպարտություն են համարում:

Խոնարհությունը երկրավոր բարիքներին ոչ մի արժեք չի տալիս, իր աչքերում մեծ է Աստված, մեծ՝ Ավետարանը: Նա ձգտում է Նրանց, ունայն ու փուչ բաների վրա ո՛չ ուշադրություն է դարձնում, ո՛չ էլ՝ հայացք նետում: Ունայնության և ապականության հանդեպ սուրբ սառնությունը ունայնության որդիների, ապականության ծառաների կողմից կոչվում է հպարտություն:

Կա սուրբ երկրպագություն, որը հետևանք է խոնարհության, մերձավորների, սրբապատկերների, Քրիստոսի և մերձավորի հանդեպ ունեցած հարգանքի: Կա նաև արատավոր, շահատենչ, մարդահաճո, դրա հետ նաև՝ մարդատյաց, Աստծո համար զազրելի և գարշելի երկրպագություն: Այդ խնդրեց սատանան Աստվածամարդուն, դրա փոխարեն առաջարկելով աշխարհի ամբողջ թագավորությունը և դրանց փառքը (Ղուկ. 4:7):

Որքա՞ն են այսօր խոնարհվում նյութական ակնկալիքի համար և այն մարդիկ, ում առջև նրանք խոնարհվում են, գովում են սրանց խոնարհությունը:

Ուշադիր եղիր, քննիր՝ քո առջև խոնարհվողը խոնարհվո՞ւմ է, արդյոք, մարդու հանդեպ ունեցած հարգանքից, սիրո և խոնարհության զգացմունքից, թե՞ նրա խոնարհումը միայն հագուրդ է տալիս քո հպարտությանը՝ քեզանից մի ինչ-որ ժամանակավոր օգուտ կորզելու համար: Նայի՛ր, քո առջև քծնում են սնափառությունը, շողոքորթությունը, ստորությունը: Նրանք, երբ հասնեն իրենց նպատակին, քեզ վրա կծիծաղեն, առաջին իսկ առիթի դեպքում կմատնեն քեզ: Երբեք առատաձեռն մի՛ եղիր սնափառի առաջ, սնափառը որքան ցածր է իրենից բարձրերի առաջ, այդքան էլ լկտի է, հանդուգն և անմարդկային՝ իրենից

ցածրերի հանդեպ: Դու կարող ես ճանաչել սնափառին իրեն հատուկ շողոքորթության, ծառայականության, ստի, ամեն տեսակ ստորության և ցածրության ընդունակություններով:

Պիղատոսը վիրավորվեց Քրիստոսի լռությունից, ինչը նրան հպարտություն թվաց. «Ինձ հետ չե՞ս խոսում, չգիտե՞ս, որ իշխանություն ունեմ Քեզ խաչը հանելու. և իշխանություն ունեմ Քեզ ազատ արձակելու» (Հովհ. 19:10): Տերն Իր լռությունը բացատրեց Աստծո կամքի կատարմամբ, որտեղ Պիղատոսը մտածելով ինքնուրույն գործել՝ միայն ծառայում էր որպես կույր գործիք: Պիղատոսը սեփական հպարտության պատճառով ընդունակ չէր հասկանալ, որ իր առջև կանգնած է ամենակատարյալ խոնարհությունը՝ մարդացած Աստված:

Մորթքեի վեհ հոգի, երկնային հույսով տոգորված հոգի, աշխարհի ապականացու բարիքներն արհամարհող, ճշճիմ մարդահաճության և քծնության օտար հոգի: Սխալմամբ դու այդ հոգուն կոչում ես հպարտ, որովհետև նա չի բավարարում քո անհագ կրքերին: Համան, այդ օրհնյալ, աստվածահաճո հպարտությունը Մորթքեի, որ քո աչքին հպարտություն է թվում, իրական սուրբ խոնարհություն է (Գիրք Եսթերի, 4-7- րդ գլուխներ):

Խոնարհությունն ավետարանյան պատգամ է, ավետարանյան առաքինություն, Քրիստոսի խորհրդավոր ուժ: Աստված խոնարհությամբ զգեստավորված հայտնվեց մարդկանց, և մարդկանցից ո՛վ խոնարհությամբ է զգեստավորվում, դառնում է Աստվածանման (Սուրբ Իսահակ Ասորի, խոսք 33):

«Եթե մեկը կամենում է հետևել Ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա Իմ ետևից» (Մատթ. 16:24): Այլապես հնարավոր չէ լինել աշակերտը և հետևորդը Նրա, Ով խոնարհվեց մինչ ի մահ, մինչ մահը խաչի: Նա նստեց Հոր աջ կողմը: Նա Նոր Ադամն է, Սկզբնավորողը ընտրյալ սուրբ սերնդի: Նրա հանդեպ հավատքը ներգրավում է ընտրյալների թվի մեջ, ընտրյալը ընդունվում է սուրբ խոնարհությամբ, կնքվում սուրբ սիրով: Ամեն:

ՍԵՓԱԿԱՆ ՄԵՂՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կգա այդ ահավոր օրը, սարսափելի ժամը, երբ իմ բոլոր մեղքերը մերկացված կկանգնեն Աստծո՝ Ահեղ Դատավորի առջև, Նրա հրեշտակների և ամբողջ մարդկության առջև: Կանխազգալով իմ հոգու վիճակը այդ ահավոր ժամին՝ լցվում եմ սարսափով: Սաստիկ և ուժգին կանխազգացման ազդեցությամբ, ահ ու դողով շտապում եմ ընկղմվել ինքնաքննության մեջ, շտապում եմ ստուգել իմ խղճի գիրքը, ուր գրանցված են իմ գործերը, խոսքերը, մտքով գործած իմ բոլոր մեղքերը:

Վաղուց չկարդացված, գրապահարանում երկար ժամանակ անշարժ մնացած գրքերը ծածկվում են փոշով և ցեցի ճարակ դառնում: Այդպիսի գիրք վերցնողը այն կարդալու համար մեծ դժվարության է հանդիպում: Այդպիսին է իմ խիղճը: Վաղուց չվերանայված՝ այն թերևս մեծ դժվարությամբ կբացվի: Բացելով այն՝ ես չեմ գտնում սպասված գոհացումը: Միայն մեծ մեղքերը բավականին հստակ երևում են, փոքրերը, որոնք բազմաթիվ են, գրեթե ջնջվել են, այժմ դժվար է քննել, թե ինչ էին իրենցից ներկայացնում:

Աստված, միայն Աստված կարող է վերափոխել գունատ գրքերը պայծառության և ազատել մարդուն նենգավոր խղճից (Եբր. 10:22): Միայն Աստված կարող է մարդուն տալ սեփական մեղքերի տեսություն և տեսություն նրա ա՛յն մեղքի (ադամական), որի պատճառով ընկել է, որի մեջ է արմատը, սերմը, վիժվածքը և ամբողջականությունը մարդկային բոլոր մեղքերի:

Կանչելով Աստծո ողորմությունն ու զորությունը ջերմեռանդ աղոթքով, լացի ու սրտի հեկեկոցով, նորից բացում եմ խղճիս գիրքը, նորից քննում եմ մեղքերիս քանակն ու տեսակը, քննում եմ, թե ինչն է ծնունդ տվել իմ գործած մեղքերին:

Տեսնում եմ, որ «Անօրինություններս գլխիցս վեր բարձրացան, սաստիկ բեռան պես ծանրացան վրաս, գլխիս մազերից ավելի շատ եղան» (Սղմ. 37:5, 39:13): Ինչպիսի՞ն են այս մեղսավոր վիճակի հետևանքները. «Անօրինություններս ինձ վրա հասան, և ես չկարողացա նկատել, սիրտս ինձ լքեց» (Սղմ. 39:13): Մեղսավոր կյանքի հետևանք են հանդիսանում մտքի կուրացումը, կարծրացումը, սրտի անզգայությունը: Անուղղելի մեղավորի միտքը չի տեսնում ո՛չ բարին, ո՛չ չարը, նրա սիրտը կորցնում է հոգևոր զգացողության ընդունակությունը: Եթե այդ մարդը թողնի մեղավոր կյանքը և դառնա բարեպաշտության սխրանքներին, ապա նրա սիրտը, որպես օտար, չի սատարի դեպի Աստված նրա ձգտմանը:

Երբ Աստվածային շնորհի ներգործության ժամանակ ճգնավորի առջև ի հայտ գա իր մեղքերի բազմությունը, այդ ժամանակ անհնար է, որ նա չընկնի տարակուսանքի, խոր տրտմության մեջ. «Սիրտս պղտորվեց իմ մեջ» այդպիսի տեսարանից, «ուժս լքեց ինձ, աչքերիս մեջ լույսի նշույլ իսկ չմնաց, քանզի հոգիս լցվեց տանջանքներով», այսինքն՝ իմ գործունեությունը լի է մեղքի հանդեպ ունեցած սովորությամբ, ինչը ինձ ստիպողաբար ներքաշում է նոր մեղանչումների մեջ, «վերքերս իմ նեխեցին ու փտեցին անզգամությանս հետևանքով», այսինքն՝ մեղավոր կրքերը արմատավորվեցին և սարսափելի ձևով վնասեցին ինձ՝ իմ անհոգ կյանքի պատճառով և «մարմնիս համար բուժում չկա» (Սղմ. 37:11, 8, 6, 8), այսինքն՝ բուժում չկա միայն իմ սեփական ջանքերի միջոցով, իմ ամբողջ էության համար, որ խրված է մեղքի մեջ և վարակված՝ դրանով:

Գիտակցելով իմ մեղքերը, զղջալով, խոստովանելով, ցավ քաշելով, դրանց անթիվ բազմությունը գցում եմ Աստծո ողորմության հորձանուտը: Եվ որպեսզի հետագայում զգուշանամ մեղքից՝ ինքս իմ մեջ առանձնանալով կքննեմ, թե ինչպե՞ս է իմ դեմ գործում մեղքը, ինչպե՞ս է այն մոտենում ինձ և ի՞նչ է ասում:

Նա մոտենում է ինձ որպես գող, իր դեմքը ծածկած. «Ձեթից փափուկ էին նրանց խոսքերը» (Սղմ. 54:22): Նա ինձ սուտ է ասում, անօրինություն է առաջարկում: Նրա բերանը թույն է, լեզուն՝ մահաբեր խայթոց: «Վայելի՛ր, - կամաց և կեղծավորաբար շշնջում է նա, - ինչո՞ւ է արգելված քո վայելքը, վայելի՛ր, ի՞նչ մեղք կա դրա մեջ», - չարագործն առաջարկում է խախտել ամենասուրբ Տիրոջ պատվիրանը:

Պետք չէ որևէ ուշադրություն դարձնել նրա խոսքերին, ես գիտեմ, որ նա գող է ու մարդասպան: Բայց ինչ–որ անհասկանալի կամքի տկարություն հաղթում է ինձ: Ուշադրություն եմ դարձնում մեղքի խոսքերին, նայում եմ արգելված պտղին: Ապարդյուն կերպով խիղճն ինձ հիշեցնում է, որ այդ պտղի ճաշակումը միաժամանակ մահվա՛ն ճաշակում է:

Եթե իմ աչքերի առջև չկա արգելված պտուղ, հանկարծ պատկերվում է այդ իմ երևակայության մեջ, պատկերվում է գեղարվեստորեն, կարծես՝ հմայության ձեռքով: Սիրտս անառակի նման ձգտում է այդ գայթակղիչ պատկերին՝ ինչպես պոռնիկ կնոջ: Արտաքինից այն գերող է, նրանից գայթակղություն է բխում, պաճուճված է այն թանկարժեք, շողշողուն զարդերով, որոնցով խնամքով թաքցված է նրա մահաբեր գործունեությունը: Սրտում է փնտրում մեղքի զոհին, երբ չի կարողանում այդ զոհը մատուցել մարմինը՝ բուն առարկայի բացակայության պատճառով:

Գործում է մեղքը իմ մեջ մեղավոր խորհուրդների միջոցով, մեղավոր սրտի և մարմնի զգացողություններով, գործում է այն մարմնավոր զգացմունքների և երևակայության միջոցով:

Ինչպիսի՞ եզրակացության է հանգեցնում ինձ իմ մասին ունեցած այսպիսի տեսակետը. իմ ողջ էությունը վնասված է սկզբնական մեղքով և այդ վնասվածությունը համամիտ է մեղքին, և ամեն կերպ օգնում է նրան, երբ սա հարձակվում է ինձ վրա: Ես նման եմ բանտարկյալի՝ շղթայված ծանր շղթաներով, յուրաքանչյուրին, ում միայն այդ է թույլատրված, բռնում է բանտարկյալին, տանում է նրան՝ ուր կամենում է, որովհետև բանտարկյալը, կապված լինելով շղթաներով, հակառակվելու հնարավորություն չունի:

Մի ժամանակ մեղքը մտավ Դրախտ: Այնտեղ նա իմ նախահայրերին առաջարկեց ճաշակել արգելված պտուղը: Այնտեղ նա գայթակղեց և գայթակղվածներին հարվածեց հավիտենական մահվամբ: Ինձ էլ՝ նրանց ժառանգիս, անդադար կրկնում է նույն առաջարկությունը, ջանում է գայթակղել և կործանել:

Ադամն ու Եվան մեղանչելուց հետո անմիջապես վտարվեցին Դրախտից և աքսորվեցին վշտի երկիր (Ծննդ. 3:23, 24): Ես ծնվել եմ այդ լացի ու չարիքի աշխարհում, բայց դա չի արդարացնում ինձ, Փրկչի կողմից այստեղ է բերվել ինձ համար Դրախտը, տնկվել իմ սրտում: Ես Դրախտը ոչնչացրի իմ սրտում՝ մեղանչումների հետևանքով: Այժմ այնտեղ խառնված է բարին չարի հետ, դաժան պայքար է մղվում բարու և չարի միջև, այնտեղ բազմաթիվ կրքերի պատերազմ է, տառապանք և կանխավկայություն դժոխքի հավիտենական տանջանքների:

Իմ մեջ տեսնում եմ այն ապացույցը, որ ես Ադամի որդին եմ, պահպանում եմ մեղքի հանդեպ նրա ձգտումը, համաձայնում եմ գայթակղիչի առաջարկին, թեև գիտեմ նպատակը, գիտեմ, որ ինձ սուտ է առաջարկում և պատրաստվում սպանելու:

Ես իզուր եմ մեղադրում իմ նախահայրերին, որ իրենց մեղքն ինձ են փոխանցել. ես ազատվել եմ մեղքի գերությունից Փրկչի շնորհիվ, և արդեն մեղքի մեջ եմ ընկնում ոչ թե ժառանգաբար, այլ՝ կամովի:

Նախահայրերը Դրախտում մի անգամ մեղք գործեցին՝ խախտելով Աստծո միակ պատվիրանը, իսկ ես, գտնվելով Քրիստոսի եկեղեցու գոգում՝ անդադար խախտում եմ Աստվածային բոլոր պատվիրանները Քրիստոսի՝ Աստծո և իմ Փրկչի:

Մե՛կ վրդովվում է իմ հոգին բարկությամբ և հիշաչարությամբ, և երևակայությանս մեջ փայլում է դաշույնը թշնամուս գլխին, սիրտս արբում է վրեժխնդրության գոհացումից, ինչն ի կատար է ածվում երազանքիս մեջ, մե՛կ ինձ պատկերվում են ոսկու սփռված կույտեր և դրանց ետևից նկատվում են հիանալի դղյակներ, այգիներ և շքեղության բոլոր պարագաները, ցանկասիրությունը, հպարտությունը, որոնց պատճառով մեղսասեր մարդը երկրպագում է այդ կուռքին՝ բոլոր ապականացու ցանկությունների իրականացման միջոցին. մե՛կ գայթակղվում եմ պատվով և իշխանությամբ, ձգտում, երազում եմ կառավարել մարդկանց և երկրները, երազում եմ ապականացու ձեռքբերումներ, իսկ ինձ՝ ապականյալ փառք. մե՛կ էլ, կարծես ակնհայտ, ինձ պատկերվում են սեղաններ, որ լի են համեղ և հաճելիորեն բուրող կերակուրներով: Ծիծաղելի և միաժամանակ խղճալի կերպով ես հաճույք եմ ստանում իմ առջև ներկայացած գայթակղություններից: Մե՛կ հանկարծակի ինձ բարեպաշտ եմ տեսնում կամ ավելի ճիշտ՝ սիրտս կեղծավորություն է անում, ջանալով սեփականացնել բարեպաշտությունը, շողոքորթելով ինքն իրեն՝ մտածում է մարդկային գովեստի մասին, թե ինչպե՛ս այդ իր կողմը գրավի:

Կրքերն ինձ ձեռքից-ձեռք են խլում, անդադար փոխանցում են մեկը մյուսին, խռովեցնում են և տագնապի մեջ գցում:

Եվ չեմ տեսնում իմ ցավալի վիճակը, մտքումս անթափանցելի խավարի վարագույր է, սրտիս վրա ընկած է անզգայության ծանր քարը:

Արդյոք կսթափվի՞ միտքս, կցանկանա՞ արդյոք դառնալ դեպի բարին. նրան հակառակվում է մեղավոր հաճույքներին ընտելացած սիրտս, անասնավայել ցանկություններ ձեռք բերած մարմինս: Կորցրել եմ նաև ա՛յն հասկացողությունը, որ իմ մարմինը՝ ստեղծված հավիտենականության համար, ընդունակ է Աստվածային ցանկությունների և մղումների, և որ անասնական ձգտումները միայն հիվանդություններ են, որ մտել են նրա մեջ անկման պատճառով:

Իմ էությունը կազմող տարբեր մասերը՝ միտքս, սիրտս, մարմինս, բաժանված են, զատված, և գործում են աններդաշնակ, միմյանց հակառակ, միայն այն ժամանակ են գործում կարճատև համաձայնությամբ, երբ Աստծուն հակառակ ծառայում են մեղքին:

Այդպիսին է իմ վիճակը. այն հոգու մահ է մարմնի կենդանության ժամանակ: Ցավո՛ք, ես գոհ եմ իմ վիճակից: Գոհ եմ ո՛չ թե խոնարհության, այլ՝ իմ կուրության և դաժանության պատճառով: Հոգին չի զգում իր մեռած վիճակը, ինչպես չի զգում այդ նաև մարմինը, երբ բաժանված է հոգուց մահվամբ:

Եթե զգայի իմ մեռած վիճակը, անդադար ապաշխարության մեջ կլինեի և հոգ կտանեի հարության մասին:

Ես ամբողջովին զբաղված եմ աշխարհի հոգսերով և քիչ եմ մտահոգվում թշվառ հոգուս մասին: Դաժանորեն դատապարտում եմ մերձավորներիս չնչին մեղքերը՝ ինքս լցված լինելով մեղքերով, դրանցով կուրացած, դառնում եմ աղի արձան Ղովտի կնոջ նման՝ անընդունակ որևէ հոգևոր շարժման:

Ես չունեմ ապաշխարություն հոգի, որովհետև դեռ չեմ տեսնում իմ մեղքերը: Չեմ տեսնում իմ մեղքերը, որովհետև դեռ ծառայում եմ մեղքին: Իր մեղքը չի կարող տեսնել նա՛, ով հաճույք է զգում մեղքից՝ թույլ տալով իրեն ճաշակել այդ, թեկուզ միայն խորհուրդներով և սրտի համակրանքով:

Միայն նա՛ կարող է իր մեղքը տեսնել, ով հաստատակամորեն մերժում է մեղքի հետ ամեն տեսակ ընկերակցություն, ով առույգ պահակախմբով պաշտպան է կանգնել իր տան դարպասների մոտ մերկացրած սրերով՝ Աստծո Խոսքով, ով այդ սրով ետ է մղում ու ջախջախում մեղքին, ինչ տեսքով էլ, որ այն մոտենում է իրեն:

Նա՛ է մեծ գործ կատարում, ով մեղքի հետ թշնամություն է հաստատում՝ բռնի ուժով պոկելով դրանից միտքը, սիրտը և մարմինը, այդպիսիներին Աստված մեծ պարգև է տալիս՝ սեփական մեղքերի տեսություն:

Երանելի է այն հոգին, որը նկատում է իր մեջ բույն դնող մեղքը, որը տեսնում է իր մեջ նախահոր անկումը՝ Ադամի հնությունը: Սեփական մեղքերի այդպիսի տեսությունը հոգևոր տեսություն է, մտքի տեսություն՝ Աստծո շնորհով կուրությունից բժշկված: Արևելյան սուրբ եկեղեցին սովորեցնում է՝ պահքով և ծնրադրությամբ Աստծուց խնդրել սեփական մեղքերի տեսություն:

Երանելի է այն հոգին, որ անդադար սովորում է Աստծո օրենքները: Դրա մեջ նա կարող է տեսնել Նոր Մարդու պատկերն ու գեղեցկությունը, տեսնել և ուղղել սեփական թերությունները:

Երանելի է այն հոգին, որ ապաշխարության ագարակ է գնում՝ սկզբնական մեղքի հանդեպ իրեն սպանելու գնով. այդ ագարակում նա կգտնի փրկության անգին գանձը:

Եթե դու ձեռք ես բերել ապաշխարության ագարակը, ապա Աստծո առջև տրվիր մանկական լացի: Եթե կարող ես ոչինչ չխնդրել Աստծուց, մի՛ խնդրիր, ինքնամերժմամբ հանձնելով քեզ Աստծո կամքին:

Հասկացիր, զգա, որ դու արարված ես, իսկ Աստված՝ Արարիչ: Ուրեմն՝ անհաշվենկատորեն տրվի՛ր Արարչի կամքին, բե՛ր Նրա առջև մանկական լաց, հանդարտ սիրտ՝ պատրաստ հետևելու Նրա կամքին:

Իսկ եթե քո մանկահասակության պատճառով չես կարողանում ծանրաբեռնվել աղոթական լռությամբ և լացով Աստծո առջև, Նրան դիմի՛ր խոնարհ աղոթքով՝ մեղքերի թողության և մեղավոր կրքերից բժշկվելու համար, այդ սարսափելի հոգևոր հիվանդություններից, որ կազմված են ինքնական, բավականին երկարատև կրկնվող մեղանչումներից:

Երանելի է այն հոգին, ով իրեն լիովին անարժան է համարում Աստծո առջև, ով իրեն պարսավում է որպես անիծյալ և մեղավոր: Նա փրկության ճանապարհին է, նրա մեջ ինքնախաբեություն չկա:

Հակառակ դրան, ով իրեն պատրաստ է համարում շնորհի ընդունմանը, ով իրեն արժանի է համարում Աստծուն, սպասում և խնդրում է Նրանից խորհրդավոր գալուստ, ասում է, որ պատրաստ է ընդունել, տեսնել և լսել Տիրոջը, այդպիսին խաբում և շողոքորթում է իրեն, այդպիսին հասել է հպարտության բարձունքին, որտեղից է անկումը կորստյան մռայլ անդունդի մեջ (սուրբ Իսահակ Ասորի): Այստեղ են ընկնում Աստծո առջև բոլոր հպարտացողները, ովքեր համարձակվում են անամոթաբար իրենց արժանի համարել Աստծուն, և այդ մեծամտության և ինքնահրապուրանքի պատճառով ասում են Աստծուն. «Խոսի՛ր, Տեր, քանզի լսում է քո ծառան»:

Լսելով իրեն կանչող Տիրոջ ձայնը, պատանի Սամուել Մարգարեն իրեն Աստծո հետ խոսելու համար անարժան համարելով՝ ներկայացավ իր ծեր ուսուցչին՝ իր վարվելակերպի համար նրանից խորհուրդ հարցնելու: Սամուելը երկրորդ անգամ լսեց այդ նույն կանչող ձայնը և նորից ներկայացավ ուսուցչին: Ուսուցիչը հասկացավ, որ կանչող ձայնը Աստծո ձայնն է, պատվիրեց պատանուն, որ երբ նա լսի նման կանչ՝ հետևյալ կերպ պատասխանի. «Խոսի՛ր, Տեր, Քո ծառան լսում է» (Ա Թագ. 3:9):

Նույնն է համարձակվում ասել ցանկասեր և ամբարտավան երազողը. ոչ մեկի կողմից կանչված չլինելով, զմայլված սնափառ «կարծիքով», իր համար հորինելով ձայներ և մխիթարություններ՝ դրանցով շողոքորթելով իր ամբարտավան սիրտը, խաբելով իրեն և իր թեթևամիտ հետևորդներին:

Արևելյան Սուրբ Եկեղեցու զավակ, աննկատելի սխրագործությանդ մեջ առաջնորդվի՛ր քո եկեղեցու սուրբ հայրերի խորհուրդներով: Նրանք պատվիրում են ցանկացած տեսիլքից, ցանկացած ձայնից՝ քո մեջ կամ քեզանից դուրս լսված, հեռու մնալ՝ նախքան Սուրբ Հոգու հստակ ներգործությամբ նորոգվելը, որպես ինքնախաբեության հստակ պատճառ (սուրբ Գրիգոր Սինայեցի):

Միտքդ աննկատ պահիր, հեռու վանիր քեզանից ամեն տեսակ երազանք ու «կարծիք», որոնցով անկումը փոխարինում է ճշմարտությանը: Զգեստավորվի՛ր ապաշխարությամբ, ամենակարող Տիրոջ առջև կանգնի՛ր երկյուղով և ակնածանքով, Ով կարող է սրբել քո մեղքերը և նորոգել քեզ Իր Ամենասուրբ Հոգով. «Երբ որ գա Նա՝ ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի քեզ» (Հովհ. 16:13):

Լացի և ապաշխարության զգացողությունը միայն պահանջն է այն հոգու, որ մոտեցել է Տիրոջը՝ Նրանից մեղքերի թողություն ստանալու նպատակով: Դա երանելի վիճակ է: Եթե դու ընտրել ես այն, ապա երբեք դա թող չվերցվի քեզանից: Մի՛ փոխիր այդ գանձը դատարկ, սուտ, բռնի ու կեղծ շնորհի զգացումներով, ինքդ քեզ շողոքորթելով մի՛ կործանիր:

«Եթե հայրերից ոմանք, - ասում է Իսահակ Ասորին, - գրել են այն մասին, թե ինչ բան է հոգու մաքրությունը, նրա առողջությունը, անկրքությունը կամ տեսիլքը, ապա գրել են ո՛չ թե նրա համար, որ մենք փնտրենք դա ժամանակից շուտ և ակնկալությամբ: Սուրբ Գրքում գրված է. «Աստծո Արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս» (Ղուկ. 17:20): Նրանք, ում մեջ ակնկալիք է ապրում, ձեռք են բերել հպարտություն և անկում: Ակնկալիքով Աստվածային մեծ պարգևներ փնտրելը մերժվում է Աստծո եկեղեցու կողմից: Դա Աստծո հանդեպ ունեցած սիրո նշան չէ, դա հոգու տկարություն է»:

Բոլոր սրբերն իրենց անարժան են համարել Աստծուն՝ դրանով արտահայտելով իրենց մեծ արժանիքը, ինչը խոնարհությունն է:

Բոլոր ինքնախաբեության մեջ գտնվողներն իրենց արժանի են համարում Աստծուն և սրանով հայտնի են դարձնում և հրապարակում իրենց հոգու հպարտությունը և դիվական պատրանքը: Նրանցից ոմանք հնազանդվել են հրեշտակի կերպարանք ստացած դևերին և հետևել նրանց, մյուսներին դևերը երևացել են իրենց սովորական կերպարանքով և ներկայացել որպես նրանց աղոթքից պարտված, դրանով նրանց գցելով մեծամտության մեջ, ոմանք բորբոքել են իրենց երևակայությունը, եռացրել արյունը, առաջացրել նյարդային շարժումներ, այդ ամենն ընդունել են որպես շնորհից բխող երանություն և ընկել ինքնախաբեության մեջ, կատարյալ մթագնածության պատճառով իրենց հոգին դասել են մերժված հոգիների հետ:

Եթե ցանկանում ես խոսել ինքդ քեզ հետ, մի՛ շողոքորթիր ինքդ քեզ, այլ՝ հանդիմանիր: Դառը բժշկությունն օգտակար է մեզ մեր ընկած վիճակի մեջ: Իրենք իրենց շողոքորթողներն արդեն այստեղ՝ երկրի վրա, յուրացրել են իրենց վարձը, իրենց ինքնախաբեությունը, գովաբանությունն ու Աստծուն թշնամի աշխարհի հանդեպ սերը, նրանց հավիտենականության մեջ դատապարտվելուց բացի՝ ոչինչ չի մնում ակնկալել:

«Մեղքերն իմ միշտ առջևս են» (Սղմ. 50:5), - իր մասին ասում է սուրբ Դավիթը: Նրա մեղքերը անդադար իրեն քննելու առարկան են: «Կպատմեմ իմ անօրինությունները և կհոգամ իմ մեղքերի մասին» (Սղմ. 37:19):

Սուրբ Դավիթը զբաղվում էր ինքնադատապարտմամբ, իր մեղքերի մերկացմամբ, երբ մեղքն արդեն ներվել էր և Սուրբ Հոգու պարգևը վերադարձվել էր իրեն: Դա քիչ էր, նա մերկացրեց իր մեղքը և ամբողջ աշխարհի առջև խոստովանեց այդ (Սղմ. 50):

Արևելյան Եկեղեցու սուրբ հայրերը՝ հատկապես անապատաբնակները, երբ հասնում էին հոգևոր վարժանքի բարձունքին, բոլոր այդ վարժանքները նրանց հանգեցնում էին մի բանի՝ ապաշխարության: Ապաշխարությունն ընդգրկել է նրանց ողջ կյանքը և գործունեությունը, դա հետևանք էր իրենց մեղքերի տեսության:

Մի մեծ հոր հարցրին, թե՝ ինչի՞ց պիտի բաղկացած լինի վանականի գործունեությունը: Նա պատասխանեց. «Քո մեռած անձը աչքերիդ առջև է և դու հարցնում ես, թե ի՞նչ պետք է լինի քո գործը» (Իսահակ Ասորի): Լացը Քրիստոսի ճշմարիտ ճգնավորի էական գործն է:

Սեփական մեղքերի տեսությունը և դրանից ծնված ապաշխարությունը երկրի վրա վերջ չունեցող հիմնական գործն է: Մեղքերի տեսությունից առաջանում է ապաշխարություն, ապաշխարությամբ մաքրություն է տրվում: Մաքրված մտքի աչքը աստիճանաբար սկսում է նկատել խեղված մարդկային ամբողջ էությունը ու այնպիսի արատներ, որոնք նա, նախքան այդ, իր մթագնած վիճակի պատճառով ընդհանրապես չէր նկատում:

Աստված, պարգևի՛ր մեզ սեփական մեղքերի տեսություն, որպեսզի մեր միտքը ամբողջովին ուշադրությունը կենտրոնացնելով մեր սեփական մեղքերի վրա՝ դադարի տեսնել մերձավորների մեղքերը և նման ձևով բոլոր մերձավորներին բարի տեսնի: Պարգևի՛ր մեր սրտերին թողնել մերձավորների թերությունների համար կործանարար հոգածությունը և սևեռվել մեկ հոգածության, այսինքն՝ մեզ համար Քո կողմից պատվիրված և պատրաստված մաքրության և սրբության վրա: Պարգևի՛ր մեզ ապականված հոգու զգեստը նորից ճերմակեցնել, նրանք արդեն լվացվել են մկրտության ջրով, այժմ պղծվածության պատճառով կարիք են զգում արցունքի ջրերով մաքրվելու: Պարգևի՛ր մեզ Քո շնորհի լույսի ներքո տեսնել մեր մեջ բնակվող բազմազան տկարությունները, որոնք ոչնչացնում են սրտում հոգևոր շարժը՝ նրա մեջ մտցնելով մարմնավոր և արյան շարժ, ինչը թշնամի է Աստծո Արքայությանը: Շնորհի՛ր մեզ ապաշխարության մեծ պարգևը, ինչը նախորդում և ծնվում է սեփական մեղքերի տեսության մեծ շնորհից: Այդ մեծ պարգևներով պահպանի՛ր մեզ ինքնախաբեության անդունդից, որը բացվում է հոգում նրա աննշմարելի և անհասկանալի մեղավոր, ցանկասեր վիճակից ու փառամոլ գործողություններից: Պահպանի՛ր մեզ այդ մեծագույն պարգևներով Քեզ մոտ գալու ճանապարհին և օգնի՛ր մեզ՝ հասնելու Քեզ՝ փառաբանելով, որ կանչում ես զղջացող մեղավորներին և մերժում իրենց արդար համարողներին: Թո՛ղ փառաբանենք հավիտյան, և հավիտենական երանություններում Քեզ՝ Միակ Ճշմարիտ Աստծուն, գերիների Քավչին, կործանվածների Փրկչին: Ամեն:

ՄԵՐՁԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Ի՞նչը կարող է մերձավորի հանդեպ սիրուց ավելի գեղեցիկ և հաճելի լինել:

Սիրելը երանություն է, ատելը՝ տառապանք:

«Ամբողջ օրենքն ու մարգարեները կախված են Աստծո և մերձավորի հանդեպ սիրուց» (Մատթ. 22:40):

Մերձավորի հանդեպ սերը դեպի Աստծո սերը տանող ուղի է, որովհետև Քրիստոսի համար հաճելի եղավ խորհրդաբար մեր մերձավորին զգեստավորել Իրենով, իսկ Քրիստոսի մեջ է Աստված (Ա Հովհաննես):

Մի՛ մտածիր, սիրելի եղբայր, որ մերձավորին սիրելու պատվիրանը այդքան մոտ է մեր ընկած սրտին, պատվիրանը հոգևոր է, իսկ մեր սրտերին տիրացել են մարմինն ու արյունը, պատվիրանը նոր է, իսկ մեր սրտերը՝ հին:

Մեր բնական սերը վնասվել է անկման պատճառով, դրան պետք է սպանել, այդ է պատվիրում Քրիստոս, և Ավետարանից քաղել մերձավորի հանդեպ սուրբ սեր Քրիստոսով:

Նոր մարդու հատկությունը պետք է ամբողջովին նոր լինի, ոչ մի հին հատկություն նրան չի վերաբերվում:

Արյան շարժից և մարմնական զգացումներից առաջացած սերը Ավետարանի առջև անարժեք է:

Եվ ի՞նչ արժեք կարող է այն ունենալ, երբ արյան եռքի ժամանակ երդվում է հոգին նվիրել Տիրոջը, իսկ մի քանի ժամ հետո, երբ արյունը սառում է, երդվում է, որ չի ճանաչում Նրան (Մատթ. 26:33, 35, 74):

Ավետարանը մերժում է արյան շարժից, մարմնավոր սրտի զգացմունքներից կախված սերը: Նա ասում է. «Մի՛ կարծեք, թե եկա խաղաղություն հաստատելու երկրի վրա. չեկա հաստատելու խաղաղություն, այլ՝ սուր, քանի որ եկա, որ բաժանեմ որդուն իր հորից, դստրին՝ մորից, և հարսին՝ սկեսուրից: Մարդու թշնամիները իր տնեցիները կլինեն» (Մատթ. 10:34-36):

Անկումը սրտին ենթարկել է արյան տիրապետությանը և արյան միջնորդությամբ՝ աշխարհի տիրակալի տիրապետությանը: Ավետարանն ազատագրում է սիրտն այդ գերությունից, բռնությունից և բերում Սուրբ Հոգու հովանու տակ:

Սուրբ Հոգին սովորեցնում է սիրել մերձավորին սրբությամբ:

Բորբոքված, Սուրբ Հոգով սնուցված սերը հուր է: Այդ հրով մարում է բնական, մարմնավոր, մեղսագործությամբ խաթարված սիրո հուրը (Սանդուղք, խոսք 15, գլուխ 3):

«Նա, ով ասում է, թե կարելի է ունենալ թե՛ այս և թե՛ այն սերը, ինքն իրեն է խաբում», - ասում է սուրբ Հովհաննես Սանդուղքը (Խոսք 3, գլուխ 16):

Ինչպիսի՜ անկման մեջ է գտնվում մեր էությունը: Նա, ով իր էությամբ ընդունակ է ջերմեռանդորեն սիրել մերձավորին, պետք է իրեն հարկադրի, որ նրան սիրի այնպես, ինչպես պատվիրում է սիրել Ավետարանը:

Բոցավառվող բնական սերը հեշտությամբ փոխվում է նողկանքի, անհաշտ ատելության (2 Թագ. 13:15): Բնական սերը նույնիսկ դաշույնի միջոցով է ջանում հասնել իր ուզածին:

Ինչպիսի՜ վերքերի մեջ է մեր բնական սերը, որքա՜ն խորն է նրա վրայի վերքը՝ աչառությունը: Աչառությամբ գերված սիրտն ընդունակ է ամեն տեսակ անարդարության, ամեն տեսակ անօրինության, միայն թե բավարարի իր հիվանդագին սերը:

«Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջև, բայց արդար կշեռքը հաճելի է նրան» (Առակ. 11:1):

Բնական սերը իր սիրելիին տալիս է միայն երկրայինը, երկնավորի մասին նա չի մտածում:

Նա թշնամանում է երկնքի և Սուրբ Հոգու դեմ, որովհետև Հոգին պահանջում է խաչը հանած մարմին: Նա թշնամանում է երկնքի և Սուրբ Հոգու դեմ, որովհետև գտնվում է նենգ հոգու, պիղծ և կործանարար հոգու ղեկավարության տակ:

Մոտենանք Ավետարանին, սիրելի եղբայր, նայենք այդ հայելիի մեջ: Նրա մեջ նայելով վայր գցենք հին պատմուճանը, որով մեզ զգեստավորեց անկումը, զարդարվենք նոր պատմուճանով, որը պատրաստվել է մեզ համար Աստծո կողմից:

Նոր պատմուճանը Քրիստոսն է. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղ. 3:27): Նոր պատմուճանը Սուրբ Հոգին է. «Երկնքի զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. 24:49), - այդ պատմուճանի մասին ասաց Տերը: Քրիստոնյան զգեստավորվում է Քրիստոսի հատկությամբ, ամենասուրբ Հոգու ներգործությամբ:

Քրիստոնյայի համար հնարավոր է այդ զգեստավորումը. «Զգեստավորվեցե՛ք Տեր Հիսուս Քրիստոսով և մարմնին խնամք մի՛ տարեք ցանկությունները գոհացնելու համար» (Հռոմ. 13:14), - ասում է Առաքյալը:

Նախ, Ավետարանով առաջնորդվելով, դե՛ն գցեք թշնամությունը, հիշաչարությունը, բարկությունը, դատապարտումը և այն ամենը, ինչ անմիջապես հակազդում է սիրո վրա:

Ավետարանը պատվիրում է աղոթել թշնամիների համար, օրհնել անիծողներին, բարիք անել ատողներին, ներել մերձավորին, ինչ էլ որ նա գործած լինի ձեր դեմ:

Եթե ցանկանում ես հետևել Քրիստոսին, ջանա՛ բոլոր այդ պատվիրանները կատարել գործով:

Չափազանց անբավարար է միայն հաճույքով ավետարանյան պատգամները կարդալ և զարմանալ այն մեծ բարոյականությամբ, որ այն պարունակում է իր մեջ: Ցավոք, շատերն են դրանով բավարարվում:

Երբ մոտենում ես ավետարանյան պատվիրանների կատարմանը, այդ ժամանակ քո սրտի տերերը համառությամբ հակառակվում են այդ ջանքին: Այդ տերերն են՝ քո սեփական մարմնավոր վիճակը, որի միջոցով ենթարկվում ես մարմնին ու արյանը, և մերժված հոգիները, որոնց հպատակ է մարմնավոր մարդը:

Մարմնավոր իմաստության ճշմարտությունը և մերժված հոգիները քեզանից պահանջում են, որ դու վայր չգցես քո պատիվը և մյուս ապականացու առավելությունները, այլ՝ պահպանես դրանք: Բայց դու արիաբար անտեսանելի պատերազմ մղի՛ր՝ առաջնորդվելով Ավետարանով, հենց Տիրոջով:

Ամեն ինչ զոհաբերի՛ր ավետարանյան պատվիրանները կատարելու համար: Առանց այդպիսի զոհաբերության չես կարող դրանց կատարողը լինել: Աստված Իր աշակերտներին ասաց. «Եթե մեկը կամենում է հետևել Ինձ, թող ուրանա իր անձը» (Մատթ.16:24):

Երբ Տերը քեզ հետ է՝ հաղթանակ հուսա, Աստված չի կարող հաղթող չլինել:

Տիրոջից քեզ համար հաղթանակ խնդրիր, խնդրիր այն մշտապես աղոթքով և լացով: Եվ անսպասելիորեն շնորհի ներգործությունը կգա քո սրտում, դու հանկարծակի թշնամուդ հանդեպ կզգաս քաղցր արբեցությամբ հոգևոր սեր:

Նորից քեզ պայքար է սպասվում. դու պետք է քաջ լինես: Նայի՛ր քո սիրո առարկաներին. նրանք քեզ շա՞տ են դուր գալիս, նրանց հետ շա՞տ է կապված քո սիրտը: Հրաժարվի՛ր նրանցից:

Այդ հրաժարումը Տերն է պահանջում քեզանից, սակայն ո՛չ նրա համար, որ զրկի քեզ սիրուց և սիրելիներից, այլ որպեսզի դու, մերժելով մարմնավոր սերը, ինչը պղծված է մեղքի ներգործունեությունից, ընդունակ դառնաս ընդունելու հոգևոր սերը՝ մաքուր, սուրբ, որը գերագույն երանություն է:

Հոգևոր սիրո զգացողությունը զզվանքով կնայի մարմնավոր սիրուն՝ որպես սիրո այլանդակ խեղաթյուրում: Ինչպե՞ս հրաժարվել սիրո առարկաներից, որոնք կարծես թե աճել են հենց սրտիդ մեջ. ասա՛ նրանց մասին Աստծուն. «Նրանք, Տեր, Քոնն են, իսկ ես ո՞վ եմ՝ ոչ մի նշանակություն չունեցող տկար արարած»:

«Այսօր ես դեռ շրջում եմ երկրի վրա և իմ սիրելիների համար կարող եմ ինչ-որ կերպ օգտակար լինել, վաղը հնարավոր է, որ կչքանամ նրա երեսից, և ես նրանց համար ոչինչ կդառնամ»:

«Ուզեմ թե չուզեմ՝ կգա մահը, կգան մյուս հանգամանքները, բռնի կերպով կբաժանեն ինձ նրանցից, որոնց ես իմն եմ համարել, և նրանք արդեն իմը չեն լինի: Նրանք իմ առարկաները չեն էլ եղել, այլ ինչ-որ հարաբերություն է եղել իմ և նրանց միջև, այդ հարաբերությամբ խաբվելով՝ ես նրանց իմն եմ համարել: Եթե նրանք իրո՛ք իմը լինեին, ընդմիշտ ինձ կպատկանեին»:

«Արարածը պատկանում է միայն Արարչին: Նա նրանց Աստվածն ու Տերն է: Քոնը, Աստված իմ, տալիս եմ Քեզ, դրանք յուրացրել եմ ես սխալ ու անարդար ձևով»:

Նրանց համար ճիշտ է Աստծունը լինելը: Աստված հավիտենական է, ամենուրեք, ամենակարող, անսահման բարի: Նրանց համար, ովքեր Նրանն են, Նա ամենահավատարիմ, ամենահուսալի օգնականն ու ապավենն է: Աստված Իրենը տալիս է մարդկանց, նրանք դառնում են Աստծո մարդիկ՝ ժամանակավորապես մարմնով, իսկ հավիտենապես՝ հոգով, երբ Աստված կամենա այդ շնորհը տալ մարդուն: Մերձավորի հանդեպ ճշմարիտ սերը հիմնված է Աստծո հանդեպ ունեցած հավատքի վրա, այն Աստծուց է. «Որպեսզի ամենքը մի՛ լինեն, - ասում է աշխարհի Փրկիչը Իր Հորը, - ինչպես Դու, Հայր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ Մեր մեջ լինեն» (Հովհ. 17:21):

Խոնարհությունն ու Աստծուն անձնատուր լինելը սպանում է մարմնավոր սերը, ինչը նշանակում է, որ այդ սերը գործում է մեծամտության և անհավատության ոլորտում:

Քո սիրելիների համար օգտակար ամեն բան արա՛, ինչ որ օրենքը թույլատրում է, բայց միշտ հանձնի՛ր նրանց Աստծուն, քո կույր, մարմնավոր, անհաշվետու սերը կամաց – կամաց կդառնա հոգևոր, բանական, սուրբ:

Իսկ եթե քո սերը անօրեն հակվածություն է, ապա մերժի՛ր այն որպես աղտեղություն:

Երբ սիրտդ ազատ չէ, դա կրքոտության նշան է. երբ այն գերության մեջ է, դա մոլեգին, մեղսավոր կրքոտության նշան է: Սուրբ սերը մաքուր է, ազատ, նրա ամեն ինչն Աստծով է: Այն Սուրբ Հոգու ներգործությունն է, որ գործում է սրտում ըստ նրա մաքրության:

Մերժելով թշնամությունը, կրքոտությունը, հրաժարվելով մարմնավոր սիրուց, ձե՛ռք բեր հոգևոր սեր. «Խուսափի՛ր չարից և բարիք գործի՛ր» (Սղմ. 33:15):

Հարգի՛ր մերձավորիդ որպես Աստծո պատկեր, հոգուդ մեջ հարգանքն անտեսանելի է ուրիշների համար, հստակ է միայն խղճիդ համար: Գործունեությունդ թող լինի գաղտնի՝ ըստ քո հոգևոր վիճակի:

Հարգի՛ր մերձավորիդ՝ խտրականություն չդնելով տարիքի, սեռի և խավի միջև ու աստիճանաբար կսկսի սրտումդ սուրբ սեր առաջանալ: Այդ սուրբ սիրո պատճառը մարմինն ու արյունը չէ, հակում զգալը չէ, այլ Աստված է: Քրիստոնեական փառքից զրկվածները զրկված չեն մյուս փառքից, ինչը ստացել են արարվելիս. նրանք Աստծո պատկերն են:

Եթե Աստծո պատկերը նետվի դժոխքի սարսափելի բոցերի մեջ, այնտեղ էլ ես պետք է հարգեմ նրան:

Իմ ի՞նչ գործն է բոցերն ու դժոխքը: Այնտեղ է գցվում Աստծո պատկերը Աստծո դատաստանի համաձայն, իմ գործն է՝ պահպանել հարգանքն Աստծո պատկերի հանդեպ, և դրանով պահպանել ինձ դժոխքից:

Ե՛վ կույրին, և՛ բորոտին, և՛ դատողությունը կորցրածին, և՛ կրծքի երեխային, և՛ քրեական հանցագործին, և՛ հեթանոսին հարգանք ցուցաբերի՛ր, որպես Աստծո պատկերի: Քո գործը չէ նրանց տկարություններն ու արատները: Քննի՛ր ինքդ քեզ, որպեսզի թերություններ չունենաս սիրո մեջ:

Քրիստոնյային պատվի՛ր այնպես, ինչպես կպատվեիր Քրիստոսին, Ով մեզ խրատ տվեց, և Նա այդ մասին կհիշեցնի ևս մեկ անգամ հավիտենականության մեջ՝ մեր կարգավիճակի վճռի ժամանակ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. 25:40):

Մերձավորներիդ հետ հարաբերության ժամանակ հիշի՛ր Ավետարանի այս ասույթը, և կդառնաս մերձավորիդ սրտակից ու բարեկամ: Մերձավորիդ հանդեպ այդ սերը կհասցնի քեզ Աստծո հանդեպ ճշմարիտ սիրուն:

Բայց եթե մտածում ես, թե սիրում ես Աստծուն, իսկ սրտումդ տհաճ իրավիճակ է ստեղծվել թեկուզ մի մարդու հանդեպ, ապա կործանարար ինքնախաբեության մեջ ես:

«Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն, - ասում է սուրբ Հովհաննես Աստվածաբանը, - և ատի եղբորը՝ սուտ է խոսում . . . և Նրանից ունենք այս պատվիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի նաև իր եղբորը» (Ա Հովհ. 4:20-21):

Մերձավորի հանդեպ հոգևոր սիրո առաջացումը նշան է Սուրբ Հոգով նորոգման. «Մենք գիտենք, - նորից ասում է Աստվածաբանը, - որ մահվանից դեպի կյանք անցանք, քանզի սիրում ենք մեր եղբայրներին, իսկ ով չի սիրում եղբորը՝ մնում է մահվան մեջ» (Ա Հովհ. 3:14):

Քրիստոնեության կատարելությունը մերձավորի հանդեպ ունեցած կատարյալ սիրո մեջ է: Մերձավորի հանդեպ կատարյալ սերը Աստծո հանդեպ ունեցած սիրո մեջ է, իսկ Աստծո հանդեպ ունեցած սիրո մեջ առաջադիմելը վերջ չունի, որովհետև սերը՝ դա անվախճան Աստվածն է: Մերձավորի հանդեպ ունեցած սերը սիրո կառույցի հիմքն է: Սիրելի եղբայր, աշխատի՛ր քո մեջ գտնել մերձավորիդ հանդեպ հոգևոր սեր. գտնելով այն՝ կարժանանաս Աստվածային սիրույն և կմտնես հարության և Երկնքի Արքայության դարպասներից ներս: Ամեն:

ԱՍՏՑՈ ՀԱՆԴԵՊ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Սիրի՛ր Աստծուն այնպես, ինչպես Ինքը պատվիրեց սիրել Իրեն, այլ ո՛չ թե այնպես, ինչպես մտածում են սիրել Նրան մոլորված երազողները:

Քեզ համար բերկրանք մի՛ հորինիր, շարժման մեջ մի՛ դիր նյարդերդ, մի՛ բորբոքիր քեզ նյութեղեն կրակով, քո արյան բոցով: Աստծուն հաճելի զոհը խոնարհ սիրտն ու կոտրած հոգին է: Աստված բարկությամբ է վերաբերվում այն զոհին, որը մատուցվում է ինքնապաստանությամբ, ինքն իր մասին հպարտ կարծիքով, թեև այդ զոհը ողջակիզում է եղել:

Հպարտությունը շարժման մեջ է դնում նյարդերը, տաքացնում է արյունը, երազկոտություն է առաջացնում, վերակենդանացնում է անկման կյանքը. խոնարհությունը հանգստացնում է նյարդերը, սանձահարում է արյան շարժը, ոչնչացնում երազկոտությունը, սպանում է անկման կյանքը և կենդանացնում կյանքը Հիսուս Քրիստոսի համար:

«Հնազանդությունն ավելի լավ է, քան ընտիր զոհը, և անսալն ավելի լավ է, քան խոյերի ճարպը» (Ա Թագ. 15:22), - ասաց Մարգարեն իսրայելացիների թագավորին, որը հանդգնել էր Աստծո առաջ սխալ զոհ մատուցել: Եթե ցանկանում ես Աստծուն սիրո զոհ մատուցել, ինքնակամորեն մի՛ արա դա, անխոհեմ ձգտմամբ, այլ մատուցիր ա՛յն ժամանակ և ա՛յն տեղում, որտեղ պատվիրել է Աստված:

«Հոգևոր վայրը, որտեղ միայն պատվիրված է հոգևոր զոհեր մատուցել, խոնարհությունն է» (Աբբա Պիմեն):

Աստված նշում է սիրողների և չսիրողների ճշգրիտ և ստույգ հատկանիշները. «Եթե մեկը սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի: Եվ ով Ինձ չի սիրում, Իմ խոսքերը չի պահում» (Հովհ. 14:23-24):

Ցանկանո՞ւմ ես ձեռք բերել Աստծո սերը: Մեկուսացի՛ր ամեն տեսակ գործերից, խոսքերից, խորհուրդներից, զգացողություններից, որոնք Ավետարանով արգելված են: Ամենասուրբ Աստծո համար այդքան ատելի մեղքի նկատմամբ քո թշնամությունը ցուցաբերի՛ր և ապացուցի՛ր քո սերը Աստծո հանդեպ: Մեղանչումները, որ տեղի են ունենում տկարության հետևանքով, անմիջապես բժշկի՛ր ապաշխարությամբ: Բայց ավելի լավ է՝ ջանա՛ թույլ չտալ, որ քեզ մոտենան այդ մեղանչումները՝ ինքդ քեզ խստորեն հսկելով:

Ցանկանո՞ւմ ես ձեռք բերել Աստծո սերը: Ջերմեռանդորեն ուսումնասիրի՛ր Ավետարանում Աստծո պատվիրանները և ջանա՛ կատարել դրանք գործով, ջանա՛, որ ավետարանյան առաքինությունները

դառնան սովորություն՝ որպես քո հատկությունը: Սիրողի առանձնահատկությունը ճշմարտությամբ սիրելիի կամքը կատարելն է:

«Հիրավի, սիրեցի՛ Քո պատվիրանները ոսկուց ու տպազիոնից ավելի: Քո բոլոր պատվիրանները ինձ հաջողություն բերեցին, քանզի ատեցի ճանապարհը չարիքի» (Սղմ. 118:127-128), - ասում է Մարգարեն: Այսպիսի վարքն անհրաժեշտ է Աստծո հանդեպ հավատարմությունը պահելու համար: Հավատարմությունը սիրո պարտադիր պայմանն է: Առանց այս պայմանի՝ սերը խզվում է:

Մշտապես խուսափելով չարից և իրագործելով ավետարանյան առաքինությունները, ինչում կայանում է ամբողջ ավետարանական բարոյագիտությունը, հասնում ենք Աստծո սիրուն: Հենց այդ միջոցով էլ մնում ենք Աստծո հանդեպ սիրո մեջ. «Եթե Իմ պատվիրանները պահեք, կմնաք Իմ սիրո մեջ» (Հովհ. 15:10), - ասում է Փրկիչը:

Սիրո կատարելությունը կայանում է Աստծո հետ միավորմամբ, սիրո մեջ առաջադիմելը զուգորդվում է անբացատրելի հոգևոր մխիթարությամբ, բավականությամբ և լուսավորությամբ: Բայց սխրագործության սկզբում սիրո աշակերտը պետք է դաժան պայքար մղի ինքն իր հետ, իր խորապես վնասված էության հետ, չար, բնածին մեղսունակ էությունը նրա համար օրենք է դարձել՝ պատերազմելով և ըմբոստանալով Աստծո օրենքների դեմ, սուրբ սիրո օրենքների դեմ:

Աստծո հանդեպ սերը հիմնվում է մերձավորի հանդեպ սիրո վրա: Երբ վերանում է քո միջից հիշաչարությունը, այդ ժամանակ մոտ ես սիրուն: Երբ սրտումդ շնորհի սուրբ խաղաղությունն է ծագում ամբողջ մարդկության հանդեպ, այդ ժամանակ դու հենց սիրո դռների մոտ ես:

Բայց այդ դռները բացվում են միմիայն Սուրբ Հոգով: Աստծո հանդեպ սերը Աստծո կողմից տրված պարգև է մարդուն, որը նախապատրաստում է իրեն մաքուր սրտով, մտքով ու մարմնով այդ շնորհի ընդունման համար՝ ըստ պատրաստվածության աստիճանի էլ լինում է շնորհի չափը:

Աստծո հանդեպ սերը ամբողջովին հոգևոր է. «Հոգուց ծնվածը հոգի է» (Հովհ. 3:6): «Մարմնից ծնվածը մարմին է» (Հովհ. 3:6), մարմնավոր սերը, որպես մարմնից ու արյունից ծնված, ունի նյութական, ապականացու հատկություն: Այն անկայուն է, փոփոխական, նրա կրակը միանգամայն կախված է նյութից:

Սուրբ Գրքից գիտենք, որ մեր Աստվածը կրակ է (Եբր. 12:29), որ սերը կրակ է, և զգալով քո մեջ բնական սիրո կրակը՝ մի՛ մտածիր, որ այդ կրակները նույնն են: Ոչ, նրանք թշնամի են միմյանց, և մեկը մյուսին մարում է (Հովհաննես Սանդուղք, խոսք 3, 15): «Ծառայենք Աստծուն Իրեն հաճելի ձևով՝ ահով և դողով, քանզի մեր Աստվածը ոչնչացնող կրակ է» (Եբր. 12:28-29):

Բնական սերը ընկած սեր է, բոցավառում է արյունը, շարժման մեջ է դնում նյարդերը, երազկոտություն է առաջացնում, սուրբ սերը սառեցնում է արյունը, հանգստացնում է թե՛ հոգին, թե՝ մարմինը, մարդու ներսում աղոթական լռության ձգտում է առաջացնում, ընկղմում նրան զմայլանքի մեջ, ինչը ուղեկցվում է խոնարհությամբ և հոգևոր քաղցրությամբ:

Բազում ճգնավորներ բնական սերը Աստվածայինի տեղ ընդունելով՝ բորբոքում են իրենց արյունը և երևակայությունը: Բորբոքված վիճակից հեշտությամբ անցնում են մոլեգին վիճակի: Գտնվելով բորբոքվածության և բթացման վիճակում՝ շատերը համարեցին, որ գտնվում են շնորհի և սրբության մեջ, սակայն նրանք՝ այդ դժբախտները, ինքնախաբեության զոհեր են:

Արևմտյան Եկեղեցում բազում էին այդպիսի ճգնավորներն այն պահից սկսած, երբ այն ընկավ պապական իշխանության տակ, որում սկսեցին մարդուն վերագրել Աստվածային հատկություններ, ինչը հայհոյություն է, քանզի դրանով ընկնում են մարդապաշտության մեջ, իսկ պաշտել՝ վայել և արժանի է միայն Աստծուն, այդ ճգնավորներից շատերը գրքեր են գրել իրենց բորբոքված վիճակում և այդ բթացած ինքնախաբեությունը դրել են Աստվածային սիրո տեղ, սրանց խանգարված երևակայությունը սկսել է պատկերել բազում տեսիլքներ՝ շողոքորթելով իրենց ինքնասիրությամբ և հպարտությամբ:

Արևելյան եկեղեցու զավակ, խուսափի՛ր այդպիսի գրքերի ընթերցանությունից, խուսափի՛ր ինքնախաբեության խորհուրդներին հետևելուց: Առաջնորդվելով Ավետարանով և ճշմարիտ եկեղեցու սուրբ հայրերով՝ խոնարհությամբ բարձրացի՛ր Աստվածային սիրո հոգևոր բարձունքը՝ Քրիստոսի պատվիրանների կատարման միջոցով:

Հաստատ իմացի՛ր, որ Աստծո հանդեպ սերը Սուրբ Հոգու մեծագույն պարգևն է, իսկ մարդը միայն կարող է իրեն մաքրությամբ և խոնարհությամբ նախապատրաստել այդ մեծագույն պարգևի ընդունմանը, որով փոխվում է և՛ միտքը, և՛ սիրտը, և՛ մարմինը:

Ապարդյուն է աշխատանքը, անպտուղ և վնասակար է այն, երբ մենք ձգտում ենք ժամանակից շուտ մեր մեջ հայտնաբերել մեծագույն հոգևոր պարգևներ: Դրանք իրենց ժամանակին պարգևում է գթասիրտն Աստված, մշտապես համբերատարորեն, խոնարհությամբ ավետարանյան պատվիրանները կատարողներին: Ամեն:

ԱՇԽԱՐՀԻ ՏԻՐԱԿԱԼԻ ՑԱՆՑԵՐԸ

Եղբայրներ, սուրբ Խաչի նշանով ձեզ առաջնորդում եմ հոգևոր զարմանահրաշ խորհուրդների իմացության: Մեր առաջնորդը թող լինի աստվածահաճոներից ամենամեծը՝ Անտոնը՝ եգիպտական անապատաբնակը:

Նա, Աստվածային հայտնության ներգործությամբ, մի անգամ տեսավ սատանայի ցանցերը, որ աշխարհով մեկ տարածված էր՝ մարդկանց որսալու կորստյան համար: Տեսնելով այդ ցանցերի անթիվ բազմությունը՝ լացով հարցրեց նա Աստծուն. «Տեր, ո՞վ կարող է զերծ մնալ այս ցանցերից և փրկություն ստանալ» (Աբբա Դորոթեոս):

Միտքս սևեռել եմ դիվային ցանցերը տեսնելու վրա: Դրանք դրված են մարդու ներսում և դրսում: Մի ցանցը սերտորեն կապված է մյուսի հետ, որոշ տեղերում ցանցերը մի քանի շարք են կանգնած, մյուս տեղերում՝ լայն բացվածք են տվել, բայց ուղեկցվում են ցանցի ամենաբազմաթիվ ոլորաններով, դրանցից ազատվելը կարծես անհնար է: Նայելով բազմանենգ ցանցերին՝ դառնորեն հեկեկում եմ: Ակամա իմ մեջ կրկնվում է սուրբ անապատականի հարցը. «Աստված իմ, ո՞վ կարող է ազատվել այս ցանցերից»:

Ցանցեր կան դրված նաև տարբեր գրքերում՝ իմ միտքը որսալու համար. իրենք իրենց լույս են կոչում, բայց իրենց մեջ պարունակում են խավարի ուսմունք, բացահայտ կամ գաղտնի՝ գրված խավարի և ամենաչար աշխարհի տիրակալի ազդեցությամբ, մեղսունակության պատճառով վնասված բանականության աղբյուրից. «Մարդկանց խաբեությամբ, որոնք խորամանկությամբ, խաբելով մոլորեցնում են» (Եփես. 4:14), Առաքյալի արտահայտությամբ. գրողների կողմից, ովքեր անմտորեն գործում են իրենց մարմնավոր գիտակցությունից (Կողոս. 2:18): Իմ մերձավորը, որի սիրո մեջ ես պիտի փնտրեմ իմ փրկությունը, դառնում է ինձ համար կորստյան ցանց, երբ նրա միտքը որսված է այն ուսմունքների ցանցով, որոնք ստի և շողոքորթության իմաստությամբ են շաղախված: Իմ սեփական միտքը իր վրա կրում է անկման հետքերը՝ ծածկված խավարի ծածկոցով, վարակված ստի թույնով, այն, աշխարհի տիրակալի կողմից հմայված, իր համար ցանցեր է դնում: Դեռևս Դրախտում նա անփութորեն և անզգուշորեն ձգտում էր իր համար կործանարար ու սպանիչ գիտելիքներ ձեռք բերել: Անկման պատճառով նա դարձավ թերամիտ, անշրջահայաց, հանդգնությամբ արբող թունավոր գիտության գավաթից, որով և հիմնովին ոչնչացնում է իր մեջ համը և ցանկությունը Աստվածային գավաթի պարունակության, այսինքն՝ փրկչական գիտության հանդեպ:

Իմ սրտի համար որքա՜ն ցանցեր կան: Տեսնում եմ կոպիտ և նուրբ ցանցեր: Դրանցից որո՞նց կոչենք ավելի վտանգավոր, ավելի սարսափելի: Տարակուսում եմ: Հմուտ է որսորդը, և ո՛վ խուսափում է կոպիտ ցանցից՝ նրան որսում է նուրբ ցանցով: Բռնվելու վերջը մեկն է՝ կործանում: Ցանցերն ամեն կերպ քողարկված են հիանալի հմտությամբ: Անկումը զգեստավորված է ամեն տեսակ հանդիսավորություններով, մարդահաճությամբ, կեղծավորությամբ, փառամոլությամբ և նմանատիպ այլ «առաքինություններով»: Սուտը, մռայլ պատրանքը կրում են որպես հոգևոր, երկնային դիմակ: Երկրային սերը հաճախ արատավոր է՝ դիմակավորված սուրբ սիրով, կեղծ, երևակայական քաղցրությունը ներկայանում է որպես հոգևոր քաղցրություն: Աշխարհի տիրակալը բոլոր միջոցներով ջանում է մարդուն պահել իր ընկած բնության մեջ. դա բավական է, որպեսզի առանց կոպիտ մեղսագործության մարդուն օտարի Աստծուց: Որսողը իր մանրակրկիտ հաշվարկով ակնառու մեղսագործության փոխարեն քրիստոնյային մղում է մեծամտության, որն էլ տարվելով անկյալ բնության բարեգործություններով և ընկնելով խաբկանքի մեջ, օտարանում է Քրիստոսից:

Որքա՜ն ցանցեր կան մարմնի համար: Հենց ինքը՝ մարմինը, արդեն իսկ ցանց է: Ի՜նչ օգուտ է քաղում դրանից աշխարհի տիրակալը. մարմնի միջոցով սա անարգ հակումներով և ցանկություններով ստորացնում է մեզ, և մենք նմանվում ենք անբան անասուններին: Ինչպիսի՜ անդունդ, ինչպիսի՜ հեռացում, ինչպիսի՜ անկում Աստվածային նմանությունից: Աստծուց ահավոր հեռու այդ խորը անդունդն ենք ընկնում, երբ տրվում ենք մարմնական բիրտ հաճույքներին: Բայց պակաս բիրտ մարմնական հաճույքները սակավ կործանարար չեն: Հանուն դրանց մոռացվում է մարդու դերը՝ հոգու մասին հոգածությունը, մոռացվում են Աստված, երկինքը, հավիտենականությունը: Աշխարհի տիրակալը մարմնավոր հաճույքների միջոցով ջանում է մեզ պահել անդադար ցրվածության և մթագնածության մեջ: Զգացողության՝ հոգու այդ դռների միջոցով, որոնցով նա հաղորդակցվում է տեսանելի աշխարհի հետ, անդադար ներմուծում է նրա մեջ զգայական հաճույք՝ դրանցից չզատելով մեղքն ու գերությունը:

Աշխարհի հանրահայտ համերգասրահներում դղրդում է երաժշտությունը՝ արտահայտելով և բորբոքելով տարբեր կրքեր, որոնք ի ցույց են դրվում նաև թատրոններում, աշխարհային զվարճանքներում հուզումներ ապրելով և մարդն այդ բոլոր հնարավոր միջոցներով ներքաշվում է չարի կողմից իրեն սպանող հաճույքների մեջ:

Դրանցով արբած՝ նա մոռանում է իրեն փրկող Աստվածային բարին և Աստվածամարդու արյունը, որով մենք գնվեցինք:

Ահա ներկայացվեց ընդամենը ցանցերի թույլ ուրվագիծը, որոնք դրվել են աշխարհի տիրակալի կողմից քրիստոնյաներին որսալու համար: Ուրվագիծը թույլ է, բայց քիչ է մնում, որ մեզ վրա բերի ա՛յն արդարացի սարսափը, ինչը մեր հոգում հարց է առաջացնում՝ «իսկ ո՞վ կարող է ազատվել այս ցանցերից»:

Սարսափելի պատկերը դեռ չի ավարտվել: Այն նկարագրելու համար ավելի ու ավելի է գործում իմ դաստակը, որ առաջնորդվում է Աստծո խոսքով:

Ի՞նչ է ասում Աստծո խոսքը: Այն ազդարարում է գալիքի մասին, ինչը մեր աչքերի առջև արդեն իրականանում է, մարգարեություն, որ վերջին ժամանակների համար է ասված. «Անօրինության շատանալու պատճառով շատերի սերը պիտի ցամաքի» (Մատթ. 24:12): Ճշմարիտ է Աստծո խոսքը, ավելի ամուր, քան երկինքն ու երկիրը, որը հաղորդում է մեզ վերջին ժամանակներում դիվային ցանցերի բազմացման և այն մասին, որ բազմացել են նաև այդ ցանցերում կործանվողների թիվը:

Իսկապես, նայում եմ աշխարհին ու տեսնում, որ Քրիստոսի եկեղեցու նախկին ժամանակների համեմատ անչափ շատացել են դիվային ցանցերը: Շատացել են և՛ կեղծ վարդապետություն պարունակող գրքերը, բազմացել են այնպիսի՛ մտածողությունները, որոնք իրենց մեջ պարունակում և ուրիշներին են հաղորդում սուտ ուսմունքներ. սաստիկ քչացել են ճշմարտության հետևորդները, ուժեղացել է հարգանքը

բնական առաքինությունների հանդեպ, որոնք մատչելի են հրեաների և հեթանոսների համար. ի հայտ է եկել հակվածություն հեթանոսական առաքինությունների հանդեպ, ինչը հակառակ է բուն մարդկային էությանը և ինչը դրանց որպես չարիք է ընդունում, քչացել է քրիստոնեական առաքինությունների մասին գաղափարը. արդեն չեմ ասում, թե որքա՛ն է քչացել, գործնականում դրանց կատարումը գրեթե ոչնչացել է, զարգացել է նյութական կյանքը, չքացել է հոգևոր կյանքը. հաճույքները և մարմնավոր հոգսերը կլանում են ամբողջ ժամանակը, նույնիսկ Աստծուն հիշելու ժամանակ չկա: Եվ այս ամենը վերափոխվում է պարտականության, օրենքի: «Անօրինության շատանալու պատճառով շատերի սերը պիտի ցամաքի» նաև նրանց համար, ովքեր կմնային Աստծո հանդեպ սիրո մեջ, եթե չարիքն այդքան համատարած չլիներ, եթե սատանայի ցանցերն այդքան չշատանային՝ դառնալով անթիվ-անհամար:

Արդարացի էր սուրբ Անտոնի տրտմությունը: Այդպես արդարացի և հիմնավոր է այժմյան քրիստոնյայի տրտմությունը՝ սատանայական ցանցերի այս առատության պատճառով. «Տե՛ր, մարդկանցից ո՞վ կարող է խուսափել այդ ցանցերից և փրկություն ստանալ»:

Սուրբ անապատականի հարցին հետևեց Աստծո պատասխանը. «Խոնարհամտությունը զերծ կմնա այդ ցանցերից, և դրանք նույնիսկ չեն էլ մերձենա նրան»: Աստվածային պատասխան: Թե ինչպես նա կարող է սրտից հեռացնել բոլոր կասկածները՝ պատկերված է այդ հակիրճ խոսքերում, ինչն իրական միջոց է մեր թշնամու դեմ հաղթանակի, միջոց՝ քանդելու, ոչնչացնելու նրա գործած բազում որոգայթները, որոնք պատրաստվել են իր բազմադարյան և բազմաչար փորձառությամբ:

Միտքը պարսպենք խոնարհությամբ՝ նրան թույլ չտալով ձգտելու անաչառորեն գիտություն ձեռք բերելուն, ինչքան էլ որ դրանց վերնագրերը նորություն լինեն և շարժեն մեր հետաքրքրությունը: Պահպանենք այն կեղծ ուսմունքի փորձությունից, որը քողարկված է քրիստոնեական ուսմունքի անվամբ և դիմակով: Խոնարհեցնենք այն՝ հնազանդելով եկեղեցուն. «Գերելով բոլոր մտքերը՝ հնազանդեցնենք Քրիստոսին» (Բ Կորնթ. 10:5), ըստ եկեղեցու վարդապետության: Սկզբում ծանր է թվում եկեղեցուն հնազանդվելու նեղ ճանապարհը, բայց այն եկեղեցուն ուղիղ հնազանդության միջոցով բերում է հոգևոր գիտակցության լայն ընդարձակությանը, ինչի առջև չքվում են բոլոր կարծեցյալ անհեթեթությունները, որ գտնվում են մարմնավոր ու շնչավոր գիտակցության մեջ: Թույլ չտանք նրան՝ կարդալ ուրիշի գրած հոգևոր նյութերի մասին, բացի ճշմարիտ եկեղեցու հեղինակների գրած գրքերից, որոնց մասին հենց եկեղեցին էր վկայում, որ նրանք Սուրբ Հոգու տաճար են: Սուրբ հեղինակներին կարդացողներն աննկատելիորեն հաղորդակից են լինում այդ գրքերում բնակվող և դրանցով խոսող Սուրբ Հոգուն, իսկ հերետիկոսական հեղինակների գրքերը կարդացողները հաղորդվում են պատրանքի չար հոգու հետ, եթե նույնիսկ այդ հեղինակներն իրենց հերետիկոսական դասում զարդարված են սուրբ կոչմամբ: Ով եկեղեցուն անհնազանդություն է ցուցաբերում, ինչի պատճառը հպարտությունն է, նա ընկնում է այս աշխարհի տիրակալի ցանցերի մեջ:

Ինչպե՞ս վարվել սրտի հետ: Պատվաստենք այդ վայրի ձիթենուն պտղաբեր ձիթենուց մի ճյուղ, դրան տանք Քրիստոսի նմանությունը, սովորեցնենք ավետարանյան խոնարհությունը, բռնի ուժով ստիպենք՝ ընդունել Ավետարանի կամքը: Սրա տարաձայնությունը Ավետարանի հետ, անընդհատ հակաճառությունը և անհնազանդությունն Ավետարանին՝ հակազդեցություն է, որի մեջ հստակորեն՝ ինչպես հայելիում, տեսնում ենք մեր անկումը: Տեսնելով մեր անկումը, լացենք դրա համար Աստծո առաջ՝ մեր Արարչի և Փրկչի, հիվանդանանք փրկարար տրտմությամբ, այնքա՛ն մնանք այդ տրտմության մեջ, մինչև տեսնենք մեր բժշկվելը. «Մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սղմ. 50:19): Աստված մեր Ստեղծիչն է և կատարյալ Տերը: Նա կարող է վերստեղծել մեր սրտերը, Նա վերափոխում է սրտերը նրանց, ովքեր թախանձագին լացով և աղոթքով խնդրում են, և մեղսասեր սիրտը դարձնում է Աստվածասեր ու սուրբ:

Պահենք մեր մարմնավոր զգացմունքները՝ չթողնելով, որ այն մտնի հոգու ամբարը: Սանձենք հետաքրքրասեր աչքերը, ականջներն ու լեզուն, դաժան սանձ դնենք մարմնի փոքր անդամի վրա, ինչն ուժեղ ցնցումներ առաջացնելու պատճառ է, այսինքն՝ խոնարհեցնենք մարմնի անասնական ձգտումները ժուժկալությամբ, զգոնությամբ, ջանքով, հաճախակի մահվան մասին հիշողությամբ, ուշադրությամբ, մշտապես աղոթքով: Ի՜նչ կարճաժամկետ են մարմնական հաճույքները, ի՜նչ գարշահոտ է նրանց վախճանը: Դրան հակառակ՝ մարմինը պարսպված է ժուժկալությամբ և զգացմունքների պահպանմամբ, լվացված ապաշխարության արցունքներով, սրբագործված հաճախակի աղոթքներով, հիմնված է Սուրբ Հոգու խորհրդավոր տաճարի մեջ՝ թշնամու բոլոր փորձությունները մարդու համար դարձնելով ապարդյուն:

«Խոնարհությունը զերծ կպահի թշնամու բոլոր ցանցերից, և դրանք նույնիսկ չեն կարող մերձենալ նրան»: Ամեն:

1846թ. Սերգիևյան Անապատ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ծեր Սիլուան Աթոսացի

Հիշի՛ր երկու խորհուրդների մասին և վախեցի՛ր դրանցից. մեկն ասում է՝ «մենք սուրբ ենք», մյուսը՝ «մենք չենք փրկվի»: Այս երկու խորհուրդներն էլ թշնամուց են, և դրանց մեջ ճշմարտություն չկա: Դու մտածիր՝ «ես մեծագույն մեղավոր եմ, բայց Տերը ողորմած է: Նա շատ է սիրում մարդկանց և կների իմ մեղքերը»: Այդպես հավատա, և Տերը կների քեզ: Բայց հույսդ մի՛ դիր սխրագործություններիդ վրա, թեկուզ դու շատ աշխատած լինես: Մի ճգնավոր ինձ ասաց. «Ես անպայման ողորմություն պիտի գտնեմ, որովհետև ամեն օր բազում երկրպագություններ եմ անում»: Բայց երբ վրա հասավ մահը, նա պատռում էր իր շապիկը:

Այսպիսով, ոչ թե մեր սխրագործությունների, այլ ըստ Իր շնորհի է ողորմում Աստված: Տերն ուզում է, որ հոգին խոնարհ լինի, անհիշաչար և բոլորին սիրով ների, այդ ժամանակ Տերն ուրախությամբ կների: Տերը սիրում է բոլորին, մենք էլ պարտավոր ենք Նրան նմանվել և բոլորին սիրել, եթե տկար են, ապա ներենք նրանց, և Տերը չի հրաժարվի և կօգնի Իր շնորհով:

Դեռևս հնազանդության մեջ եղած ժամանակ ես մերձեցա Աստծո սիրուն, այն աննկարագրելի է: Հոգին զգում է, որ ինքը Աստծո հետ է, Աստծո մեջ է, և ցնծում է Տիրոջ հետ: Բայց շնորհի այդ ազդեցությունը հնարավոր է կորցնել նույնիսկ մի վատ խորհրդի պատճառով: Վատ խորհուրդների հետ մեր մեջ մտնում է թշնամական զորությունը և այդ ժամանակ մթագնում է հոգին, և չար խորհուրդները տանջում են նրան: Այդ ժամանակ մարդը զգում է իր կործանումը և տեսնում, որ առանց Աստծո շնորհի ինքը ընդամենը մեղավոր և տկար հող է:

Հոգին, ճանաչելով Տիրոջը, փորձով սովորում է, որ եթե մարդը ապրում է ըստ պատվիրանների, ապա նա, թեև մի քիչ, բայց զգում է իր մեջ շնորհը և աղոթելու համարձակություն է ունենում, բայց եթե մեղանչում է մի որևէ խորհրդի պատճառով և չի ապաշխարում, ապա շնորհը թաքնվում է, և հոգին այդ ժամանակ տխրում և լալիս է Աստծո առջև:

Այսպես, ամբողջ կյանքի ընթացքում հոգին պայքարում է խորհուրդների դեմ, բայց դու մի՛ հուսահատվիր պայքարելուց, որովհետև Տերը սիրում է արիաբար պայքարողներին:

ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Միանձնուհիների Վանահայր Աբրահամ

Այսօր ես ցանկանում եմ Ավետարանի վրա հիմնվելով խոսել պատրանքի մասին: Թվում է, թե այդ մասին այնտեղ ոչինչ չի ասվում, բայց դա միայն առաջին հայացքից: Իսկ եթե խորամուխ լինենք Ավետարանի մեջ, մտաբերենք նրա ողջ պարունակությունը և փոքր-ինչ խորհենք, ապա մենք որոշ տեղեր կգտնենք, որոնցում (ճիշտ է, առանց հենց «պատրանք» բառի գործածման) խոսվում է կեղծ հոգևոր վիճակի մասին, ինչը լիովին բնական է. չէ՞ որ Ավետարանը ճշմարտության աղբյուր է, և այդպիսի կարևոր նյութի մասին, ինչպիսին պատրանքն է, այնտեղ պարտադիր պետք է հիշատակվի: Ամենից առաջ կեղծ հոգևոր վիճակի, այսինքն՝ պատրանքի մասին գրված է Ավետարանում՝ անապատում Փրկչի փորձության պատմության մեջ: Շատ սուրբ հայրեր մխիթարելով և ոգևորելով մեզ մեր հոգևոր պատերազմի մեջ՝ հիշեցնում են, որ սատանայի կողմից փորձության ենթարկվեց նույնիսկ Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսը:

Բայց, եթե սատանան մեծ մասամբ մեզ մոտենում է խորհուրդների միջոցով, քանի որ մենք ընկած էակներ ենք, և մեր միտքը մեղսագործությամբ վնասված լինելու պատճառով հասանելի է դարձել սատանայական ներշնչումների համար, ապա Տեր Հիսուս Քրիստոսը, որպես անմեղ մարդ, չէր կարող նման ձևով փորձվել: Փորձիչ – սատանան Նրան բացահայտ մոտեցավ, որովհետև Նրան մտքով վնասել չկարողացավ և փորձեց պատրողական խոսքով, փորձեց ամենից առաջ Տիրոջ մոտ ցանկություն առաջացնելով ապականացու փառքի հանդեպ, որպեսզի Տերը տեսանելի կերպով ապացուցի Իր հոգևոր լինելը, Իր Աստվածային ծագումը: Իհարկե, կարելի է Փրկչի այս փորձությունը անապատում դիտել տարբեր տեսակետներով: Կարելի է ասել այն մասին, որ սատանան գայթակղում է Տիրոջը որկրամոլության, փառքի և իշխանության խորհուրդներով, բայց պետք է ուշադրություն դարձնել նաև փորձչի այն խոսքերի վրա, երբ նա մոտեցավ Տիրոջը. «Եթե Դու Աստծո Որդին ես . . . », - այսինքն՝ սատանան համոզում էր Փրկչին անհրաժեշտության դեպքում Ինքն Իրեն փառավորի հրաշքներով՝ սկզբից քարերը հաց դարձնելով, իսկ այնուհետև բոլորի աչքի առջև տաճարի աշտարակից ցած նետվի և անվնաս մնա: Վերջապես հենց բացահայտ կերպով պահանջեց, որ իրեն երկրպագի, իբր դրա փոխարեն Տիրոջը խոստանալով աշխարհի ամբողջ թագավորությունը, ինչպես Ավետարանում է ասվում՝ մի վայրկյանում Նրան ցույց տալով այդ ամենը:

Սակայն այստեղ ոչ մի նոր բան չկա նրանց համար, ովքեր ծանոթ են սուրբ հայրերի աշխատություններին, նրանց կյանքին ու սխրանքներին: Մենք գիտենք, որ, երբեմն Տիրոջ թույլտվությամբ, սատանան հարաբերություն է ունեցել որոշ ճգնավորների հետ՝ հատկապես համարձակների, որոնք մեծ հաջողությունների էին հասել՝ դիմակայելով խորհուրդներին, նրանց ցույց է տվել արտասովոր հմայիչ տեսարաններ, վախեցրել է նրանց սարսափելի տեսիլքներով՝ հայտնվելով անձամբ, կամ դևերի ամբոխ ուղարկելով, այսինքն՝ ջանացել է պատրել ճգնավորներին՝ նրանց զգայական հայացքի առջև նկարագրելով հրապուրիչ պատկերներ: Դրա համար, եթե մենք քննենք Փրկչի փորձությունը ճգնավորական տեսանկյունից, կտեսնենք, որ սատատան փորձեց Նրան պատրանքի մեջ գցել: Իհարկե, դա մեզ խենթություն է թվում, բայց, այնուամենայնիվ, եթե սատանան մոտեցել է այդ նպատակով հենց Տեր Հիսուս Քրիստոսին (իսկ Ավետարանը չի կարող խեղաթյուրել ճշմարտությունը), ապա առավել ևս նա կարող է մոտենալ մեզ, և մոտենում է՝ ամենից առաջ հպարտացնող խորհուրդներ ներշնչելով: Այդ խորհուրդները այնպես, ինչպես անապատում Տիրոջ փորձության ժամանակ, հիմնավորվում են չարի կողմից, քանզի, ինչպես Փրկիչը իրականում հանդիսանում է Աստծո Որդի, այդպես էլ մենք մեր մեջ

տեսնում ենք մի ինչ – որ բարի, ճշմարիտ հոգևոր բան և դրա համար էլ հաճախ փորձվում ենք հպարտացնող խորհուրդներից: «Դրանից հետո Հիսուս Հոգով անապատ տարվեց՝ սատանայից փորձվելու» (Մատթ. 4:1): «Հոգով անապատ տարվեց» խոսքը նշանակում է, որ փորձությունը Աստծո կամոք էր: Այդպես կատարվում է նաև մեզ հետ, ամեն պատահած, այդ թվում նաև հպարտության ոգու կողմից թույլ տրված փորձությունը, դրանք անխուսափելի են, և ազատվել դրանցից, այնպես անել, որ մեզ հետ ընդհանրապես նման բան չպատահի՝ հնարավոր չէ: Եվ թող մարդիկ չպատրեն իրենց այն խորհուրդներով, թե որոշ պարագաներում կարելի է խուսափել փորձությունից. օրինակ, եթե իրենց խելամիտ պահեն, ապա սատանան չի կարող իրենց փորձել, չի ջանա պատրել իրենց հպարտության ինչ – որ ներշնչումներ առաջացնելով, երբեմն՝ նաև տեսիլքներով:

«Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց, ապա քաղց զգաց: Եվ փորձիչը՝ սատանան, մոտենալով Նրան՝ ասաց. «Եթե Աստծո Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ. 4:2-3): Անկասկած պետք չէ լիովին նույնացնել սովորական մեղավոր մարդկանց փորձությունը Տեր Հիսուս Քրիստոսի փորձության հետ: Եթե մեր մեջ նման սնափառ խորհուրդներ կան, փորձությունը կարող է կեղծ լինել, որովհետև մենք իրականում հրաշք գործել չենք կարող, իսկ Փրկչի համար հրաշք գործելը, իհարկե, հնարավոր է և Նա գթասրտությունից ելնելով հետագայում այդ արեց՝ քաղցած ժողովրդին հացով կշտացնելով: Բայց անապատում սատանան ցանկացավ պարտադրել Նրան կատարել այդ՝ հաստատելու համար Իր Աստվածությունը, այսինքն՝ սնափառությունից ելնելով. «Եվ մոտենալով Նրան՝ ասաց. «Եթե Աստծո Որդին ես, ասա, որ այս քարերը հաց լինեն» (հիշեցնում եմ, որ ես չեմ մեկնում այս իրողությունը լիովին, այլ ուշադրությունս կենտրոնացնում եմ միայն այն հանգամանքի վրա, որ սատանան փորձեց Փրկչին՝ ջանալով Նրան ներքաշել սնափառության մեղքի մեջ: Նա պատասխանեց և ասաց. «Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»:

Ապա սատանան Նրան տարավ սուրբ քաղաքը և կանգնեցրեց Նրան տաճարի աշտարակի վրա ու ասաց Նրան. «Եթե Աստծո Որդին ես, Քեզ այստեղից ցած գցիր, որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին պատվիրված է Քո մասին և ձեռքերի վրա պիտի վերցնեն Քեզ, որպեսզի երբեք Քո ոտքը քարին չխփես»» (Մատթ. 4:4-6): Այստեղ փորձությունը կայանում է արդեն պահանջելու մեջ, որպեսզի ժողովրդի բազմության առաջ հրաշք կատարվի, որոնք մշտապես ներկա են Երուսաղեմի տաճարում: Փրկիչը այդ խոսքին Սուրբ Գրքով պատասխանեց՝ նորից մերժելով ապականացու փառքը: «Հիսուսը դարձյալ նրան ասաց. «Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես»: Սատանան նորից Նրան առավ տարավ մի շատ բարձր լեռան վրա և ցույց տվեց Նրան աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը և Նրան ասաց. «Այս բոլորը Քեզ կտամ, եթե գետին ընկնելով ինձ պաշտես»» (Մատթ. 4:7-9): Տեսեք, թե ինչ հանդուգն է սատանան, թեև որոշ մեկնիչներ էլ այդ մասին մեծ զգուշությամբ են խոսում, նրանց անհամատեղելի է թվում այն, որ սատանան կարողացել է վերցնել Փրկչին և լեռան վրա բարձրացնել Նրան: Բայց եթե դրան ճգնավորական տեսանկյունից նայենք և մտաբերենք բարեպաշտ ճգնավորների վարքը, ապա հասկանալի կդառնա, որ հնարավոր է այդպիսի բան, չէ՞ որ երբեմն սատանան որոշ իշխանություն է ստացել նույնիսկ մարդու մարմնի վրա: Քանի որ տվյալ պարագայում Աստծո Որդու պատերազմը անմիջականորեն սատանայի հետ էր, ենթադրաբար նրան՝ չարին, այդ պարագայում ավելի էր թույլ տրված: Եվ վերջապես սատանան փորձում է Տիրոջը տեսիլքով, ինչը նույնպես շատ հաճախ պատահում է այն բարեպաշտ ճգնավորների հետ, ովքեր կարողացան մաքրվել մեղսալի խորհուրդներից, և այդ պատճառով էլ սատանան նրանց չի կարողանում հարվածել մտքի միջոցով. «Սատանան նորից Նրան տարավ մի շատ բարձր լեռան վրա և ցույց տվեց Նրան աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը և Նրան ասաց. «Այս բոլորը Քեզ կտամ, եթե գետնին ընկնելով ինձ պաշտես»: Կիևո-Պեչորսկի վանքի ճգնավոր Իսահակի վարքում պատմվում է այն մասին, թե ինչպես դևերը պատրեցին

նրան՝ խաբեությամբ պարտադրելով երկրպագել սատանային: Սատանան չափազանց հպարտ արարած է, նրան կարելի է կոչել հպարտության հնարող, հենց դրա մարմնավորում, այդ պատճառով նա, իհարկե, ուզում է, որ իրեն երկրպագեն՝ նույնիսկ չցանկանալով: Բայց Տերը մերժում է նաև այդ փորձությունը, ինչպես սկզբում՝ մեջ բերելով Սուրբ Գիրքը. «Այն ժամանակ Հիսուսը նրան ասաց. «Ետիս գնա, սատանա, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես Տեր Աստծուն և միայն Նրան պիտի պաշտես»: Ապա սատանան Նրան թողեց. և ահա հրեշտակները մոտեցան և ծառայում էին Նրան» (Մատթ. 4:10-11):

Այսպիսով, մենք տեսանք, որ սատանան փորձեց պատրել հենց Տեր Հիսուս Քրիստոսին: Իհարկե, ունենալով արատավոր փորձ և կարծես թե հույսը դնելով չարության և մարդկային տկարության վրա՝ նա մտածում էր, որ Տիրոջ մեջ էլ կգտնի մարդկային բնությանը հատուկ հպարտության որևէ դրսևորում, բայց խայտառակված հեռացավ: Եթե սատանային թույլ էր տրված փորձել Փրկչին, ապա առավել ևս մենք պետք է զգույշ լինենք ու արթուն, և չափազանց վախենանք սնափառության ու հպարտության խորհուրդներից, թեկուզև այդ խորհուրդները հիմնված լինեն ամենահիրական, ճշմարիտ առաքինությունների և մեր մեջ ներկա եղող Աստծո շնորհի վրա:

Փրկիչը նախազգուշացրեց Իր աշակերտներին, որ այնպիսի երևույթը, ինչպիսին պատրանքն է, շատ մեծ տարածում կգտնի նրանց մեջ, ովքեր իրենց կերևակայեն որպես Իր աշակերտներ:

Որոշ մեկնիչներ բացատրելով այս տեղը Մատթեոսի Ավետարանի լեռան քարոզից՝ վստահեցնում են, որ իրականում այդպիսի բան չի կարող լինել, իսկ եթե գոյություն ունեն մարգարեացող կամ հրաշքներ գործող մարդիկ և դրա հետ մեկտեղ՝ Աստվածային պատվիրանները չպահող, ապա դա դեռ ոչինչ չի նշանակում: Բայց այդպիսի մեկնությունները համարվում են մտացածին և շեղ (վերացական): Իրականում մենք տեսնում ենք հարյուրավոր և նույնիսկ հազարավոր մարդիկ, որ իրենց համարում են Փրկչի ամենամտերիմ աշակերտներ, Նրա կամքը կատարողներ, իսկ իրականում՝ Նրան հակառակվողներ են, օրինակ՝ այսպես կոչված այլափառ որոշ սրբեր: Նրանց հոգևոր վիճակը հիանալի կերպով ներկայացնում է Իգնատի եպիսկոպոսը (Բրյանչանինով)՝ ապացուցելով, որ նրանք գտնվում են պատրանքի մեջ: Կամ՝ մեր ուղղափառության մեջ էլ որոշ կեղծ պայծառատես ծերեր երբեմն նույնիսկ դասվում են սրբերի դասին, թեև նրանց վարքում կան ակնհայտ պատրանքի նշաններ: Օրինակ՝ իր ժամանակի վանականության համար Իգնատի եպիսկոպոսը գրում է, թե՝ ոմն Իվան Յակովլևիչ Կորեշա, մարդ, որը նախկինում չափազանց մեծ հեղինակություն ուներ որպես հանուն Քրիստոսի խենթ և համարվում էր պայծառատես Աստծո ծառա՝ հստակորեն գտնվում էր պատրանքի մեջ:

Մեր ժամանակներում էլ այդպիսի «սովորությունը», մի որևէ պայծառատես գտնելու ծարավը հարկադրում է մարդկանց՝ շրջել ամբողջ Ռուսաստանով մեկ և շատ հաճախ որպես պայծառատես ընդունում են ինչ – որ թշվառների, որոնք իրականում հոգեկան հիվանդ են: Եվ հենց սուրբ տեսնելու ցանկությունն արդեն իսկ զրկում է առողջ մտքից և սա շրջապատում է «սրբին» մի ինչ – որ լուսեպսակով, և մարդը սրբություն է տեսնում այնտեղ, որտեղ խելամիտը կտեսնի միայն հիմարություն և խենթություն, ոչ թե հանուն Քրիստոսի, այլ խենթություն բառիս բուն իմաստով, այսինքն՝ խելագարություն: Այդ «սրբերի» մեջ հանդիպում են, իհարկե, նաև շառլատաններ, բայց նաև պատահում է այնպես, որ մարդիկ այնքան անկեղծորեն են հավատում իրենց կարծեցյալ սրբությանը, որ սկսում են նույնիսկ մարգարեանալ և դրանցից որոշ բաներ իրականանում են, որոշն էլ՝ ոչ: Բարեբախտաբար մեր ժամանակներում հատուկ «սրբության» համոզիչ նշաններ ոչ ոքի մոտ չկա. պատրվածները չունեն ո՛չ հրաշագործության պարգև, ո՛չ իրական պայծառատեսություն. այդ պատճառով էլ նրանց պատրված լինելու մեջ համոզվելը ավելի հեշտ է, քան հնում, երբ մարդիկ ավելի նախանձախնդիր էին, և այդ պատճառով էլ պատրանքը առավել ուժեղ էր և գայթակղիչ:

19 – րդ դարում կաթոլիկների ու բողոքականների մեջ կային այնպիսի հռչակավոր հոգետեսներ, ինչպիսիք էին Սվետենբուրգը և արևմտյան խորհրդապաշտ միստիկ Հակոբ Բյոմեն: Վերջինիս ուսմունքով հրապուրվեց մեր ռուս կրոնական փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը: Եվ ահա Հակոբ Բյոմեի ուսմունքի հետ կապված՝ պատմեմ հետևյալ դեպքը. մի քրիստոնյա հետաքրքրվում էր կաբալայի միստիցիզմով և շփվում էր կաբալիստների հետ: Կաբալան դա իրականում ինչ-որ սև մոգություն չէ, ինչպես ենթադրում են ոմանք, այլ գաղտնի, կարելի է ասել՝ կիսապաշտոնական հոգևոր վարդապետություն է, հուդայականության ուսմունքներից մեկը: Թալմուդականությունը (պաշտոնական ուսմունքը) զգուշությամբ է վերաբերում կաբալային, թեև կան մարդիկ, որոնք միաժամանակ իրենց համարում են տրադիցիոն թալմուդական ուսմունքի նվիրյալներ և փորձում են օգտագործել կաբալականության պրակտիկան՝ հասնելու, ըստ իրենց, հոգևոր վիճակի: Կաբալան հարյուրամյակի ընթացքում փոխվել է, բայց այն ժամանակ, երբ տեղի ունեցան իմ նկարագրած միջադեպերը, միստիկ – կաբալիստները համարում էին, որ հոգևոր վիճակի են հասնում Աստծո անվան մասին խորհելու ճանապարհով՝ կենտրոնանալով նման մտորումների վրա, խորասուզվելով այդ ինքնատիպ մեդիտացիայի մեջ, ինչպես այժմ ընդունված է ասել՝ նրանք հասնում են մի ինչ – որ զմայլքի, ինչն ընդհանուր ոչինչ չունի անդադար աղոթքի հետ, որ մենք աղոթքի խոսքերը կրկնում ենք և հիշում Աստծո անունը՝ խնդրելով Աստծուց օգնություն և ողորմություն: Եվ ահա մի քրիստոնյա, հավանաբար բողոքական, ցանկանալով յուրացնել այդ պրակտիկան և մտածելով, որ քրիստոնյա լինելով հանդերձ կարող է այն կիրառել, փորձում էր բոլորից հարցուփորձ անել հրեա-կաբալականության մասին: Մեկն էլ նրան ընդդիմացավ. «Իբր դա ձեր ինչի՞ն է պետք, երբ դուք ունեք ձեր միստիկը՝ Հակոբ Բյոմեին, որի մոտ դուք կգտնեք այն, ինչ՝ մեզ մոտ»: Այստեղից երևում է, որ թեև Բյոմեն արտաքինից քրիստոնյա էր երևում, բայց հոգևոր պրակտիկայի էությունը նրա և հրեաների մոտ նույնն է. եթե քրիստոնյան հասնում է նույն էքստազային վիճակի, ինչ հրեաները, ապա ակնհայտ է, որ այդ քրիստոնյան պատրանքի մեջ է գտնվում: Որովհետև Քրիստոսից դուրս ոչ մի ճշմարիտ Աստվածճանաչություն չի կարող լինել, այդ մասին Փրկիչն անձամբ ասաց. «Ով որ Ինձ է մերժում, Ինձ ուղարկողին է մերժում» (Ղուկ. 10:16):

Ահա թե ինչպես է խոսում Տերը ամեն տեսակ սուտ մարգարեների մասին, լինեն նրանք ոչ պրավոսլավ, լինեն մեր միջից, վանականների կամ աշխարհայինների միջից, որոնցից շատ շատերն ուղղակի պատրվել են իրենց տգիտության պատճառով. «Ոչ ամեն մարդ, որ Ինձ «Տեր, Տեր» է ասում, Երկնքի Արքայությունը կմտնի, այլ նա՝ ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է: Այն օրը շատերն ինձ պիտի ասեն. «Տեր, Տեր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով բազում զորավոր գործեր արեցինք»: Եվ այն ժամանակ Ես նրանց պիտի ասեմ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռու կացեք Ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն եք գործում» (Մատթ. 7:21-23): Այստեղից մենք տեսնում ենք, որ եթե մարդը մարգարեանում է, հրաշքներ է գործում, դևեր է հանում, բայց ոչ Քրիստոսի զորությամբ, Ով երբեք չի ճանաչել նման մարդկանց, թեև նրանք կարծում են, թե դա կատարում են Նրա անվամբ, այդ ժամանակ, անկասկած, սրանք գործում են ոչ այլ կերպ, այլ հենց սատանայական զորությամբ: Այդ պատճառով հրաշագործությունը և մարգարեացումը չեն հանդիսանում սրբության նշան, ինչպես այդ մասին արդարացիորեն խոսում են սուրբ հայրերը: Սրբության նշան է հանդիսանում սերը և հատկապես՝ խոնարհությունը, իհարկե, ճշմարիտ հավատի առկայությամբ:

Բայց տվյալ պարագայում մեզ չպետք է այնքան անհանգստություն պատճառեն այլափառները, որքան մեր սեփական հոգու վիճակը: Մենք պետք է հասկանանք, որ արտաքին նշանները, ինչպիսին են, օրինակ՝ մարգարեանալը, ինչը Պողոս Առաքյալը կոչում է բարձրագույն պարգև, մեզ համար այդ չպետք է ձգտելի լինի, մենք պետք է նաև չափազանց ուշադիր լինենք նույնիսկ այն ժամանակ, երբ մեր մեջ չնչին հոգևոր փոփոխություն ենք տեսնում: Չեմ կարծում, որ մեր քույրերից որևէ մեկը արժանացած լինի մարգարեական

շնորհի, սակայն որոշ ավելի փոքր հոգևոր ձեռքբերումներ նույնպես կարող են մեր կողմից ընդունվել որպես մեծ առաջխաղացման նշան: Ստացվում է, որ մարդը ճշմարիտ առաքինություն է ձեռք բերում և այդ արդեն առիթ է հանդիսանում նրա մեջ առավելագույն հպարտության համար: Մարդը իր հոգևոր վիճակի մասին իբր ճշմարիտ կարծիք ունենալով ոչ միայն կորցնում է այդ առաքինությունը, այլ ընկնում է նաև հպարտության ահասարսուռ գուբը: Նա սկսում է իր մասին մտածել, թե իբր ինքը Քրիստոսի անվամբ դևեր է քշում, եթե ոչ ուրիշներից, ապա իր հոգուց՝ իբր բուժում է կրքերից, թեկուզ ոչ ուրիշներին, այլ՝ իրեն, իսկ իրականում պարզվում է, որ Տերը իրեն երբեք չի ճանաչել: Այդ պատճառով մենք պետք է չափազանց զգույշ լինենք: Եթե սատանան փորձեց ոչ թե մի ինչ-որ անօրեն մարդու, այլ մարդկանց, որոնք հասել են մեծ պարգևների և Հիսուս Քրիստոսի անվամբ մեծ հրաշքներ են գործում, սակայն իրականում բոլորովին օտար են Նրա համար, ապա չափազանց մեծ զգուշություն և նույնիսկ երկյուղ պիտի ունենանք մենք՝ մարդիկս, որ ունենք շատ սովորական ընդունակություններ և քիչ նախանձախնդրություն: Աշխարհի վախճանի մասին խոսելիս Փրկիչը նույնպես շատ է ասում սուտ մարգարեների և, ընդհանրապես, կեղծ հոգևոր վիճակի մասին: Ես չեմ մեջ բերի բոլոր ավետարանիչներին, որովհետև նրանք հաճախ կրկնում են մեկը մյուսին, այլ կխոսեմ միայն Մատթեոսի Ավետարանից. «Հիսուս տաճարից դուրս ելած՝ գնում էր. և աշակերտները մոտեցան՝ Նրան ցույց տալու տաճարի շինությունները: Եվ Նա պատասխանեց ու նրանց ասաց. ««Տեսնո՞ւմ եք այդ ամենը. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդտեղ չպիտի մնա քար քարի վրա, որ չքանդվի»: Եվ մինչդեռ նստած էր Ձիթենյաց լեռան վրա, աշակերտները առանձին մոտեցան Նրան ու ասացին. «Ասա մեզ, այդ ե՞րբ կլինի, և կամ Քո գալստյան ու այս աշխարհի վախճանի նշանն ի՞նչ կլինի»: Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Զգույշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի . . .»» (Մատթ. 24:1-4): Ուշադրություն դարձրեք այս խոսքերի վրա՝ «գուցե մեկը ձեզ խաբի». դա նշանակում է, որ մենք պետք է զգուշանանք ամեն տեսակ սուտ մարգարեներից, սուտ քրիստոսներից: Սակայն, չէ՞ որ այս խաբեբաները նույնպես ինչ-որ տեղից են ի հայտ եկել, չէ՞ որ մի ժամանակ նրանք էլ են եղել բարի հոգևոր վիճակում, բայց դա դարձել է սուտ, վերածվել պատրանքի:

«Որովհետև շատերը կգան Իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը և շատերին կմոլորեցնեն» (Մատթ. 24:5): Եվ նորից Փրկիչն ասում է. «Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն . . . Այն ժամանակ եթե մեկը ձեզ ասի՝ ահա Քրիստոսը այստեղ է կամ այնտեղ՝ չհավատաք նրան, որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի ելնեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ Աստծո ընտրյալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթե հնար լինի» (Մատթ. 24:11, 23-24): Ուշադրություն դարձնենք հետևյալ խոսքերին. «ահա Քրիստոսը այստեղ է կամ այնտեղ, չհավատաք նրան»: Չէ՞ որ մենք էլ ենք Նրան հաճախ փնտրում ոչ այնտեղ, որտեղ հարկավոր է: Եթե մենք անմտորեն փափագենք բարձրագույն հոգևոր վիճակներ և առանց խոնարհության սկսենք ձգտել դրան, ապա մենք էլ կարող ենք վտանգի ենթարկվել՝ ընկնելով պատրանքի մեջ. չէ՞ որ ասված է, որ սատանան ցանկանում է պատրել նաև ընտրյալներին, այսինքն՝ մարդկանց, ովքեր ճշմարիտ կերպով գոհացնում են Աստծուն:

Պատրված կամ պատրվելու վտանգի մեջ գտնվող մարդը հաճախ ունենում է ճիշտ հոգևոր հասկացողություն: Այդ ճշմարիտ կարծիքը հոգու փրկության այս կամ այն կարևոր առարկաների շուրջ՝ նրան հպարտության առիթ է տալիս, և իր սեփական աչքերի առջև դարձնում է յուրահատուկ, նշանավոր: Իսկ երբ հերթը հասնում է գործին, ապա պարզվում է, որ նա նույնիսկ տարրական բաներ չի հասկանում, որոնց մասին քիչ առաջ վստահաբար խոսում էր: Այդ պատճառով մենք չպետք է մեզ հանգստացնենք այն բանով, որ ճշմարիտ դատողություն ունենք հոգևոր բաների մասին, օրինակ՝ Հիսուսի աղոթքի, խոնարհության, ապաշխարության, հնազանդության, խորհուրդների բացահայտման մասին և այլն: Ճշմարիտ հասկացողությունը դա դեռ կատարում չէ: Ավելին, երբ հերթը հասնում է գործին, թեորեական

հասկացողությունը, ինչը մենք ճիշտ էինք պատկերացնում, անհիմն է թվում, այսինքն՝ մենք հասկանում ենք, որ հոգևորի մասին սխալ ենք դատել, և միայն ուրիշների ու մեր սեփական աչքերին իմաստուն թվացել: Նմանատիպ օրինակ կա Ավետարանում. «Եվ ահա օրինականներից մեկը վեր կացավ, փորձում էր Նրան և ասում. «Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ»: Եվ Նա նրան ասաց. «Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես ընթերցում»: Սա պատասխանեց և ասաց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ճիշտ պատասխան տվեցիր, այդ արա և կփրկվես»» (Ղուկ. 10:25-28): Այսինքն, օրինականի պատասխանը կատարյալ ճշմարտություն էր, բայց նրա հաջորդ խոսքը, որ բերել էր իր արդարացմանը, իրականում ի հայտ է բերում իր ասածը կատարելու անկարողությունը. «Եվ նա կամենալով ինքն իրեն արդարացնել, ասաց Հիսուսին. «Իսկ ո՞վ է իմ ընկերը» (Ղուկ. 10:29): Քիչ առաջ նա ճիշտ ասաց, որ պետք է սիրել Աստծուն և մերձավորին, իսկ երբ Փրկիչն ասաց. «Արա այդ և կապրես», օրինականը հանկարծ ցույց է տալիս, որ չգիտի, թե ով է իր մերձավորը, այսինքն՝ որ իրականում իր մեջ սեր չկա, այլ ինքը դրա մասին միայն որոշ գաղափարներ ունի և չի հասկանում, որ սերը պետք է գործի վերածել: Չէ որ իրականում մերձավորին սիրող մարդը չի հարցնի, թե ով է իր մերձավորը, նա փորձով արդեն այդ գիտի: Այդ հարցով օրինականը ցույց տվեց իր հոգևոր դատարկությունը:

Ավետարանում պատրված մարդու օրինակ է հանդիսանում նաև փարիսեցին՝ հայտնի առակից, որը ըստ Իգնատի եպիսկոպոսի (Բրյանչանինով) դասակարգման, կարող է վերաբերվել նրան, ով գտնվում է «կարծիք» կոչվող պատրանքի մեջ. «Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և ինքն իրեն այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, և կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասնորդ եմ տալիս իմ ամբողջ եկամուտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը և ասում. «Աստված, ներիր ինձ՝ մեղավորիս»: Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետև, ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. 18:10-14): Ահա մենք տեսնում ենք պատրված փարիսեցուն՝ բոլորին արհամարհող, և իրենից հեռու գտնվողներին և իր աչքի առջև եղողներին, ինչպես այդ մաքսավորին: Նա իրեն բարեպաշտ էր համարում միայն այն բանի համար, որ կատարում էր ամենահասարակ ու տարրական առաքինությունները, իսկ դրանից այն կողմ ուրիշ ոչինչ չէր տեսնում: Այդպես և մենք. մի չնչին բան ենք անում, ենթադրենք, ճշտապահորեն կատարում ենք աղոթակարգը, կարծես թե հնազանդվում ենք և այլն, դրանով իսկ հաճախ սկսում ենք հպարտանալ՝ կեղծ պատկերացում կազմելով մեր «բարեպաշտության» մասին: Եվ գտնվելով այդպիսի վիճակում՝ կարող ենք պատրանքի մեջ ընկնել՝ այդ բառի ամենասարսափելի իմաստով, այսինքն՝ սկսենք ապրել կեղծ հոգևոր զգացումներ: Չէ՞ որ նա, ով մարգարեանում էր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ, իսկ իրականում պարզվեց, որ Նրան օտար է, ակնհայտորեն տեսիլք կամ հայտնություն էր ունեցել, այլ ոչ թե ուղղակի հնարել էր իր մարգարեությունը: Այդ մարդու մասին կարելի է ասել, որ չափազանց հեռու է գնացել: Տեր Հիսուս Քրիստոսը, իհարկե, չնույնացրեց Իր աշակերտներին մոլորված փարիսեցիների, սադուկեցիների և այն ժողովրդի հետ, որոնք երբեմն գտնվում էին այդ մարդկանց ազդեցության տակ, սակայն Նա նախազգուշացրեց Իր հետևորդներին. «Զգույշ եղեք սադուկեցիների և փարիսեցիների խմորից» (Մատթ. 16:6): Սա նշանակում է, որ կարելի է լինել Փրկչի աշակերտը և միաժամանակ իր մեջ ունենալ հպարտության, սնափառության, կարծեցյալ բարեպաշտության և գլուխգովանության խմորում: Ծայրահեղ դեպքում դա նույնիսկ բերում է

բացահայտ կեղծ հոգևոր վիճակի, երբ մարդը կարծում է, թե իբր ինքն այնքան մոտ է Տիրոջը, որ հրաշքներ է գործում և Նրա անվամբ մարգարեանում է, իսկ իրականում նման մարդը Նրան բոլորովին օտար է:

Վերջում մեջբերեմ Փրկչի խոսքը այն մասին, թե ինչպես պետք է գա Աստծո Արքայությունը: Իհարկե, հենց փարիսեցու և մաքսավորի առակից պետք է հետևություն անել, որ ճշմարիտ քրիստոնյան պետք է ապաշխարության հոգի ունենա: Որտեղ ապաշխարություն կա, այնտեղ կենտրոնացում է, ուշադրություն, զսպվածություն, այնտեղ հնարավոր է նաև ճշմարիտ արդարացում: Ձղջացող մաքսավորը տաճարից դուրս եկավ առավել արդարացած, քան կարծեցյալ բարեպաշտ փարիսեցին՝ ինքն իրեն բարեպաշտ հռչակող և մյուսներին նվաստացնող: «Երբ փարիսեցիների կողմից հարց տրվեց», այսինքն՝ հարցվեց այն մարդկանց կողմից, ովքեր չունեին ճշմարիտ հասկացողություն հոգևոր կյանքի մասին և գտնում էին, որ միայն գործի արտաքին կողմը՝ հաճախ սնափառության և հպարտության հետ միավորված, կփրկի իրենց և մյուս ազգերի համեմատ իրենց կդարձնի առանձնահատուկ, Աստծո ընտրյալներ. «Երբ փարիսեցիների կողմից հարց տրվեց, թե՝ ե՞րբ պիտի գա Աստծո Արքայությունը, Նա պատասխանեց և ասաց. «Աստծո Արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստծո Արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. 17:20-21): Այս խոսքերը Սուրբ Իսահակ Ասորին բացահայտում է հետևյալ կերպ. ««Աստծո Արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս», այն իմաստով, որ երբ մենք նրան սպասում և փնտրում ենք, նա չի գալիս, իսկ երբ խոնարհվում ենք և մեզ բոլորովին անարժան ենք համարում դրան, այն ժամանակ նա բացվում է մեր մեջ ամենահամոզիչ ձևով, այնպես, որ մենք զգում ենք և ապրում այդ՝ այլևս կարիք չունենալով ոչ մի ապացույցի, մեր հոգևոր փորձի ոչ մի արտաքին հավաստման: Ես դա ասում եմ ոչ թե այն բանի համար, որ մենք վստահենք մեզ, այլ որպեսզի հասկանանք, որ մարդը, որի հոգևոր ապրումները կեղծ են, նույնիսկ եթե հրաշքներ էլ է գործում, միշտ տատանվում է»:

Երբ մարդը գտնվում է ճշմարիտ հոգևոր վիճակում, այդ ժամանակ Աստծո Արքայությունը իսկապես բացվում է նրա մեջ: Եթե որոշ ճգնավորներ արժանանում են ինչ – որ տեսիլքների, ապա նախապես նրանք հոգում և սրտում զգում են ճշմարիտ շնորհի հովը: Ինչպիսի՞ն են ճշմարիտ շնորհի նշանները: Ես այդ մասին կարճ կխոսեմ, միայն ամենակարևորների մասին. երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը հարությունից հետո հայտնվեց Իր աշակերտներին, Նա ամենից առաջ նրանց ասաց. «Խաղաղություն ձեզ» (Հովհ. 20:19): Հենց խաղաղությունն է հանդիսանում շնորհի ներգործության ամենագլխավոր, առաջին և պարտադիր նշանը, կապ չունի՝ լալի՞ս ես դու և զղջում, թե՞ ցնծում ես և գոհություն հայտնում Աստծուն. խաղաղության առկայության ժամանակ տարբերվում է ճշմարիտ հոգևոր ապրումները կեղծ հոգեվիճակից: Պետք է նախազգուշացնենք, որ բազում սկսնակներ չկարողանալով ճիշտ գնահատել իրենց վիճակը՝ կարող են «խաղաղություն» զգալ ոչ հոգևոր պատճառներով, օրինակ՝ իրենց որևէ կիրքը բավարարելու պատճառով: Ենթադրենք մարդը տոնակատարության ժամանակ կուշտ կերել է և նրա հոգում ինչ-որ հանգստություն է հաստատվել. նրան թվում է, թե դա էլ հենց խաղաղությունն է: Հասկանալի է, որ այստեղ ընդհանուր ոչինչ չկա Քրիստոսի շնորհալի խաղաղության հետ, այդպիսի մարդուն դիր իր համար տհաճ մի որևէ գործի մեջ՝ և նրա «խաղաղությունը» իսկույն կչքանա: Իհարկե, լինում են նաև ավելի կոպիտ, ո՛չ այդքան անմեղ կրքերի դրսևորումներ, որոնցից հետո կրքին գոհացնող մարդու հոգում հանգստության նման մի ինչ-որ բան է իջնում: Ենթադրենք, թե որևէ մեկը նրան բարկացրել է, և նա ոչ մի կերպ չի կարողանում հանգստություն գտնել, մինչև վերջապես չասի իրեն վրդովեցնողին այն ամենը, ինչ նրա մասին մտածում էր: Եվ միայն դրանից հետո նա կհանգստանա, բայց այդ խաղաղությունը Քրիստոսի օրհնյալ խաղաղության հետ որևէ առնչություն չունի, քանզի անձը իր կրքին բավարարություն տալով այն հագեցրեց: Սկսնակը դժվարությամբ է տարբերում Տիրոջ խաղաղությունը կրքին բավարարություն տալու զգացումից, սրանից ելնելով պետք է զգուշանալ, որպեսզի ամեն մի նմանօրինակ զգացում շնորհի

խաղաղությանը չվերագրել, քանզի դրանք զանազանելու իմաստությունը բոլորի համար չէ: Բացի դրանից, Քրիստոսի խաղաղության մասին իմ կողմից բոլոր ասվածները առավելապես թեորեատիկ բնույթ ունեն, և շարադրեցի այն պատճառով, որպեսզի դուք ընդհանուր պատկերացում ունենաք ճշմարիտ հոգևոր վիճակը պատրանքից տարբերելու վերաբերյալ:

Կան նաև պատրանքի արտաքին նշաններ, որոնց մասին գրել են բազում սուրբ հայրեր, օրինակ՝ Իգնատի եպիսկոպոսը (Բրյանչանինով), այդ մասին ասվում է նաև «Դոբրոտոլյուբիա» գրքում: Պատրանքը նկարագրվում է իր հետևյալ դրսևորումներով. աղոթքի ժամանակ կարող է անուշահոտություն բուրել, աչքերի առաջ կարմիր կայծեր առաջանալ: Ի դեպ նշանավոր յոգ Վիվեկանդան, որը հռչակավոր էր 20-րդ դարում Եվրոպայում և Ամերիկայում, ցույց էր տալիս հենց նույն նշանները՝ դրանք կոչելով ճշմարիտ հոգևոր վիճակի դրսևորումներ: Պատրանքի նշանների նկարագրությունը սուրբ հայրերի կողմից և հոգևոր արագ աճի նշանների թվարկումը Վիվեկանդայի տեսանկյունից լիովին համապատասխանում են, սակայն տարբեր կերպ են գնահատվում: Պատրանքը կարող է դրսևորվել նաև տարբեր ձայների լսողությամբ և նմանատիպ այլ կերպերով. դևերը հաճախ օգտագործում են շնության կիրքը, որպեսզի խաբեն ճգնավորին, որը երբեք չի զգացել ճշմարիտ հոգևոր բավականություն: Նրանք առաջարկում են նրան՝ հաճույք ստանալ շնության կրքով, որ գործում է խորամանկորեն, քողարկված ձևով, և ճգնավորը ընդունում է այդ հաճույքը, քանի որ այն չի արտահայտվում կոպիտ վավաշոտությամբ և այդպիսի նուրբ, գաղտնի ցանկասիրությունը վերագրում է շնորհին: Սնափառությունը և հպարտությունը նույնպես շատ են սփոփում մարդուն՝ բերելով նրան հանգստության նման մի վիճակի: Դա տարբեր ձևերով է դրսևորվում: Երբեմն մարդիկ ցանկանում են խրախուսվել իրենց նմաններից, երբեմն էլ ա՛յն աստիճան են տրվում, հրճվում հպարտությամբ, որ արհամարհանքով են նայում մարդկային կարծիքին: Անփորձ քրիստոնյան նայելով այդպիսի մարդկանցից որևէ մեկին՝ կարող է նույնիսկ մտածել, որ իբր իր առջև խոնարհ ու հեզ մարդ է՝ վիրավորանքներն ու ստորացումները համբերությամբ կրող: Այդպիսի վարքի օրինակ է բերում սուրբ աբբա Դորոթեոսը: Նա մի անգամ երիտասարդ վանականի տեսավ, որը ստորացումներն ու վիրավորանքները մեծ թեթևությամբ կրում էր, և զարմացավ, որ այդպիսի երիտասարդ տարիքում այդ վանականը հասել է արտասովոր խոնարհության: Մոտենալով նրան՝ հարցրեց. «Ասա՛ ինձ, եղբայր, ինչպե՞ս ես կարողանում հանգստությամբ վերաբերել քեզ հասցված վիրավորանքներին»: Իսկ նա պատասխանում է. «Ինձ ի՞նչ այդ քոսոտ շների հաչելը»: Այդ ժամանակ աբբա Դորոթեոսը չցանկանալով նրան դատել՝ հեռացավ նրա մոտից հետևյալ խոսքերով. «Այս եղբայրը գտել է իր ճանապարհը»: Այսպիսի ճանապարհը, իհարկե, սուտ է. մարդը բոլորին արհամարհում է, այդ պատճառով էլ մարդկային վիրավորանքները նրա համար կարծես թե գոյություն չունեն: Այսպիսով, հպարտությունը պատրանքի նշաններից մեկն է, որ մարդուն միայն արտաքինից է անխոցելի դարձնում:

Երբեմն սուտ հոգևոր վիճակի նշան է հանդիսանում նաև կրքերի կարծեցյալ բացակայությունը: Ըստ Հովհաննես Սանդուղքի՝ մի կիրքը (նա հավանաբար ամենից առաջ նկատի ուներ հպարտությունը) մարդու մեջ փոխարինում է մյուսներին: Իսկապես, դևերը ժամանակավորապես հետ են քաշվում ճգնավորից, որպեսզի նա չանհանգստանա, չսկսի պայքարել: Իսկ հետո, երբ հմայվածությունը անցնում է, և նա հանկարծ գիտակցում է, որ պատրանքի մեջ է, նրա մոտ հաճախ ուժգին պատերազմ է սկսվում: Ավելի հաճախ դա շնության պատերազմ է, որովհետև այն մարդուն շատ է ստորացնում և ակամա խոնարհեցնում: Սուրբ հայրերն ասում են, որ ավելի լավ է աղբի հետ կռվել, քան տրվել հպարտությանը: «Աղբ» ասելով նրանք նկատի ունեն հենց գաղտնի շնության կիրքը:

Ես մոտենում եմ շատ լուրջ պահի և ինձ համար կարևոր է, որ դուք ինձ ճիշտ հասկանաք: Ես խոսում եմ միայն ամենաընդհանուր բաների մասին և քնարկում միայն տեսական հարցեր, իսկ կոնկրետ դեպքերում պետք է ամեն ինչ որոշեք ձեր ուսուցիչների հետ:

Պատրանքի արտաքին ինչպիսի՞ նշանների մասին կարելի է դեռ խոսել: Երբեմն մարդը կարող է նույնիսկ կարծել, որ անդադար աղոթում է: Վերջերս ես կարդացի վարդապետ Ռաֆայելի հետաքրքիր հուշերը ծայրագույն վարդապետ, ծեր Սերաֆիմի մասին: Ինչը 20–րդ դարի 50-60-ական թթ. ճգնավորների մասին էր, որտեղ գրված էր մի շատ երիտասարդ սքեմավորուհու մասին, որը գաղտնապես վանական ուխտ էր արել և թե իբր նա անդադար աղոթքի շնորհ ուներ: Եվ ահա պարզվում է, որ այդ սքեմավորուհին մի անգամ գալիս է ծայրագույն վարդապետ Սերաֆիմի՝ բազմափորձ ծերի մոտ, որին ես չեմ կարող չվստահել: Ծերը նրան որոշ խրատներ է տալիս, իսկ նա դրանցից ոչ մեկը չի ընդունում, և ծերը հասկանում է, որ նա պատրանքի մեջ է և ոչ մի օր էլ անդադար աղոթքի մեջ չի եղել: Հայր Սերաֆիմը նաև ասաց, որ այնպիսի վիճակ է լինում (այս անգամ նա ուրիշ միանձնուհու նկատի ուներ), երբ որևէ աղոթողի թվում է, թե ինքը անդադար աղոթում է, իսկ իրականում դա միայն պատրանքին մոտ մի վիճակ է, որովհետև նա վարժվում է անդադար աղոթքի այնպես, ինչպես մեկ ուրիշը վարժվում է զազրախոսությանը, այսինքն՝ դա շնորհի արդյունք չի հանդիսանում, այլ միայն՝ սովորություն: Անփորձ մարդը, ով չգիտի, թե իրականում ինչ է անդադար աղոթքը, նույնիսկ տեսական պատկերացում չունի դրա մասին, սկսում է կարծել, թե ունի այդ, և պատմում է ուրիշներին: Եթե այդպիսի անփորձ քրիստոնյան հանդիպում է փորձառու հոգևոր մարդու և սկսում նրան պատմել իր հոգևոր վիճակի մասին (այս խրատը հատկապես վերաբերվում է կրոնավորուհիներին), ապա վերջինս պետք է նրան մանրամասնորեն հարցաքննի, որովհետև առաջին հայացքից անէական մանրուքը կարող է ցույց տալ, որ իրականում մարդը ուղղակի չի հասկանում այն, ինչի մասին պատմում է, այլ իր ապրումների մասին միայն «երևակայում» է: Ինչ-որ մեկը տգիտության պատճառով իր մասին չգիտես ինչ է խոսում և իր վիճակը հոգևոր է համարում, իսկ մյուսը՝ ընդհակառակը, կարդալով սուրբ հայրերի մասին և չպատկերացնելով, թե նրանք իրականում ինչ նկատի ունեին, զարգացած վառ երևակայության պատճառով կարդացածը նույնացնում է իր վիճակի հետ: Նա պատմում է սուրբ հայրերի բառերով այն, ինչ կարդացել ու հասկացել է գրքից, այլ ոչ թե իր սեփական ապրումները: Ստացվում է, որ այդպիսին և՛ ինքն է պատրվում, և՛ մոլորության մեջ է գցում ուրիշ մարդկանց, նույնիսկ՝ հոգևոր փորձառություն ունեցողներին: Այդ պատճառով՝ այնպիսի մարդկանց հետ հարաբերության դեպքում, ովքեր պատմում են իրենց որևէ հոգևոր ապրումների մասին, պետք է հատուկ ուշադրություն դարձնել և մանրազնին կերպով հարց ու փորձ անել նույնիսկ աննշան բաներից: Մեկը չի կարողանում նկարագրել և ճշմարիտ հոգևոր վիճակը պարզությամբ է բացատրում, իսկ մյուսը՝ ընդհակառակը, պատրված կամ երևակայական վիճակը, սովորած կամ յուրացրած տերմինաբանության շնորհիվ պատկերում է որպես ինչ-որ նշանակություն ունեցող մի բան: Պետք է չափազանց զգույշ լինել, որպեսզի չմոլորվես այդպիսի նուրբ և միևնույն ժամանակ կյանքի համար կարևոր պարագաներով:

Ես մանրամասնորեն չեմ կրկնի Իգնատի եպիսկոպոսի (Բրյանչանինով) ուսուցումը այն մասին, որ սկսնակի համար ամենալավ, անվտանգ միջոցը ապաշխարությունն է: Բավական է այն, որ փարիսեցու ու մաքսավորի առակում մենք տեսնում ենք ինչպես կարծեցյալ բարեպաշտության, երևակայական հոգևոր վիճակի, այնպես էլ ճշմարիտ բարեպաշտության օրինակներ: Վերջինս բացառապես հիմնված է, այսպես ասած՝ աղոթական ապաշխարության վրա: Եկեք հաստատվենք այս ուղղության վրա, ուսումնասիրենք սուրբ հայրերին, չափազանց զգուշությամբ վերաբերվենք մեր հոգևոր ապրումներին, միշտ մանրազնին կերպով մեզ ստուգենք: Ուղղափառ ճգնավորականությունը տարբերվում է այլափառ ճգնավորականության փորձառությունից, օրինակ՝ կաթոլիկների, առավել ևս այլ կրոնների ճգնավորական ուսմունքներից, չափազանց զգուշավորությամբ, զսպվածությամբ և առողջ դատողությամբ: Անհրաժեշտ է ունենալ և՛ համարձակություն, և՛ զգուշավորություն, և՛ զգոնություն, այդ ժամանակ մենք իմաստուն կերպով կանցնենք մեր փրկության ճանապարհը: Այն անվտանգ համարելը թեթևամտություն կլինի, ընդհակառակը, այդ ճանապարհը չափազանց վտանգավոր է, այդ պատճառով այստեղ անհրաժեշտ է իմաստություն,

զգուշություն, առողջ դատողություն, միաժամանակ՝ նախանձախնդրություն, համարձակություն և Աստծո հանդեպ բոցավառ սեր:

Հարց – Ի՞նչ է նշանակում. «Խոնարհությամբ ձգտենք բարձրագույն հոգևոր պարգևի»:

Պատասխան – Նշանակում է՝ ճանաչել սեփական հոգևոր կառուցվածքը և ձգտել կատարելագործման՝ լրջորեն անձդ գնահատելով, այսինքն՝ պարտադրել քեզ, բայց միևնույն ժամանակ հասկանալ, թե ինչն է ըստ քո ուժերի: Մենք ի վիճակի չենք ստիպելու մեզ՝ անդադար աղոթել, ստիպելու մեզ անկրքության, ես դեռ չեմ խոսում հրաշագործության մասին: Հնարավոր է նաև հետևյալը. խոնարհության հետևանքով մարդիկ կորցնում են նախանձախնդրությունը, դա արդեն սխալ է: Այդ պատճառով քեզ պետք է պարտադրես և ձգտես բարձրին, բայց միաժամանակ իմանաս քո չափը: Թեև երբեմն պատահում է, որ Տերն այցելում է մարդուն այնպես, որ այդ մարդու ուժերից վեր է լինում, նման իրավիճակում պետք է նույնպես ճիշտ վերաբերմունք ունենալ: Պետք է հասկանալ, որ շնորհը ըստ արժանիքի չի տրվում: Իսկ եթե մենք գտնում ենք, որ անարժան ենք շնորհի, նշանակում է՝ համարում ենք, որ մենք դրան դեռ չենք արժանացել, և եթե էլի մի ինչ-որ բան անենք՝ կարժանանանք: Բայց երբեմն Տերը շնորհը կարծես նախօրոք է տալիս, ամեն արժանիքներից վեր, այդ պատճառով շնորհածը պետք է գնահատել ոչ թե ըստ սեփական արժանիքի, այլ՝ կողմնորոշվելով նրանով, թե ինչպես են դա նկարագրում սուրբ հայրերը, նայել՝ համընկնո՞ւմ է արդյոք դա նրանց բացատրություններին՝ այս կամ այն հոգևոր ապրումների մասին, թե՞ ոչ: Այդ ժամանակ պետք չէ քննել՝ արժանի՞ ենք մենք դրան, թե՞ ոչ (որովհետև մենք ոչ միայն արժանի չենք վանքում կենցաղավարելու, այլ՝ ընդհանրապես ապրելու), այդպիսի մոտեցումը նույնպես հպարտության թաքուն դրսևորում է:

Հարց – Եթե սքեմավորուհին, որի մասին դուք պատմեցիք, պատրանքի մեջ էր, ապա ինչպե՞ս է նա կարողացել տարիներով այդպիսի խստագույն կյանք վարել՝ չունենալով Աստծո շնորհը:

Պատասխան – Հենց պատրվածներն են խստագույն կյանք վարում, օրինակ՝ յոգերը մարմնավոր ավելի խիստ ճգնություններ են անում, քան ուղղափառ ճգնավորները: Յոգի վրա ապակի են շարում և ավտոմեքենա է նրա վրայով անցնում, հողի մեջ են նրան թաղում, հետո հանում են, և նա կենդանի է մնում: Իսկ Պորֆիրի Իվանովը՝ սեփական աղանդի հիմնադիրը, ընդհանրապես 100 օր ո՛չ խմեց, և ո՛չ կերավ: Ինչպե՞ս է հնարավոր այս ամենը կատարել:

Հարց – Ի՞նչ են նշանակում Իգնատի եպիսկոպոսի հետևյալ խոսքերը. «Ով համարում է, թե ինքը պատրանքի մեջ չէ, նա արդեն պատրված է»:

Պատասխան – Մենք բոլորս էլ մի ինչ-որ աստիճանով ենթարկվում ենք պատրանքի ոգուն: Մեր մեջ կա հպարտություն, սնափառություն, մենք պատրվում ենք մեր կատարած որևէ գործով, ընդհանրապես պատրված ենք աշխարհի կողմից և մոռանում ենք, որ գոյություն ունի հավիտենականություն: Դա մեզ համար երկրորդական է դառնում և մենք ընկղմվում ենք ապականացուի մեջ: Այս ամենը կարելի է կոչել պատրանքի վիճակ: Երբ մենք դա գիտակցում ենք, ապա գոնե մեզ քննադատորեն ենք նայում, իսկ երբ մտածում ենք, որ մեզ մոտ ամեն ինչ կարգին է, այդ ժամանակ մեզ հետ կարող է պատահել ամեն տեսակ դժբախտություն:

Հարց – Հնարավո՞ր է, արդյոք, որ Տերը ծածկի մարդուց նրա հոգևոր վիճակը, որպեսզի նա չհպարտանա:

Պատասխան – Սուրբ հայրերն ասում են, որ շատ հասարակ մարդիկ կան, որոնցից թաքցվում է նրանց հոգևոր վիճակը, և նման օրինակ են բերում: Բայց ես միայն վախենում եմ, որ դուք չսկսեք մտածել ձեր մասին, թե ձեր պարզության պատճառով Տերը ձեզանից արդեն թաքցնում է ձեր բարձր հոգևոր վիճակը: Մի ծեր հնազանդության մեջ գտնվող վանական ուներ և նրան կարգադրեց որոշ գործեր անել, իսկ նա շփոթվեց և դրանով բարկացրեց ծերին: Ծերը չմտածված նրան ասաց՝ «մեռի՛ր», և նա ընկավ ու մեռավ:

Ծերը սարսափահար եղավ, նա չէր մտածում, որ իր խոսքերը այդքան զորություն ունեն: Այդժամ նա սկսեց խնդրել Աստծուց, որ հարություն տա իրեն հնազանդվողին, խոստանալով, որ այլևս նա երբեք այդպես անզգույշ չի խոսի: Եվ նրա աղոթքներով այդ հնազանդվողը կենդանացավ: Սրանից կարելի է հետևություն անել, որ հասարակ մարդը մեծ շնորհ ուներ, ինչը ինքն իր մեջ չէր տեսնում: Բայց ես մտածում եմ, որ մեզ մոտ հակառակն է պատահում. և հասարակներն ու ոչ հասարակները մտածում են, որ շնորհ ունեն, բայց իրականում չունեն: Դա առավել վտանգավոր իրավիճակ է:

Հարց – Արդյոք հնարավո՞ր է, որ որևէ պատերազմ թույլատրվի, օրինակ՝ շնության կամ ծուլության, որպեսզի մարդը չհպարտանա:

Պատասխան – Իհարկե հնարավոր է: Բայց դա չի նշանակում, որ եթե այդպիսի պատերազմ է թույլ տրվել, ապա պետք է դրա հանդեպ անհոգ գտնվել: Պետք է պայքարել, քանզի հենց այդպիսի պատերազմի դեպքում է խոնարհություն ձեռք բերվում, այլ ոչ թե այն ժամանակ, երբ մենք գործում ենք կրքից մղված: Իհարկե պատահում է, որ մարդը հարկադրաբար է խոնարհվում իր սայթաքումների պատճառով, բայց այդ դեպքում խոնարհ կարելի է կոչել նաև հարբեցողին, ով ընկած է դարպասների մոտ և չի կարողանում կանգնել: Նրա վրա բոլորը թքում են, իսկ նա ի վիճակի չէ պատասխանել. հասկանալի է, որ նա մի իմաստով խոնարհ է, բայց դա չի նշանակում, որ նման վիճակի պետք է ձգտել:

Հարց – Ներեցեք, ես չհասկացա. դուք մի զրույցի ժամանակ ասացիք, որ չպետք է որևէ հոգևոր պարգև փնտրել, իսկ մյուսում՝ թե քրիստոնյան, առավել ևս վանականը, այստեղ՝ երկրի վրա, արդեն կստանա իր պտուղները, եթե աշխատի: Ուրեմն, արդյոք պե՞տք է սպասել այստեղ վարձքի, ինչի մասին ասվում է Ավետարանում, և պե՞տք է արդյոք ձգտել ստանալու այն, թե՞ ոչ:

Պատասխան – Իսկապես, ես զրույցներից մեկի ժամանակ ասացի, որ պետք է ձգտել պարգևի, իսկ մյուսում՝ նախազգուշացրի, որ հնարավոր է պատրանքի մեջ ընկնել: Դա այն պատճառով, որ պետք է և՛ նախանձախնդրություն ունենալ, և՛ զգուշավորություն: Ամեն ինչ պետք է ճիշտ անել, իմաստությամբ: Ունենալով նախանձախնդրություն, բայց չունենալով զգուշավորություն ու դատողություն՝ կարելի է մոլորվել, սայթաքել, ընկնել և մահացու վերք ստանալ: Ձեզ լեռնագնացների կյանքից սպորտային օրինակ կբերեմ: Դա չի նշանակում, որ ես նրանց հավանություն եմ տալիս, ընդհակառակը, գտնում եմ, որ լեռնագնացությունը անմիտ զբաղմունք է. մարդ զուր տեղը վտանգում է իր կյանքը: Չէ՞ որ Պողոս Առաքյալն էլ ասելով՝ «Թեև բոլորն են վազում, բայց միայն մեկն է առնում հաղթության մրցանակը» (Ա Կորնթ. 9:24), չի արդարացնում սպորտը, այլ ուղղակի այնպիսի օրինակ է բերում, ինչը հասկանալի կլինի իր ընթերցողների համար: Այսպիսով, լեռնագնացը լեռ է բարձրանում և իր առջև նպատակ է դնում՝ հասնել գագաթին: Դրա համար նա պետք է ունենա նախանձախնդրություն, խիզախություն, համարձակություն, բայց միևնույն ժամանակ նաև պահի սահմանված կանոնները, հակառակ դեպքում նա ոչ միայն չի նվաճի բարձունքը, այլ, ընդհակառակը, մոտակա զառիթափից ցած կգլորվի: Այդպես էլ հոգևոր կյանքում է. մի կողմից մենք պետք է համարձակություն ունենանք, իսկ մյուս կողմից՝ զգուշավորություն: Իհարկե, պետք չէ զգուշավորության պատճառով ընդհանրապես ներքևում նստել, բայց նաև համարձակությունը այնպիսին չպետք է լինի, որ գործնականում ոչնչից չզգուշանանք, երբ իրագործում ենք մտածածը: Եթե մենք զգուշություն չունենանք, երբեք բարձունքի չենք հասնի:

Հարց – Ցույց տվեք պատրանքի առաջին արտաքին նշանները. ինչպե՞ս այն կարող է առաջանալ մեր մեջ:

Պատասխան – Կան պատրանքի բարոյական և ոչ անմիջական նշաններ. բարոյական նշաններն են՝ հպարտությունը, սնափառությունը, մերձավորներին արհամարհելը, եսասիրությունը, ինքնավստահությունը և այլն: Երբեմն այս ամենը կարող է ծածկվել խոնարհության դիմակի տակ, և շատ հպարտ մարդը հոգևոր կյանքում անփորձ մարդկանց աչքին կարող է խոնարհ երևալ: Իսկ պատրանքի ոչ

անմիջական նշաններն են՝ ինչ – որ երազներ, սխալ զգացողություններ կամ, հնարավոր է, նաև աղոթքի ժամանակ՝ տեսիլքներ: Այդ պատճառով էլ այն «պատրանք» է կոչվում, որպեսզի խաբի մարդուն, քանի որ կեղծ հոգևոր վիճակը նման է ճշմարտության, և անփորձ մարդը շփոթվում է: Ճշտությամբ որոշել, թե որն է պատրված վիճակը և որը՝ ճշմարիտ, դժվար է: Եթե հանկարծ մի որևէ սկսնակ միանձնուհի սկսում է մի բան զգալ, ինչը իրեն հատուկ չէ, այդ ժամանակ դա կասկածելի է, թեև չեմ ասում, որ սխալ է: Այստեղ մանրազնին ստուգում է պետք:

Հարց – Պատահում է այնպես, որ մարդ, ցանկանալով աղոթքի ժամանակ հոգում Աստծո հանդեպ սեր, խոնարհություն, զգալ իր մեջ նման զգացողություն է առաջացնում երևակայության միջոցով, մի որևէ պատկերով. դա նույնպե՞ս պատրանք է:

Պատասխան – Պետք չէ ոչինչ պատկերացնել, այլ միայն ուշադիր աղոթել: Եթե ուշադրություն լինի, ապա ամեն ինչ կլինի, այդ թվում նաև այնպիսի ճշմարիտ հոգևոր զգացողություններ, ինչպիսիք են խոնարհությունը և Աստծո հանդեպ սերը, թեև դրանք որպես կանոն միանգամից չեն հայտնվում, այլ երկարատև ջանքերից հետո: Բայց սկզբունքորեն ամեն ինչ կարող է կատարվել նաև արագ, եթե մարդը նախկինում տրամադրված է եղել այդ բանին: Աղոթքի նշաններով իսկ կարելի է կողմնորոշվել՝ ճի՞շտ է արդյոք աղոթքի ուղղությունը, թե՞ ոչ: Մարդ միայն պետք է համեմատի իր զգացողությունները այն բանի հետ, ինչ նկարագրում են սուրբ հայրերը: Օրինակ՝ իմ հոգում հանգստություն է և սուրբ հայրերը այդ մասին այդպես էլ ասում են, նշանակում է, որ իմ զգացողությունները ճիշտ են, իմ մեջ խաղաղություն է, այո, ճիշտ է, իմ մեջ ինքնանվաստացման զգացողություն է, կամ այնպիսի զգացողություն, որ ես բոլորից վատն եմ, նաև սուրբ հայրերն են այդ մասին գրում, ուրեմն ճիշտ է: Իսկ դու ինչպե՞ս կարող ես ձգտել խաղաղության կամ ինքնանվաստացման, եթե դա քեզանից կախված չէ, քանի որ մեր իշխանության մեջ մտնում է միայն մեզ հարկադրելը աղոթքի և, ընդհանրապես, ուշադրության: Պետք չէ ոչինչ պատկերացնել:

Հարց – Միշտ մտապահում եմ ձեր այն խոսքերը, որ պետք չէ մեզ վրա խաչ քաշել և համարել, որ մեզ համար բոլորովին անհնար է հոգևոր առաջադիմության մեջ նշանակալի որևէ չափի հասնել: Մյուս կողմից՝ ձեզ հետ զրուցելուց հետո ես այն եզրակացության եկա, որ մշտապես պատրանքի մեջ եմ գտնվում: Ի՞նչ խորհուրդ կտաք: Գործնականում ինչի՞ է պետք ձգտել:

Պատասխան – Իհարկե, ինչ վիճակում էլ որ լինես, եթե նույնիսկ պատրանքի մեջ էլ գտնվես, չի կարելի կարծել, թե դու ոչնչի չես հասնի: Պատրանք, պատրված վիճակ ցանկացած մարդու մոտ էլ կարող է լինել, և մենք պետք է միայն ուշադրությամբ մեզ հետևենք և ազատվենք այդ հարձակումից: Իգնատի եպիսկոպոսը գրել է (նաև դուք ինձ այդ հիշեցրիք), որ նա, ով ասում է, թե ինքը պատրանքի մեջ չէ, արդեն պատրված է: Այն գիտակցումը, որ մենք պատրանքի մեջ ենք գտնվում, դրանից նախազգուշանալու լավագույն միջոցն է, այդ պատճառով մենք պետք է հասկանանք, որ այն որոշ չափով մեր մեջ գործում է: Միևնույն ժամանակ պետք է ձգտել հոգևոր վիճակի նախ և առաջ ապաշխարության միջոցով, ինչը հատկապես պահպանում է մեզ կեղծ հոգևոր զգացողություններից: Սակայն պետք է հիշել, որ ապաշխարության ժամանակ էլ է հնարավոր պատրվել. կան նույնիսկ ապաշխարություն քարոզող աղանդներ: Օրինակ՝ Ռուսաստանում նման աղանդների անդամները (թեև ծիծաղելի է, բայց, այնուամենայնիվ, ունեն կողմնակիցներ և հետևորդներ) հենց այդպես էլ կոչվում էին՝ ապաշխարողներ: Նրանց նշանաբանն էր. «Չմեղանչես՝ չես ապաշխարի»: Նրանք մեկին թալանեցին, այնուհետև հանձնվեցին ոստիկանությանը և տաժանավայր ուղարկվեցին: Նման բան էր ասում նաև Ռասպուտինը:

Հարց – Եթե մարդը հեռանում է ուղղափառությունից, ապա կարելի՞ է ասել, թե բաժանման պատճառը պատրանքն է: Օրինակ՝ Տերտուղիանոսը (4–րդ դար) հեռացավ ուղղափառությունից, դարձավ հերձվածող.

մի՞թե սա նշանակում է, որ նա սկզբում պատրվել էր: Արդյոք կարելի՞ է հերետիկոսությունը պատրանք կոչել:

Պատասխան – Իհարկե՝ այո, ուղղափառությունից յուրաքանչյուր շեղում պատրանք է: Մոլորության հիմքը պարտադիր կերպով հանդիսանում է մարդու հոգու սխալ հոգևոր վիճակը, կեղծ հոգևորությունը: Կանոնում, ժամասացության տեքստերում հեթանոսությունը հաճախ պատրանք է անվանվում: Ինչ վերաբերվում է Տերտուղիանոսին, ապա նա, շարժվելով կեղծ նախանձախնդրությամբ՝ սկսեց քարոզել մոնտանականության հերետիկոսությունը: Նրան թվում էր, թե եկեղեցական համայնքի մեջ սառել է քրիստոնեական նախանձախնդրությունը: Այս հերձվածի առաջնորդները պատրված սուտ մարգարեներ Մոնտանիոսն ու Պրիսկիղան էին: Բայց ասում են, որ Տերտուղիանոսը կյանքի վերջում ապաշխարել է:

Հարց – Ի՞նչ եք կարծում, ընդհանրական աղոթքը ներգործո՞ւմ է, արդյոք, թշնամու ամբողջական բանակի վրա, տկարանո՞ւմ է նրանց զորությունը, աճում և դառնո՞ւմ է քրիստոնեական բանակը զորեղ: Չէ՞ որ, եթե համաշխարհային չարիքը չի նվազում, այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի աղոթելը:

Պատասխան – Իսկ ինչո՞ւ պարտադիր պետք է պայքարել համաշխարհային չարիքի դեմ: Մի՞թե քիչ է այն, որ ես անձամբ ուզում եմ փրկվել: Ստացվում է, որ եթե աղոթքի արդյունքում համաշխարհային չարիքը չի նվազում, ուրեմն կարիք չկա, որ ես աղոթեմ և փրկվեմ: Այժմ ուղղափառ մարդիկ իսկ շատ քիչ են մնացել, ինչո՞ւ մենք պետք է պարտադիր պայքարենք համաշխարհային չարիքի դեմ, երբ մարդիկ կործանվում են անգիտության, մեղքերի, աղանդավորության մեջ: Հարցի նման ձևակերպումը արդեն իսկ սխալ է. վանականից ամեն ժամ ինչ-որ բան են սպասում, վանականը պարտավոր է փրկել մարդկանց, պայքարել համաշխարհային չարիքի դեմ, նրանք պետք է այս անեն, այն անեն, բայց իրականում վանականը պետք է անձամբ փրկվի և վերջ: Նա վանական է, նա միայնակ է, իրենից բացի նա ոչ մեկի և ոչնչի մասին չի մտածում, ապրում է միայն փրկության համար, հավիտենականության համար, ինչպես ասում են՝ դուրս է եկել խաղից: Հունարենից վանական՝ «մոնախ» թարգմանաբար նշանակում է «միայնակ»: Վանականը միայն իրենից է վանում չարը: Խոստովանահայրը ըստ իր վիճակի պարտավոր է պատասխան տալ իր հոգևոր զավակների համար, իսկ ահա միանձնուհիների մենաստան նոր ոտք դրած Ն – ն ոչ ոքի համար պատասխանատվություն չի կրում, լավ կլինի, որ ինքը գոնե իր համար պատասխան տա: Ամեն ինչ այդքան պարզ չէ, որքան թվում է: Կարծես թե մարդ վանք գալով արդեն փրկված է, և այժմ պետք է համաշխարհային չարիքը վերացնի, ինչպես ծխի քուլա, ո՛չ, քեզ փրկիր Աստծո օգնությամբ: Մենք պետք է մտածենք ոչ թե համաշխարհային չարիքի, այլ՝ մեր փրկության մասին: Այդ վանամայրն է պատասխան տալիս իր վանքի քույրերի համար. նա կամա թե ակամա հարկադրված է մտածել նրանց փրկության մասին, ովքեր վստահված են իրեն Աստվածային նախախնամությամբ, այդպես էլ հոգևորականը, որին ձեռնադրության ժամանակ հանձնվում են միանձնուհիները: Իսկ եթե մենք սկսենք պայքարել համաշխարհային չարիքի դեմ, ապա դրանով երևան կհանենք մեր չափազանց մեծ հավակնությունը: Իհարկե, կան հոգևոր բարձր վիճակի հասած ճգնավորներ, ովքեր աղոթում են ամբողջ աշխարհի համար, բայց դա քչերին է վիճակված: Եթե ամբողջ սերնդի մեջ գոնե մի քանի այդպիսի մարդիկ գտնվեն, ապա դա էլ պետք է Աստծո ողորմությունը համարել: Պետք չէ հարցը այդպես կտրուկ դնել՝ արդյոք մենք նվազեցնո՞ւմ ենք համաշխարհային չարիքը, թե՞ ոչ. ես հարցը այդ կերպ չէի դնի: Մարդ հաղթանակ է տանում, երբ հաղթահարում է սեփական կրքերը, օրինակ՝ հպարտությունը կամ բարկությունը, այդ ժամանակ էլ նա Քրիստոսի զորքի մեջ է գտնվում: Իսկ եթե մենք պայքարենք էլ համաշխարհային չարիքի դեմ, ապա միայն այն իմաստով, որ վանք ենք մտնում, և դրանով մեծ հույս ենք ստանում և մեծ հնարավորություն՝ մեր փրկությամբ զբաղվելու համար: Եթե մարդ, գալով վանք, կատարելագործվում է, դառնում ճշմարիտ քրիստոնյա և հավիտենականություն է մտնում ապաշխարությամբ, և իմանալով, որ ինքը գալիք կյանքում ողորմություն կգտնի, ապա համաշխարհային

չարիքը տվյալ մարդու կողմից պարտվում է այդքանով: Մարդիկ վանք են գալիս փրկվելու համար, նրանք իրենց մեջ գտնվող չարի դեմ են պայքարում, և նրանցից ոչ ոք չպետք է հանդգնի որևէ մեծ բանի. դա ուղղակի անհեթեթություն կլինի: Չպետք է մտածել, որ մարդու փրկությունը չնչին բան է և դրան հեշտությամբ են հասնում, դա բնավ էլ այդպես չէ: Շատերը կարծում են, թե փրկությունը կայանում է նրանում, որ եկեղեցի գնան, երկրպագեն, խաչակնքեն, համբուրեն սրբապատկերը և վերջ, արդեն փրկված են. սուրբ հայրերն այդպես չէին մտածում փրկվողների մասին: Նույնիսկ հուսահատության մեջ ես ընկնում, երբ կարդում ես այն մասին, թե ինչպես են նրանք վախեցնում վանականներին՝ ասելով, թե նա, ով չհասնի անկրքության, չի կարող հավիտենական կյանքի հույս ունենալ:

Չի կարելի ասել, թե համաշխարհային չարիքը ամբողջովին նվազում է: Ոչ, այն փոքր-ինչ նվազում է, երբ մարդը գնում է վանք՝ դրանով մի ճամբարից տեղափոխվելով այլ ճամբար: Այն ավելի կնվազի, երբ նա սկսի պայքարել իր կրքերի դեմ և կատարելագործվի: Դա մեծ բան է, չէ՞ որ այդ մարդն էլ, ինչպես մյուս բոլորը, մեղավոր է և չարության կրող է հանդիսանում: Իսկ եթե այստեղ հավաքվեր 100 մարդ և բոլորը փրկվեին, ապա դա արդեն ավելի շատ կլինի. նույնիսկ՝ եթե փրկվի միայն մեկը: Չէ՞ որ հենց Տեր Հիսուս Քրիստոսն ասաց, որ մի մեղավորի դարձով երկնքում ավելի շատ են ուրախանում, քան 99 արդարներով, որոնք ապաշխարության կարիք չունեն: Ինչո՞ւ որոշ մարդիկ չեն հասկանում, որ խոսքը հավիտենականության մասին է, որ եթե նույնիսկ մի կործանված մարդ հանկարծ փրկվի, ապա երկնքում մեծ տոնախմբություն կլինի: Իսկ փրկվելը շատ դժվար է, դրա համար պետք է դնել ամբողջ կյանքը, շատ քրտինք, արյուն և արցունք թափել: Նույնիսկ եթե համաշխարհային չարիքը նվազի գեթ մի մարդով, տասով կամ հարյուրով, ապա դա էլ արդեն նշանակալի է, մեզ պետք չէ միլիարդներ հաշվել, դա մեր գործը չէ:

Հարց – Բայց չէ՞ որ դուք ասացիք, թե հայր Անդրեյը աղոթում էր ամբողջ աշխարհի համար:

Պատասխան – Հայր Անդրեյն աղոթում էր: Իսկ մենք չենք աղոթում: Մեզանից ո՞վ է ընդունակ աղոթել ամբողջ աշխարհի համար: Ես գտնում եմ, որ, այո, կան հոգևոր բարձր առաջադիմությունների հասած վանականներ, ովքեր աղոթում են ամբողջ աշխարհի համար և որոնց աղոթքը շատ ազդեցիկ է, օրինակ՝ Սիլուան ծերը, ծայրագույն վարդապետ Սոֆրոնին, հնարավոր է ուրիշ ճգնավորներ էլ կան այդպիսի առաջադիմությունների հասած, բայց դրանք հատուկ մարդիկ են, նրանց փորձառությունը վեր է մեր հասկացողությունից: Եվ պետք չէ այդ մարդկանց արժվային թռիչքի չափանիշները գործադրեն սովորական վանականներն ու միանձնուհիները, ովքեր մտածում են իրենց փրկության մասին:

Հարց – Կարելի՞ է, արդյոք, աղոթքի ժամանակ հարկադրել մեզ՝ ապաշխարության զգացում ունենալ, եթե այդպես հեշտ է ուշադրությունը պահել:

Պատասխան – Իհարկե, դա անհրաժեշտ է, բայց միայն չափավոր կերպով: Որովհետև ապաշխարությունը շնորհից բխող պարգև է, բռնությամբ այն չես կարող ստանալ: Ամենալավ մոտեցումը աղոթքին՝ ուշադրություն փնտրելն է, քեզ ուժով ապաշխարության պարտադրելը և մահվան մասին հիշելը՝ հասկանալով, որ եթե Աստծո շնորհը չլինի, ապա ինչպես հարկն է՝ այդ առաքինությունը մեր մեջ չի դրսևորվի: Այսինքն՝ պարտադրելը պետք է խելամտորեն լինի:

Հարց – Պե՞տք է, արդյոք, որ պատմենք մեր գիտելիքների մասին, որոնք վանքում ենք ստանում, եթե մեզ հարցնեն աշխարհականները: Ինչպե՞ս եք դուք վերաբերում աշխարհին քարոզելուն:

Պատասխան – Քանի որ մեզ մոտ մարդիկ են գալիս, ապա եթե մենք դրա օրհնությունն ունենք, պարտավոր ենք ուժերի ներածին չափով օգնել նրանց: Սակայն ամեն մեկը չի կարող խորհուրդ տալ, այդ պատճառով էլ մենք քննում ենք, թե ով և որքան է դրան ընդունակ: Կան քույրեր, որոնք պարտավոր են պատասխանել միայն այն ժամանակ, երբ իրենց դիմում են, իսկ մյուս դեպքերում նրանք պետք է լռեն: Եթե մեկը մեզ դիմում է, որ օգնենք, և դա չի խանգարում մեր վանական սխրագործությանը, ապա մենք կարող

ենք օգնություն ցուցաբերել միևնույն ժամանակ չմոռանալով մեր կոչման մասին: Իսկ եթե մեզ չեն դիմում, մենք պետք է խոնարհությամբ պահպանենք հանդարտությունը և մարդուն չստիպենք մեզ լսել: Իսկ մեզ մոտ հակառակն է ստացվում: Այդ թեմայով Կռիլովը մի լավ առակ ունի: Այն ամբողջովին չեմ կարդա, այլ միայն միտքը կասեմ: Մի հովիվ այծերի մի փոքր հոտ ուներ: Մի անգամ ձմռանը նա քարանձավում հանկարծ այծերի մի այլ հոտ է գտնում, բայց՝ վայրի այծերի, և մտածում է. «Ինչ լավ է, ձմռան ընթացքում ես վայրի այծերին կընտելացնեմ, իմ հոտը կմեծանա, և ես կհարստանամ»: Նա սկսում է նրանց կերակրել, բայց այնպես է ստացվում, որ ո՛չ ժամանակը, ո՛չ կերը բոլորի համար չի բավականացնում, և նա սկսում է իր այծերին արհամարհել, իսկ վայրի այծերին ավելի շատ սիրել ու խնամել. երբ գարունը բացվում է, վայրի այծերը սլանում են լեռներ, իսկ իր հոտը սատկում է: Այդպես էլ մեզ հետ կարող է պատահել. մարդիկ, ովքեր մեզ մոտ են գալիս, պատահում է, որ մենք արհամարհում ենք և գնում նրանց մոտ, ովքեր մեզ չեն ցանկանում լսել, և մնում ենք մենակ: Այդ պատճառով պետք է ամենից առաջ ուշադրություն դարձնել նրանց, ովքեր մեզ մոտ՝ եկեղեցի են գալիս իրենց հոգևոր հարցերով, և միայն հետո, եթե հատուկ ընդունակության տեր մարդիկ գտնվեն, կարելի է նրանց օրհնել, որ իրենք էլ ինչ-որ մի տեղ քարոզեն: Բայց բոլորը չեն կարող դրանով զբաղվել: Պատահում է, որ մի քահանայի մարդիկ սիրում են որպես խոստովանահոր, բայց նա չի կարողանում քարոզել. այդպիսի մարդու չեն ուղարկի, օրինակ՝ զինվորականներին քարոզելու: Պատահում է նաև, որ մարդը շատ լավ է խոսում, բայց դա նրան օգտակար չէ: Խոսելու պարգևը դեռ չի նշանակում, որ մարդ կարող է ճիշտ իրագործել քարոզչական առաքելությունը: Եթե մարդ իր վրա է վերցնում որևէ մեկին փրկելու բեռը, իսկ դա գերազանցում է իր ուժերը, դա նույնպես պատրանքի տեսակ է: Հովհաննես Սանդուղքը իր գրքի առաջին քարոզներում հստակ ասում է, որ դևը ներշնչում է վանականներին, որ նրանք գնան քաղաք քարոզելու և նման այլ գործեր կատարեն: Մարդկանց հետ հարաբերությունը, քարոզելը վանական կոչում չէ, այլ այնպիսի մարդկանց, ովքեր հոգևորական աստիճան ունեն՝ քահանայական, եպիսկոպոսական և այլն:

Երբեմն ասում են. «Մենք դեռ շռայլելու ոչինչ չունենք, երբ կկուտակենք, այն ժամանակ էլ կտանք»: Բայց մի՛ մտածեք, որ դա հեշտ է: Ով ասում է՝ «արդեն կարելի է շռայլել», նա ուղղակի չի հասկանում, թե ինչի մասին է խոսքը: Նա չի կարող հասկանալ, որ նույնիսկ անբասիր, բարեպաշտ կյանքով ապրող սովորական քրիստոնյան՝ մի բան է, իսկ առաքյալները կամ նրանց նման մարդիկ՝ առաքյալների նման շնորհ ունեցող, լրիվ ուրիշ: Առաքյալները իսկապես տալու բան ունեին, իսկ մենք ոչինչ չունենք շռայլելու: Տվյալ իրավիճակին համապատասխան Փրկիչն ասում է. «Վա՜յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ շրջում եք ծովի և ցամաքի վրա՝ անգամ մեկին նորահավատ դարձնելու համար, և երբ նա այդպիսին է դառնում, նրան ձեզանից կրկնակի անգամ ավելի գեհենի որդի եք դարձնում» (Մատթ. 23:15): Այսինքն՝ նույնիսկ քարոզելը և մեկին ճշմարիտ հավատքի դարձնելը միշտ չէ, որ բարի գործ է համարվում, որովհետև կարելի է այդ մարդուն ավելի վատը դարձնել, քան առաջ:

Ես Մոսկվայում մի դպիրի էի ճանաչում, որը ծառայում էր եկեղեցում և հոգևոր գրականություն էր տարածում՝ գրքերը պատճենահանելով և բազմացնելով հարյուրավոր և նույնիսկ հազարավոր օրինակներով: Միևնույն ժամանակ դրա պատճառով նրա մոտ, հնարավոր է, անախորժություններ էին լինում, նման ձևով քարոզում և սատարում էր իր ընկերներին: Նա խոստովանահայր ուներ, որը բավականին փորձառու հոգևորականի համբավ ուներ: Եվ ահա, վերջ ի վերջո, այդ դպիրը սկսեց քարոզել մի կնոջ, որը հրապուրվել էր բուդդիզմի ուղղություններից մեկով: Այստեղ խոփը քարին դեմ առավ և հակառակն ստացվեց. ո՛չ թե ինքը նրան դարձրեց, այլ նա՝ իրեն: Նա հեռացավ ուղղափառությունից, և որքան ինձ հայտնի է, թեև ես ստույգ չգիտեմ, մինչև օրս ետ չի դարձել: Ահա այդպիսի շռայլում: Որքան դեպքեր են հայտնի, երբ մեկը քարոզել է մի կնոջ, իսկ հետո նրա հետ ամուսնացել է: Դեռ լավ է, եթե կինը ամուսնացած չի լինում, թե չէ նույնիսկ շնություն կգործվեր նման կերպով քարոզելուց, այդպես

համաշխարհային չարիքի դեմ պայքարելուց: Պատահում է նաև, որ բոլորի համար անվերջ աղոթում են, իսկ հետո խելագարվում են. այդպիսի դեպքեր նույնպես ինձ հայտնի են: Դրա համար պետք չէ չափից շատ բաներ քեզ վրա վերցնել, այլ պետք է իսկապես լուրջ և խոնարհ լինել: Պետք է հասկանալ, որ սեփական անձի փրկությունը ծանր բեռ է, մեծ սխրագործություն, և դեռ հայտնի չէ, թե ինչով այն կավարտվի: Անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել, բոլոր ուժերը կենտրոնացնել, նույնիսկ սեփական ուժերից վեր ամեն ինչ անել, որպեսզի փրկվես, ըստ Պողոս Առաքյալի խոսքերի՝ «որպես կրակի միջով անցած» (Ա Կորնթ. 3:15), այլ ոչ թե այնպես մտածել, թե մեզ մոտ ամեն ինչ լավ է: Այդպես են բապտիստները, որոնք մտածում են, որ իրենք արդեն փրկված են, և իրենց մնում է միայն՝ փրկել ուրիշներին:

Հարց – Իսկ ինչպե՞ս վերաբերել Սիմոն Նոր Աստվածաբանի գրական այն աշխատությանը, որտեղ ասվում է, թե ով դեռ կյանքի ընթացքում իր մեջ չի զգում իր փրկության մասին տեղեկության երաշխիքը, նա թող չպատրի իրեն հույսով՝ այդպիսին հավիտենական կյանք չի մտնի: Կամ՝ եթե բոլոր կրքերից ազատվես, բայց մեկը քո մեջ մնա, ապա Երկնքի Արքայություն չես մտնի:

Պատասխան – Իսկապես, դրանք սուրբ Սիմոնի հայտնի խոսքերն են: Այդպես մենք պետք է ջանանք: Եթե մենք մեր մեջ չենք զգում երաշխիքը, նշանակում է, որ մենք դեռ վախի մեջ ենք, և պիտի մսխենք այն, ինչ չունենք: Ինչպե՞ս կարող ես մի բան տալ մարդուն, երբ ինքդ ոչինչ չունես: Իսկ այդ խոսքերին պետք է այսպես վերաբերել. վախենալ և ամբողջ ուժով աշխատել, ապաշխարել և հուսալ Աստծո ողորմության վրա: Մարդիկ, ովքեր հասել են Սիմոն Նոր Աստվածաբանի նկարագրած վիճակին, արժանի են մտնելու Երկնային Արքայություն, իսկ մնացածները, հնարավոր է, որ այնտեղ մտնեն շատ ապաշխարելուց հետո, նրանք պետք է հուսան Աստծո ողորմության վրա: Այդ պատճառով մտածել մի ինչ-որ սոցիալական ծառայության մասին՝ հարիր չէ վանականին, չէ՞ որ դրա համար էլ մենք «վանական» ենք կոչվում, որ մենք մենակ ենք և առանձնություն ենք փնտրում, իսկ ինչ վերաբերում է մերձավորներին օգնելուն, ապա դա ավելի շատ աշխարհիկ մարդկանց ծառայություն է: Մենք, իհարկե, ուժերի ներածին չափով նույնպես կրում ենք այն, բայց այնպես, որ չզրկվենք սեփական վանական սխրագործությունից: 1909թ. վանականների ժողովում ներկա էին լավագույն վանքերի վանահայրերը. նրանք և հոգևոր ծերերն այն եզրակացության եկան, որ հատուկ վանքերը, որոնք դրա համար հնարավորություն ունեն, կարող են ունենալ նաև բարեգործական հիմնարկներ, բայց պայմանով, որ վանականներն ու միանձնուհիներն այնտեղ չաշխատեն, որովհետև նման ձևով նրանք կշեղվեն իրենց ծառայությունից: Եթե մենք կարող ենք որոշ հիմնարկներ պահել, մենք դրանք կպահենք՝ աշխարհային մարդկանց վարձելով և նրանց ղեկավարելով, բայց եթե մենք այնտեղ ծառայության դնենք քույրերին, ապա, իհարկե, նրանք չեն կարող կենտրոնանալ հոգևորի վրա, հնարավոր է և՝ գայթակղվեն . . . Եվ առանց այդպիսի ծառայության էլ ժամանակակից վանականների կյանքը հեռու է վանականության իդեալից, քանի որ հանգամանքները խանգարում են նրա ճիշտ արտաքին կերպարանք ընդունելուն, ինչը նպաստում է ներքին վանականության ծաղկմանը: Իսկ մենք դեռ լրացուցիչ ձգտում ենք նման ունայնության: Ում դուր է գալիս, թող նա բարի գործ անի, իսկ մեր բարի գործը ապաշխարությունն է:

Հարց – Եթե շատ ծանր դրության դեպքում սկսնակի հոգում խաղաղություն է առաջանում, դա պատրա՞նք է, թե՞ նրան օգնող շնորհ:

Պատասխան – Եթե մարդը մի որևէ փորձություն է հաղթահարում, օրինակ՝ բարկություն, ապա դրանից հետո, իսկապես, նրա հոգում կարող է խաղաղություն իջնել և ընդհանրապես որևէ մի կրքի հանդեպ հաղթանակ տանելուց հետո հոգում խաղաղություն է առաջանում, երբ մերժում ես մերձավորին դատելու մտքերը, բարկությունը և վիրավորանքը: Այդպիսի բան հնարավոր է նաև սկսնակի մոտ: Բայց քանի որ ես ընդհանուր եմ ասում, ապա յուրաքանչյուր կոնկրետ դեպքի ժամանակ պետք է պատմել ծերերին և խորհրդակցել:

Հարց – Դուք ասում եք, որ սկսնակը չպետք է անդադար աղոթքի ձգտի, իսկ ինչի՞ պետք է ձգտի:

Պատասխան – Պետք է ուշադրության ձգտի: Միտքը չպետք է պարապ մնա, այն պետք է միշտ զբաղվի աղոթքով կամ ընթերցանությամբ, և դրա հետ մեկտեղ՝ ձգտի ուշադրության, մնացածը Աստծո պարգևն է: Ի՞նչ կերպ մենք կարող ենք անդադար աղոթքի ձգտել. մի՞թե կամքի լարումով: Բայց դրանից ոչինչ կախված չէ: Միակ բանը, որ մենք կարող ենք իրականացնել, դա ազատ ժամերը աղոթքին հատկացնելն ու երբեք միտքը պարապ չթողնելն է: Եթե մենք հանգստանում ենք, ապա միտքը չպետք է պարապ մնա: Իսկ անդադար աղոթելու մասին երազել, իհարկե, կարելի է, բայց դա ոչինչ չի տա: Անդադար աղոթքը, բացի նրանից, որ շատ պատճառներից է կախված՝ կապված մեր հոգևոր վիճակից, հատկապես այն բանից, թե՝ կա՞, արդյոք, մեր մեջ խոնարհություն, թե՞ ոչ, միևնույնն է, այն դեռևս մեր իշխանության տակ չի գտնվում, որովհետև տրվում է բացառապես միայն Աստծուց:

Հարց – Որոշ ծերեր խորհուրդ են տալիս աղոթել սովորելու համար՝ աղոթել: Դոբրոտոլյուբիա գրքի մեջ գրված է, թե ինչպես սուրբ Մաքսիմ Կապսոկալիպտը աղոթում էր, որպեսզի Տերը արժանացնի նրան անդադար աղոթելու պարգևին: Պե՞տք է, արդյոք, որ մենք էլ այդպես վարվենք:

Պատասխան – Այսպիսի մի ասույթ կա. «Աստված պատասխանում է աղոթողի աղոթքին»: Եթե մենք ուղղակի խնդրենք Նրան և ասենք. «Ողորմիր ինձ՝ մեղավորիս», ապա այս կարճ խնդրանքի մեջ ամեն ինչ պարունակում է, իսկ Աստված գիտի, թե ինչպես մեզ ողորմի: Ենթադրենք՝ դու սկսես անդադար խնդրել աղոթքի համար և ստանաս այն, ապա դա կարող է հպարտության առիթ հանդիսանալ, իսկ դա քեզ համար ոչ թե օգուտ, այլ վնաս կլինի:

Հարց – Չեմ կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ Իգնատի Եպիսկոպոսը հեռացավ Օպտինայի ծեր Լևի մոտից, այնուհետև Չեբեմենեցկի վանքի վանահայր Անտոնին ուղղված նամակում գրեց, որ Լև և Մակար ծերերը Օպտինի անապատում միայն արտաքին բարեպաշտություն էին վարում: Չէ՞ որ հայտնի է, որ նրանք նախ և առաջ վերականգնեցին մտային աղոթքը: Մի տեսակ տարօրինակ է, որ այդպիսի ճգնավորները ցրվեցին: Ինչպե՞ս կարող էր դա պատահել:

Պատասխան – Ոչ մի տարօրինակ բան չկա. ուղղակի Իգնատի եպիսկոպոսի մոտ ավելի բարձր պահանջներ կային, իսկ Օպտինայի անապատում ավելի համեստ էր ամեն բան: Լև ծերի մասին չեմ խոսի, իսկ ինչ վերաբերում է Մակար ծերին, ապա նա դեմ էր մտային աղոթքին: Նա Հիսուսի աղոթքը սովորեց Պայիսիա Վելիչկովսկիի աշակերտներից մեկից, որը մտային աղոթքով զբաղվելու համար օրհնություն չէր ստացել, այլ Պայիսիա ծերից օրհնություն էր ստացել, որ ամբողջ կյանքում սովորական բանավոր աղոթք անի: Նման զգուշավորությունը նա փոխանցեց նաև Մակարին, իսկ Մակարը՝ իր աշակերտներին: Նման ձևով հոգևոր առաջադիմությունների մասին պատկերացումները Իգնատի եպիսկոպոսի և Օպտինյան ծերերի մոտ ակնհայտորեն տարբեր կերպով արտահայտվեցին: Իգնատի եպիսկոպոսը գտնում էր, որ դա բավարար չէ:

Հարց – Իսկ չէ՞ որ հենց Լև ծերը, նկարագրության համաձայն, գտնվում էր բարձր հոգևոր առաջադիմության մեջ, հայտնի դեպքեր կան նրա կանխատեսումների, հրաշագործությունների մասին, մի՞թե այդտեղ հակասություններ չկան:

Պատասխան – Ակնհայտ է, որ Իգնատի եպիսկոպոսը դժգոհ էր նրանից ուղղակի որպես առաջնորդի:

Հարց – Մենք ֆիլմ դիտեցինք աթոսյան վանականների կյանքի մասին: Մեր կենցաղավարությունը նրանց ապրելակերպի ծանրության հետ նույնիսկ ամենաչնչին կերպով իսկ համեմատելի չէ, բայց իսկապես զարմանալի է, որ նրանք մահացած եղբայրներ ունեն, որոնց Տերը չի ողորմել: Եթե նման խստագույն կյանքի դեպքում (նրանք նույնիսկ ազատ ժամանակ չունեին) նրանցից բոլորը չեն փրկվում, ապա այդ դեպքում ի՞նչ կասեք մեր մասին:

Պատասխան – Փրկությունը կախված չէ նրանից, թե արդյոք ազատ ժամանակ ունե՞նք մենք, թե՞ ոչ, մենք խստագույն կյա՞նք ենք վարում, թե՞ ոչ, այլ՝ մեր ներքին վիճակից. մաքրվո՞ւմ ենք արդյոք ապաշխարության և մտային գործերի միջոցով, թե՞ ոչ: Պետք չէ մեզ համեմատել որևէ մեկի հետ, այլ պետք է ըստ այն պայմանների, որում գտնվում ենք ձեզ հետ միասին, հոգ տանել մեր ներքին վիճակի մասին, այսինքն՝ ապաշխարության միջոցով մաքրենք մեր սիրտը:

2001թ. նոյեմբերի 19

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ՊԱՏՐԱՆՔ

«Խորըք պատրանաց զիս կորուսանեն.
այլ Դու Նավապետ բարի, շնորհեա
ինձ նավահանգիստ, Հայր ամենակալ»
(Շարական ԳՁ. Օրհնութիւն պահոց):

Այս գիրքը ջանացինք հրատարակել՝ ելնելով հոգևոր դաշտում եղող այն անհարթություններից, որոնց հիմնական պատճառը պատրանքն է: Պատրվածությունն այնպիսի վիճակ է, որ կարող է քրիստոնյայի ամբողջ ջանքերը ծառայեցնել ի վնաս իրեն և իրեն շրջապատողներին. այդ պատճառով էլ Աստծո ողորմությանը հուսալով՝ սկսեցինք աշխատել այս թեմայի շուրջ:

Առաքելական ժամանակներից ի վեր կոչ էր արվում եկեղեցիներին՝ զգոն լինել հակառակորդ թշնամու նենգությունների հանդեպ և տեղիք չտալ սատանային՝ մարդկային ցեղի թշնամուն, այն հին օձին, որն իր թույնը պատրաստ է ներարկել յուրաքանչյուրի մեջ, եթե վերջինս ականջալուր լինի սրա հոգեսպան խորհուրդներին, ինչպես պատրելով նախամորը և նախահորը՝ այդ թույնը ներարկեց նրանց մեջ. «Իսկ պատրանօք բանսարկուին խափանեցայ յանճառ լուսոյն և դարձայ անդրէն ի հող յորմէ ստեղծայ» (Շարական ԱԿ. Կանոն ննջեցելոց):

Ահա՛, ինչպես թշնամին պատրեց նախահայրերին՝ պատճառ դառնալով նրանց Դրախտից վտարման, այդպես և մինչ օրս պատերազմում է ամեն մի քրիստոնյայի դեմ՝ հանդես գալով մե՛կ որպես հին օձ՝ խաբող և փորձող, մե՛կ մռնչացող առյուծ, ապա պատրող կեղծ լուսո հրեշտակ, որն իր մխացող նետերն է աջ ու ձախ արձակում, որպեսզի Տիրոջը դարձած անձը չհասնի իր բուն նպատակին՝ երկնային հավիտենական սուրբ հայրենիքին, որտեղ նա՝ չարը, մաս ու բաժին չունի:

Դեռ Պողոս Առաքյալը եփեսացիների նորաստեղծ եկեղեցուն արդեն իսկ զգուշացնում էր մարգարեանալով, որ դիվական ներխուժումն անխուսափելի է, ինչի հետևանքով շատերը պիտի պատրվեն՝ դառնալով պատճառ գայթակղության, հակառակությունների և պառակտման. «Իմ մեկնելուց հետո ձեր մեջ կգան հափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հոտին: Ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որ թյուր բաներ կխոսեն՝ աշակերտներին իրենց ետևից քարշ տալու համար» (Գործք 20:29-36): Իսկ Կորնթացիներին ասում էր. «Բայց պետք է, որ ձեր մեջ հերձվածներ էլ լինեն» (Ա Կորնթ. 11:19): Այս ամենն իմանալով՝ Աստծո սուրբ Առաքյալը զգոնության էր հրավիրում եկեղեցու երեցներին. «Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեր հանդեպ և ամբողջ հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին Նա փրկեց Իր արյունով» (Գործք 20:28):

Հավիտենության ճանապարհին խոչընդոտներ դնող այս գազանից զգուշանալու կոչ էր անում և Պետրոս Առաքյալը. «Արթո՛ւն եղեք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ո՛ւմ կուլ տա» (Ա Պետրոս 5:8), և ուրեմն իզուր չէ գրված, թե՝ «Ահով և դողով դուք ձեր փրկության համար աշխատեցե՛ք» (Փիլ. 2:12): Եվ ոչ միայն առաքյալները, այլև մեր սուրբ հայրերն էլ մշտապես կոչ են արել, որ քրիստոնյաները դիվային պատրանքի ազդեցության ներքո չտրվեն քնի, այլ

արքուն պատերազմ մղեն չարանենգ գազանի դեմ. «Ահա ես տեսնում եմ շատ ավելի մեծ պատերազմ: Այս պատերազմը անմարմին է, որովհետև անմարմին է նաև նա, ով այս պատերազմը մեզ վրա է հարուցում: Մարմնի և արյան հետ չէ՛ մեր կռիվը, այլ իշխանությունների, պետությունների, խավարի աշխարհակալ դևերի, որոնք արեգակի տակ են գտնվում: Հետևաբար՝ զորանանք, անմարմին զենքեր կրենք և դիմադրելու ելնենք չար ախոյաններին, որոնք խավարի մեջ մխացող նետեր են արձակում սրտով ուղիղների վրա» (Սարգիս Շնորհալի):

Տարբեր ժամանակներում տարբեր եկեղեցիների հովիվներ թե՛ խոսքով, թե՛ գրչով ջանացել են իրենց հովվությանը տրված հոտին ուսուցանել թշնամու գործելակերպը, նրա պատերազմելու ձևերը, քանզի դրանք բազմազան են. «Նա, ով ծանոթ է սատանայի խարդավանքներին, նենգություններին և խորամանկություններին, պարտավոր է մյուսներին էլ զգուշացնել այդ մասին» (Անտոն Անապատական):

Այսօր Հայաստանը լցված է ո՛չ միայն աղանդավորական տարբեր ուղղություններով, այլև այնպիսի օտար ուսմունքներով, որոնք ընդունվում են հենց մեր Հայ Առաքելական Եկեղեցու համայնքի որոշ անդամների կողմից: Ծանոթ չլինելով հայրաբանական գրքերին՝ նրանք սատանայի ամեն մի խայծ սիրահոժար կուլ են տալիս և, ընկնելով պատրանքի մեջ, շեղվում են փրկության ուղուց, սակայն երևակայում, թե իբր նեղ ճանապարհի ամենաառաջին գծում են գտնվում. «Եվ արդ, սատանան այսպես բոլորի համար մահվան որոգայթներ է հնարում և Աստծո ուղիղ կարգից ու վարքից հանում: Արդյունքում՝ չար պտուղ և անօրեն վարձ, որով կարծում են ստանալ Արքայությունը, սակայն նույնով պիտի ժառանգեն տանջանքները» (Հովհան Մանդակունի): Հուսանք, որ այս գիրքը կդառնա պատճառ, հոգևոր դեղամիջոց, որ նման դիվային հովերով տարվածները պատրանաթափ լինեն և, արթնանալով մահացու թմբիրից՝ շարունակեն իրենց երթը նեղ ճանապարհով դեպի հավիտենական կյանք:

Արդեն իսկ 19 – րդ դարում Ռուս Պրովոսլավ Եկեղեցու եպիսկոպոս Իգնատի Բրյանչանինովն ասում էր, որ վանականությունը և ընդհանրապես հոգևոր կյանքը մեծ անկում է ապրել: Բնական է՝ որքան հեռանում ենք առաքելական օրերից, այնքան հեռանում ենք շնորհի առատությունից. այսպես՝ եթե մի հզոր լուսարձակ մութ գիշերով տարածի իր լույսը, այնժամ նրա մոտ կանգնողներին կթվա, որ ոչ թե գիշեր է, այլ՝ ցերեկ, ինչը խորհրդանիշն է առաքելական շրջանի. եթե փոքր ինչ հեռանան, այն ժամ չորս բոլորը խավար կտեսնեն, իսկ իրենք դեռ լույսի մեջ կլինեն, ինչն էլ խորհրդանշում է սուրբ հայրերի շրջանը. իսկ եթե շատ հեռանան, այդ հզոր լուսարձակը մի հեռավոր փարոսի լույսի պես կերևա, և այդ հեռվում ոչ միայն չորս բոլորը, այլև իրենք էլ մթության մեջ կլինեն, և միակ մխիթարությունը այդ հեռավոր փարոսի լույսը կլինի, ինչն էլ խորհրդանշում է մեր այս օրերը: Եվ եթե 19-րդ դարում լույսից այդքան հեռանալու պատճառով նման հոգևոր անկում էր նկատվում, ապա 21-րդ դարում մենք որքա՜ն ավելի հեռացած պիտի լինենք այդ Լուսարձակից: Եվ իսկապես, հենց առաքյալներն էին ասում, որ այս վերջին օրերը խավար պիտի լինեն. «Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի հեշտասեր, քան աստվածասեր, մարդիկ, որ ունեն աստվածապաշտության կերպարանք, սակայն ուրացել են Նրա զորությունը» (Բ Տիմ. 3:2-5): Ահա արդեն մոտ 2000 տարով մենք հեռացել ենք այն ժամանակներից, երբ գրվեցին այս խոսքերը, և սա առավելապես վերաբերում է հենց մեր ա՛յս օրերին: Ահա, թե ինչպիսին է թվարկած այս բոլոր չարիքների գագաթնակետը. «Մարդիկ, որ աստվածապաշտության կերպարանք ունեն, սակայն ուրացել են Նրա զորությունը», ինչը նշանակում է, որ այս օրերին աստվածապաշտությունը պատրանքի հարուցած ավերից մակերեսային բնույթ պիտի կրի և չունենա այն խորությունը, որ կար առաքյալների և սուրբ հայրերի շրջանում:

Վերջին օրերի մասին գրում է նաև սուրբ Պետրոս Առաքյալը. «Բայց նաև այս բանն իմացեք, որ վերջին օրերին պիտի գան արհամարհողներ, ծաղրողներ, որոնք պիտի ընթանան ըստ իրենց ցանկությունների» (Բ. Պետ. 3:3): Ո՛չ միայն առաքյալները, այլև սուրբ հայրերն էլ նման մարգարեական խոսքեր են ասել այս մասին: Այս վերջին չարաբաստիկ օրերի քրիստոնեության վիճակը սուրբ Սահակ Պարթևը նմանեցնում է մի մագաղաթե մատյանի, որի տառերն այնպես են ջնջվել և աղավաղվել, որ հնարավոր չէ որևէ բան կարդալ, իսկ համեմատության համար, թե դա ինչ է, նա պատկերում է սուրբ Գրիգոր Լուսավորչի ժամանակ եղած հավատքը, ինչը նմանեցնում է մի այլ մագաղաթի, որի վրա գրված է ոսկե տառերով, գեղեցիկ և ամբասիր: 10-րդ դարի մեր մեծագույն վարդապետներից Հովհաննես Կոզեռնը ևս մատնանշելով այս օրերը՝ ասում է. «Վերջին օրերին պիտի գան բազում ուսումնատյացներ, ծույլեր, դատարկախոսներ, վատաբանողներ և ամբաստանողներ: Եվ որտեղի՞ց պիտի գտնես մարդկանց մեջ ճշմարտություն, երբ նրանք պնդաճակատ, եսասեր, ընկերատյաց, բամբասող, բանսարկու, հարբեցող և հեշտասեր են լինելու: Այսուհետև մարդիկ չեն փառաբանելու Աստծուն, և մարդկանց մեջ չի՛ լինելու ճշմարտություն: Իմ որդիներ, ես լալագին, ողբագին, հառաչող սրտով խրատում եմ ձեզ, որովհետև շատերը հեռանում են հավատքից և ուրանում Քրիստոսին: Այդ է պատճառը, որ խավարը պատեց բոլոր արարածներին»:

Իսկ ինչո՞ւ ենք մեկտեղում այն ասույթները, որոնք վերաբերվում են վերջին օրերին. որ հասկանանք, թե մենք չենք կարող ա՛յն շնորհի առատությունը վայելել, ինչին արժանացան առաքյալներն ու սուրբ հայրերը, և եթե հրաշագործությունները, տեսիլքները, հայտնությունները և մարգարեություններն առատ էին այն ժամանակ, բնական է, որ մեր ժամանակներում նման բաները չափազանց հազվագյուտ, սակավ պիտի լինեն, բայց զարմանալիորեն օրեցօր լսվում է մի նոր մարգարեի կամ մարգարեուհու, տեսիլքներ տեսնողների, դիվահալածների և նմանատիպ անձանց մասին. «Նկատելի է, որ ներկա ժամանակներում (19-րդ դար) հոգևոր պարգևները տրվում են մեծագույն չափավորությամբ, համեմատ այն տկարության, որում այսօր գտնվում է քրիստոնեությունը: Այդ պարգևները բավարարում են գրեթե միայն փրկության պահանջներին: Դրան հակառակ՝ պատրանքը բաշխում է իր պարգևները առատորեն և հապճեպ» (եպիսկոպոս Իգնատի): Եթե այս տողերը 19 – րդ դարի մասին են, ուրեմն ի՞նչ ասենք 21 – րդ դարի չար ժամանակների մասին. և իսկապես՝ այսօր էլ ավելի առատորեն են տրվում պատրանքի պարգևները, նորօրյա «մարգարեների» կողմից գրվում են այնպիսի հայտնությունների մասին, որոնք հատորներ են կազմում՝ ի տարբերություն Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննես Աստվածաբան Ավետարանիչ Առաքյալի գրած հայտնության, որն ընդամենը մի քանի էջ է: Իբր տեսնում են Հիսուսին, Տիրամորը, սրբերին, հրեշտակներին և այնպիսի մտերմիկ տոնով են զրուցում, որ նույնիսկ առաքյալներն իրենց չէին կարող թույլ տալ: Անտրամաբանական մի պատկեր է ձևավորվում. եթե այս ամենն իրական և ճշմարիտ են, ապա առաքյալների և սուրբ հայրերի մարգարեությունները վերջին օրերի մասին, մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը, իսկ այն, որ նրանց խոսքը բացարձակ ճշմարտություն է՝ կասկածելն անգամ մեղք է. և ուրեմն այս օրերի առատ հայտնությունները, երազները, տեսիլքները, հրաշագործությունները հիմնականում դարձյալ, մեղմ ասած, պատրանք են, այսինքն՝ ոչ իրական ցանկալին համարվում է իրական:

Սողոսը կատարյալ վստահություն ուներ, որ ինքն Աստծուն է ծառայում և, ի դեմս քրիստոնյաների, հալածում էր Աստծո թշնամիներին, սակայն հանկարծ մի րոպեի ընթացքում նրան պարզ դարձավ, որ ամեն ինչ բացարձակապես այլ է՝ ինքն է Աստծո թշնամի և հալածում է Նրա եկեղեցուն: Ի՞նչ կլիներ, եթե Սողոսն այդ շլացուցիչ լույսից ոչ թե կուրանար, այլ՝ մահանար. նա կկանգներ Աստծո դատաստանի առջև ապշահար, քանզի իրեն ամբողջովին նվիրաբերել էր Աստծուն ծառայելուն, սակայն հիմա պիտի դատապարտվեր որպես Աստծո ամենակատաղի թշնամի: Այդպես կլինի և բոլոր նրանց հետ, ովքեր

դավանում են Ամենասուրբ Երրորդությանը, խոսում Հիսուսի անունից, գործում հրաշքներ և այլն, բայց գտնվում են պատրանքի մեջ: Կհարցնեք՝ «Բայց չէ՞ որ այս մարդիկ եթե նման ուղիղ դավանություն ունեն և Հիսուսի անունով են քարոզում, մեծ – մեծ գործեր անում, մի՞թե դա ապացույց չէ, որ նրանք իսկապես Աստծո ծառաներ են և նման չեն հալածիչ Սողոսին»:

Ասենք, որ Ինքը՝ Տերը, դրա պատասխանը տվեց՝ ասելով. «Այն օրը շատերն Ինձ պիտի ասեն. «Տեր, Տեր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով բազում զորավոր գործեր արեցինք». և այն ժամանակ Ես նրանց պիտի ասեմ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռու կացեք Ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն էիք գործում»» (Մատթ. 7:22-23):

Բենի Հի անունով մի քարոզիչ կար, որ դավանելով Ամենասուրբ Երրորդությանը՝ քարոզում էր մեծ սրահներում Հիսուսի անունով և կատարում բազում հրաշագործություններ. կույրերը տեսնում էին, համրերը՝ խոսում, կաղերը՝ քայլում, սակայն այդ ամենով հանդերձ՝ սա ընկնում էր ինքնամոռացության մեջ. մի ինչ – որ բառ էր արտասանում, որից իր շուրջ հավաքվածներն ուշագնաց էին լինում և տապալվում գետնին, նույնիսկ երգչախմբի անդամները սրա արտասանած մի բառից այս ու այն կողմ էին գլորվում: Հետագայում Գերմանիան և եվրոպական այլ երկրներ զգուշանալով այդ տարօրինակ վարքագծից որպես վտանգավոր աղանդ՝ արգելեցին Բենի Հիի մուտքն իրենց երկիր. «Սատանան լուսավոր հրեշտակի կերպարանք է ընդունում, իսկ նրա առաքյալներն ընդունում են Քրիստոսի առաքյալների տեսք, նրա ուսմունքն էլ հանդես է գալիս Քրիստոսի ուսմունքի նմանությամբ, վիճակը, որը առաջանում է մոլորություններից, ընդունում է հոգևոր, շնորհալի ձև, հպարտությունը և սնափառությունը, ինչը բխում է ինքնախաբեությունից և պատրանքից՝ Քրիստոսի խոնարհության տեսք է ընդունում» (եպիսկոպոս Իգնատի): Նման տարօրինակ վարքագիծը շատ բնորոշ է, այսպես կոչված, խարիզմատ եկեղեցիներին: Մի անգամ զրուցում էինք խարիզմատների մի առաջնորդի հետ. սա սկսեց թվարկել իրենց մեծ քարոզիչներին՝ նրանց «մեծ հրաշագործներ» և «Աստծո գեներալներ» անվանելով. այնուհետև ցավով ավելացրեց, որ նրանցից մեկը վերջում դարձավ հարբեցող, մեկը խենթացավ, այլ աղբյուրից էլ իմացանք մի այլ «գեներալի» մասին, որը գրպանել էր իր եկեղեցու ունեցվածքը և այլն: Իհարկե, մենք՝ Առաքելահիմն եկեղեցու համայնքի անդամներս, մեր հոգսերի վրա սևեռվելու մեծ կարիք ունենք, սակայն մեջ բերեցինք խարիզմատների մասին, քանզի մեզանից ոմանք սկսում են վարակվել այդ ոգով: Սրանք դեռ մի փոքր չհեռացած իրենց ադամական հնությունից՝ իրենց երևակայում են շնորհազարդ, խաբվելով և ծաղրվելով դևերից կողմից: Հիշենք «Հայելի Վարուց»-ից մի պատմություն. «Մի դիվահարի բերեցին վանք: Վանահայրը եկավ նրա մոտ մի մեծանուն կրոնավորի հետ, որը հայտնի էր իր անարատությամբ և մաքրությամբ: Վանահայրն ասաց դևին. «Եթե այս կրոնավորը քեզ հրամայի դուրս գալ, ինչպե՞ս կարող ես հակառակվել»: Դևը պատասխանեց. «Չեմ վախենում դրանից, քանզի թեպետև անարատ, բայց հպարտ է»»: Երիտասարդ, ժամանակակից ոճով հագնված խարիզմատ մի կնոջ հարցրեցինք, թե ի՞նչ կերպ են անցկացնում իրենց աղոթաժողովները, սա ամբարտավանորեն պատասխանեց. «Մենք այնտեղ դևեր ենք տշում»: Եվ ահա այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այս անապատի ճգնավորը, որ մի փոքր հպարտություն էր կրում իր մեջ, չուներ այս կնոջ և ընդհանրապես սրանց համայնքի անդամների «զորությունը», որ աջ ու ձախ «դևեր են տշում»: Սրանք նույնիսկ առաքյալներից էլ են իրենց վեր դասում. «Ես Քո աշակերտներին աղաչեցի, որ հանեն չար ոգուն, բայց նրանք չկարողացան» (Ղուկ. 9:40)**:** Նման խաբկանքից խուսափելու համար է, որ սուրբ հայրերը խոնարհությունը միշտ առաջնային էին համարում. «Շատերը փրկության արժանացան առանց մարգարեության, առանց նշանների ու հրաշքների, բայց առանց խոնարհության ոչ ոք չի տեսնի երկնային օթևանները» (Հովհաննես Սանդուղք): Մեր եկեղեցում էլ կան մարդիկ, որ նույնիսկ չեն էլ մոտեցել խոնարհության սահմաններին, սակայն նման կարծիք ունեն իրենց մասին: Ոմանք իրենց սին ու պատիր տեսիլքների պատճառով «տեսիլք տեսնողի» համբավ են ձեռք

բերել և իրենց պես սնոտիապաշտների կողմից այդպես էլ անվանվում են՝ «տեսիլք տեսնող այսինչ կամ այնինչ»: Չարը սրանց օգտագործելով որպես գործիք, աջ ու ձախ սերմանում է իր պատրողական խաբկանքները: Ըստ վկայությունների՝ սրանք Սուրբ Պատարագի արարողության ժամանակ մեկին մոտենալով ասում են. «Երբ հոգով աղոթում էիր, բերանիցդ կրակ էր դուրս գալիս», մյուսին՝ «Տեսնում էի, թե ինչպես էիր ճախրում եկեղեցում», մեկ ուրիշին՝ «Քեզ տեսա եպիսկոպոսի հանդերձներով՝ խաչը ձեռքդ բռնած» և այլն: Ովքեր սուրբ հայրերի խրատների վրա հիմնվելով են ջանում կառուցել իրենց հոգևոր տունը, բնականաբար, իրենց չեն վերագրում այդ դիվական ցնորքները և սաստում են այդ «տեսնողներին», իսկ ովքեր փառամոլության և հպարտության հակումներ ունեն, սիրահոժար ընդունում են այդ աղտեղությունները՝ որպես երկնառաք շնորհ իրենց հասցեին:

Մի կին եկեղեցում միշտ առաջին շարքերում էր նստում և իրեն պահում տիրաբար. երբ դպիրները նրան սաստեցին, սա ասաց, որ լավ չեն ճանաչում իրեն, քանզի ինչ – որ մեկը երազում տեսել է, թե ինչպես են իրեն փառքով երկինք մտցրել, ինչն էլ պատճառ է դարձել սրա եկեղեցում ամբարտավան կեցվածք ընդունելուն: Կան մարդիկ, որ գալիս են եկեղեցի մի ինչ–որ ցնորական, դիվային երազից մղված և իրենց հայտարարում Աստծո մարդ, որ Հայաստանը փրկելու առաքելություն ունեն: Ցավոք, սրանց նմանները մեր եկեղեցում քիչ չեն: Ոմանք էլ հայտնություն են ունեցել, որ իրենք ընտրյալ են և նույնիսկ անունները փոխելու հրաման են ստացել, որպեսզի Աստվածամոր կամ մի այլ սրբի անուն կրեն, այնուհետև հոգևոր կյանքում անփորձ մի խումբ մարդկանց «առաջնորդ» են դառնում: Ահա՛, չարը հպարտության զենքը գործի դնելով՝ պատերազմում է քրիստոնյաների դեմ և տեղիք տվողներին ծաղրում, սրանք էլ իրենց մեղքերի համար խորհելու և ըստ մաքսավորի հառաչելու փոխարեն, թե՝ «Տեր, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս», պատրանքի մեջ ընկնելով՝ իրենց վերագրում են անհիրական բաներ և ինչ – որ ձայներից ու երազներից մղված՝ սկսում աղոթել սրա կամ նրա բժշկության, աշխարհի փրկության և այլ իր հոգևոր վիճակին անհարիր բաների համար. «Մարգարեները զուր, խաբուսիկ ու աննշան տեսիլքներ տեսան քեզ համար և քեզ չհայտնեցին քո անհիրավությունները, որ կարողանայիր վերադառնալ քո գերությունից, այլ քեզ տվեցին սնոտի առասպելներ» (Ողբ Երմ. 2:14):

Աստվածային ծագում ունեցող հրաշագործությունները, հայտնություններն ու տեսիլքներն այնպիսի բաներ են, որ կարող են քրիստոնյային շեղել փրկության ճանապարհից, եթե նա դրանք կրելու համար պատշաճ խոնարհություն չունենա: Նույնիսկ Պողոս Առաքյալը ենթակա էր նման վտանգի, և Տերը նախապես միջոցներ ձեռնարկեց, որպեսզի սիրելի Առաքյալը բազում հայտնությունների, հրաշագործությունների առատության պատճառով չվնասվի. «Եվ որպեսզի այդ հայտնությունների առատությամբ չհպարտանամ, ինձ տրվեց մարմնի խայթ, սատանայի մի պատգամավոր, որ բռնցքահարի ինձ, որպեսզի չմեծամտանամ. դրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան ինձնից հեռացնի, բայց Նա ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավ է, որովհետև Իմ զորությունը տկարության մեջ է ամբողջական դառնում»» (Բ Կորնթ. 12:9): Իսկ հայրերն ամեն կերպ խուսափում էին հրաշագործություններ անելուց, մանավանդ մարդկանց առջև՝ քաջ գիտակցելով դրանց վտանգավորությունը սեփական հոգու փրկության համար: Եվ սա դեռ այն լուսավոր շրջանում, իսկ ի՞նչ ասենք արդեն մեր ժամանակների «մարգարեների և հրաշագործների» մասին, որոնք պատրվելով տրվում են ոչ թե Աստվածային, այլ՝ դիվական հայտնություններին և հրաշագործություններին, հաստատ համոզում ունենալով դրանց իբր Աստվածային ծագման վրա:

Երբ Աստծո կամոք քրիստոնյան սկսում է բարձրանալ Տիրոջ լեռը. «Ո՞վ կբարձրանա Տիրոջ լեռը, կամ ո՞վ կկանգնի Նրա սրբավայրում. նա, ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի, ով հանձն չի առել ունայնություն» (Սղմ. 23:3), այդ ժամանակ նա սկսում է մաքրվել ձեռքերի անօրինություններից և սրտի աղտեղություններից և երբ հասնում է լեռան գագաթը, այսինքն՝ բարձր քրիստոնեական վիճակի,

գագաթում թագավորող խոնարհության պատճառով այլևս հայտնություններ և տեսիլքներ տեսնելու որևէ ակնկալիք չի ունենում և հենց այդ ժամանակ էլ արժանանում է հայտնությունների, տեսիլքների և մարգարեությունների: Թաբոր լեռան գագաթին, երբ առաքյալներն արդեն հոգնած պատրաստվում էին քնելու, հանկարծ արժանացան պայծառակերպության սքանչելի հայտնությանը, իսկ Թաբորի ստորոտում, ի տարբերություն գագաթի, ոչ թե լուսավոր ամպն էր հովանի եղել, այլ դևերն էին տնօրինում ոմանց վրա և եթե այդ մարդկանցից ոմանք չմաքրելով իրենց ձեռքերն ու սիրտը լեռը բարձրանալու ճգնությամբ, սկսեն տեսիլքներ ու հայտնություններ տեսնել ստորոտում, միանշանակ դրանք Աստվածային բնույթ ունենալ չեն կարող, այլ կլինեն այն ոգու որոգայթներն ու խաբկանքները, ում մասին ասվում է. «Վարդապե՛տ, աղաչում եմ քեզ, նայի՛ր իմ որդուն, որովհետև իմ մեկ հատիկն է. ահա չար ոգին դեսուդեն է զարնվում նրա մեջ և հանկարծ գոչում» (Ղուկ. 9:38-39): Եվ ինչ պատասխան որ տվեց սրան, նույնն էլ Տերը պիտի տա նրանց, ովքեր պատրվելով՝ դիվական հայտնություններն ու տեսիլքները վերագրում են Աստվածայինին. «Ո՛վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև ե՞րբ ձեզ պիտի հանդուրժեմ» (Ղուկ. 9:41):

Երբ Մովսեսը դեռ Եգիպտոսում էր և ուզում էր փրկել Իսրայելին, նա հպարտ էր ու ինքնավստահ, քանզի իր առանձնաշնորհները հիմքն էին այդ ամենի՝ փարավոնի քրոջորդին էր, խոսելու մեջ՝ ճարտար, քաջատեղյակ զինվորական գործին, ուներ Եգիպտոսի ամբողջ գիտությունը և այլն: Այդ ժամանակ ով էլ ջանար նրան հասկացնել, որ Իսրայելին փրկելու համար հարկ է ձերբազատվել իր առանձնաշնորհներից, Մովսեսը միևնույնն է ոչ մի կերպ դա չէր կարող հասկանալ և ընդունել, որովհետև միայն փորձությունների միջով անցնելով է մարդը ճանաչում ինքն իրեն և տրվում միայն Աստծո զորությանը. քանզի գրված է՝ «Այսպես է ասում Տերը. «Թող անիծյալ լինի այն մարդը, որ իր հույսը կդնի մարդու վրա՝ ապավինելով նրա մարմնին ու բազկին, իսկ նրա սիրտը կապստամբի Տիրոջ դեմ: Նա կլինի ինչպես վայրի մոշին անապատում և, երբ բարիքը գա, չի նկատի. կբնակվի անապատի աղուտներում, մի աղտաղտուկ երկրում, ուր երբեք չեն ապրի»» (Երեմ. 17:5-6): Եվ ահա Մովսեսն իր առանձնաշնորհներին հուսալու պատճառով, ըստ Տիրոջ խոսքի, հայտնվեց անապատի աղուտներում, և այդ մեծ իշխանը դարձավ «ինչպես վայրի մոշին անապատում»: Փախչելով Եգիպտոսից՝ նա միանգամից զրկվեց իր բոլոր առանձնաշնորհներից, սակայն ամբողջ 40 տարի էր պետք, որպեսզի ձերբազատվեր նաև այդ առանձնաշնորհների հարուցած հետևանքներից՝ ինքնավստահությունից, ինքնակամությունից, հպարտությունից, մեծամտությունից, մարդահաճությունից և այլն: Եվ ահա, 40 տարի անց նրա մտքով իսկ չէր անցնում, թե երբևիցե մի ինչ–որ բանի կարող է պիտանի լինել, մանավանդ՝ Իսրայելի ազատագրմանը, էլ ուր մնաց՝ մտածեր Աստվածտեսության և հրաշագործությունների մասին: Նա իրեն արդեն կատարելապես ոչնչություն էր համարում, և հենց այդ ժամանակ Աստված այցելում է նրան և համոզում, որ նա հանձն առնի այն առաքելությունը, որը 40 տարի առաջ ինքնակամորեն հանձն էր առել: Մովսեսը ոչ մի կերպ չէր ուզում համաձայնվել, քանզի արդեն 80 տարեկան մի ծեր, անզոր մարդ էր այդ առաքելությունն իրականացնելու համար, սակայն սա հենց այն էր, ինչ որ ուզում էր Աստված: Մովսեսը ձերբազատվեց Եգիպտոսի տված առանձնաշնորհներից, որպեսզի կարողանա ընդունել Աստվածայինը, և մարդկային տեսանկյունից անհույս, չորացած, անպտղաբեր ծառը, ըստ Տիրոջ խոստման, տվեց բազում բարի պտուղներ. «Բայց թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա: Նա կլինի ինչպես հոսող ջրերի մոտ աճած ծառ և իր արմատները կձգի դեպի ջրերի հոսքը. երբ տոթը հասնի՝ չի վախենա, նրա սաղարթն անտառի պես կտարածվի իր շուրջը, երաշտ տարուց չի վախենա և չի դադարի պտուղ տալուց» (Երեմ. 17:7-8): Այդ ժամանակ էլ Մովսեսը Աստվածտեսության, հրաշագործության և մարգարեության շնորհների արժանացավ: Իսկ այսօր Եգիպտոսի, այսինքն՝ աշխարհի և մեղքի ամբողջ ներգործությունն իրենց մեջ կրելով ոմանք հանկարծ դառնում են հրաշագործներ ու մարգարեներ՝

ստանձնելով աշխարհը փրկելու պարտականություն. այդպիսով՝ կեղծը դնելով իրականի տեղ՝ դարձնում են ապրելակերպ, ինչը և կոչվում է պատրանք:

Եպիսկոպոս Իգնատին իր գրքում խոսելով «Նմանություն Հիսուսի» գրքի մասին՝ քննադատում է, որ գրված է ոչ թե շնորհի ներգործության հետևանքով, այլ՝ զուտ մարդկային մղումներով, իսկ Տերն ասում է. «Այս ժողովուրդը մոտ է Ինձ իր բերանով, իր շրթունքներով է մեծարում Ինձ, բայց սրտով հեռացել ու մեկուսացել է Ինձնից. զուր է Ինձ պաշտում, մարդկանց պատվիրաններն ու վարդապետություններն է ուսուցանում» (Եսայի 29:13): «Զուր են Ինձ պաշտում». սա նշանակում է՝ եթե հավատքի մեջ առաջնորդվում են ոչ թե Աստծո շնորհով, այլ զուտ մարդկային մղումներով, ապա նման քրիստոնեական ապրելակերպն անվավեր է համարվում Տիրոջ առջև: Ասենք, որ մարդկային մղումներից եղած ամեն բան Տերն անվանեց «սատանայական», քանզի, երբ Տերը հարցրեց, թե՝ «Դուք Իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ ես», Պետրոսը պատասխանեց և ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»: Հիսուս պատասխանեց և նրան ասաց. «Երանի՜ է քեզ, Սիմոն, Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. 16:15-17): Պետրոսի արտասանած խոսքերը միանշանակ Աստվածային շնորհի հետևանք էին, սակայն կարճ ժամանակ անց, երբ Տերն ասաց, որ Իրեն շուտով խաչը պիտի հանեն, նույն Պետրոսը Տիրոջ դեմ կանգնեց որպես փրկիչ և ասաց. «Քավ լիցի Քեզ, Տեր, այդ Քեզ չի պատահի», սակայն Տերն Ինքն էր Փրկիչը և փրկչի կարիք չուներ, և դրա համար էլ ասաց. «Ետիս գնա՛, սատանա, դու գայթակղություն ես Ինձ համար, որովհետև քո խորհուրդը Աստծունը չէ, այլ՝ մարդկանցը» (Մատթ. 17:22-23), և այսպես՝ մարդկային գործոնը, որ հեռու է շնորհից, արդեն իսկ սատանայական ոլորտ է:

Նմանատիպ հոգևոր գրականությունը զարգանալով՝ առավել լայն տարածում գտավ 20–րդ դարում. ի հայտ եկան այնպիսի գրքեր, ինչպիսիք են՝ «Աստծո կանչը», «Ան և ես», Վասուլա Ռայդենի «Ճշմարիտ կյանք Աստծո մեջ» և այլն: Իհարկե, մենք անձամբ չենք ուզում շեշտել այնպես, ինչպես Իգնատի եպիսկոպոսը, այսինքն՝ միանշանակ պատրանքի ոլորտին վերագրել բոլոր նման գրականությունները, քանզի «Աստծո կանչը» հայերեն է թարգմանել մեր երջանկահիշատակ Շնորհք Պատրիարքը, սակայն այսօր շատ տարածայնություններ կան մեր եկեղեցում նման գրականության հանդեպ: Եվ քանզի գրված է. «Փորձեցեք ամեն ինչ, բարին ամուր պահեցեք» (Ա Թեսաղ. 5:21). նաև՝ «Սիրելիներ, մի՛ հավատացեք ամեն մի հոգու, այլ փորձեցե՛ք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են, որովհետև բազում սուտ մարգարեներ են երևան եկել աշխարհում» (Ա Հովհ. 4:1), մենք էլ, հուսալով Աստծո ողորմությանը՝ ջանանք որոշ պարզաբանումներ մտցնել: Նախ ասենք, որ Աստծո խոսքի նման մատուցում չի արձանագրվել առաքելական ժամանակներից մինչ վերջին դարերը, և հանկարծ մեր խավար շրջանում, երբ աշխարհը լցվել է բազմատեսակ աղանդներով, նմանօրինակ արտառոց բաներ սկսեցին ի հայտ գալ, այսինքն՝ լուսարձակից հեռու այս խավարի մեջ սկսեցին ծլարձակել նման միջավայրին հատուկ երևույթներ. «Եվ Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատքից և իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների և դևերի վարդապետությունների վրա» (Ա Տիմ. 4:1): Եվ նման իրավիճակում վերոհիշյալ գրքերին կասկածամտորեն վերաբերելը բնական է:

Վասուլա Ռայդենի գրքերը չափազանց արտառոց կերպով են գրվել և գրվում, այս կնոջ ձեռքը դադարում է իրեն ենթարկվելուց, և նա սկսում է այլ ձեռագրով, իր կամքից անկախ պատգամներ գրել՝ վերագրելով այն Տիրոջը: Բայց պարզվեց, որ նման բաները եզակի չեն. միայն Բեյրութում կան 2 կանայք, որոնք էլ ոչնչով չեն տարբերվում Վասուլայի գործելակերպից: Սրանց գրածները, եթե դնենք Վասուլայի գրածների կողքին, կտեսնենք, որ աղբյուրը նույնն է. գիրը վերջացնելուց հետո նրանց ինքնակամ ձեռքն էլ Վասուլայի նման խաչի և ձկան նշաններ է նկարում: Վասուլայի գրքերում մեր Հայ Առաքելական Սուրբ

Եկեղեցու անդամներից էլ ոմանք տեսնում են հոգևոր բաներ և ընկնում այդ տարօրինակ գրքերի ազդեցության տակ, ոմանք էլ համարում են, որ հոգևորն այդտեղ միայն շղարշ է, իսկ դրա տակ մարմնավորն է, և մերժում են այն: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Վասուլայի գրքերը կարդալուց մեկի գլուխն է սկսել ցավալ, մյուսը խորշելի սառնություն է զգացել, վերջերս էլ մեր եկեղեցու հավատավոր մի ընտանիքի հայր խռովված հարցրեց այս գրքի մասին և ասաց, որ սրա հոգին խորթ է իր համար, իսկ կինն ավելացրեց. «Երբ ձեռքս առա այս գիրքը, հանկարծ մեջս վախ ու սարսափ առաջացավ և ծալելով մի կողմ դրեցի, նույնիսկ ուզում էի պատռել դա, սակայն կազմի վրա Տիրոջ նկարն էր, դրա համար էլ պահեցի և չգիտեի, թե ինչպես վարվեմ դրա հետ: Մի որոշ ժամանակ անց ինձ տվեցին երկրորդ հատորը, մտածեցի, թե միգուցե պատահականություն էր այդ վախը և փորձեցի կարդալ այս մեկը և, ի զարմանս ինձ, նորից սկսեց այդ խռովքը, ապա մի կողմ դնելով այդ գիրքը, ձեռքս առա սուրբ հայրերի խրատները և խաղաղվեցի»: Սրանից հետո բացարձակապես էլ չկասկածելով այդ գրքերի ոչ երկնային ծագմանը, դրանք այրել են: Հենց նման խորհուրդ է տալիս և բազմահմուտ Իգնատի Եպիսկոպոսը. «Ցանցեր կան նաև տարբեր գրքերում՝ իմ միտքը որսալու համար. իրենք իրենց լույս են կոչում, բայց իրենց մեջ պարունակում են խավարի ուսմունք, բացահայտ կամ գաղտնի՝ գրված խավարի և ամենաչար աշխարհի տիրակալի ազդեցությամբ, մեղսունակության պատճառով վնասված բանականության աղբյուրից. . . Միտքը պարսպենք խոնարհությամբ՝ սանձելով անաչառորեն գիտություն ձեռք բերելու նրա ձգտմանը, ինչքան էլ որ դրանց վերնագրերը նորություն լինեն և շարժեն մեր հետաքրքրությունը: Պահպանենք այն կեղծ ուսմունքի փորձությունից, որը քողարկված է քրիստոնեական ուսմունքի անվամբ և դիմակով. . . Թույլ չտանք նրան՝ կարդալ ուրիշի գրած հոգևոր նյութերի մասին, բացի ճշմարիտ եկեղեցու հեղինակների գրած գրքերից, որոնց մասին հենց եկեղեցին էր վկայում, որ նրանք Սուրբ Հոգու տաճար են: Սուրբ հեղինակներին կարդացողներն աննկատելիորեն հաղորդակից են լինում այդ գրքերում բնակվող և դրանցով խոսող Սուրբ Հոգուն, իսկ հերետիկոսական հեղինակների գրքերը կարդացողները հաղորդվում են պատրանքի չար ոգու հետ»:

Գրված է՝ «Աստված Հոգի է», Աստվածային սերն էլ ամբողջովին հոգևոր է, իսկ զգայական սերը, որ բխում է այդ գրքից՝ «էրոսի և ֆիլոսի» խառնուրդ է, ինչը որևէ առնչություն չունի «ագապեի», այսինքն՝ հոգևորի, Աստվածային սիրո հետ: Նման գրվածքների վտանգներից մեկն այն է, որ անփորձ քրիստոնյան այդ զգայականը կարող է դնել իրական հոգևոր սիրո տեղ և էլ չի ջանա հասնելու ճշմարիտ սիրուն, ինչը ձեռք է բերվում մեծ դժվարությամբ, ինչպես ասում է Պետրոս Առաքյալը՝ «Ձեր հավատով առաքինություն ձեռք բերեք, առաքինությամբ՝ գիտություն, գիտությամբ՝ ժուժկալություն, ժուժկալությամբ՝ համբերատարություն, համբերատարությամբ՝ աստվածապաշտություն, աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրություն, եղբայրասիրությամբ էլ՝ սեր» (Բ Պետրոս 1:5-8): Ահա Առաքյալը հավատքի հիմքի վրա կառուցված տան 7 – րդ հարկում դրեց սերը: Եվ ուրեմն առանց ջանքի, առանց հավատքի հիմքի վրա կառուցելու այդ հարկերը երևակայել, թե դու հանկարծ հայտնվեցիր վերջին 7 – րդ հարկում, դա պատրանք է, որ կասեցնում է քրիստոնյայի հոգևոր առաջադիմությունը, նման սերը հիշեցնում է այսօրվա «սերիալների» սիրախաղերը և ծանր մեղք է նման բանը վերագրել Աստվածային սիրուն: Անապատի խորքերում երկարատև ճգնությունից հետո միայն հայր Անտոնն ասաց. «Ես է՛լ չեմ վախենում Աստծուց, քանզի արդեն սիրում եմ Նրան», իսկ այսօր տեղից ելնողը ոչինչ չարած, կարդալով նմանատիպ գրքեր՝ իրեն երևակայում է Աստծո սիրելին, և ինքն էլ, իբր, հայր Անտոնի պես սիրում է Տիրոջը: Եվ այսպես, չարը նման կեղծ սիրո միջոցով շեղում է քրիստոնյային ճշմարիտ Աստվածային սիրուն հասնելու ջանքերից, քանի որ՝ «Ով ձեռք չի բերել սեր, նա թշնամու ձեռքին գործիք է և չի գիտակցում, որ քայլում է խավարում» (Եփրեմ Ասորի): Եվ այդ խավարի մեջ կեղծ դիվական սիրախաղով տարված՝ քրիստոնյան ինքնըստինքյան զրկվում է այն բոլոր շնորհներից, ինչն իր մեջ պարունակում է Աստվածային սերը. «Սերը համբերող է,

քաղցրաբարո է. սերը չի նախանձում, չի ամբարտավանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա. ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում» (Ա Կորնթ. 13:4-7): Երբ օրինականներից մեկը Տիրոջը հարցրեց՝ «Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ», Նա սրան ասաց. «Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես ընթերցում»: Սա պատասխանեց և ասաց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ճիշտ պատասխան տվեցիր, այդ արա և կփրկվես»» (Ղուկ. 10:25-28): Եվ ուրեմն, ճշմարիտ Աստվածային սիրով սիրելը հենց փրկություն է, իսկ պատրանքը քրիստոնյային սևեռում է կեղծ սիրո վրա և զրկում ճշմարիտ սիրուց, այսինքն՝ փրկությունից: Կեղծ սերն էլ ունի իր «շնորհները», որոնք, բնականաբար, ճշմարիտ սիրո հակառակ պարագաներն են. «Այս պատճառով աղաչում եմ՝ զարթնե՛նք, զարթնե՛նք և առավել ևս թոթափվե՛նք սատանայական մոլությունների արբեցությունից, մի կողմ նետե՛նք հրեական քողը (կեղծավորությունը) և լուսափայլ մտքով նայենք առ Աստված: Մեր կյանքի թշնամին մեզ մղում է չարիք գործել սիրով և հոժարությամբ՝ իբրև թե իրավացիորեն, որպեսզի, չիմանալով սնոտի սիրո հետևանքը, ոչ ոք չզղջա և ապաշխարությամբ չփրկվի, այլ չարի պատրանքներով զբաղվելով՝ խոր գիշերվա մեջ թմրածի պես տգիտաբար խավարն իբրև լույս սիրի» (Խոսրով Անձևացի): Ասենք նաև, որ մեր այս վերջին օրերում կատարյալ սիրուն հասնելը մի յուրահատուկ բան է և այդ բարձրունքը ոչ բոլորի համար է: Երբ նորադարձն արժանանում է առաջին սիրուն և ջերմությանը և ցնծում այդ հոգևոր խնդությամբ, միառժամանակ անց այն կամաց-կամաց վերանում է, այդ ժամանակ նորադարձի խանդավառությանը փոխարինում են նեղությունները, ձանձրույթը աղոթքի և հոգևոր ընթերցանության հանդեպ, սառնություն եկեղեցական արարողությունների, ողորմության և եղբայրսիրության մեջ, տհաճություն պահեցողության հանդեպ և այլն: Այդ ժամանակ քրիստոնյան մեծ ջանադրությամբ պիտի գործի զուտ իր հոգու փրկության համար ջանալով ձեռք բերել Աստծո երկյուղը և այդ երկյուղի միջոցով էլ, ինչն է մահվան, դժոխքի, դատաստանի հիշողությունը, կոտրած սիրտ և խոնարհ հոգի, ինչն էլ առավել դյուրին է դարձնում պատվիրանապահությունը: Սա առաջին աստիճանն է, որը շատ-շատերի համար է, իսկ երկրորդին հասնելու համար հարկ է նախ շատ առաջանալ առաջինի մեջ և նոր միայն աշխատել երկրորդի համար, որն է ջանալ արդեն ո՛չ միայն փրկվելու, այլ երկնային վարձ, գանձեր ձեռք բերելու համար, իսկ սա էլ արդեն շատերի համար չէ, այլ միայն ջանասերների, այսինքն՝ ճգնավորների: Իսկ այդ երկրորդից էլ միայն հատուկ ընտրյալները կարող են հասնել երրորդ աստիճանին, իսկ դա էլ այն է, որ քրիստոնյան հասնում է այն բանին, որ սկսում է սիրել իր Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ զորությամբ և իր մերձավորին էլ իր անձի պես, այն ժամ նա արդեն ոչ թե վախից մղված է ջանում փրկվել և ո՛չ էլ ջանում է վարձի համար, այլ ամեն բարիք գործում է միայն Աստծո հանդպ ունեցած սիրուց «Նա, ով լիովին բարեպաշտ է, առաջնորդվում է ո՛չ թէ պատժի հանդեպ ունեցած վախով և ո՛չ արքայությունը ժառանգելու ցանկությամբ, այլ՝ Քրիստոսով: Իսկ մենք խորհենք արքայության երանությունների և գեհենի տանջանքների մասին, և գոնե այսպիսով ճշմարտության մեջ ուսուցանենք և դաստիարակենք մեզ, սրա միջոցով մղենք մեզ կատարելու այն, ինչը պարտավոր ենք կատարել» (սբ. Հովհան Ոսկեբերան): Այս երեք վիճակների մասին խոսել են նաև սբ. Բարսեղ Մեծը, Աբբա Դորոթեոսը և այլոք:

Ինչպես տեղեկացանք, այս գրականության ազդեցության տակ ընկածների մեջ մեզ մոտ էլ արդեն կան մարդիկ, որոնք սկսել են Վասուլայի պես պատգամներ ստանալ և գրի առնել. ցավոք, այդ բանի մեջ ներքաշվում են նաև երիտասարդներ: Ասում են, որ երբ Վասուլան սկսում է գրել, երբեմն անուշահոտություն է բուրում, ինչը իբր հաստատում է, որ այդ գրվածքներն Աստվածային բնույթ ունեն,

սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ նման անուշահոտությունները դիվական պատրանքի հետևանք են եղել, նման մի բան էլ գրում է եպիսկոպոս Իգնատին, մի պատրված վանականի մասին «Մի օր աղոթքի ժամին նա ձայն լսեց, որն աղոթում էր իր հետ, և անուշահոտություն բուրեց: Խաբվելով այդ նշաններից՝ նա ինքն իրեն ասաց. «Եթե սա հրեշտակ չլիներ, ապա չէր աղոթի ինձ հետ և Սուրբ Հոգու անուշահոտությունը չէր բուրի»»:

Վասուլայի գրքերը խորթ են ավետարանյան ոգուն, և Առաքյալն էլ դարերի խորքից մեզ է ահազանգում՝ եթե որևէ բան համահունչ չէ Սուրբ Գրքին, ոչ մի պայմանով այն չընդունենք. «Բայց ուրիշ Ավետարան չկա. կան ոմանք, որ խռովություն են սերմանում ձեր մեջ և ուզում են շուռ տալ Քրիստոսի Ավետարանը: Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովյալ լինի: Ինչպես ավելի առաջ էլ ասացինք, հիմա էլ դարձյալ ասում եմ. «Եթե մեկն Ավետարանի ձեզ ավելին, քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովյալ լինի»: Արդ՝ մարդկա՞նց եմ ձգտում հաճոյացնել, թե՞ Աստծուն. կամ մարդկանց հաճելի լինե՞լ եմ ուզում: Եթե ջանայի մարդկանց հաճելի լինել, ապա Քրիստոսին ծառա չէի լինի» (Գաղատ. 1:7-10): Նմանատիպ գրականության ամենադիպուկ նկարագիրը իր «Պատրանքի մասին» գրքում տալիս է եպիսկոպոս Իգնատին. «Գրքում բնակվում և գրքից բխում է չար ոգու օծումը՝ շողոքորթելով ընթերցողին, որը հիմնվելով նրա թունավոր ստին՝ հաճույք է ստանում նրբությամբ համեմված մեծամտությունից, փառամոլությունից և ցանկասիրությունից: Գիրքն իր ընթերցողներին միանգամից, առանց ապաշխարությամբ նախապես մաքրման՝ Աստծո հետ հարաբերության մեջ է մտցնում, այդ պատճառով էլ իր հանդեպ առանձնահատուկ համակրանք է առաջացնում կրքոտ մարդկանց մոտ, ովքեր չգիտեն ապաշխարության ճանապարհը, պաշտպանված չեն ինքնախաբեությունից և պատրանքից, ճշմարիտ կենցաղավարության ուսմունքով խրատված չեն Եկեղեցու սուրբ Հայրերի կողմից: Գիրքն ուժգին ազդեցություն է գործում արյան և նյարդերի վրա, գրգռում է դրանք, այդ պատճառով էլ հատկապես դուր է գալիս զգացմունքներին ստրկացած մարդկանց, գրքից կարելի է բավականություն ստանալ՝ չհրաժարվելով զգայական բիրտ հաճույքներից: Մեծամտությունը, նրբին ցանկասիրությունը և սնափառությունը գրքում ներկայացվում են իբրև Աստծո շնորհի ներգործություն: Մարմնավոր մարդիկ տարվելով իրենց ցանկասիրության նուրբ ներգործությամբ՝ բերկրանքի մեջ են ընկնում հաճույքից, զմայլանքից՝ գուրգուրելով իրենց անկումը, դրանք շփոթելով հոգևոր բերկրանքի հետ, ինչը անհնար է ձեռք բերել առանց ջանքի, ինքնամերժման, ապաշխարության, «առանց մարմինը խաչը հանելու կրքերով և ցանկություններով հանդերձ» (Գաղատ. 5:24): Առաջնորդվելով իրենց կուրությամբ և հպարտությամբ՝ սրանք ուրախությամբ անցնում են անասնական սիրո մահճից առավել հանցավոր սիրո մահիճ, ուր տիրում է մերժված ոգիների անառականոցը»: Ոմանք նման գրականություն տարածողների հանդեպ ունեցած հարգանքից մղված են ընթերցում այդ գրքերը և մերձավորի հանդեպ ունեցած հարգանքը դառնում է նրանց համար շեղման պատճառ. «Իմ մերձավորը, որի սիրու մեջ ես պիտի փնտրեմ իմ փրկությունը, դառնում է ինձ համար կորստյան ցանց, երբ նրա միտքը որսված է այն ուսմունքի ցանցով, որոնք ստի և շողոքորթության իմաստությամբ են շաղախված» (եպիսկոպոս. Իգնատի):

Ասենք, որ տարբեր եկեղեցիներից կան բազմաթիվ հոգևորականներ, որ ընդունում են Վասուլա Ռայդենի հայտնությունները: Ըստ ուսումնասիրողների՝ երբ քրիստոնյան ընկնում է պատրանքի մեջ, շատ շուտով մեծաքանակ հետևորդներ է ձեռք բերում, քանզի իրեն երևակայում և ուրիշներին էլ ներկայանում է որպես «սուրբ» և քարոզում հեքիաթային, ոչ իրական բաներ, ինչը իրական խաչակրություն չէ, այլ ընդամենը՝ դյուրին, անարժեք զվարճանք. «Քանզի պիտի գա ժամանակ, երբ չպիտի անսան ողջամիտ վարդապետությանը, այլ, յուրաքանչյուրն ըստ իր ցանկությունների, ուսուցանողներ պիտի հավաքի իր շուրջը՝ իր ականջներին հաճելի բաներ լսելու մարմաջով. և նրանք ականջները պիտի դարձնեն

ճշմարտությունից ու պիտի մոլորվեն գնան առասպելների ետևից» (Բ Տիմ. 4:3-4): Երբ Վասուլան եկավ Հայաստան, նրա շքախմբում կային նաև տարբեր եկեղեցիներից բարձրաստիճան հոգևորականներ, սակայն ոչ մի եկեղեցի պաշտոնապես չի ընդունել նրա վավերականությունը: Ասում էին, որ միայն կաթոլիկ եկեղեցին է ընդունում Վասուլա Ռայդենի հայտնությունները. մենք այդ մասին հարցում արեցինք մի կաթոլիկ հոգևորականի, իսկ նա միանշանակ մերժեց՝ ասելով, որ կաթոլիկ եկեղեցին չի ընդունում և թույլ չի տալիս նրան՝ քարոզել իրենց մոտ, և վրդովմունքով նշեց, որ այստեղ՝ Երևանի գրախանութները լի են Վասուլայի գրքերի հայերեն թարգմանություններով: Ապացուցելու համար, որ Վասուլայի գրքերը գրվել և գրվում են երկնային ազդեցությամբ, բերում են այն փաստը, թե դրանք կարդալով բազմաթիվ մարդիկ են դարձի գալիս և սկսում հաճախել եկեղեցուի: Սակայն պատրանքի մասին գրված բոլոր գրքերը վերաբերվում են հիմնականում հենց այն քրիստոնյաներին, որոնք գտնվելով առաքելահիմն եկեղեցիների գրկում, չեն փրկվել, քանի որ գտնվել են ներքին սխալ հոգևոր վիճակների մեջ: Մի՞թե քիչ են պատմությունները այն մասին, թե ինչպես են անապատում ապրող, աշխարհն ուրացած ճգնավորները դիվական պատրանքից խաբվելով հայտնվել դժոխքում. «Աստվածախնամ հող եմ անձնավոր, մշակված, սակայն պատրանքով դևի» (Նարեկ, բան ԼԹ):

Բոլոր հերետիկոսությունները հիմնականում առաջացել են այն մարդկանց կողմից, ովքեր քրիստոնեական աշխարհում վարդապետի համբավ են ունեցել. օրինակ՝ Արիոսը, Մակեդոնը, Նեստորը, Եվտիքեսը և այլոք: Իսկ Վասուլա Ռայդենի մասին ասում են, որ այդ երևույթը նրա մոտ անսպասելի է ի հայտ եկել. մինչ այդ նա հեռու է եղել հոգևոր դաշտից: Բայց դա դեռ հիմք չէ, որ այդ «շնորհներ»-ը երկնային ծագման վերագրվեն: Շատերն առանց որևէ փնտրտուքի, բացարձակ հեռու լինելով հավատքից՝ ակամա հայտնվել են նման վիճակների մեջ:

Մի քանի տարի առաջ, երբ աշխատում էինք հոգևոր ֆիլմերի տեսադարանում, բավականին համակրելի երկու երիտասարդներ այցելեցին մեզ՝ ինչ – որ հոգևոր հարցեր պարզաբանելու նպատակով: Սիրով համաձայնեցինք, սակայն, ի զարմանս մեզ, նրանցից մեկն ասաց. «Դուք գիտե՞ք, որ Քրիստոսն արդեն եկել է»: Կռահելով հարցի ուղղվածությունը՝ հարցրինք. «Միգուցե այդ դո՞ւք եք», իսկ սա համեստորեն ասաց՝ «ոչ», և ցույց տալով ընկերոջը՝ ասաց. «Ահա նա է, իսկ ես Հովհաննես Մկրտիչն եմ»: Երկար զրուցեցինք նրանց հետ՝ միանգամայն սթափ մարդիկ էին, երբ խոսքը չէր գնում իրենց պատրված վիճակի մասին, իսկ երբ խոսում էինք այդ թեմայով՝ նրանց պատրվածությունն իսկույն ի հայտ էր գալիս: Երբ ասացինք, թե Երևանում արդեն կան մարդիկ, որ իրենց համարում են Հովհաննես Մկրտիչ և եկեղեցով մեկ աղաղակում՝ ներկաներին անվանելով «իժերի ծնունդներ», նա, ով իրեն սուրբ Կարապետի տեղն էր դրել, կարծես սթափվեց՝ հասկանալով, որ ինքն իր տեսակի մեջ եզակի չէ: Երկար ժամանակ մեզ մոտ գնալ-գալով՝ սա վերջապես Աստծո ողորմությամբ պատրանաթափ եղավ, իսկ այն մեկը մինչև օրս էլ համարում է, որ ինքն է Փրկիչը: Պատրանաթափ եղածը մի տեսակ նեղված՝ հարցրեց. «Ինչո՞ւ այդ ամենը հատկապես ինձ հետ կատարվեց»: Սա պատմեց, որ տարիներ առաջ հեռացել է Հայաստանից և հիմնավորվել Սլովակիայում՝ տրված առօրեական գործերին՝ բացարձակապես հեռու լինելով հոգևոր դաշտից: Մի օր ձայներ էր լսել, թե ինքը Հովհաննես Մկրտիչն է և մեծ առաքելություն ունի կատարելու, իսկ նա նույնիսկ չգիտեր, թե ով է Հովհաննես Մկրտիչը. այդ ձայներից մղված՝ սկսել տեղեկություններ հավաքել Հովհաննես Մկրտչի մասին: Այնուհետև իր հետ ինչ – որ հրաշքներ են տեղի ունեցել. ասում էր, որ այդ ուժերի ազդեցության տակ թողել է ծխելը, քանզի ինչքան էլ ջանացել է սովորական ծխախոտի հերթական տուփը բացել՝ այլևս նրան չի՛ հաջողվել: Մի գիշեր ելնելով պատշգամբ՝ նայել էր երկինք և ասել. «Եթե իսկապես ես եմ Հովհաննես Մկրտիչը, թող հենց հիմա մի որևէ նշան լինի». «Այդ պահին երկնքում բոլոր աստղերը մեծ արագությամբ սկսեցին պտտվել, և ինձ մոտ էլ որևէ կասկած չմնաց, որ հենց ե՛ս եմ Հովհաննես Մկրտիչը», - ասաց նա: Այդ ձայներից մղված՝ նա Սլովակիայից եկել է Հայաստան և

գտել այս մյուսին, բնական է՝ այդ ձայների առաջնորդությամբ, և միասին սկսել են իրենց «մեծ առաքելությունը»՝ ամենուր ներկայացնելով իրենց: Այցելելով էջմիածին՝ նույնիսկ ցանկացել են տեսնել Վեհափառ Հայրապետին՝ «Գնացե՛ք և ասե՛ք, որ Հիսուսը և Հովհաննես Մկրտիչը կամենում են իրեն տեսնել», - ասել են նրանք, և շատ էին բարկացել ծառայողի վրա, որ նրանց ասել է՝ «Եթե այդպես է՝ ես էլ Հռոմի Պապն եմ»: Պատրանաթափ լինելուց հետո այս տղան շատ էր ամաչում իր ծավալած գործունեության համար, և թողնելով Հայաստանը՝ նորից վերադարձավ Սլովակիա:

Լինում են դեպքեր, երբ, ի տարբերություն Վասուլայի, ոչ թե ձեռքն է դադարում ենթարկվելուց, այլ՝ լեզուն, և սկսում են բացարձակապես օտար, մի ուրիշ ձայնով խոսել և պատգամներ հաղորդել, ինչը նույնպես արտասովոր և օտարոտի երևույթ է, այսինքն՝ նման բան չի հիշատակվել սուրբ հայրերի մոտ և մեր եկեղեցու ողջ պատմության ընթացքում. և այսպես՝ պետք է զգուշանալ նման երևույթներից, քանզի, ինչպես ասում են՝ «ամեն փայլուն բան չէ, որ ոսկի է»:

Վասուլայի և նմանօրինակ վիճակում գտնվող մարդկանց համար Տիրոջը, հրեշտակներին և սրբերին տեսնելը, զրուցելը, ըստ իրենց, բնավ էլ արտառոց երևույթներ չեն: Այնինչ Աստվածաշնչյան և սուրբ հայրերի երանելի օրերին Տիրոջը տեսնելը մի յուրահատուկ երևույթ էր: Հիշենք Դանիել մարգարեին, ով երկնային զորքերի կողմից անվանվում էր «Այր սիրելի»: Երբ հայտնվեց Գաբրիել հրեշտակապետը, ահա թե ինչպիսին էր նրա վիճակը. «Եվ նա եկավ կանգնեց այնտեղ, ուր ես էի կանգնած: Նրա գալու ժամանակ ես ապշեցի և ընկա երեսիս վրա» (Դանիել 8:17-18). նաև՝ «Բարձրացրի աչքերս, և ահա փառահեղ հագնված մի մարդ՝ մեջքին Ոփազի ոսկուց մի գոտի կապած, նրա մարմինը ծովագույն էր, նրա դեմքը փայլակի տեսք ուներ, նրա աչքերը կրակի ճառագայթի պես էին, նրա բազուկներն ու զիստերը փայլուն պղնձի տեսք ունեին և նրա խոսակցության ձայնը կարծես զորքի ձայն լիներ: Միայն ես՝ Դանիելս տեսա տեսիլքը. ինձ հետ եղող մարդիկ չտեսան տեսիլքը, այլ մեծ ահ տիրեց նրանց, և նրանք զարհուրած փախան: Ես մենակ մնացի և տեսա այդ մեծ տեսիլքը, բայց իմ մեջ էլ ուժ չմնաց, վայելչությունս ապականություն դարձավ և ուժս չվերագտա» (Դանիել 10:5-8) նաև՝ «Ահա Միքայելը՝ ավագ իշխաններից մեկը, եկավ օգնելու ինձ . . . երբ խոսում էր ինձ հետ, գետին ընկա իմ երեսի վրա և քարացա: Եվ ահա նա, ինչպես մարդու որդի, մոտեցավ իմ շրթունքներին. ես բացեցի բերանս, խոսեցի ու ասացի այն մարդուն, որ իմ դիմաց էր. «Տեր, երբ Դու երևացիր ինձ, աղիքներս գալարվեցին, ուժ չկար մեջս և ինչպե՞ս կարող է Քո ծառան, Տեր, խոսել իմ Տիրոջ հետ: Ես այլևս զորություն չունեմ և շունչ չմնաց իմ մեջ»: Նա է՛լ ավելի մոտեցավ ինձ մարդու տեսքով, զորացրեց ինձ և ասաց. «Մի՛ վախեցիր, այր սիրելի, խաղաղություն քեզ, զորացիր և քաջ եղիր»» (Դանիել 10:15-19): Ի՞նչ ասենք սիրելի Առաքյալ Հովհաննես Ավետարանիչի մասին. «Երբ տեսա Նրան, ընկա Նրա ոտքերին ինչպես մեռել» (Հայտն.1:17):

Ահա թե ինչպիսի՛ն էր Աստծո մեծագույն սրբերի, վիճակը այդ հայտնությունների ժամանակ:

Մեծագույն սուրբ հայրերից անապատի զարդ Հայր Անտոնը, երբ տեսավ սբ. Պողոս Թեբայեցուն, զրույցի ժամանակ հարցրեց, թե իրեն բախտ չի՞ վիճակվել երբևիցե տեսնել Տիրոջը, իսկ սբ. Պողոսը համեստորեն ժպտաց, ինչը նշան է, որ Տերն իրեն հայտնվել է, և սքանչացած Անտոնը համբուրեց նրա աչքերը: Այսինքն՝ դա արտառոց երևույթ էր համարվում դեռ ա՛յն շնորհի առատության շրջանում:

Գրիգոր Նարեկացին մշտապես աղոթում էր կոտրած սրտով և խոնարհ հոգով՝ իրեն որևէ լավ բանի արժանի չհամարելով, ուր մնաց, որ այդ մեծ ճգնավորը Տիրոջն այստեղ նյութական աչքերով տեսնելու ցանկություն հայտներ: Սակայն հենց այդ անարժանության զգացումով նա այնպե՛ս իրեն խոնարհեցրեց, որ Տերն Իր սուրբ և անսուտ խոսքի համեմատ, թե՝ «Ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա» (Մատթ. 23:12), նրան ճշմարիտ բարձունքի վրա դրեց, և Ինքն ու սուրբ Տիրամայրը անձամբ հայտնվեցին նրան: Իսկ Նարեկացին, չնայած ապրեց աներևակայելի բերկրանք, սակայն մեծ երկյուղով ասում էր, որ իրեն ավելի պատասխանատու է զգում այդ հայտնության համար: Իսկ այսօրվա «նարեկացիները» դեռ կաթ

ընդունողի վիճակում լինելով և շատ հեռու կոշտ կերակուրներից՝ առատորեն հայտնություններ են ունենում, տեսիլքներ տեսնում, և ապրում աներկյուղ ու անհոգ կյանքով:

Մանանեխի օրինակով Տերը ցույց տվեց, թե ինչպիսին պիտի լինի իրական՝ երկնառաք շնորհներ կրող քրիստոնյան. «Երկնքի Արքայությունը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ, առնելով, սերմանեց իր արտի մեջ: Այն փոքր է, քան բոլոր սերմերը. սակայն երբ աճում է, բոլոր բանջարներից ավելի է մեծանում ու ծառ է լինում, այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերի վրա հանգստանում» (Մտթ. 13:31-32): Մանանեխի հատիկը Աստծո խոսքն է, որ ընկնելով մարդու սիրտը, սկսում է ծիլ տալ և աճել: Երբ իր կատարյալ չափին է հասնում, նրա վրա իջնում են երկնքի թռչունները, այսինքն՝ Աստծո շնորհներն ու պարգևները: Ոչ մի թռչուն երբեք չի իջնի նոր աճած ծիլի վրա, որովհետև գիտի, որ այն իր ծանրությանը չի դիմանա և տրորվելով կփչանա, այդպես և Աստծո այն շնորհները, որոնք պատշաճ չեն նորադարձին կամ հավատքի մեջ տկարին, չեն իջնում նրանց վրա, քանզի հպարտության պատճառով նրանք կճզմվեն: Նույնիսկ կատարյալ չափի հասած մանանեխի ճյուղերը ճկվում են թռչունների ծանրությունից, այսինքն՝ փորձառու քրիստոնյաների համար էլ դյուրին չէ պարգևների և շնորհների ծանրությունն անվնաս կրել, սակայն այսօր շատերն իրենց համարելով կատարյալ ամուր ծառ՝ կարծում են, թե իրենց վրա կրում են երկնային բազմաթիվ թռչուններ, սակայն լավ է զգուշանալ քանզի դրանք իրականում կարող են լինել ոչ թե թռչուններ, այլ՝ գիշերաբնակ չղջիկներ:

Վասուլայի նման մեկն էլ՝ Ռիկ Ջոյներ անվամբ մի ամերիկացի, տարիներով հոգևոր պատերազմի հետ կապված տեսիլքներ է տեսել և այն գրի է առել 2 հատորով: Իհարկե, կան բաներ, որոնք շատ հետաքրքիր են այդ գրքերում մեկնաբանված, բայց հիշենք, որ չարն է մեր թշնամին, և եթե այդ գրքերը Տիրոջից չեն, ինչ էլ որ գրված լինի նրանցում՝ հաստատ մեր կորստի և ոչ թե հոգու շահի համար է արված. դրա վառ օրինակն է «Հայելի Վարուց» գրքում բերված մի պատմություն, ըստ որի՝ կար մի վարդապետ, որ շատ լավ էր քարոզում և միշտ բազմամարդ էր այն սրահը, որտեղ նա քարոզում էր: Սակայն մի օր նա հիվանդացավ և տեղի եպիսկոպոսն անելանելի վիճակում հայտնվեց, քանզի նա քարոզելու շնորհք չուներ, իսկ ժողովուրդն այդ օրը շատ ավելի էր: Եվ հանկարծ մի այլ վարդապետ է հայտնվում և ասում եպիսկոպոսին, որ ինքն էլ փորձառու քարոզիչ է, այնպես որ նա կարող է չանհանգստանալ, ինչի համար վերջինս շատ է ուրախանում: Սա սկսում է այնպես քարոզել դատաստանի, ապաշխարության, Երկնքի Արքայության և բարի գործերի մասին, որ բոլորն ապշած լսում են և նույնիսկ՝ լալիս: Այդ պահին այդտեղ է մտնում մի սուրբ ճգնավոր և տեսնում է, որ քարոզողը ոչ թե վարդապետ է, այլ՝ դև: Երբ քարոզը վերջանում է, ճգնավորը մտնում է այն սենյակը, ուր վերջում մտել էր քարոզիչը, և ասում. «Քե՛զ եմ ասում Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ասա՛, ինչո՞ւ էիր այդպես քարոզում». սա այլայլված պատասխանում է՝ «Գիտեմ, որ միևնույնն է սրանք այս խոսքերը լսելով չեն փոխվելու դեպի լավը, և դատաստանի օրը է՛լ ավելի մեծ պատժի կարժանանան»: Այս պարագայի համար է, որ սուրբ հայրերն ասում են. «Իզուր են խոսքերը, եթե Սուրբ Հոգին չի կպչում լսողի սրտին». երբ Պողոս Առաքյալը Տիրոջ կողմից առաքվեց Մակեդոնիա, նրա քարոզչությունից դարձի եկավ Լիդիան, քանզի «Նրա սիրտը Տերն Ինքն էր բացել» (Գործք. 16:14): Եվ այսպես, առանց Տիրոջ շնորհի ոչ մի քարոզ, հրաշք, մարգարեություն վավեր չէ: Այո՛, շատերը կարող են տեսիլքներ և հայտնություններ տեսնել, քարոզել, գրել և այլն, սակայն, եթե դրանք Տիրոջ շնորհով չեն արվում, ոչ միայն օգտակար չեն, այլև խիստ վնասակար են: «Գործք Առաքելոց»-ում դա հաստատող մի դրվագ կա. «Եվ մինչ մենք աղոթելու էինք գնում, մեզ հանդիպեց մի աղախին, որին մի հարցուկ՝ չար ոգի էր բռնել. սա գուշակություններով իր տերերին մեծ օգուտ էր տալիս: Նա Պողոսի և մեր ետևից ընկած՝ աղաղակում էր ու ասում. «Այս մարդիկ Բարձրեալն Աստծո ծառաներն են, որ ձեզ պատմում են փրկության ճանապարհները»: Եվ շատ օրեր էր անում այդ բանը: Պողոսը զայրանալով՝ դարձավ և չար ոգուն ասաց. «Հիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ, որ դրա միջից դուրս ելնես»: Եվ նույն ժամին չար ոգին

ելավ» (Գործք. 16:16-18): Ահա՛ առաջին հայացքից ոչ մի սխալ բան չէր ասվում, բայց ինչո՞ւ Պողոս Առաքյալը Տիրոջ անունով դուրս քշեց դևին աղախնու միջից: Նախ դևը չէ, որ պիտի վկայի առաքյալների մասին. «Անզգամներին վայել չեն ճշմարտախոս շուրթերը» (Առակ 17:7), մանավանդ որ Աստված Ինքն էր վկայում առաքյալների համար՝ նրանց տալով հրաշագործության, մարգարեության, քարոզչության և այլ շնորհներ: Եվ այսօր պատրանքի մեջ ընկածները կարող են վկայել, քարոզել, փառավորել և օրհնել, մարգարեանալ և այլ հրաշքներ գործել, սակայն այդ բոլորի աղբյուրը պատրվածի համար նույն է, ինչ որ աղախնինը: Երկրորդ, սա մարդկանց առջև վկայելով՝ բնական է, որևէ բարի միտում չէր կարող ունենալ, քանզի դևը ընդունակ չէ բարին գործելու. «Մի ոմն այսահար հույժ տանջվում ու չարչարվում էր դևի կողմից, և ժամանակ առ ժամանակ դևն այս մարդու բերանով պատասխանում էր մարդկանց հարցերին: Մեկը հարցրեց նրան. «Ասա՛ ինձ, եթե հնարավոր լիներ, որ շնորհ գտնեիր Աստծուց և դառնայիր քո նախնական վիճակին, դրա համար ինչպիսի՞ ջանք ու չարչարանք հանձն կառնեիր»: Դևը պատասխանեց նրան. «Եթե նման հնարավորություն լիներ, միևնույնն է, առավել կնախընտրեի դժոխք իջնել իմ պատճառով դատապարտված հոգիների հետ, քան վերադառնալ երկինք»: Ներկաները շատ զարմացան, թե ինչո՞ւ է սա նման դիրքորոշման հանգել: «Մի՛ զարմացեք, քանզի անչափ է իմ չարությունը և ոչ մի բարի բան կամենալ իսկ չեմ կարող, այլ՝ միշտ նախանձով վառվում եմ և պայքարում մարդկանց փրկության դեմ»» (Հայելի Վարուց): Եվ ահա, վկայելով առաքյալների մասին՝ սա ուզում էր շրջապատի մարդկանց մոտ վստահություն ձեռք բերել և իր դիվական գուշակություններն ու այլ «շնորհները» որպես Աստվածային մատուցել ժողովրդին և այդ ճանապարհով իր հետևորդներն ունենալ, ինչպես որ Սիմոն մոգը. «Սիմոն անունով մի մարդ կար, որ այդ քաղաքում նախապես մոգություն էր անում և զարմացնում սամարացի ժողովրդին՝ իր մասին ասելով, թե ինքը մեծ մեկն է. փոքրից մինչև ամենամեծերը նրան էին նայում ու ասում. «Սա՛ է Աստծո զորությունը, որ մեծ է կոչվում»: Հիացումով էին նայում նրան, որովհետև երկար ժամանակ մոգություններով իրենց զարմացրել էր» (Գործք 8:9-11): Այդպես և այսօր՝ չարը պատրելով խոսել է տալիս Քրիստոսի անունով, և շատերին մոլորեցնելով՝ շեղում է նեղ ճանապարհից: Իսկ երրորդ վտանգն այն էր, որ սա նման հայտնություններով ցանկանում էր ներգործել հենց առաքյալների վրա՝ ջանալով նրանց մեջ սերմանել փառամոլության և հպարտության խորհուրդներ: Կարող է հարց առաջանալ՝ մի՞թե առաքյալները, որ Սուրբ Հոգու տաճար էին, կարող էին չար ոգու բարբաջանքներից ինչ-որ վնաս կրել, և մի՞թե այդ ոգին չգիտեր, որ չի կարող հպարտության մեջ գցել նրան, ով ասում է. «Կենդանի եմ այսուհետև, բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2:20): Սակայն, ինչպես վերը ասվեց, նույնիսկ առաքյալներն այդ սպառնալիքից զգուշանալու կարիք ունեին (Բ Կորնթ. 12:9): Եվ ուրեմն, մենք ավելի շատ պիտի զգուշանանք, քանզի՝ եթե առաքյալներն իսկապես հպարտությունից վնասվելու շատ պատճառներ ունեին, ապա մենք, որևէ մեծագույն առանձնաշնորհ չունենալով, կարող ենք խաբվել դիվական ներգործունեությունից՝ փառամոլություն հարուցող խաբուսիկ մտքերից, երազներից, հայտնություններից և այլն:

Անզգոնությունն ու անհոգությունն է պատճառը, որ որոշ քրիստոնյաներ դիվական ծագում ունեցող երևույթները շնորհի տեղ են ընդունում ու պատրվելով վնասում և՛ իրենց, և՛ իրենց հետևողներին. «Մենք ինչպե՞ս պետք է ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի մեծ փրկության հանդեպ, որ հռչակվեց Տիրոջ կողմից» (Եբր. 2:3): Այսպիսով, տեսնում ենք, որ շատ դժվար է տարբերել լույսը խավարից և բարին չարից, սակայն դա շատ անհրաժեշտ է քրիստոնյայի համար, որպեսզի «երանի՜»-ի փոխարեն «վա՜յ» չժառանգի. «Վա՜յ նրանց, որոնք չարը բարի կանվանեն և բարին՝ չար, որոնք լույսը խավար կհամարեն և խավարը՝ լույս, որոնք դառը քաղցր կհամարեն և քաղցրը՝ դառը: Վա՜յ նրանց, որոնք իրենք իրենց իմաստունի տեղ կդնեն, իրենք իրենց աչքին խորագետ կերևան»: (Եսայի 5:20-21):

Մեր եկեղեցում հավատացյալ մի տարեց կին կար, որին մի ինչ–որ ձայն պատգամներ էր տալիս, ինչը նա վերագրելով Տիրոջը՝ գրի էր առնում և ստիպում, որ կարդանք: Նրան շատ խնդրեցինք, որ այդ ուժերին տեղիք չտա՝ ասելով, որ դա ոչ թե Տիրոջից է, այլ՝ սատանայից, սակայն նա նորից ու նորից բերում էր իր գրածները՝ համոզված, որ դրանք երկնային ծագում ունեն: Այդպես էլ շարունակելով իր գործունեությունը՝ շատ ծանր վախճանով հեռացավ այս աշխարհից:

Տարիներ առաջ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներով գնացել էինք Ապարանի գյուղերից մեկը: Չնայած այդ ժամանակ Ապարանում դեռ չկար գործող եկեղեցի, սակայն արդեն ձևավորվել էր համայնք, որի նախաձեռնությամբ շուտով վերակառուցվեց Սուրբ Խաչ Եկեղեցին և Վեհափառ Հայրապետի հրամանով սկսեց գործել: Այն գյուղում, որտեղ մենք էինք հանգրվանել, կային հիսունականներ և այլոք, սակայն մեր եկեղեցու և ոչ մի հետևորդ: Հետաքրքրությունից դրդված՝ մեզ մոտ հաճախակի այցելում էին գյուղի բնակիչները, և ոմանք հավատքի գալով՝ հարեցին մեր եկեղեցուն: Այդ նորադարձների մեջ կար մի կին, որն իր ծեր բարեկամուհուց ժառանգել էր մոգության չարաղետ «արվեստը»: Երևան վերադառնալուց որոշ ժամանակ անց տեղեկացանք այն մասին, թե ինչ էր տեղի ունեցել այս նորադարձ կնոջ հետ: Երբ նա նորադարձի ջերմեռանդությամբ սկսել էր կարդալ Սուրբ Գիրքը և աղոթել, գիշերով նրան հայտնվել էին պիղծ դևերի սարսափազդու ոհմակներ և սպառնացել, թե՝ «Դու մեր ծառան ես, չհամարձակվե՛ս մեզ թողնել». սաստիկ ծեծի էին ենթարկել նրան, և դա կրկնվել էր մի քանի գիշեր անընդմեջ: Նա առավոտյան արթնանում էր ամբողջովին կապտած մարմնով, ծանր ցավերի մեջ. մեզ ասաց, որ թշնամուն անգամ նման բան չի ցանկանա: Բնականաբար, աղոթքներ էր արվում նրան այդ դիվական հարձակումներից ազատելու համար: Մի օր էլ նա ուրախությամբ հայտնում է Ապարանի իր հոգևոր քույրերից մեկին, որ Հիսուսն է հայտնվել իրեն, սակայն այս փորձառու քույրը Սուրբ Գրքի վրա հիմնվելով՝ հիշեցնում է նրան Տիրոջ խոսքը. «Զգո՛ւյշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի. որովհետև շատերը կգան Իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը. և շատերին կմոլորեցնեն» (Մատթ. 24:4-5), և այդ ուրախությունը փոխվել էր կասկածամտության. ապա, քանի որ կիրակի օրը պիտի գնային էջմիածին՝ Սուրբ Պատարագին մասնակցելու, իրեն էլ էին առաջարկել գալ: Այդ մասին նա հայտնում է նրան, ով իրեն ներկայացել էր որպես Հիսուս, իսկ սա պատրաստակամություն է հայտնում իրենց հետ էջմիածին գնալու: Ճանապարհին բացի այդ կնոջից՝ ոչ ոք չէր տեսել դրան, և այդպես հասել են Մայր Տաճար: Տաճարի դռան մոտ այս նորադարձ կինն ասում է. «Եթե դու ես Քրիստոսը, հիմա ելիր, բարձրացիր այնտեղ, - մատնացույց անելով Սուրբ Սեղանը, - և ես կհավատամ», իսկ սա բարկացած ասում է. «Ես երբեք այդտեղ չեմ բարձրանա», «Ուրեմն ետիս գնա, սատանա, դու չես Քրիստոսը», ասում է այս կինը: Ապա խոստովանում է իր մեղքերը հոգևորականի առջև և սուրբ հաղորդություն ստանում, որից հետո այդ դիվական երևույթներն իսպառ չքվում են:

Այսպիսով, հարկավոր է շատ զգոն լինել և տեղիք չտալ ընդդիմամարտ թշնամուն. ցավոք, ոմանք նման հայտնությունները համարում են Աստվածային և նույնիսկ դադարում են եկեղեցի գնալ՝ ոչ նյութական հաղորդություն ստանալով հենց դրանց՝ կեղծ քրիստոսների և հրեշտակների ձեռքից. «Քննեցե՛ք դուք ձեզ՝ տեսնելու, թե նույն հավատքի մե՞ջ եք. փորձեցեք դուք ձեզ» (Բ Կորնթ. 13:5): Պատկերացնենք երկու նույնատիպ կերակուր՝ արտաքնապես իրարից ոչնչով չտարբերվող, սակայն նրանցից մեկը թունավորված է: Այդպես և լինում է հոգևոր դաշտում, երբ անզգուշորեն միայն արտաքինից դատելով՝ ընդունում են ամեն տեսակ հայտնություններ և վարդապետություններ. այդ պատճառով էլ բարու դիմակի տակ ընդունում են չարը՝ թունավորվելով և վարակելով ուրիշներին:

«Հայելի Վարուց»-ում կա այս երևույթին առնչվող ևս մի պատմություն. «Մի ոմն հերետիկոս ցանկացավ մի ուղղափառ քահանայի իր աղանդի անդամ դարձնել, սակայն երբ տեսավ, որ քահանան խորշում է իրենից և հավանություն չի տալիս իր խոսքին՝ ասաց. «Ինքնահավան ես և անսասան քո

հավատքից: Եթե ցանկանայիր հավատալ իմ խոսքին՝ ես քեզ ցույց կտայի Քրիստոսին, Նրա Մորն ու Աստծո սրբերին»: Քահանան հասկացավ, որ դա սատանայական ցնորք է և պատրանք, սակայն կամեցավ տեսնել, թե դա ի՛նչ պիտի լինի, և ասաց նրան. «Հիրավի, կհավատամ քեզ, եթե կատարես խոստացածդ»: Այս լսելով՝ հերետիկոսը շատ ուրախացավ և օր նշանակեց: Իսկ քահանան իր հետ վերցրեց մասնատուփը՝ Տերունական Մարմնով, և ծածուկ պահեց: Հերետիկոսը քահանային տարավ մի լեռան վրա գտնվող քարայր, և նրանք մի մեծ սրահի մեջ հայտնվեցին, ինչը բոցաճաճանչ, զարմանալի լույսով փայլում էր: Երբ առաջացան՝ տեսան բազում ոսկեփայլ նստարաններ, որոնցից մեկի վրա բազմել էր թագավորը՝ շրջապատված մեծ լույսով, նրա աջ կողմում նստել էր թագուհին՝ վայելչագեղ ու գեղեցկատես, այս և այն կողմերում բազմել էին ծերեր՝ որպես նահապետներ, մարգարեներ և առաքյալներ, իսկ նրանց շուրջը պատել էր հրեշտակների բազմությունը. նրանք աստղերի պես փայլում էին, և ոչ ոքի մտքով իսկ չէր կարող անցնել, թե դրանք դևեր են: Ահա՛, հերետիկոսն ընկավ գետնին և թագավորին սկսեց երկրպագել՝ իբրև Աստծո: Քահանան անշարժ կանգնել էր՝ հույժ զարմացած տեսիլքի վրա, իսկ հերետիկոսը դարձավ քահանայի կողմը և ասաց. «Ինչո՞ւ աստծո որդուն փառք չես մատուցում, երկրպագի՛ր նրա առջև, որ բազմել է գահին»: Այնժամ քահանան մոտենալով՝ մասնատուփը հանեց և տվեց թագուհուն՝ ասելով. «Եթե դու ես թագուհին՝ Քրիստոսի մայրը, ահա քո Որդին. եթե այն ընդունես՝ դրանով կխոստովանես, որ Աստծո Մայրն ես»: Եվ երբ այս ասաց, նույն պահին այդ բովանդակ ժողովը չքացավ, և այնպիսի՛ թանձր խավար տիրեց, որ հազիվ կարողացան քարայրից դուրս գալ: Իսկ հերետիկոսը զարհուրելով սատանայի խորամանկություններից՝ դարձավ ուղղափառության»:

Եվ այսպես, եթե չլիներ քահանայի խելամտությունը՝ օգտակարն ու թունավորն իրարից տարբերելու, ապա այս հերետիկոսը կարող էր բազմաթիվ հետևորդներ ունենալ և բազում պատգամների տարածող լինել՝ վստահեցնելով, որ դրանք միանգամայն երկնային ծագում ունեն:

Ոմանք ասում են, թե այսօրվաս այս հայտնությունները Հովել մարգարեի հետևյալ խոսքի կատարումն է. «Վերջին օրերին, - ասում է Աստված, - Իմ Հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա և ձեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարեանան. ձեր երիտասարդները՝ տեսիլներ, և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն» (Գործ 2:17): Սակայն այդ գրված էր նախ Հոգեգալուստի համար, և ապա՝ Քրիստոսի գալուստից անմիջապես առաջ խոստացված Աստվածային այցելության, ինչի մասին նշում է նաև մեր Սահակ Պարթև հայրապետը, որ վերջին օրերին՝ նեռի գալստյան մոտ, մեծ արթնություն պիտի լինի հատկապես Հայաստանում, և այդ այցելությունը նրա համար է, որ քրիստոնյաները զորություն ունենան նեռի՝ սատանայի դեմ վերջին պատերազմում դիմակայելու համար: Իսկ չարն այդ արթնությունից մի քայլ առաջ կեղծ արթնության պատրանք է ստեղծում և այն մատուցում իբրև իրական, դրա համար էլ շատերը դեռ չմտած Քանան, անապատի մեջ տեսնում են Քանանի միռաժը և ուրախանում ու ցնծում են, որպես թե գտել են իրական Քանանը, իսկ այդ սին ուրախությունը կասեցնում է նրանց ընթացքը և սրանք էլ չեն ջանում հասնել իրական կաթ և մեղր բխող երկրին, այլ անապատի ավազը, փուշն ու տատասկը սիրահոժար ճաշակում են, քանզի պատրանքը այն ներկայացնում է որպես խոստացված կաթ և մեղր:

Այժմ տեսնենք, թե սուրբ հայրերն ինչ են գրել վերջին մեր այս օրերի Աստծուն նվիրված հավատարիմ ծառաների մասին. «Ներկայումս շատ են սրբերը ողջ աշխարհում, այդպես կլինի՞ արդյոք նաև աշխարհի վերջում» հարցրեցին Նիփոնտիոս Կիպրացուն: - Երանելին պատասխանեց. - «Որդյա՛կ իմ, մինչ աշխարհի վերջը չեն նվազի մեր Տեր Աստծո ծառաները, ինչպես և սատանայինը: Ընդ որում, վերջին ժամանակներս նրանք, ովքեր ճշմարտությամբ պետք է աշխատեն Աստծո համար, հաջողությամբ պիտի թաքնվեն մարդկանցից, և նրանց միջավայրում չեն կատարվելու հրաշքներ ու նշաններ, ինչպես այժմ է, այլ կգնան խոնարհությամբ տարրալուծված գործերի ճանապարհով և Երկնային Արքայության մեջ կլինեն ավելի մեծ, քան հայրերը, որոնք նշաններով են փառավորվել: Այն ժամանակ ոչ ոք մարդկանց առաջ

հրաշքներ չի գործի, որոնցից բոցավառվեն մարդիկ և մղվեն խիզախումների, շատերն էլ տգիտության հետևանքով կորստի կմատնվեն՝ մոլորվելով լայն ճանապարհի վրա»: Ահա՛ թե ինչպիսի՛ն պիտի լինեն ճշմարիտ քրիստոնյաներն այս վերջին խավար շրջանում և մենք չենք զլանում մեկ անգամ էլ այդ շեշտել. «Նրանք հաջողությամբ պիտի թաքնվեն մարդկանցից և նրանց միջավայրում չեն կատարվելու հրաշքներ ու նշաններ, ինչպես այժմ է: Այլ կգնան խոնարհությամբ տարրալուծված գործերի ճանապարհով»:

Ասենք, որ վերջին օրերի քրիստոնյաների մասին այս մարգարեությունը եզակի չէ: Ահա թե հայրերից մեկն էլ ինչպես է նկարագրել դա: Նա մի հայտնություն է ունեցել, ըստ որի՝ մի խրոխտ արծիվ թռչելով անցնում է փոթորկոտ ծովը և հեշտությամբ հասնում մյուս ափը: Քիչ անց մի ուրիշ արծիվ է թռչում, սակայն նա այդպես վեհորեն չի անցնում ծովի վրայով, ինչպես առաջինը, այլ որոշ դժվարությամբ, և գալիս է մի ուրիշ արծիվ, որը մի կերպ՝ ջրի մեջ ընկնելով ու ելնելով՝ հազիվ հասնում է բաղձալի ափը: Երբ ծերն աղոթում է հայտնության իմաստը հասկանալու համար՝ նրան հետևյալ մեկնությունն է տրվում. «Առաջին արծիվը խորհրդանշում է առաքելական շրջանի քրիստոնյաներին, երկրորդը՝ սուրբ հայրերի շրջանը, իսկ երրորդը՝ վերջին շրջանի քրիստոնյաների վիճակը. նրանք մի կերպ պիտի հաղթահարեն արգելքները, սակայն շատ մեծ ընդունելության պիտի արժանանան մյուս ափում, այսինքն՝ երկնքում»: Իսկ նման ընդունելության արժանանալու համար էլ պետք է ջանանաք արթուն մնալ և չծուլանալ, այլ հանապազ բարին գործել, քանզի ժամանակները չար են, իսկ մարդուն տրված է մեկ անգամ մեռնել այնուհետև՝ դատաստան: Այդ հանապազ գործելը մեզ ծանր է թվում միայն այն բանի պատճառով, որ մենք, ցավոք, չունենք այն հավատքը, որը կարող է դատաստանի ամբողջ ահավորությունը մեր առջև պատկերել, իսկ եթե արժանանանք նման հավատքի, այնժամ հանապազ գործվող ջանքերը մեզ ոչ թե ծանր կթվան, այլ նույնիսկ չենք էլ զգա, թե ինչ-որ ջանքեր ենք թափում: Հարկ է ճշմարտապես ընկալել մեր այս ժամանակավոր կյանքի իմաստը, և նրան այլ իմաստ չվերագրել, քանզի մենք ընդամենը մեղքի հետևանքով ընկել ենք այս ժամանակավոր աշխարհը, ինչն իրականում ընդամենը մի վաղանցուկ կացարան է, որը ավելի ուղղիչ աշխատանքային գաղութի կերպ ունի և ոչ վայելքի մի ինչ որ վայրի և այս գաղութում է միայն որոշվում, թե մարդը իր հավիտենականությունը որտեղ կանցկացնի. դժոխքի անդունդներում, թե՛ Երկնքի Աքայությունում և ինչքան, որ մենք աճենք այս հավատքի մեջ, այնքան առավել կմերժենք այս աշխարհը իր փուչ և ունայն զվարճանքներով հանդերձ, իսկ այդ դեպքում մեր խաչը կրելը մեզ արդեն այդքան դժվար չի թվա: Իհարկե, ամեն մի գործ բարվոք կատարելու համար հարկ է համապատասխան պայմաններ, որքան պայմանները լավ են, այնքան կարելի է առավել դյուրին և արդյունավետ աշխատանքը գլուխ բերել: Այդ էր պատճառը, որ սուրբ հայրերը աշխարհից հեռանում էին անապատներ, լեռներ, անտառներ, մի խոսքով անմարդաբնակ վայրեր և հիմնում էին վանքեր ու անապատներ: Եվ այս ամենը այն բանի համար, որ հնարավորինս լավ կարողանային Տիրոջ պատվիրանները պահել:

Իսկ ինչ կարող ենք ասել մեր այս ժամանակների համար, երբ մոտ հարյուր տարի է, ինչ մեզ մոտ ընդհատվել է վանական կյանքը, և ցանկացողները որևէ հնարավորություն չունեն առանձնանալ և իրենց նվիրաբերել վանական կյանքին: Սովորական հավատավոր ժողովուրդն էլ, երբ կարիք ունենա գոնե մի ինչ-որ կարճ ժամանակով այս աշխարհի թոհ ու բոհից առանձնանուլու, ներանձնական կյանքի վրա սևեռվելու և հոգևոր՝ երկնային շնորհով լիցքավորվելու, ինչպես դա արվում էր հնում, երբ կային բազում գործող վանքեր, ցավոք չի կարողանա քանզի դրա հնարավորությունն այսօր բացառվում է, քանի որ վանական կյանքի ավանդույթները մեզ մոտ վաղուց արդեն մոռացվել են և այն վերականգնելը բավականին դժվար է: Իսկ ինչպես վարվել մեր այս վիճակում, երբ նման նպաստավոր պայմաններ չկան, նախ պետք է հիշել նման վիճակներին վերաբերող Սուրբ Գրային մխիթարական ասույթները, դրանցից մեկն այս է. «Որտեղ մեղքը շատ է, այնտեղ շնորհն էլ շատ է», քանզի Տերն առավել համբերատարությամբ

է վերաբերվում նման անբարենպաստ պայմաններում գտնվող քրիստոնյաների հանդեպ, և նրանց գործած մի փոքր բարեպաշտական գործն էլ մեծ է համարվում, եթե այդ պայմաններում այն կատարվում է մեծ նախանձախնդրությամբ և ջանասիրությամբ: Եվ ուրեմն, նման պայմաններում էլ կարելի է Աստվածահաճո գործերում առաջադիմել, և եթե այդ գործերը առաջին հայացքից տպվորիչ էլ չլինեն տեսնողների առջև, միևնույն է այն Տիրոջ առջև կարող է շատ գնահատելի լինել: Ինչի վառ օրինակներից է սբ. Հայր Անտոնի և սբ. Մակար Մեծի հետ եղած դեպքերը: Հայր Անտոնին հայտնություն եղավ, որ Ալեքսանդրիայում ապրող մի կաշեգործ մեծ հոգևոր բարձրունքների է հասել, ինչի վրա զարմանալով սբ. հայրը թողնելով անապատը, գավազանը վերցնելով շտապում է Ալեքսանդրիա: Զարմացած կաշեգործը անապատի զարդ սուրբ հայր Անտոնին ջանում է հավատացնել, որ ինքը ոչ մի այնպիսի արտառոց բան չի անում, ինչը կարող է պատմել, այլ ընդհամենը ամեն առավոտ կանգնում է դեպի արևելք և ասում. «Ալեքսանդրիայում բնակվող բոլոր մարդիք կփրկվեն իրենց գործած բարի գործերի համար և միայն ես կկործանվեմ իմ մեղքերի պատճառով»: Եվ այդ ամենը կրկնում է նաև քնելուց առաջ: Եվ ահա առաջին հայացքից առանձնապես աչքի չնկնող նման հոգևոր գործնեությունը այնպիսի բարձրունքի էր հասցրել կաշծեգործին, որ զարմանք և հիացմունք էր պատճառել նույնիսկ հայրերի հայր սբ. Անտոնին: Եվ եթե մեզ համար բացարձակապես անհնարին է սուրբ հայրերի ճանապարհով անցնել, այսինքը՝ մեծ ճգնություններ գործել, սակայն կաշեգործի օրինակին հետևելը ոչ մեկի համար հանդգնություն չի համարվի, այլ ընդհակառակը, կարժանանա գովքի և խրախուսման: Վերը նշված օրինակին համահունչ է նաև այն երկու բարեպաշտ կանանց գործերը, որոնց մասին հայտնություն եղավ սբ. Մակար Մեծին: Նա էլ սբ. Անտոնի պես ելավ և շտապեց քաղաք, որպեսզի տեսնի, թե այդ ինչով են այդպես աչքի ընկել նրանք, որ Տերը նրանց բարեպաշտության գործերը այդպես արժևորել է: Այս առաքինի կանայք էլ կաշեգործի պես շատ են զարմանում իրենց առջև տեսնելով անապատի մեծ ճգնավորին: Եվ առավել են զարմանում, երբ իմանում են սբ. Մակարի գալստյան պատճառը, և կաշեգործի պես հավաստիացնում են, որ իրենք ոչ մի ուշագրավ բան չեն արել, որ պատմեն սբ. հորը: Եվ ասում են, որ ընդհամենը ցանկացել են իրենց ամուսիններից թույլտվություն ստանալ, որ հեռանան աշխարհից և ապրեն վանքում, սակայն մերժվելով, որոշել են մնալ տանը (քանզի նրանք երկու եղբայրների կանայք էին և բնակվում էին միևնույն տանը) և ապրել Աստվածահաճո կյանքով, ջանալով հեռու պահել իրենց չարախոսությունից, ոչ մի բանով չնեղացնել միմյանց, հնազանդվել ամուսիններին Աստծո երկյուղով և այլն: Ահա այս գործերը կարծես ոչ մի բանով աչքի չեն ընկնում համեմատ սուրբ հայրերի գերմարդկային ճգնություններին, սակայն Տերը հավասարեցրեց նրանց ջանքերը, քանզի թե՛ այս կանանց և թե՛ կաշեգործի գործերը ի կատար էին ածվել հոգևոր սխրանքների համար անբարենպաստ պայմաններում, այսինքը մայրաքաղաքի թոհ ու բոհի մեջ և ահա Տերը սրանց բարեպաշտությունն ի ցույց դրեց, որպեսզի աշխարհում ապրող քրիստոնյաները տեսնեն, որ նման սխրանքներ հնարավոր է իրագործել նաև մեր այս ժամանակներում, եթե լինի ամուր հոժարակամություն: Եվ այն, որ աննպաստ պայմաններում գործած հոգևոր սխրանքներն առավել գովելի են, տեսնում ենք Պերգամոնի եկեղեցուն առաքված ուղերձից. «Տեսա քո գործերը և գիտեմ, որ բնակվում ես այնտեղ, ուր սատանայի աթոռն է. բայց պահում ես Իմ անունը.» (Հայտ.2.13):

Ահա մեզ տրված է ջանալ մեր այս անբարենպաստ վիճակի մեջ և արժանանալ թե՛ փրկության և թե՛ գովքի, սակայն պատրանքի շռայլությունը շեղում է այդ ճշմարիտ գործնեությունից՝ ծնունդ տալով բազում կեղծ «մարգարեների», «դիվահալածների» և այլ «շնորհազարդների», ինչը չի խոսում այն մասին, որ նրանք իսկապես վերջին օրերի Աստծո ճշմարիտ ծառաների կերպն ունեն:

Եղիան՝ Աստծո մեծ մարգարեն, ճգնությամբ և մշտական հալածանքներով ծառայում էր Տիրոջը և ստացել էր Նրանից հրաշագործության շնորհ: Նա հալածանքներից հոգնած ու տրտմած նստեց անապատի մոտ և, ըստ հրեշտակի պատգամի, սնվելով ծոմի կերակրով՝ ջրով ու հացով, ելավ և 40 օր ու

գիշեր քայլեց Սինայի անմարդաբնակ անապատով, որպեսզի Սինա լեռան վրա արժանանա Աստծո ներկայությանը: Ահա բազում տքնություններից հետո նա այդ հանդիպմանը դեռ պիտի պատրաստվեր ծոմով և 40 օրվա անսվաղությամբ՝ առանց հացի և ջրի, կրելով անապատի արևի տապը և գիշերվա սառնամանիքը, ապա հասնելով Աստծո լեռը՝ գիշերը հսկումով պիտի անցկացներ քարայրում: Բայց Աստծուն հանդիպելու համար այս ամենը դեռ բավ չէր. նա պիտի անցներ ևս երեք փորձությունների միջով՝ ինչպես Տերը անապատում 40 օրվա անսվաղության վերջում հաղթահարեց երեք տեսակ փորձություններ: Փորձենք պատկերացնել, թե ինչպիսին կարող էին լինել Սինա լեռան վրա եղիայի հետ տեղի ունեցող այդ երեք փորձությունները: Եվ այսպես հանկարծ հողմ ելավ՝ փոթորիկ, ինչը պոկում էր ժայռերը, քանդում բլուրները, և եղիան պիտի կողմնորոշվեր՝ սա՞ է արդյոք Աստծո ներկայությունը: Թշնամական ներշնչումները նրան համոզում էին, ասելով՝ «Երկրպագի՛ր, եղիա, մի՞թե չես հասկանում, որ նման հուժկու զորությունը միայն Աստծուն է բնորոշ», սակայն տեսնելով փորձառու մարգարեի ամրությունը՝ փորձիչը բերում է համոզիչ հիմնավորումներ Սուրբ Գրքից. ինչպես որ անապատում սա ուզում էր Տիրոջը պատրել՝ Սուրբ Գրքից մեջբերումներ անելով «Երթևեկում է Նա ամպերի մեջ և շրջում հողմերի թևերին» (Սղմ. 103:3), «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես . . . և Նրա շուրջը սաստիկ մրրիկ» (Սղմ. 49:3), սակայն Աստվածային շնորհներին հաղորդ եղիան այդ հողմերի և մրրիկների մեջ չտեսավ Աստծուն և չերկրպագեց: Եվ ապա երկրաշարժ եղավ և մոտեցավ նրան ստի հայրը, իբր Տիրոջ պատգամաբեր՝ գովելով եղիային. «Ապրես եղիա, որ չտրվեցիր բանսարկուի խաբկանքներին և պատրվելով չերկրպագեցիր թշնամուն. հիմա եկ և երկրպագիր «ճշմարիտ աստծուն», քանզի ո՞վ է, որ կարող է երկիրը շարժել, եթե ոչ նրա Արարիչը, ըստ այնմ, թե՝ «Երբ անցավ անապատով, ցնցվեց երկիրը և երկինքը ցող թափեց Սինայում» (Սղմ. 67:8-9) և «Լեռները դողացին նրա սաստկությունից» (Սղմ. 45:4): Ամեն բան շատ համոզիչ էր, սակայն եղիան, որ ճաշակել էր շնորհի քաղցրությունը, ըստ այնմ. «Ճաշակեցեք և տեսեք, զի քաղցր է Տեր», այդ ամենի մեջ չգտավ Աստծուն և չերկրպագեց: Չարքը վերջին ուժերը լարած՝ մի նոր հարձակում ձեռնարկեց: Եվ ահա կրակ թափվեց և եղիայի ականջին հնչեցին սաղմոսի խոսքերը. «Մեր Աստվածը պիտի չլռի, Նրա առջև հուր պիտի բորբոքվի» (Սղմ. 49:5), և տեսնելով եղիայի դիմադրությունը՝ հանդիմանեց նրան հետևյալ մեջբերումով. «Այսպիսի բան լսվե՞լ է, թե մի որևէ ազգ կրակի միջից խոսող կենդանի Աստծո ձայնը լսի, ինչպես դու լսեցիր ու կենդանի մնացիր» (2 Օրինաց 32:33), բայց եղիան այս բոլոր փաստարկներից չսասանվեց, չնայած բոլոր հիմնավորումները Սուրբ Գրքից էին: Այդ ամենից հետո նա լսեց մեղմ քամու պես ձայն և կաշվե վերարկույով ծածկելով երեսը՝ ելավ կանգնեց քարայրի մուտքի մոտ, քանզի ճանաչեց Աստծուն (Գ Թագ. 19:3-13):

Այսօր չանցնելով այդ բազում փորձությունների, հալածանքների, ճգնությունների, ծոմապահությունների միջով, շատերը ցանկանում են տեսնել Տիրոջը, և չունենալով եղիայի փորձառությունը՝ հեշտությամբ պատրվում են չարի կողմից. մեկը հողմի մեջ է տեսնում Աստվածայինը, մյուսը՝ երկրաշարժի, հաջորդը՝ կրակների, և քանի որ բանսարկուն իր բոլոր խաբկանքները հիմնավորում է Սուրբ Գրային ասույթներով, սրանք էլ դյուրությամբ ընդունում են այն ամենը, որոնց մեջ Աստված չկա, և իրենց երևակայում են որպես Աստծուն տեսնողներ, մարգարեներ, հրաշագործներ և այլն: Սա է պատճառը, որ այս վերջին օրերին քրիստոնեության մեջ բազում շեղ խմբավորումներ են ի հայտ եկել, և յուրաքանչյուրը հպարտանում է իր «ճշմարտացիությամբ», մեկը՝ իր հողմով, մյուսը՝ իր երկրաշարժով, երրորդն էլ՝ իր կրակներով և սրանք բոլորն էլ համոզված են, որ Աստված հենց իրենց մեջ է և դա հիմնավորում են Սուրբ Գրային ասույթներով, ինչը, սակայն, նրանց սովորեցրել է մարդկային ցեղի թշնամին. «Իսկ չար և խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան. իրենք մոլորված՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին» (Բ Տիմ. 3:13): Եվ որպեսզի տարբերենք ճշմարիտը կեղծից՝ պետք է սուրբ հայրերի փորձառություններին ու խրատներին հետևենք, քանզի նրանք էլ եղիայի պես անցել են վերը

նշված խաչի ճանապարհով և հավատարիմ մնացել Սուրբ Գրքի պատգամներին. «Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մեջ, որ սովորեցիր և որին հավատարիմ եղար. գիտես, թե ումից ես սովորել, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. 3:14-15): Եթե այլ ճանապարհ բռնենք, երբեք չենք լսի մեղմ զեփյուռի պես լսվող ձայնը, իսկ եթե քայլենք սուրբ հայրերի 2000 տարվա տրորած ճանապարհով և արժանանանք լսելու, ապա, ըստ Եղիայի, պիտի ծածկենք մեր դեմքերը անարժանության զգացումով: Իսկ այն երեք փորձությունների ժամանակ Եղիան իր երեսը չէր ծածկում, քանզի հասկացավ, որ Աստված այնտեղ չէ. այդպես էլ այսօր պատրանքի մեջ գտնվողները տեսնում են տեսիլքներ, երազներ, քանզի երեսները չեն ծածկում հողմի, երկրաշարժի և կրակների առջև, չնայած համոզված են, որ Աստված այնտեղ է և նրանցում տեսնում են բազում հայտնություններ և տեսիլքներ, որոնց սցենարիստը, ռեժիսորը և ցուցադրողը ինքը՝ ստի հայրն է՝ սատանան: Եվ այսպես, հասնել Սինա լեռ, ելնել քարայրը և այդ ամենից հետո երկրպագել սատանային՝ ամենաթշվառ վիճակն է. սա նույնն է, թե դառնալ քրիստոնյա եկեղեցու անդամ, սակայն պատրանքի մեջ ընկնելով՝ ծառայել և երկրպագել թշնամուն, որից թող փրկի մեզ Բարի Հովիվը:

Իգնատի եպիսկոպոսը պատմում էր մի երիտասարդ վանականի մասին, որը չլսելով վանահորը՝ առանձնանում է քարայրում, և իրեն հրեշտակ ներկայացնող դևից խաբվելով՝ ինքն իրեն սկսում է մարգարե համարել և իր մոտ եկող ուխտավորներին բազում պատգամներ տալ: Ժողովուրդը նրա մեջ տեսնում էր Աստծո մարգարեի, քանզի ասածները կատարվում էին, սակայն ոչ ոք չէր էլ կասկածում, որ դրանք դիվական բնույթ ունեն: Եվ եթե չլիներ վանահոր միջամտությունը՝ սա շատ դժբախտ մահով կորստի կմատնվեր դևերի կողմից:

Ահա այդ վիճակին բնորոշ ևս մի դեպք, ինչը տեղի է ունեցել վերջերս Աթոս լեռան մի վանականի հետ. 2003թ. մի խումբ ռուս վանականներ մեկնեցին ուխտագնացության Հունաստանի Աթոս լեռը, որտեղ արդեն 1000 տարի է, ինչ գործում են բազմաթիվ վանքեր: Տարբեր վանքերում ծանոթանալով վանականների կենցաղավարությանը՝ նրանք այդ ամենը հիացմունքով գրի են առնում. գրում են նաև մի ծեր միայնակյաց վանականի մասին, ով իրենց հյուրընկալել էր իր կացարանում: Այս տարեց միայնակյացի մասին գիտեին նաև Աթոսից դուրս ապրող աշխարհիկ մարդիկ, շատերն էլ նրա խոստովանորդիներն են: Երբ սրան մի բան է անհրաժեշտ լինում, բարձրանում է սարի գագաթը և այնտեղից ձայն է տալիս 100 կմ – ից ավելի հեռավորության վրա գտնվող իր խոստովանորդիներին, որպեսզի իր ուզածը բերեն: Սրանք էլ բերելով ուզածը ասում են. «Հա՛յր, մեզ թվաց, թե քո ձայնը լսեցինք, և բերեցինք այն, ինչ դու ուզում էիր»: Սա պատմում է վանականներին, որ ինքն ամեն օր միայնակ կատարում է սուրբ պատարագի արարողությունը: Իսկ երբ հարցնում են, թե՝ դժվար չէ՞ միայնակ ամբողջ կարգը կատարել, միայնակյացը պատասխանում է. «Ո՛չ, ես ինքս կարդում ու երգում եմ, և սիրում եմ միայնակ ծառայել: Ամբողջ գիշեր աղոթում եմ… այնպե՜ս լավ է, որ հոգիս խնդում է, իսկ պատարագի վերջում տեսնում եմ հրեշտակներին, որոնք ինձ շատ բաներ են հուշում և հայտնում»: «Իսկ հաճա՞խ եք դուք նրանց տեսնում», - հարցնում է ռուս վանականը. «Ամեն օր, - պատասխանում է աթոսցին, - այն պահին, երբ դուք իջաք ափ, հրեշտակներն ինձ տեղեկացրին, որ ռուս վանականներ են եկել, ես էլ իջա՝ ձեզ դիմավորելու»: «Բայց չէ՞ որ ամեն օր հրեշտակներ տեսնելը կասկածելի է, - ասում է ռուս վանականը, - նման բան չի հիշատակվում նույնիսկ սրբերի մոտ: Գուցե դրանք իրականում դևե՞ր են»: «Ի՞նչ ես ասում, - ձեռքը թափ տալով ասում է ծեր վանականը, - ի՞նչ դևեր, սրանք իսկական հրեշտակներ են, նրանց հագուստի վրա ամբողջովին խաչեր են, դուք գիտեք, թե ինչ օրհնություն եմ ապրում նրանց հայտնվելու պահին»: Ռուս վանականն ասում է. «Բայց չէ՞ որ պատահել է, որ դևերը հայտնվել են հոգևորականի տեսքով, բնականաբար, հոգևորականի հագուստներն էլ իրենց վրա խաչի պատկերներ են կրում»: Նրան ոչ մի կերպ չեն կարողանում

պատրանաթափ անել, և հրաժեշտ տալով՝ հեռանում են: Միառժամանակ անց Աթոսից մի վանական գալով Ռուսաստան՝ այդ ռուս վանականներին տեղեկացնում է, որ այն ծեր միայնակյացի խուցը ինքնիրեն հրդեհվել է, իսկ նա խենթացել է, և նրան Աթոսից հեռացնելով՝ տարել - հանձնել են իր քրոջ խնամքին: «Մի՛ ցանկացիր զգայապես տեսնել հրեշտակների, զորությունների կամ Քրիստոսին, որպեսզի ամբողջովին չխելագարվես՝ հովվի փոխարեն տեսնելով գայլին և երկրպագելով թշնամի դևերին» (Նեղոս Սինայեցի): Ահա այդ սթափ վանականության մեջ էլ խորթ չեն պատրանքի նման երևույթները, ուրեմն որքա՜ն զգույշ պիտի լինենք մենք՝ աշխարհում բնակվող քրիստոնյաներս, տեսիլքների, հայտնությունների, մարգարեությունների և նման բաներ պարունակող գրքերի հանդեպ:

Նման մի ցավալի դեպքի վկաներ էլ մենք եղանք. տարիներ առաջ գնում էինք Երևանի մերձակա գյուղերում Աստծո խոսքը մարդկանց հասցնելու: Մի գյուղում կար չգործող եկեղեցի, որտեղ և հավաքվում էինք. այդ հավաքներին մասնակցում էին ոչ միայն մեր Առաքելական սբ. Եկեղեցու հետևորդներ, այլև մի քանի տարեց գեղջուկ կանայք, որոնք ավելի «հիսունականության» հետևորդների տպավորություն էին թողնում, քանզի խոսում էին օտար լեզուներով, իսկ մեկն էլ տեսիլքներ էր տեսնում: Հոգևոր զրույցներից մեկի վերջում նա մոտեցավ և ասաց. «Եղբա՛յր, երբ խոսում էիր, տեսա, որ հրեշտակ էր կանգնել քո կողքին». մենք էլ, ըստ սբ. հայրերի գրվածքների, փորձեցինք նրան համոզել, որ դա դիվական բնույթ ունի, և լավ կլինի, որ նա ընդհանրապես չհետևի նման տեսիլքներին, սակայն մյուս անգամ նորից մոտեցավ և ասաց. «Այս անգամ տեսա, որ խոսելու ժամանակ վրադ լույս էր իջել»: Մենք ստիպված եղանք նրան նորից բացատրել նման տեսիլքներին տեղիք տալու վտանգավորության մասին, սակայն նա այն հույն միայնակյացի պես շատ վստահ էր, որ դրանք ոչ թե դիվական, այլ երկնային ծագում ունեն և, ըստ երևույթին, հետևեց իրեն պատրող այդ տեսիլքներին, քանզի միառժամանակ անց նորից այցելելով այդ գյուղը՝ ցավով իմացանք, որ այդ խեղճ կինը կախվելու միջոցով ինքնասպան է եղել. «Մի՛ շտապեք մարմնավոր աչքերով տեսնել Աստծուն, որպեսզի տարաժամ չկործանվեք» (Եղիշե):

Մի այլ գյուղում հոգևոր դասընթացներին մասնակցում էր մի կին՝ իր փոքրիկ աղջկա հետ: Մի օր մայրն ասաց, որ այդ փոքրիկը տեսիլքներ է տեսնում, և խնդրեց՝ թույլ տալ բոլորի առջև պատմելու իր այդ երևումները. լսելով նրա երկարատև պատմությունները՝ զգուշավորությամբ, որպեսզի մայրը չնեղանա, խնդրեցինք, որ տեղիք չտան այդ ամենին և ջանան իրենց հեռու պահել նման երևումներից՝ ինքնըստինքյան էլ թույլ չտալով, որ նա բոլորի առջև պատմի իր հերթական երևումների մասին: Սակայն՝ մայրը կարծում էր, որ երևումները ոչ թե դիվական, այլ Աստվածային ծագում ունեն: Որոշ ժամանակ անց այդ, թե՞ մի այլ բանից նեղացած՝ նրանք դադարեցին հաճախել դասընթացներին: Հանգամանքների բերումով մոտ մեկ տարի անց է՛լ չհաճախեցինք այդ գյուղը, իսկ տարիներ հետո լսեցինք, որ այդ աղջնակն արդեն չափահաս տարիքում ունի իր հետևորդները, որոնց մեջ կային նաև հեղինակավոր անձինք: Սակայն, փառք Աստծո, վերջերս էլ իմացանք, որ նա հրաժարվել է այդ ամենից, և պատրանաթափ լինելով՝ ապրում է սովորական կյանքով:

Մի հավատավոր կին էլ, որն արդեն տասնյակ տարիներ ի վեր չի բացակայում Սուրբ Պատարագից, իր հիացմունքը չկարողանալով թաքցնել՝ պատմեց, որ իրեն մի հրեշտակ է հայտնվել և իր համար սաղմոսներ է կարդում, ապա ցույց տալիս երկրի վատթար վիճակը և հորդորում, որ աղոթի դրա համար: Նրա այդ ուրախությանը հակառակ՝ սկսեցինք համոզել, որ հեռու մնա նման բաներից, որպեսզի չընկնի դիվական որոգայթների մեջ. սակայն նրա հիացմունքն այնքան մեծ էր, որ նա չէր էլ ուզում մտածել, որ դա կարող է ո՛չ թե հրեշտակ լինել, այլ՝ դև: Մոտ մեկ ամիս անց հարցրինք նրա վիճակի մասին, և նա մի տեսակ խռովված ասաց. «Վա՜յ, որ իմանաք թե ինչ է բերում գլխիս»: Մենք էլ խորհուրդ տվեցինք, որ դիմի հոգևորականի՝ տնօրինեք կատարելու համար: Հուսանք, որ առանց ծանր հետևանքների ամեն ինչ կավարտվի. «Տեսնելով նրանց, ովքեր սիրում են երազներ, երազանքներ և տեսիլքներ, դևերը հայտնվում

են նրանց Սուրբ Երրորդության, Քրիստոսի, Աստվածամոր, սրբերի կամ հրեշտակների կերպարանքով: Այս բոլորը դիվային հմայքներ են, սրանցով հրապուրվողներն ընկնում են սատանայական կապանքների մեջ: Դու մի՛ հավատա այս ամենին: Չարը կռահում է քո մտքերը, և ինչ ցանկանում ես՝ այն էլ առաջարկում է: Եթե դու չհավատաս, չընդունես, նա քեզ նմանօրինակ տեսիլքներով ու երազներով չի հայտնվի» («Հոգևոր պատերազմ» գրքից):

Սուրբ հայրերը հմուտ պատերազմողներ էին և իզուր չէ, որ վարքագիրները նրանց խրատներն ու գործերը գրի առնելով հասցրել են մեզ, որպեսզի հետևելով նրանց ուղիղ ընթացքին, չշեղվենք փրկության ճանապարհից, ուստի բերենք մի քանի օրինակ «Հարանց Վարք» գրքից:

«Մի եղբոր հայտնվում է դևը՝ հրեշտակի կերպարանքով, և ասում. «Ես Գաբրիել հրեշտակապետն եմ և ուղարկվել եմ քեզ մոտ»: Իսկ եղբայրը պատասխանում է. «Միգուցե դու ուրիշ մեկի մոտ ես ուղարկվել, որովհետև ես արժանի չեմ, որ ինձ հրեշտակներն այցելեն», և դևն անմիջապես չքանում է: Ծերերն ասում էին. «Եթե նույնիսկ քեզ իրական հրեշտակ հայտնվի, միևնույնն է, նրան էլ հեշտությամբ մի ընդունիր, այլ անձդ խոնարհեցրու՝ ասելով. «Ես մեղքի մեջ ապրող մարդ եմ և արժանի չեմ հրեշտակներ տեսնելու»:

«Մի այլ միայնակյաց ծերի մասին պատմում էին, որ նա բնակվում էր իր խցում՝ դևերի կողմից մշտական հարձակումներ կրելով: Նրան բացահայտ հայտնվում էին դևերը, բայց նա արհամարհում էր սրանց: Սատանան տեսնելով, որ պարտվում է ծերի կողմից՝ հայտնվում է նրան և ասում. «Ես Քրիստոսն եմ»: Ծերը փակում է աչքերը: Դևը կրկնում է. «Ես Քրիստոսն եմ, ինչո՞ւ ես փակում աչքերդ»: Ծերը պատասխանում է. «Ես չեմ ցանկանում Քրիստոսին այստեղ տեսնել, այլ միայն հանդերձյալ կյանքում», ինչից հետո դևերը նրան այլևս չհայտնվեցին»:

«Ցանկանալով պատրել մի այլ ծերի՝ դևերն ասացին նրան. «Ցանկանո՞ւմ ես տեսնել քրիստոսին»: Նա պատասխանեց սրանց. «Նզովյալ լինեք դուք և նա, ում մասին, որ ասում եք: Ես հավատում եմ իմ Քրիստոսին, Ով պատվիրեց. «Եթե մեկը ձեզ ասի ահա՝ Քրիստոսն այստեղ է կամ այնտեղ, չհավատաք նրան»» (Մատթ. 24:23): Այս խոսքերից հետո դևերն իսկույն չքվեցին»:

«Մի անգամ մի քանի եղբայրներ գնացին հայր Անտոնի մոտ՝ տեսիլքների և երազների մասին հարցում անելու, որպեսզի հասկանան՝ արդյոք հավատարի՞մ են իրենք Աստծուն, թե՞ խաբվում են դևերից: Եվ երբ հասան նրա մոտ, ծերը, կանխելով նրանց, ասաց, թե ինչպես ճանապարհին ծարավից սատկեց իրենց ավանակը: Նրանք ասացին. «Դու ո՞րտեղից իմացար, հայր»: Ասաց նրանց. «Դևերն ինձ ցույց տվեցին»: Իսկ նրանք ասացին. «Մենք էլ եկանք հենց այդ մասին հարցնելու. քանզի շատ անգամ մեր տեսած երազները երբեմն ճշմարտությամբ կատարվում են, երբեմն՝ ոչ, մենք էլ վախեցանք՝ չլինի՞ թե դրանց հետևելով պատրանքի մեջ ընկնենք»: Եվ ծերը նրանց ավանակի օրինակով սովորեցրեց, որ բոլոր գիշերային ցնորքները դևերից են»:

Իսկ նման հայտնություններով պատրվողները հիմնականում նրանք են, ովքեր հեռու են սուրբ հայրերի խրատական խոսքերից և քայլում են ինքնակամորեն՝ դրանով իսկ ընկնելով դիվական որոգայթների մեջ, ինչի վերջը շատ ցավալի է լինում, քանզի նման խաբկանքի տրվողներից շատերը, ինչպես ասվեց, կա՛մ խենթանում են, կա՛մ ինքնասպան լինում. «Ես գիտեմ մարդկանց, ովքեր բազում ջանքերից հետո շեղվել են ճանապարհից և մտավոր խանգարում ստացել, որովհետև իրենց հույսը դրել են իրենց իսկ գործերի վրա՝ համարելով, որ դրանք աստվածահաճո բնույթ են կրում, դրանով և խեղաթյուրել են Նրա պատվիրանը, Ով ասաց. «Հարցրո՛ւ քո հայրերին՝ և քեզ կպատմեն, քո ծերերին՝ և նրանք քեզ կասեն (Բ Օրինաց 32:7)»» (Անտոն Անապատական):

Այո, հպարտությունը թույլ չի տալիս ուրիշի կարծիքը լսել, և մարդուն սևեռում է սեփական կարծիքի վրա, ինչը, ըստ վերը նշվածի, լի է վտանգներով: Տարիներ առաջ մի նորադարձ երիտասարդ

կամաց – կամաց սկսեց իրեն ուսուցչի տեղ դնել՝ ուրիշի կարծիքը հաշվի չառնելով, և այնքա՛ն առաջացավ այդ բանում, որ նույնիսկ Նարեկացուն որպես հեղինակություն չէր համարում: Շուտով սկսեց ինչ – որ ձայներ լսել և ասաց, որ իրեն անմիջականորեն երկնքից ասում են, թե ինչ է պետք անել. այնպես որ ինքը ոչ մեկի խորհրդի կարիքը չունի: Միառժամանակ անց այդ ձայներին տեղիք տալու հետևանքով հայտնվեց հոգեբուժարանում: Հպարտությունը նման վիճակների է հասցրել շատերին, նույնիսկ՝ վանականների, ինչի մասին պատմում է Աբբա Դորոթեոսը. «Եղբայրնե՛ր, գիտեմ ես մեկին, որ ժամանակին հայտնվեց շատ թշվառ վիճակի մեջ: Սկզբում, երբ եղբայրներից որևէ մեկը նրան ինչ – որ բան էր ասում, նա նսեմացնում էր յուրաքանչյուրին և հակառակվում. «Ի՞նչ է ներկայացնում իրենից այսինչը, չկա՛ առավել արժանավոր մեկը, բացի Զոսիմոսից և նրա նմաններից»: Հետո սկսեց սրանց էլ դատել և ասել. «Չկա ավելի արժանավոր մեկը, բացի Մակարից»: Զանցած մի փոքր՝ ասաց. «Մակարն ի՞նչ է որ, չկա ոչ ոք առավել արժանավոր, քան Բարսեղն ու Գրիգորն են»: Բայց շուտով սկսեց սրանց էլ անարգել՝ ասելով. «Բարսեղն ու Գրիգորն ի՞նչ են, չկա՛ արժանավոր և ոչ մեկը, բացի Պետրոսից և Պողոսից»: Ես ասում էի նրան. «Ճիշտ եմ ասում, եղբա՛յր, դու շուտով կսկսես նրանց էլ նսեմացնել»: Եվ, հավատացե՛ք ինձ, որոշ ժամանակ անց նա ասաց. «Ի՞նչ են Պետրոսն ու Պողոսը, ո՛չ մեկն էլ ոչինչ չարժեն՝ բացի Սուրբ Երրորդությունից»: Ի վերջո, նա գոռոզացավ նաև Աստծո դեմ և խելագարվեց: Այս պատճառով էլ, եղբայրնե՛ր, մենք պետք է մեր ամբողջ ուժով ընդդիմանանք հպարտությանը»:

Ասենք, որ մեր ժամանակներում էլ լինում են հայտնություններ, որոնք կարծում ենք զերծ են պատրանքի ազդեցությունից, սակայն դրանք լինում են հո՛ւյժ անհրաժեշտ պահերի, շատ հազվադեպ և ակնթարթային ու էլ չեն կրկնվում՝ ի տարբերություն պատրվածների:

20 – րդ դարի առաջին կեսին Հունաստանի Աթոս լեռան վանքերից մեկում ճգնում էր Սիլուան անվամբ մի երիտասարդ վանական. սա շատ շուտ արժանացավ վանականությանը հատուկ մտքով և սրտով աղոթելու շնորհին, ինչին հասնելու համար շատերը տարիներով ջանում էին: Այդ պատճառով էլ նրա մոտ գլուխ բարձրացրեց հպարտությունը, իսկ դա էլ առիթ էր, որ նրան հայտնապես սկսեցին երևալ դևերը, ինչը շատ էր տանջում նրան. երբ սա ուզում էր երկրպագել՝ իսկույն դևը հայտնվում էր սրբապատկերի առջև, և Սիլուանը այլևս չէր կարողանում երկրպագել, քանզի կստացվեր, որ դևին է երկրպագում: Շատերից նա աղոթք և խորհուրդ խնդրեց, սակայն ոչ ոք չկարողացավ նրան օգնել: Հուսահատված այդ վիճակից՝ նա աղոթքով դիմեց Տիրոջը և ասաց. «Ո՛չ, Դու ինձ չես գթա», սակայն հենց այդ պահին հանկարծ Տերը հայտնվեց նրան, ինչն ընդամենը մի ակնթարթ տևեց, և այդ ակնթարթը գլխիվայր շրջեց Սիլուանի վիճակը. սա լցվեց սիրով և խանդաղատանքով, չքվեցին դիվական երևումները, և սա մինչ ի մահ ապրեց մեծ խոնարհությամբ՝ դառնալով հռչակավոր վարդապետ (խոսքը գնում է այս գրքի երկրորդ վերնագրի հեղինակի մասին):

Նույն ժամանակաշրջանում Հնդկաստանում կար մի մարդ՝ Սատու Սունտար Սինկխ անվամբ: Սինկխերը հինդուիզմի մոլեռանդ հետևորդներն են, սակայն Սատուին չէր բավարարում հինդուիզմի ուսմունքը. սա սկսեց ուսումնասիրել բուդդայականությունը, մահմեդականությունը, քրիստոնեությունը, և ոչ մի ուսմունք նրան չբավարարեց: Եվ որովհետև նա խճճվել էր այս հոգևոր ասպարեզում՝ ընկավ հուսահատության մեջ և ուզեց ինքնասպան լինել, վերջին պահին ասելով՝ «Ո՞րն է արդյոք ճշմարտությունը». այդ ճակատագրական պահին Տերը հայտնվեց նրան և ցույց տվեց Իր ձեռքերի խոցված տեղերը: Այդ հրաշափառ հայտնությունից հետո Սատուն դարձավ Քրիստոսի ջերմեռանդ հետևորդ, և նույնիսկ Շնորհք պատրիարքը նրան համարում էր մեր այս ժամանակների սրբերից մեկը:

Մեզ մոտ էլ՝ Երևանում, նման մի եղելության մասին իմացանք հենց նրանից, ում հետ այն տեղի է ունեցել: Սա ժամանակին թմրադեղերի առևտրով է զբաղվել՝ ինքն էլ զերծ չմնալով դրա օգտագործումից: Մի քանի անգամ, երբ ոստիկանության կողմից ձերբակալվելու վտանգն է իրեն հետապնդել, աղաչել է, որ

Աստված փրկի և, ի զարմանս իրեն՝ հրաշքով ազատվել է: Սակայն նրա կյանքն էլ այնքան էր խճճվել, որ հուսահատության գիրկն ընկնելով՝ որոշել էր ինքնասպան լինել: Իր ասելով՝ բոլորովին նոր մի ատրճանակ է դրել քունքին ու կրակել, սակայն ատրճանակը խափանվել է. մի կողմ նետելով այն՝ դուրս է եկել բակ, սակայն ինչ-որ մի ուժ նրան ստիպել է տուն վերադառնալ: Երբ գլխահակ նստել է՝ հանկարծ ներքին մի ձայն նրան ասել է. «Վե՛ր նայիր, քանզի Տերն է գալիս»: «Երբ ես գլուխս վեր բարձրացրեցի, տեսա Հիսուսին՝ իմ առջև կանգնած. ես ծնկի եկա և միայն ահավոր ամոթ էի զգում, ամոթից ձեռքերով աչքերս փակում էի, սակայն փակած–չփակած՝ նույնն էր. Նա իմ առջև էր և ասաց ինձ. «Մինչև ե՞րբ Ինձ պիտի փորձես»: Նրա ձայնը կարծես մտավ իմ ամբողջ էության մեջ, և ես աննկարագրելի երանություն զգացի»: Ահա այս հայտնությունից հետո նրա կյանքը հիմնովին փոխվեց՝ դժոխք գահավիժելու այդ պահին Տերը հայտնվեց ու փրկեց նրան՝ հաստատելով փրկության նեղ ճանապարհի վրա:

Տարիներ առաջ Երևանի մոտակա գյուղերից մեկում շաբաթը մեկ անգամ անցկացնում էինք հոգևոր դասընթացներ, գյուղի ակումբը համարյա թէ լցվում էր: Գալիս էր նաև մի կին՝ իր փոքրիկ աղջիկներով: Մի անգամ այս բարեպաշտ կնոջ ամուսինը ընկերոջ հետ գալիս է տուն, իսկ տանը ոչ մեկ չի լինում, որ սեղան գցի իրենց համար. իմանալով, որ բոլորը գնացել են ակումբ՝ հոգևոր դասընթացի, բարկանում է և արգելում՝ ասելով, որ այլևս ոչ ոք այնտեղ ոտք չդնի, ինչը մեծ տրտմության պատճառ էր դարձել թե՛ մոր, թե՛ երեխաների համար: Մի քանի օր անց, այդ մանկահասակ աղջիկներից ամենափոքրը երազում թէ հայտնապես տեսնում է Տիրոջը, Ով ի պատասխան մանկան տրտմության՝ մխիթարում է նրան: Մյուս օրը հայրը հյուր է գնում, որտեղ իրեն պահածոյացված կերակուր են հյուրասիրում, ինչից նա հիվանդանում է բուտիլիզմով: Հետագայում ինքը՝ ընտանիքի հայրը, մեզ պատմեց, որ մի կերպ իրեն գցել է հիվանդանոց՝ ահավոր ցավերով բռնված. «Բարոկամերայի մեջ մտցնելու պահին ինձ վրա հարձակվեցին աննկարագրելի, սարսափազդու կերպարանքով գազաններ, ինչից զարհուրած՝ ես աղաղակում էի, որ ինձ դուրս հանեն, սակայն բժիշկները համոզում էին, որ սա է իմ միակ փրկությունը. նորից էին մտցնում՝ և կրկնվում էր այդ հարձակումը». սակայն, Տիրոջ ողորմությամբ նա շուտով բժշկվեց և այդ ամենից հետո դարձավ ավելի հանդուրժող և այլևս չէր արգելում իր ընտանիքի անդամներին՝ այցելել հոգևոր դասընթացների:

Շատ տպավորիչ էին Արցախյան պատերազմի ժամանակ եղած հրաշքները, որոնք մխիթարական բնույթ էին կրում, որպեսզի այդ ծանր շրջանում իմանայինք, որ աշխարհի կողմից լքված լինելով հանդերձ, լքված և մոռացված չենք մեր Տեր Աստծո կողմից, Ով կարող է անելանելի վիճակներում էլ հաղթություն շնորհել: Ըստ հավաստի վկայությունների, երբ թշնամին հատուկ նշանառությամբ հրետանակոծում էր Գանձասարը, կարծես մի աներևույթ ձեռք այս ու այն կողմ էր շեղում արկերը և ի զարմանս թշնամու և ի ուրախություն մեր զինվորների, ոչ մի արկ չընկավ եկեղեցու վրա: Այդ շրջանում ուրիշ նմանատիպ այլ վկայություններ էլ եղան, որոնց մասին արդեն իսկ գրվել է և չենք ուզում այստեղ կրկնվել:

Սուրբ հայրերի գրականության մասին ասենք, որ այն պիտի զգուշությամբ ընթերցել, քանզի անզգույշ ընթերցանությունը կարող է մի այլ պատրանքի պատճառ դառնալ: Պետք է ջանալ ընդօրինակել ո՛չ թե սուրբ հայրերի մեծ ճգնությունները, այլ կենտրոնանալ ա՛յն ուսուցումների վրա, որոնք մեզ կառաջնորդեն ճշմարիտ աղոթքի, խոնարհության, հեզության և այլ առաքինությունների, որպեսզի մեր ուժերից վեր ոչինչ չձեռնարկենք, քանզի «Ինչը որ ուժից վեր է՝ չարից է» (Աբբա Պիմեն): Այդ է ասում նաև Հովհաննես Սանդուղքը. «Զարմանալ սրբերի ճգնության վրա՝ գովելի արարք է, նախանձախնդիր լինել նրանց հանդեպ՝ փրկարար է, իսկ եթե ցանկանաս դառնալ նրանց կյանքի կրկնօրինակողը՝ արդեն անմիտ և անհնարին գործ է»: Մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համայնքից մի տղամարդ գնաց Ռուսաստան մի ինչ – որ գործով: Կարդալով սուրբ հայրերի վարքը և դրանցով ոգևորվելով՝ որոշում է ճգնավորների նման մեկուսանալ և անտառի խորքում կատարել իր աղոթական կարգը և ծնկի գալով՝ սկսում է աղոթել. «Երբ

սկսեցի աղոթել, հանկարծ միա՛յն իմ չորս բոլորը ահավոր փոթորիկ սկսվեց, չնայած ընդհանուր անտառը խաղաղ էր, և ոչ մի տերև չէր շարժվում: Այդ փոթորկի միջից լսվեցին ահավոր ոռնոցներ, և այդ աներևույթ զորությունները սկսեցին ինձ ծեծել: Իսկ ես այդ աննկարագրելի սարսափից փախչում էի և միայն աղաղակում. «Տե՛ր Հիսուս, ողորմի՛ր ինձ»: Այդպես՝ մի կերպ ինձ դուրս գցեցի անտառից, և չնայած ազատվեցի փոթորկից ու ծեծից, սակայն հետապնդման վախն ինձ հանգիստ չէր տալիս: Այդ ահավոր վիճակից ազատվելու համար ինձ գցեցի մոտակա եկեղեցին, սակայն երկար ժամանակ ոչ մի կերպ չէի կարողանում մտնել ներս՝ կարծես այդ զորություններն ինձ արգելում էին, մի կերպ հաղթահարելով՝ մտա և քահանային պատմեցի գլխիս եկածը: Նա աղոթք կարդաց ինձ վրա և սուրբ ջրով ցողեց. դրանից հետո նոր վերացան այդ հարձակումները»: Այս մասին ևս մի մեջբերում անենք Իգնատի եպիսկոպոսից. «Սուրբ հայրերի այն գրվածքները, որոնք վերաբերում են վանական կյանքին՝ պետք է կարդալ մեծ զգուշությամբ: Նկատելի է, որ սկսնակները չեն կարողանում այն ընդունել իրենց եղած դիրքի համեմատ, այլ անխուսափելիորեն տրվում են գրքի ընթացքին . . . բայց Աստված մեր ժամանակների համար չի տվել նման ապրելակերպ»: Կան մարդիկ, որոնք անզգուշաբար ոգևորում են նորադարձներին և մղում մեծ հոգևոր սխրանքների՝ կորստյան ուղու վրա դնելով նրանց:

Պատրանքի ոլորտին է վերաբերվում և այն, որ երբ ընթերցում են սբ հայրերի խրատական խոսքերը և ոգևորվելով նրանց խոնարհության, հնազանդության, ժուժկալության և այլ բարեպաշտական գործերով, ոչ թե ջանում են ըստ հնարավորության այն իրականացնել իրենց կյանքում, ինչը գովելի և խրախուսելի է հակառակ նրան, երբ անխոհեմաբար աշխատում են ընդօրինակել նրանց մեծ ճգնությունները, այլ այդ հոգեշահ ուսմունքը սկսում են ջանադրաբար քարոզել և պարդադրել այլոց, իսկ երբ սրանք այն չեն ընդունում, դրանից առաջանում է վեճ, բարկություն, խռովք, նեղվածություն և այլն: Իսկ այդ վիճակի մեջ հարատևելը բերում է հոգեոր կյանքի սառեցման, առավել բորբոքվում են կրքերը և ջանալով իբր ճշմարիտ ուղու վրա կանգնեցնել դիմացինին, իրենք են շեղվում ուղիղ ճավապարհից: Կարծես ուրիշներին հայրերի ուսմունքին բերելը դառնում է կյանքի նպատակ, իբր փրկության պատճառ: Այդ ընթացքում առաջանում է մի կարծրացած հոգեվիճակ, և այդ ինքնակամ գործնեության ընթացքում էլ ոչ մեկի կարծիքը հաշվի չեն առնում, իսկ իրենցը համարում անբեկանելի ճշմարտություն՝ չհանդուրժելով իրենց հակաճառող որևէ մեկի, իսկ այս մասին ահա թե ինչ են ասում հենց իրենք՝ սուրբ հայրերը «Իսկապես, երբ ինքնաարդարացումը միանում է ինքնակամությանը, ապա դա կատարյալ մահ է, մեծագույն վտանգ, մեծ տագնապ. այնժամ թշվառը վերջնականապես ընկնում է: Քանզի ով կստիպի այդպիսիին հավատալ, որ մեկ ուրիշը իրենից լավ գիտի, թե ինչն է իրեն օգտակար: Այնժամ նա լիովին տրվում է իր կամքին, իր մտքին, իսկ թշնամին ի վերջո ինչպես ուզում է, այնպես էլ գլուխ է բերում նրա անկումը» (Աբբա Դորոթեոս): Եվ վերջի ի վերջո հիասթափված այդ գործնեությունից իրենց տեսնում են սառած աղոթքի, սուրբ գրոց ընթերցանության, պահեցողության, եկեղցի այցելելու և այլ բարեպաշտական ու փրկարար գործերի մեջ, քանզի աչքաթող անելով սեփական հոգևոր վիճակը, նրանք ամբողջովին սևեռվել էին ուրիշներին ճշմարտության ուղու վրա կանգնեցնելու միտումին և հիմա ոչ մեկը կա և ոչ էլ մյուսը և այժմ էլ տրտմած ասում են, թե «սուրբ հայրերի խրատներն էլ չօգնեցին մեզ»: Այնինչ հայրերի խրատները նրա համար չեն, որ այն պարտադրես այլոց, այլ, որ դրանք գործածես քո իսկ փրկության համար, երբ բժիշկը դեղ է նշանակում հիվանդին, սա այն պիտի օկտագործի հիվանդությունից բժշկվելու համար, այլ ոչ թե իր հիվանդությունը թողած սկսի ուրիշներին համոզել դեղի օգտակարության մասին, ընդհակառակը, երբ նա ինքը օգտագործի դեղը և բժշկվի, այնժամ բոլոր նրանք, ովքեր տառապում են այդ հիվանդությամբ, կհետաքրքրվեն այդ դեղամիջոցով և ահա քո սեփական օրինակով մյուսներին կմղես բժշկության: Իսկ այդ վիճակի մեջ հարատևելը կարող է հասցնել նույնիսկ հուսահատության, և ուրեմն հարկ է ջանալ սթափվել և ամեն բան մի կողմ թողնելով սևեռվել սեփական հոգևիճակի վրա և հայրերի

խրատները օգտագործել սեփական հոգու փրկության համար, ինչը խաչակրություն է, իսկ քոնը թողած ուրիշիններով զբաղվելը ունայնություն է, և գայթակղություն լսողների համար, քանզի սրանք էլ պիտի ասեն, որ եթե հայրերի ուսմունքը նման անհանդուրժողականության և վեճերի է հանգեցնում, էլ մեր ինչին է այն պետք, քանզի այդ «բարիքից» մենք առանց այդ էլ շատ ունենք:

Պատրանքից խուսափելու համար պետք է զգոն լինել հատկապես աղոթքի ժամանակ, քանզի, ըստ սուրբ հայրերի, աղոթքը պետք է լինի մաքուր, առանց այլևայլ խորհուրդների և մտքերի ներթափանցման, ինչի համար հարկ է պայքարել՝ տեղիք չտալով երազանքներին, երևակայությանը, տեսիլքներին և այլ արտառոց երևույթների. «Երջանիկ է այն միտքը, որ աղոթքի ժամին ստացել է կատարյալ և մաքուր անտեսքություն» (Նեղոս Սինայեցի): Պետք է զգուշանալ նաև զգացմունքային՝ դերասանական աղոթքներից: Աղոթքի ամենաարգասաբեր ուղին բառերի վրա սևեռվելն է, չնայած կարելի է փոքր - ինչ դիմել զգացմունքի՝ նպատակ ունենալով կոտրվածություն ձեռք բերել, իսկ եթե զգացմունքային աղոթքը դառնում է աղոթքի կերպ՝ դա արդեն պատրանք է, ինչը մեծ արգելք է շնորհից առաջացած աղոթքին հասնելուն: Քանզի դերասանական - զգացմունքային աղոթքը կարող է արտաքին ապաշխարության կերպ ստանալ, նաև՝ օրհնաբանության ու փառաբանության, սակայն դրանք բոլորն էլ ունայնություն են. նման աղոթքի դիրիժորը սատանան է, որ ծաղրում է աղոթողին: Հաճախ տեսնում ես քրիստոնյայի, որ աղոթքից առաջ անտարբեր և սառը վիճակում է, իսկ երբ սկսում է աղոթել՝ միանգամից աղաղակում է ապաշխարության կամ գոհության բառեր, արտաքինն էլ բնականաբար ջանում է, ըստ արտասանած բառերի, այդ կերպն ընդունել, իսկ երբ ավարտում է աղոթքը՝ միանգամից նույն սառը և անտարբեր տեսքն է ընդունում՝ կարծես մի վայրկյան առաջ եղած ցավագին ապաշխարությունից հետք էլ չմնաց, նույնն է և փառաբանության ժամանակ: Միակ փոփոխությունը լինում է այն, որ նրա մեջ գլուխ է բարձրացնում փառամոլության կիրքը: Սա էլ երբեք չի գտնի «Կոտրած սիրտ ու խոնարհ հոգի», ինչը աղոթքը ընդունելի է դարձնում Աստծո մոտ. «Կոտրած սիրտն ու խոնարհ հոգին Դու չես մերժի, ո՛վ Աստված» (Սղմ. 50:19), իսկ այդ զգացմունքների արտահայտումն Աստծո առաջ ո՛չ միայն անլսելի է դարձնում նման աղոթքը, այլև՝ դատապարտելի, քանզի, ինչպես ասվեց, նման աղոթքների առաջնորդը սատանան է, որը ստի հայրն է, և նման աղոթքով կանգնել Տիրոջ առջև՝ հավասար է Աստծո առջև ստելուն, քանի որ սուտ են ապաշխարության ա՛յն խոսքերը, որ սրտից դուրս չեն գալիս, սուտ են այդ օրհնաբանություններն ու գոհաբանությունները, քանի որ լեզուն ճառում է, իսկ սիրտն ու հոգին քնած են: «Ո՛չ թե մարմնի կեցվածքով և մեծաձայն խոսքերով, այլ կամավոր հոժարությամբ աղոթք մատուցենք: Ո՛չ թե հանդուգն աղաղակով և ի ցույց մարդկանց, այլ հեզությամբ ու հանդարտությամբ, մտքերի ստրջանքով ու մեղմ արտասուքով պետք է սիրտն արթնացնել» (Հովհան Ոսկեբերան):

Եվ այսպես, կարելի է մի փոքր զգացմունքներին տեղիք տալ, ինչպես ասացինք, նպատակ ունենալով հասնել «Կոտրած սրտի և խոնարհ հոգու». երբ ճաշ են եփում, մի փոքր աղ են լցնում ճաշի մեջ, իսկ եթե մի ամբողջ տուփ լցնեն՝ այն կդառնա տհաճ և ճաշակելու համար ոչ պիտանի. նման կերպով աղոթքի պահին պիտի դիմել և զգացմունքներին: Սակայն միայն աղոթքի բառերի վրա սևեռվելն ամենալավ ուղին է՝ պատրանքից խուսափելու և կոտրվածության հասնելու համար:

Նման զգացմունքային աղոթքների կերպը հատուկ է խարիզմատներին: 1993թ. հրավերք ստացանք Հոլանդիայի Ուտրեխտ քաղաքից՝ մասնակցելու քրիստոնեական համաժողովի: Այդտեղ 8 հազարից ավելի մարդիկ կային տարբեր եկեղեցիներից, հիմնականում՝ բողոքական եկեղեցուց, որոնք ավելի խարիզմատ ուղղվածություն ունեին, կային նաև ներկայացուցիչներ Ռուս Պրովոսլավ Եկեղեցուց, կաթոլիկներից, ղպտիներից և այլն: Համընդհանուր աղոթքի ժամանակ այդ 8 հազար խարիզմատները լռության և խանդաղատանքի մեջ էին, սակայն, երբ աղոթքին փոխարինեց հոգևոր երգեցողությունը, մի քանի ռոկ խմբեր սկսեցին հերթով դղրդացնել դահլիճը՝ բարձրաձայն նվագելով ու երգելով. բոլորը ինքնամոռաց

պարում էին, ոմանք՝ թավալվում գետնին ու ծաղրում մեզ, որ զարմացած իրենց ենք նայում: Կարծես թէ այդ գետնին թավալվողները քիչ առաջվա լռակյաց աղոթողները չէին: Ինչ վերաբերվում է նման երաժշտության առկայությանը այս խարիզմատ եկեղեցիներում, ահա թե ինչ է ասում այդ մասին Պյոտր Ունրու անվամբ մի հետազոտող, իր «Անօրենության խորհուրդը գործում է» աշխատությունում. ««Նոր Դար» դիվական շարժումը ամենից առաջ ջանում է ավերել Աստվածաշնչյան հավատը և խեղաթյուրել Սուրբ Գիրքը, սրա դիվական ծրագրերի մեջ է մտնում նաև քրիստոնյա եկեղեցիների հոգևոր երգեցողության ոչնչացումը և տեղը նորը ներմուծելը: Եվ ահա թէ ինչ ապշեցուցիչ հաջողությունների են հասել սրանք այդ բնագավառում, այսօր արդեն ի հայտ է եկել քրիստոնեական ռոք երաժշտություն: Ինչպիսի խայտառակությո՜ւն երբ նման երաժշտությունը հնչում է Եկեղեցում: Սրա համար էլ մենք հատկապես պիտի զգույշ լինենք, որպեսզի չվարակենք մեր համայնքները նման դիվական երաժշտությամբ»:

Մի անգամ հոգնած և մի փոքր անտրամադիր նստած էինք տարբեր եկեղեցիներ ներկայացնող տաղավարներից մեկի մոտ, երբ մեզ մոտեցավ լուրջ և պատկառելի արտաքինով մի տղամարդ, նստեց մեր կողքին և հանկարծ սկսեց անբնական ձևով բարձրաձայն ծիծաղել ու քրքջալ. մենք տարակուսած իրար էինք նայում և մտածում՝ գուցե այս մարդը խենթ է. սա իսկույն լրջացավ և մի տեսակ նեղված, որ իրեն խենթի տեղ ենք դրել՝ ասաց. «Ես Անգլիայի հոգևոր ռադիոկայաններից մեկում եմ աշխատում, տեսա, որ դուք տրտում եք, որոշեցի ձեր տրամադրությունը բարձրացնել»: Ահա բաներ, որոնք ոչ մի կապ չունեն Աստվածային շնորհի հետ, այլ զուտ զգացմունքային ոլորտին են պատկանում: Իսկ ի՞նչն է պատճառը, որ սրանք ուրախանալով զգացական ուրախությամբ, ինչը իրականում աշխարհային ուրախություն է և ոչ հոգևոր, այն համարում են շնորհից առաջացած ուրախություն, դա նրանից է, որ նրանք ընդհանրապես, երբևիցե հաղորդ չեն եղել շնորհի ուրախությանը: Քանզի շնորհից առաջացած ուրախությունը լրիվ հակառակ է զգացմունքային ուրախությանը: Շնորհի ուրախության մեջ կա խանդաղատանք, մեծ խաղաղություն, երկնային սեր Աստծո, մերձավորի և ընդանրապես բոլոր արարածների հանդեպ և այդ ամենը համեմված է հեզությամբ և խոնարհությամբ, այդ ժամանակ տվյալ անձի հոգում տիրում է մեծ անդոր և նա այդ պահին էլ չի ուզում հարաբերվել որևէ մեկի հետ՝ պահպանելով լռակեցություն, նրա համար խորթ է և օտար ծիծաղը, խորշելի են զվարճանքները, սա միայն մի բան է ցանկանում՝ ինքն իր մեջ պարփակվելով վայելել այդ աննկարագրելի խաղաղությունը, որի համար Առաքյալն ասաց. «Աստծու խաղաղությունը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը և մտածումները Քրիստոս Հիսուսով» (Փիլիպ. 4.7): Իսկ շնորհի խաղաղությանն անծանոթը երկնային ուրախությունները պատկերացնում է որպես մի շոու, մի գեր զվարճանք, նրա համար Դրախտը նման է այսպես կոչված մի հսկա «Դիսնեյ լենդի» - ի, որտեղ սուրբերը ցնծում են տեղական ջրաշխարի պատճառած «երջանկությունից» և այլ նմանատիպ հաճույքներից, նման «դրախտում» զարմանալի չէր լինի տեսնել նույնիսկ լողազգեստով կիսամերկ եվաների, սա աշխարհային խաղաղություն է, իսկ Տերը զգուշացնում է, որ չլինի թէ շնորհի խաղաղությունը շփոթենք աշխարհի խաղաղության հետ. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս» (Հովհ.14.27):

Խարիզմատների և հիսուսականների մոտ կարծես հատուկ է օտար լեզուներով աղոթելը, ինչը նրանք համարում են շնորհի ներգործության արդյունք: Առաքելական շրջանում կար նման լեզվախոսություն, որը, ըստ Պողոս Առաքյալի, հանդիսանում էր Սուրբ Հոգու շնորհներից մեկը և ամենացածրը (Ա Կորնթ. 11:10): Դա մի յուրատեսակ աղոթքի և Հոգով խորհուրդներ արտահայտելու կերպ էր: Նորաստեղծ եկեղեցին դեռ չուներ կանոնակարգված աղոթքներ, և շատ դժվար էր հոգևոր վիճակը պահպանել առանց աղոթքի, քանզի Առաքյալը հորդորում էր, որ ամեն ժամ և ամեն տեղ աղոթեն: Երբ

ձևավորվեց եկեղեցին, հաստատվեցին Սուրբ Պատարագը, ժամերգությունները, գրվեցին աղոթագրքեր, այդժամ էլ լեզուների այդ պարգևը առաջին իսկ դարում, ըստ ուսումնասիրողների, կամաց – կամաց վերացավ և դրա նմանակն ի հայտ եկավ այս վերջին դարերում, սակայն պետք է աչալուրջ լինել, քանի որ մեր թշնամին, որին Օգոստինոս Երանելին անվանում է «Աստծո կապիկ», այսինքն՝ ծամածռվող՝ կրկնօրինակող, հանգիստ չի նստում, գիշեր ու զօր պատերազմում է մեր դեմ, և իր խաբկանքներն Աստծո շնորհներին նմանեցնելով ջանում է պատրել: Հիշենք Մովսեսին, որ գավազանը դրեց փարավոնի առջև և այն օձ դարձավ Աստծո շնորհով, սակայն փարավոնի մոգերն էլ գցեցին իրենց գավազանը, և դրանք էլ օձեր դարձան սատանայի զորությամբ, այդպես և արյան ու գորտերի պարագայում: Այս մարդիկ սկսում են օտար լեզուներով խոսել՝ իրենք էլ չհասկանալով, թե ինչ են խոսում, իսկ վկայությունները քիչ չեն այն մասին, երբ պարզվել է, որ նրանց լեզվախոսությունն աստվածհայհոյություն է եղել: Աֆրիկայում կա Զուլու անվանվող մի ցեղ. նրանց մեջ քրիստոնեություն քարոզող մի գերմանացի գրում է, որ այդ հեթանոս, կիսավայրենի ցեղի մարդկանցից ոմանք, որ նույնիսկ գրել-կարդալ չգիտեն, հանկարծ սկսում են անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով մաքուր խոսել, իսկ ցեղակիցները բնավ չեն զարմանում դրա վրա՝ ասելով, որ այսինչ ոգին է նրա մեջ խոսում: Եվ այսպես, այսօր շատերը կարող են Մովսեսի գավազանը շփոթել մոգերի գավազանի հետ, և դիվականն Աստվածայինի տեղ ընդունելով՝ հպարտանալ իրենց հատուկ «շնորհ»-ով: Սակայն այսօր ոչմիայն այս հեթանոսներն են այլ լեզուներով խոսում այլև այլ ոչ քրիստոնեական կրոնների ներկայացուցիչները «Խարիզմատ ոգին այսօր տարածվել է աշխարհով մեկ, ներթափանցելով առանց բացառության բոլոր կոնֆեսյաների մեջ: Այսօր կարող էք լսել բուդիստների, մահմեդականների և հրյաների, որ խոսում են լեզուներով, մարգարեանում կամ դևեր քշում, գործում «հրաշքներ»» (Պյոտր Ունրու): Տարիներ առաջ Մասիսի շրջանի մի գյուղում, որտեղ հիմնականում փախստականներ էին բնակվում, մեզ մոտ՝ ակումբ այցելեց մի կին իր մանկահասակ աղջկա հետ և ասաց, որ ցանկանում է հաճախել Առաքելական Եկեղեցի, քանզի գնացել էր հիսունականների մոտ, և նրանք աղոթել էին աղջկա համար, որպեսզի նա սկսի լեզուներով խոսել. «Սակայն աղջիկս մի տեսակ անջատվեց և տարուբերվեց, ես էլ վախեցած բղավեցի՝ ասելով. «Աղջիկս, Հիսուսի անունը կանչի՛ր», իսկ նա այդ անգիտակից վիճակում ասաց. «Եթե Հիսուսի անունը կանչեմ՝ չեմ կարող լեզուներով խոսել»»: Իհարկե, կարելի է նմանատիպ շատ օրինակներ բերել, բայց կարծում ենք՝ այսքանն էլ բավ է ճշմարտությունը փնտրողների համար: Հետաքրքիր է, որ նրանք միշտ շեշտում են, թե Սուրբ Հոգու օծությունն է իրենց վրա և լեզվախոսությունն էլ, իբր, դրա ապացույցն է: Իսկ, ըստ երևույթին, խարիզմատ շարժման ներկայացուցիչ, վերը հիշատակված Ռիկ Ջոյների «Վերջին արշավը» գրքում պարունակող հայտնություններում կա մի դրվագ, երբ մի խումբ քրիստոնյաներ ինքնավստահ գնում են, իսկ նրանց գլխավերևում պտտվում են պիղծ դևերի ոհմակները և իրենց գարշելի մաղձը թափում են սրանց վրա, իսկ սրանք հպարտությամբ ասում են՝ «Սուրբ Հոգու օծությունն է մեզ վրա»:

Ահա ևս մի տպավորիչ պատմություն. «Մի հավատացյալ զինվորական իր կնոջ հետ պատկանում էր խարիզմատ եկեղեցուն: Մի անգամ, սա կիրակի երեկոյան ծառայության բերումով հսկում էր մի տան մոտ որտեղ տեղի էր ունենում ոգեկանչության սեանսներ: Նա հետաքրքրասիրությունից դրդված հետևում է սրանց արարողություններին և ահա քուրմը, որ կապ պիտի հաստատեր ոգիների հետ բերում է զոհաբերության պարագաները: Սա իմ սև հավ է մորթում և խմում դրա արյունը, ապա մի ամբողջ շիշ օղի էլ խմելով վառում է մոմերը: Դրանից հետո սկսում է կանչել ոգիներին: Անցնում է կես ժամ սակայն ոչմի արդյունք և միայն ժամ ու կես անց հանկարծ սրահում սկսվում է ահավոր աղմուկ: Բոլոր սեղանները և աթոռները տարուբերվում են և բոլորը հասկանումեն, որ ոգին ժամանել է: Զինվորականը ապշած հետևում է դեպքերին: Քուրմը հարցնում է ոգուն «Ինչո՞ւ մեզ ստիպեցիր այսքան սպասել, մենք արդեն ժամ ու կես է որ քեզ ենք կանչում»: Ոգին պատասխանում է «Մենք գտնվում էինք այսինչ եկեղեցում (և անվանում է այն

եկեղեցու անվանում որին պատկանում է զինվորականը իր կնոջ հետ): Մենք այս-ինչին և այն-ինչին (տալիս է անունները) հոգով մկրտեցինք: Իսկ այս-ինչին ու այն-ինչին տվեցինք լեզու խոսելու ոգի նաև բժշկության և մարգարեության շնորհ»: Զինվորականը սրսափից գունաթափվում է և այպես է դողում, որ չի կարողանում ոտքի վրա մնալ, չէ որ խոսքը գնում էր իր հարազատ եկեղեցու մասին: Սա շտապում է տուն և հենց այդ ժամանակել կինն է եկեղեցուց վերադարձաց լինում տուն: Նա հարցնում է կնոջը թէ այդ օրը ինչ է տեղի ունեցել եկեղեցում, իսկ կինը առանց որևե բան բաց չթողնելով կրկնում է այն ամենը ինչը, որ ասվել էր ոգեկանչության սեանսի ժամանակ: Այդ ժամ ամուսինը ասում է «Սա սարսափելի բան է, մենք պետք է շուտափույթ ապաշխարենք և խոստովանենք, որ մեր մեջ գործող ոգին Սուրբ Հոգին չէ: Դա ստության ոգի է»: Դրանից հետո նրանք էլ չհաճախեցին այդ եկեղեցին» (Պյոտր Ունրու): Ահա թե ինչ ահավոր վիճակի մեջ կարող է գտնվել մարդը, երբ կտրված բուն Որթատունկից՝ ուզում է ինքնակամ աճել և պտղաբերել մոլախոտերի և փշերի մեջ: Իսկ Որթատունկի պտղաբեր ճյուղերը հենց սուրբ հայրերն են, իրենց խրատները և դավանաբանական աշխատությունները, որ Հոր Աստծո կողմից է՛լ ավելի են մշակվում, որպեսզի ավելի պտղաբեր լինեն: Մեզ տրված է այդ պտուղներից օգտվել՝ ի շահ մեր հոգու, իսկ ովքեր ուզում են ինքնակամ գործել բարի պատերազմում պիտի մոլորվեն լայն ճանապարհի լաբիրինթոսում:

Իսկ մեր Եկեղեցու հավատացյալներից ոմանք էլ հավաքվելով մեկտեղ տարբեր հարցեր լուծելու համար բազմիցս կրկնում տերունական աղոթքը. 10 անգամ այսինչ բանի համար, 20 անգամ՝ այնինչ բանի, և այսպես շարունակ. բնականաբար, նրանք ասում են այդ որպես անգիր արված բառեր, այլ ո՛չ ինչպես Նարեկացին՝ «Ի խորոց սրտի, խոսք առ Աստծո», ոմանք էլ սբ. Պատարագի ժամանակ իբր աղոթում են, և գնդացիրից արագ արտաբերում են աղոթքի բառերը: Աղոթքը մոգություն չէ, այլ խոսք՝ ուղղված առ Աստված, և աղոթքի նման մեխանիկորեն կրկնության քանակն ու խոսքերի արագ արտաբերումը չէ, որ այն պիտի հասցնեն Աստծուն: Սուրբ հայրերից մեկը, երբ աղոթքի էր կանգնած եկեղեցում, ի խորոց սրտի զղջման հոգոց հանեց, ինչը լսեց կողքին կանգնած վանականը, իսկ ծերն այդ իմանալով՝ խոնարհվեց նրա առջև և ասաց. «Ների՛ր ինձ, եղբայր, ես անարժան չեմ վանական կոչվելու», քանզի զղջման հոգոցը մեծ ձեռքբերում է աղոթքի պահին, ինչը հարկ է թաքցնել ներկաներից, որպեսզի հպարտությանը տեղիք չտան. «Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամանակ կապրես» (Եսայի 30:15):

Ըստ սուրբ հայրերի, աղոթքի ժամանակ արտասվելը մեծ շնորհ է. «Եղբայրներ, մենք չենք դատվի մեր շունչը փչելիս, ինչ է հրաշքներ չենք գործել, չենք քարոզել կամ վկայել, տեսիլքներ չենք տեսել, բայց անկասկած պատասխան պիտի տանք Աստծուն այն բանի համար, որ անդադար չենք լացել մեր մեղքերի համար» (Հովհաննես Սանդուղք), սակայն ոմանք պատրվելով աղոթքի պահին հիստերիկաբար լալիս են, ոմանք նվնվում են, ոմանք էլ լինելով ուղղակի զգացմունքային, թռչում են աչքերը, այդ ամենը համարելով շնորհից բխած լաց, որով հպարտանում են և սրտում նսեմացնում նրանց, ովքեր չունեն նման «շնորհ», բայց, ինչպես ասվեց, ընդամենը մեկ հոգոցը, որ դուրս է գալիս ի խորոց սրտի, աղոթքն անխափան հասցնում է երկինք, իսկ նման լացերը ո՛չ միայն աղոթքը տեղ չեն հասցնում, այլև խորշելի են դարձնում: Ճշմարիտ արցունքներ ունենալու համար պետք է ուսուցանել սուրբ հայրերի խրատները, այլ պարագաներում պատրանքը միշտ պատրաստ կանգնած է:

Երբեմն աղոթքի պահին հանկարծ հայտնվում են հոգևոր մտքեր ու խորհուրդներ, և անձը տարվում է դրանցով, որոնք ևս աղոթքի խափանման ձև են. հիմնականում դրանք էլ պետք է մերժել՝ չընդունել: «Զանա՛ աղոթքի ժամանակ միտքդ խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամեն տեսակ արկածներից, որպեսզի աղոթքն ընդունելի լինի» (Նեղոս Սինայեցի):

Երբեմն էլ աղոթքը լինում է առանց մտային հարձակումների ու երազանքների՝ պարզ, խաղաղ, հաճելի և կարծես լրիվ համապատասխանում է սուրբ հայրերի պատվիրած աղոթքի կերպին. սակայն հնարավոր է, որ դա ընդամենը դրա նմանակը լինի, այսինքն՝ կեղծը: Երբ չարը տեսնում է աղոթողի

ջանքերը ներթափանցող մտքերի, խորհուրդների և երազանքների դեմ՝ փոխում է հարձակման տակտիկան, միաժամանակ դադարում վերը նշված հարձակումները և մի յուրօրինակ խաղաղության և հանգիստ վիճակ է ստեղծում աղոթողի մոտ, որպեսզի սա կարծի, թե արդեն հասել է ճշմարիտ աղոթքին. իսկ եթե դա ընդունվում է որպես շնորհից առաջացած աղոթքի հետևանք՝ աղոթողն ընկնում է պատրանքի մեջ, քանզի ինչ-որ շնորհից չէ՝ չարից է: Այդ խաղաղ, մի տեսակ քաղցր վիճակը պետք է քննել հենց աղոթքի պահին. լինում է, որ նման հոգևոր վիճակ մարդն ապրել է իր մանկության շրջանում, երբ զգացմունքներն ավելի թարմ են լինում: Սա է՛լ ավելի ընկալելի կլինի, երբ կարդանք Չարլզ Դիկենսի. «Սբ. Ծննդյան երգը» գրքից մի հատված այն մասին, թե ինչպես սուրբ Ծննդյան ոգին ծեր Սքրուջին ետ է տանում ու ցույց տալիս իր մանկությունը. ««Տեր Աստված, - ասաց Սքրուջը՝ շուրջը նայելով ու ձեռքերն իրար զարնելով, - մանկությունս այստեղ է անցել, այնտեղ եմ մեծացել»: Ոգին մեղմ հայացքով նայեց Սքրուջին: Նրա ձեռքի քնքուշ հպումը չնայած թեթևակի ու ակնթարթային էր, բայց ծեր Սքրուջի սրտում ինչ – որ զգացումներ արթնացրեց: Նա ճանաչում էր օդում թևածող հազարավոր բույրեր և հիշում յուրաքանչյուրի հետ կապված հազարավոր խոհեր, հույզեր, երջանիկ պահեր ու վաղո՜ւց – վաղո՜ւց մոռացված հոգսեր. «Շուրթերդ դողում են, - ասաց Ոգին, - այդ ի՞նչ է գլորվում այտիդ վրայով»»: Ահա մոռացված այս զգացումները առանց մտապատկերման կարող են աղոթքի պահին առաջանալ և նույնիսկ արցունք առաջացնել, բայց դա ոչ մի ընդհանուր բան չունի շնորհից առաջացած աղոթական վիճակի հետ. դա զուտ պատրանք է, նոր խաբկանք և հարձակում, նման զգացումները չարը վաղուց, անցած-գնացած ժամանակներից պատճենահանում է և բերում աղոթքի պահին, ինչը հարկ է չընդունել, այլ՝ մերժել, սակայն դա շատ դժվար է, քանզի պատերազմը կարծես դադարել է, և որպես դրա վարձատրություն՝ դու պիտի վայելես հաղթանակի այդ զգայական քաղցրությունը, և հանկարծ պարզվում է, որ դու այն պիտի մերժես, սակայն դրա համար ջանք է պետք թափել, քանզի այն պատերազմի շարունակությունն է, մի նոր խորամանկ քայլ, ո՛չ թե վարձ: Բնական է, որ Աստծո ողորմությամբ, ըստ սուրբ հայրերի ուսմունքի, ուղիղ աղոթք փնտրողի մոտ էլ առաջանում է շնորհից բխած խաղաղություն, սակայն դա լրիվ տարբերվում է զգայականից: «Երբ աղոթելիս զգում ես ուրախություն, որը վեր է այս աշխարհի ուրախությունից, այնժամ իսկապես ձեռք ես բերում սուրբ աղոթքը, որ կատարվում է ի փառս Ամենասուրբ Երրորդության» (Նեղոս Սինայեցի): Ինչ վերաբերում է շնորհից եղած այս վիճակին՝ դա իսկապես վարձք է, սակայն դա ավելի հատուկ է սրբերին, որոնք Աստվածային շնորհի տաճար էին, իսկ մենք, ըստ մեր տկարության, որպես «առկայծող պատրույգ» կարող ենք արժանանալ դրան միայն ըստ մեր չափի, ինչն էլ երկարատև չի լինում: Երբ աղոթքի պահին քրիստոնյան արժանանում է այդ հոգևոր խաղաղությանը, ըստ հայրերի դա ընդամենը հորդոր է, մխիթարություն հետագա պայքարը շարունակելու ձանձրույթի, տարաբնույթ մտքերի և խորհուրդների դեմ: Շնորհի խաղաղությունն այլ է, այն չի հիշեցնում անցյալի քաղցր զգացական վիճակ: Հաճախ նորադարձը ստանում է առաջին սիրո և ջերմության պարգև, ինչի մասին մանրամասն նկարագրում է հայր Ամոնը («Խրատանի ապաշխարության» № 3). հետագայում, երբ այն սկսում է վերանալ, քրիստոնյան այդ օրհնյալ վիճակը հիշելով՝ պիտի ջանա համեմատել դա իր մոտ առաջացած նման այլ զգացումների հետ. եթե դա չի համապատասխանում վերոհիշյալ հոգևոր խաղաղությանը, ապա հարկ է մերժել: Շնորհից բխած խաղաղությունը հաճախ առաջանում է նաև Սուրբ Հաղորդություն ստանալիս:

Ասենք, որ երբ չարը չի կարողանում աղոթողին գցել զգայական և երևակայական պատրանքի մեջ, այդժամ սկսում է պատերազմել այլ կերպերով, որոնցից մեկն էլ ձանձրույթն է: Երբ ձանձրույթի ոգին աղոթքի պահին գլուխ է բարձրացնում, իսկ աղոթական կարգը նոր է սկսվել, սա ստիպում է, որ արագ-արագ աղոթական կարգը վերջացնես: Եթե լսես սրան, ապա շատ ծանր, տհաճ կերպով կանցկացնես աղոթական կարգդ: Միայն այն մտքից, որ դեռ բավականին ժամանակ կա մինչ ավարտը, դա արդեն մեծ

տրտմության պատճառ է դառնում և միայն մի կերպ հասնում ես վերջին, արդեն ջախջախված և վիատված, որևէ լավ բանի չարժանացած: Եվ որպեսզի չընկնենք նման անտանելի վիճակների մեջ, հարկ է զինվել այդ ոգու դեմ և դիմակայել դրան: Պետք չէ դրդված ծանձրույթի չար ոգուց փախուստի դիմել՝ փորձելով հնարավորինս արագ ավարտել աղոթքը, քանզի ահա թե ինչ դառը վախճան է ունենում նման աղոթակարգը: Եվ ուրեմն, հակառակ ծածրույթի չար ոգուն, պետք է ոչ թե շտապել աղոթքը արագ-արագ վերջացնել, այլ ընդհակառակը, ավելի սևեռվել աղոթքի բառերի վրա և ամեն մի բառը կրկնել նույնիսկ մի քանի անգամ, դա վճռականություն է պահանջում, մեծ հոժարակամություն և տրամադրվածություն, իհարկե դա չպետք է արվի հենց այնպես ինքնանպատակ, այլ նպատակաուղղված, որպեսզի կարողանանք ազատվել ցրվածությունից՝ ընկալելով բառի իմաստը, միայն բառը կրկնելու հաստատ որոշումից արդեն իսկ միտքը սևեռվում է և հենց այդ ուշադրությունն իսկ հաճախ բավ է լինում, որ միտքը չցրվի և բառը կամ նախադասությունը կրկնելու կարիք էլ չլինի: Այդ ժամանակ կամաց – կամաց մեջդ սկսվում է հոգևոր ջերմություն առաջանալ, քաղցրանալ աղոթքը և արդեն էլ չես ցանկանում աղոթքը շուտ վերջացնել, այլ՝ հարատևել: Եվ դա լինում է ըստ Տերունական խոսքի, թե. «փնտրեք ու պիտի գտնեք», հայրերն էլ են ասում, որ «աղոթքը փնտրելով է գտնվում»:

Շատ հաճախ Սուրբ Գրքի պատգամը, որ ասում է՝ «Ձեր մեղքերը միմիյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որ բժշկվեք» (Հակ.5.16) ճիշտ չեն հասկանում, ինչը բերում է խռովքի և նեղվածության: Մի օր մեր եկեղեցու անդամներից մեկը խռովված պատմեց. «Իմ ծանոթներից հավատավոր մի տղամարդ զանգահարեց ինձ և ասաց, որ իմ մասին շատ վատ բաներ է մտածել և խնդրում էր, որ իրեն ներեմ, ես էլ սիրով ներեցի: Սակայն մի քանի օր անց նա նորից զանգահարեց և խոստովանեց, որ այս անգամ էլ ավելի վատ բաներ է մտածել իմ մասին և նորից ներողություն խնդրեց: Այս անգամ որոշ սառնությամբ ասացի, որ ներում եմ: Բայց արի ու տես, որ նա միառժամանակ անց նորից զանգահարեց և մեկ առ մեկ թվարկեց այն լուտանքները, որ մտքում թափել է իմ գլխին և նորից ներում խնդրեց: Ես էլ արդեն չդիմացա և նեղված ասացի, որ այլևս ինձ չխոստովանի իր մտքերը, ինչպիսին էլ, որ դրանք լինեն, քանզի այդ խոստովանությունների հետևանքով իմ մեջ էլ սկսում էր նրա հանդեպ հակակրանք ձևավորվել»:

Իսկ Հավատավոր մի ընտանիքում էլ սկեսուրը, որպեսզի Սուրբ Հաղորդություն ստանա, ջանում է ըստ պատշաճի պատրաստվել, ինչի մեջ է մտնում և այն, որ սա ամեն անգամ հարսին խոստովանում է, թե ինչ վատ բաներ է մտածել իր հասցեին, դրանով իբր կատարում է Առաքյալի վերոբերյալ պատվիրանը, ինչի հետևանքով նրանց մեջ ավելի մեծ անջրպետ և խռովք է առաջանում, այն ինչ պատվիրանապահությունը պիտի բերի խաղաղության և միության, այլ ոչ հակառակը: Այս պատվիրանի սխալ ընկալումը շատ ուրիշների էլ է խռովքի մատնել: Եվ ուրեմն, պետք է մեղքերը խոստովանել փորձառու հոգևորականի առջև, իսկ եթե ցանկանում ես կիսվել մեկ ուրիշի հետ, ապա ըստ սբ. հայրերի, հարկ է ասել այնպիսի մեկին, ով կարող է առանց գայթակղվելու լսել քեզ և բարի խորհուրդ տալ, այլ ոչ թե նրան, ում մասին այդ չար խորհուրդներն ունեցել ես, քանզի շատ հաճախ չարն է բերում այդ վատ մտքերը, իսկ դու այն վերագրելով քեզ, գնում և ներողություն ես խնդրում մի բանի համար, որ իրականում չես արել, իսկ միտումն այն է, որ խռովք և բաժանումներ առաջանան եկեղեցում, սրա համար է ասում Առաքյալը, թե՝ «սատանային տեղիք մի տվեք»:

Հայտնի է, որ չարը հայհոյական մտքեր է բերում նույնիսկ Աստծո և սրբերի հասցեին, ուր մնաց, որ միմյանց հանդեպ նման չար մտքեր չբերի: Եթե քրիստոնյան իր իսկ մտքի մեջ էլ ընդդիմանա այդ պիղծ մտքերին, Տիրոջ օգնությամբ կարող է քշել դրանք և խաղաղվել ու արժանանալ մեղքերի թողության և երկնային վարձքի: Երբեմն, երբ մտնում ենք եկեղեցի մասնակցելու Սուրբ և Անմահ Պատարագի

արարողությանը, հանկարծ նման չար մտքեր են առաջանում մասնակիցների հասցեին և եթե տեղիք տաս, ապա կսկսես մտքումդ դատել ներկաներին, սակայն պետք է նախ գիտակցել, որ դա չարի հարձակում է և զինվել դրա դեմ՝ մտքումդ ասելով. «Ո՛չ, այստեղ բոլորն էլ Աստծո սրբերն են, Նրա օրհնյալ զավակները և միայն ես եմ օտար, անարժան ու մեղավոր, նրանք բոլորն էլ ընդունելի են և միայն ես եմ մերժելի, նրանք կգովվեն Տիրոջ կողմից, իսկ ես կանարգվեմ, նրանք կվարձատրվեն իրենց գործերի համար, իսկ ես կպատժվեմ իմ բազում անօրենությունների համար» և նման այլ խոսքերով կարող ես ինքդ քեզ պարտադրել չդատել ներկաներին և կասեցնել չար մտքերի ներհոսքը: Իհարկե, այս կերպ վարվելն այնքան էլ հեշտ բան չէ, պիտի կարողանաս ստիպել ինքդ քեզ այդ բառերն ասել, քանզի միջիցդ մի ձայն կնդդիմանա քեզ՝ ասելով, որ քո ասած ինքնապախարակման խոսքերը ճիշտ չեն և դա ընդհամենը կեղծավորություն է, բայց պետք չէ դրան լսել, այլ ջանալ մտքումդ այդ ինքնանվաստացման խոսքերն ասել, և եթե հարատևես, ապա Տիրոջ օգնությունը շուտով կհասնի քեզ և հանկարծ քեզ մոտ կառաջանա կոտրվածություն, զղջման հոգոցներ, կխոնավանան աչքերդ և հոգուտ մեջ կզգաս խաղաղության ներհոսք, ինչն էլ չարի դեմ տարած հաղթանակիդ բերկրանքն է, պարգև ամրությանդ համար:

Սուրբ Պատարագի արարողության ժամանակ՝ «Աշխարհ գալոց»-ի պահին, երբ ներկաների միջով տարվում է խաչվառը, ոմանք սկսում են մոլեգնորեն այս ու այն կողմ քաշել այն, ուժգնորեն համբուրել, ձեռքերը քսել խաչվառի ամբողջ մակերեսով մեկ՝ կարծելով, թե ինչքան շատ ձգեն ու համբուրեն և մաշեցնեն այն, այնքան ավելի շատ օրհնություն կստանան: Սակայն նման վարվելակերպը նույնպես պատրանքի ոլորտին է դասվում, քանզի, ըստ Սուրբ Գրքի, դա ոչ միայն անարդյունավետ է, այլև՝ անընդունելի: Երբ Տերը գնում էր Հայրոսի տուն, նրան շրջապատում էին բազմաթիվ մարդիկ. «Եվ երբ Հիսուս գնում էր, ժողովուրդը Նրան նեղում էր»: Այդ ժամանակ մի հիվանդ կին մեծ հավատքով կպավ Հիսուսի քղանցքին՝ համոզված լինելով, որ պիտի բժշկվի. այդպես էլ եղավ, իսկ Տերը կանգ առավ և ասաց. «Ո՞վ էր, որ Ինձ դիպավ»: Իսկ Պետրոսը և նրա հետ եղողները ասացին. «Վարդապե՛տ, ժողովուրդն է, որ սեղմում ու նեղում է Քեզ»»: Եվ ահա այս ժողովուրդը ընդամենը նեղողներ և անհանգստություն պատճառողներ էին և Աստվածային որևէ զորության անհաղորդ, որովհետև այդ զորությանը հաղորդ եղավ միայն այս խոնարհ կինը, որն անարժանության զգացումով, գաղտնի ընդամենը Տիրոջ քղանցքին դիպավ, ի տարբերություն այն նեղողների. «Մեկն Ինձ դիպավ, որովհետև զգացի, որ Ինձնից զորություն դուրս եկավ»: Եվ երբ ամեն ինչ ի հայտ եկավ, Տերն այդ սարսափած կնոջը մխիթարեց՝ անվանելով դուստր, ինչն Ավետարանում որևէ այլ տեղ չի հիշատակվում: Եվ ուրեմն հավատքն է փրկում, այլ ոչ թե խաչվառի քաշքշելը, տեղատարափ համբույրները և այլն: Դրա համար էլ հարկ է երկյուղածությամբ և անարժանության զգացումով վերաբերել խաչվառին և մյուս սրբություններին, եթե կպչում ենք, ապա այնպես, ինչպես այդ հիվանդ կինը, և մենք էլ կգտնենք հոգու և մարմնի բժշկություն, հակառակ դեպքում կդասվենք նրանց շարքին, ովքեր միայն նեղություն են պատճառում. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է Քեզ» (Մարկ. 5:31):

Շատերն աշխարհով մեկ այսօր պատմում են երազների և տեսիլքների մասին, որոնցում տեսել են Տիրոջ երկրորդ գալուստը, թե ինչ արհավիրք է սպասվում աշխարհին, և իբր պատգամ են ստացել, որ մարդկանց ապաշխարություն քարոզեն: Նման երևույթները ծագել են Միացյալ Նահանգներում՝ «խարիզմատիկական վերածնունդ» շարժման մոտ. սրանք մասսայական «Հիսուս–ռոք-ֆեստիվալ»-ներում և նմանատիպ այլ հավաքներում հայտարարում են, թե՝ «Հիսուսը շուտով կգա»: Ռուս Եկեղեցու Ամերիկայի թեմի հայտնի վարդապետ Սերաֆիմ Ռոուզն այս երևույթները միանշանակ վերագրում է չարին՝ ասելով, որ նման հայտնություններն ուզում են աշխարհին մոռացության տալ նեռի գալուստը և սևեռվել Տիրոջ երկրորդ գալստյան վրա, այնինչ Սուրբ Գիրքն ասում է, որ Տերը չի գա, մինչև չգա անօրինության

որդին՝ նեռը. «Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան և Նրա մոտ մեր հավաքվելու համար դուք իսկույն չխռովվեք ձեր մտքում և չզարհուրեք ո՛չ հոգով, ո՛չ խոսքով, ո՛չ էլ թղթերով՝ իբր թե մեր կողմից գրված, որպես թե արդեն եկած հասած լինի Տիրոջ օրը: Թող ոչ ոք ձեզ չխաբի և ոչ մի ձևով. որովհետև այն օրը չի գալու, եթե նախ ապստամբությունը չգա, և չհայտնվի անօրենության մարդը՝ կորստյան որդին՝ հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրա, որ կոչվում է աստված կամ պաշտամունքի առարկա, մինչև այն աստիճան, որ նա նստի Աստծո տաճարում և ինքն իրեն ցույց տա, թե աստված է» (Բ Թեսաղ. 2:1-4): Եվ ուրեմն նպատակն այն է, որ մարդկությանը պատրաստեն նեռին՝ որպես Քրիստոս ընդունելուն: Սերաֆիմ Ռոուզի գրքում ասվում է նաև, որ Ամերիկայի «Խարիզմատ» ամսագրի խմբագիրը պատմում է միստիկական երևույթների մասին, որոնք համոզում են, թե Տիրոջ գալը շատ մոտ է: «Իմ ընկերը կնոջ հետ երկրորդ խճուղով Բոստոնին մոտենալիս կանգնեցրել է մեքենան՝ վերցնելու մի հետիոտն զբոսաշրջիկի: Նա մի մորուքավոր երիտասարդ է եղել, որը լուռ նստել է ետևի նստարանին, և շարունակել են ճանապարհը: Քիչ անց սա շշուկով ասել է. «Տերը շուտով կգա»: Ընկերս և կինը ապշած ետ են շրջվել, սակայն ոչ ոքի չեն տեսել: Նրանք այնպես են ցնցվել, որ կանգնել են առաջին իսկ պատահած լիցքավորման կայանի մոտ, քանզի կարիք ունեին ինչ-որ մեկի հետ կիսվելու: Լիցքավորման կայանի ծառայողը նրանց լսում է առանց ծաղրի և շատ լուրջ՝ միայն մի բան ասում. «Սա արդեն 5–րդ մեքենան է, որի հետ նման բան է կատարվում»: Ապա նման բաներ մեկը մյուսի ետևից սկսեցին լսվել Ամերիկայի տարբեր ծայրերից մի ամբողջ երկու տարի», և նման դիվական երևույթներն այդ խմբագրության համար հիմք էին հանդիսանում ամենուր աղաղակել, որ «Հիսուսը շուտով պիտի գա»: Մեզ մոտ էլ՝ Հայաստանում, այդ խարիզմատ երևույթը տարածում է գտնում, քանզի սկսում ենք հաճախ լսել, որ մեկը երազ է տեսել, մյուսը՝ տեսիլք, մեկ ուրիշին մի ինչ – որ ձայն է ասել, որ Տերը շուտով պիտի գա, և հարկ է՝ ապաշխարության կոչ անել:

Ահա մարդիք թողնելով իրենց հոգևոր վիճակը՝ խորհում են գալիքի մասին սևեռվելով միայն հայտնության գրքի վրա, գիշեր ու զօր մտորելով միայն այդ վախճանաբանական հարցերի շուրջ, ինչը նույնպես պատրանքի ոլորտին է վերաբերում: Այդպես վարվեց և Հայ Առաքելական Եկեղեցու Եկեղեցասիրաց Եղբայրակցության մի քարոզիչ, որը տարված էր նման բաներով. նա գնաց Միացյալ Նահանգներ մշտական բնակության ու այնտեղ էլ շարունակեց նմանատիպ քարոզչությունը: Վերջերս իմացանք, որ նա և իր հետևորդները այլևս եկեղեցի չեն հաճախում և ամեն կիրակի ուղիղ ժամը 11 – ին գնում են ֆուտբոլ խաղալու և այդ ամենով հանդերձ ԱՄՆ-ի հայկական հեռուստածրագրերից մեկով սա քարոզում է իր շեղ ուսմունքը՝ ուրիշներին էլ ներքաշելով պատրանքի ոլորտ: Իհարկե չպետք է անտեսել վախճանաբանական հարցերի ուսումնասիրումը, հատկապես մեր այս ժամանակներում, երբ սրա միջոցով կարելի է շատ հարցերի պարզաբանում ստանալ, սակայն չտարվել դրանցով և այդ ուսումնասիրությունը դարձնել կյանքի նպատակ:

Եղբայրակցության մասին ասենք, որ բողոքական գրականության առկայությունը և նրանց քարոզիչների հաճախակի այցը այդ շատ օգտակար կառույցին այնպիսի վիճակի հասցրեցին, որ պառակտումներ և բաժանումներ առաջացան. վերջերս էլ եղբայրակցության մի քարոզիչ, տարված բողոքականության հովերով, Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող մի մեծ խումբ հավատացյալների բաժանելով Մայր Եկեղեցու ծոցից՝ տարավ և միացրեց ամերիկյան «Հայ Ավետարանական Հոգևոր Եղբայրություն» կոչվող մի արմատական բողոքական եկեղեցու:

Այս վերջին շրջանում մի նոր կարծիք է սողոսկել քրիստոնյաների շրջանում՝ եթե մարդը քրիստոնյա չէ, մահմեդական է կամ հինդու, բուդդայական է կամ հրեականության հետևորդ և նույնիսկ անհավատ, նա է՛լ կարող է փրկվել, եթե բարի գործեր և մարդասիրություն ցուցաբերի: Սակայն մի բան հստակ է՝ Նոյյան Տապանը մի դուռ ուներ, և մեր Տերն ասաց. «Ես եմ դուռը. եթե մեկը Իմ միջով մտնի՝ կփրկվի» (Հովհ.10.9):

Տապանի վրա չկային այլ դռներ, ասենք՝ Մուհամմեդի դուռ, Կրիշնայի, Բուդդայի, Մովսեսի, բարի գործերի և այլն: Որքան ուզում ես բարի գործ արա. աղոթի՛ր, ճգնի՛ր, սակայն, եթե այդ ամենը Հիսուս Փրկչի շնորհով չէ՝ անարժեք է, այսինքն՝ եթե դու ամեն բարի գործ անում ես, սակայն չես մտնում Տապանի դռնով, ջրհեղեղը, միևնույնն է, չի հարցնի, թե դու ի՞նչ բարի գործեր ունես և ի՞նչ կրոնի ես պատկանում, նման թե՛ բարին և թե՛ չարը պիտի ջրի տակ անցնեն. այդպես կլինի և Տիրոջ երկրորդ գալստին, երբ կրակե բոցերը պիտի փոխարինեն ջրհեղեղին: Արիոսը, Մակեդոնը, Նեստորը, Եվտիքեսը և այլ հերձվածողներ նզովվեցին և հեռացվեցին եկեղեցուց, առանց որի փրկության հույս չկա. չնայած նրանց մեջ կարող էին շատ բարի գործեր արած մարդիկ լինել, սակայն դավանության մեջ մի բան իսկ խախտելով՝ սրանց բոլոր գործերը դարձան անիմաստ և փուչ, էլ ի՞նչ ասենք այլակրոնների և աղանդավորների մասին, քանզի եթե նրանք մի բան էին այլափոխել դավանության մեջ, սրանք ընդհանրապես ոչ մի բանով չեն համապատասխանում ո՛չ ուղիղ դավանությանը, ո՛չ էլ վարդապետությանը, և բնական է, որ սրանց որևէ գործ՝ հոգևոր թե մարմնավոր, արժեք ունենալ չի կարող:

Կորնթացիներին Պողոս Առաքյալն ասում էր, թե՝ ձեր մեջ այնպիսի մեղքեր կան, որ նույնիսկ հեթանոսների մեջ չկան: Ուրեմն ի՞նչ, եզրակացնենք, որ հեթանոսները պիտի փրկվեն, իսկ կորնթացիները կորսվե՞ն: Եթե այդպես լիներ, Պողոսը կթողներ նրանց խրատելը ու կգնար հեթանոսների մոտ, և ոչ թե Քրիստոս կքարոզեր, այլ՝ «բարի գործեր»:

Պետրոսի տեսած տեսիլքը (Գործք 10:1-48) նշանակում էր, որ Տերը բոլոր ազգերին է կանչում փրկության, ուստի ոչ թե ազգությունը, այլ կրոնն է որոշիչ դեր կատարում, եթե մարդն ընդունում է քրիստոնեությունն անկախ ազգային պատկանելությունից՝ նա կանգնում է փրկության ճանապարհին, իսկ եթե հետևում է մի այլ կրոնի, բնականաբար, անկախ իր ապրելակերպից՝ ճգնում է, աղոթում, թե՛ ողորմություն տալիս, միևնույնն է՝ նա լայն ճանապարհի վրա է: Եթե ինքը՝ Կոռնելիոսը, որ, ի տարբերություն մահմեդականների և այսօրվա հրեաների, աղոթում էր ճշմարիտ Աստծուն և նրա համար վկայված էր որպես արդար, աստվածավախ և բարի գործեր կատարող, և այդ ամենը դեռ փրկության պատճառ չէին նրա համար, էլ ո՞ւր մնացին նրանք, որոնք ընդհանրապես հեռու են իրական Աստծուն պաշտելուց:

Եթե Կոռնելիոսը միայն աղոթելով և բարիք գործելով կարողանար փրկվել, ապա էլ հրեշտակի պատվիրանի կարիքը չէր լինի, որ ասաց. «Հոպպե մարդ ուղարկիր և Պետրոս կոչված Սիմոնին կանչիր, որ քեզ պիտի ասի խոսքեր, որոնցով պիտի փրկվես դու, նաև՝ քո ամբողջ տունը» (Գործք 11:13-14):

Այսպիսով՝ բարի գործերը, աղոթքը և հավատքը, որոնք չեն բերում Քրիստոսին, փրկարար չեն, տվյալ դեպքում այդ վերը նշված առաքինությունները պատճառ էին, որ դրանց վրա գումարվի ամենակարևորը՝ «լսելը», քանզի «Հավատը լսվածից է, և լսվածը՝ Քրիստոսի խոսքից» (Հռոմ 10:17): Եվ, ի վերջո, եթե փրկությունը կարող է միայն բարի գործերով լինել՝ առանց Քրիստոսի, ուրեմն Տիրոջ խաչելության կարիքը բնավ չէր լինի:

Ահա, երբ Պետրոսը ներս մտավ, նրա առջև ծնկի եկավ Կոռնելիոսը, նա, որ աղոթում էր և հավատում ճշմարիտ Աստծուն, արդար էր և աստվածավախ, ծնկի եկավ իր այս բոլոր առաքինություններով հանդերձ, քանզի գրված է. «Ով որ Ինձ է մերժում՝ Ինձ ուղարկողին է մերժում, և ով որ Ինձ է լսում՝ լսում է Նրան, ով Ինձ ուղարկեց» (Ղուկ. 10:16), այսինքն՝ միևնույնն է, այդ բոլոր առաքինություններն արժեք չէին ունենա Կոռնելիոսի համար, եթե չընդուներ Քրիստոսի բարի լուրը: Կոռնելիոսը Հռոմի քաղաքացի էր, ազգությամբ՝ հռոմեացի, ինչը մեծ արտոնություններ էր տալիս իրեն, ազնվատոհմիկ էր, հարուստ, իշխանավոր ու հեղինակավոր, և այդ ամենով հանդերձ՝ ծնկի եկավ մի համեստ, արտաքինով և ոչ մի բանով աչքի չընկնող նախկին ձկնորսի՝ Պետրոս Առաքյալի առջև: Այն ժամանակ, երբ Պետրոսը ձկնորս էր, ինքը պիտի ծնկեր Կոռնելիոսի առջև, իսկ երբ դարձավ Առաքյալ՝ նրա

առջև էին ծնկի գալիս, քանի որ, եթե Կոռնելիոսը Հռոմի քաղաքացի էր, իսկ Հռոմն այդ շրջանում աշխարհի մայրաքաղաք էր, ապա Պետրոսն երկնքի՝ Վերին Երուսաղեմի քաղաքացի էր. եթե սա կայսերական բանակի հարյուրապետ էր, Պետրոսն Աստծո Առաքյալ էր, եթե սա հարուստ էր, ապա Պետրոսի գանձերը երկնային անապական գանձեր էին, և վերջ ի վերջո Պետրոսը Աստծո տաճար էր, ում մեջ բնակվում էր Աստված, և բնական էր նրա առջև ծնկի գալը: Ուրեմն՝ քրիստոնյան արժեքավորվում է Քրիստոսով. եթե նա միայն անվամբ է քրիստոնյա և ոչ էությամբ, ապա նա անպիտան անոթ է, լքված տաճար, էլ ի՞նչ ասենք այլակրոնների և անհավատների մասին: Նոր ընտրյալ Հեսուին հրեաներն ասացին. «Ամեն ինչ, որ պատվիրում ես մեզ՝ կանենք, և կգնանք ա՛յն բոլոր տեղերը, ուր ուղարկում ես մեզ, ինչպես ամեն բանում լսում էինք Մովսեսին, այդպես կլսենք և քեզ, միայն թե մեր Տեր Աստվածը քեզ հետ լինի, ինչպես որ Մովսեսի հետ էր» (Հեսու 1:16-17):

Բնական է, եթե Տերը չլիներ Հեսուի հետ, նրա ո՛չ ուժը, ո՛չ խելքը չէին կարող պատճառ դառնալ, որ Իսրայելը նրան լսեր և հնազանդվեր, նա անարժեք մեկը կլիներ:

Նիկոդեմոսը, որը բոլորի կողմից վկայված բարեպաշտ մարդ էր, գիշերով եկավ Տիրոջ մոտ. այդ ժամանակ ամբողջ աշխարհը կռապաշտության մեջ էր, միայն հրեաներն էին համարվում Աստծո ժողովուրդ, իսկ Նիկոդեմոսն իր հավատքով և բարեպաշտությամբ ամենաակնառուներից մեկն էր, երբ նա լսեց Հիսուսի քարոզչությունը՝ ապշեց և ընկավ շփոթմունքի մեջ, քանզի իր ամբողջ հավատքն ու ջանքը փրկության համար արժեք չունեին. ըստ Տիրոջ խոսքի՝ «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին» (Մատթ. 9:13), և նա գիշերով եկավ Տիրոջ մոտ, որպեսզի հարցնի. «Լավ, ինձ էլ ի՞նչ է պետք անել, որ փրկվեմ», սակայն Տերը կանխեց նրա հարցը և միանգամից պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո Արքայությունը տեսնել» (Հովհ. 3:3). այսինքն՝ ոչ մի կրոնի հետևորդ փրկության հետ որևէ առնչություն ունենալ չի կարող, եթե նույնիսկ հավատում է ճշմարիտ Աստծուն, սակայն Տեր Հիսուս Քրիստոսով վերստին ծնունդ չունի:

«Իսկ երբ մեր Փրկիչ Աստծո քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ Իր ողորմության համաձայն, փրկեց մեզ վերստին ծննդյան ավազանի միջոցով և նորոգությամբ Սուրբ Հոգու, որ Աստված թափեց մեզ վրա առատությամբ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի նրա շնորհով արդարացված՝ ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով» (Տիտոս 3:4-7):

Քրիստոնեությունը եզակի կրոն է, երկրորդ նմանը չկա, որ փրկելու կարողություն ունենա և քրիստոնյաները սա պիտի գնահատեն ու հասկանան, թե ինչ մեծագույն բախտ է իրենց վիճակվել, և ջանան իրենց ընթացքն ավարտել և դատաստանի օրը խոտան չհամարվել, քանզի դրա վտանգը միշտ առկա է. «Մի օր հայր Մակարը քայլում էր անապատով և գետնի վրա մի մարդու գանգ տեսավ. իրեն թվաց, թե գանգը ձայն հանեց: Մակարը հարցրեց. «Ո՞վ ես դու»: «Ես այս կողմերում ապրող հեթանոս քրմերի առաջնորդն էի, - պատասխանեց գանգը: Երբ դու, Հայր Մակար, խղճալով դժոխքում տանջվողներին, Սուրբ Հոգով լցված աղոթում ես, մենք որոշ չափով թեթևություն ենք զգում»: «Ինչպիսի՞ թեթևություն եք զգում և ինչպիսի՞ն են ձեր տանջանքները, պատմիր ինձ», – հարցրեց Հայր Մակարը: «Ինչքան հեռու է գտնվում երկինքը երկրից, այնքան մեծ է կրակե լիճը, որի մեջ գտնվելով՝ մենք ոտքից գլուխ այրվում ենք: Բացի դրանից՝ չենք կարող տեսնել մեկս մյուսի դեմքը: Երբ դու աղոթում ես մեզ համար, մենք մի փոքր սկսում ենք տեսնել միմյանց, և դա մեր վիճակը մի փոքր թեթևացնում է»: Լսելով այս՝ սուրբն արտասվեց և ասաց. «Անիծվե՛ր այն օրը, երբ մարդը խախտեց Աստվածային օրենքները»: Եվ նորից հարցրեց նրան. «Կա՞ն, արդյոք, ձեր տանջանքներից ավելի դաժան տանջանքներ»: «Ներքևում՝ մեզանից ավելի խորքում, էլ ավելի սարսափելի են տանջանքները», - պատասխանեց գանգը: «Ովքե՞ր են գտնվում այդ տանջանքների մեջ», - հարցրեց Մակարը: «Մենք Աստծուն չէինք ճանաչում, պատասխանեց գանգը, – դրա

համար էլ որոշ չափով զգում ենք Նրա ողորմությունը մեր հանդեպ: Իսկ նրանք, ովքեր ճանաչել են Աստծուն, սակայն մոռացության մատնել Նրան, տանջվում են մեզանից ավելի ներքև, ավելի դաժան տանջանքներով»: Դրանից հետո սուրբ Մակարը թաղեց գանգը հողի մեջ և հեռացավ» (Հարանց վարք): Կարող է զարմանք առաջանալ, թե ինչ է, ոչ քրիստոնյա ժողովուրդը և քրիստոնյաների մի մասը կորստի պիտի մատնվեն, չէ որ դա համայն մարդկության մեծամասնությունն է, բայց չէ որ Աստված մարդասեր է, այո՛, Աստված մարդասեր է, իսկ ինչու պիտի այդպես լինի, մեր մարդկային սահմանափակ մտքի համար հասու չէ, մենք չպիտի սևեռվենք դրանց վրա, քանզի հոգեշահ չեն այդպիսի մտածումները: Նման հարցերը հանգիստ չէին տալիս նաև հայր Անտոնին, և Տերը նրա այդ մտածմունքները փարատելու համար ասաց. «Անտոն, հետևիր ինքդ քեզ և մի՛ քննիր Աստծո անքննելի գործերը, քանզի դա վնասակար է հոգուդ»: Ուրեմն՝ ավելի լավ է, որ մենք մեր և մեր մերձավորների փրկության մասին հոգանք, որպեսզի ոչ քրիստոնյաներից, այսինքն՝ Աստծուն չճանաչողներից ավելի վատ վիճակների մեջ չհայտնվենք. «Սուրբ Գիրքն ամեն բանից ավելի մեր փրկության մասին նվազ ապահովության նշաններ է ցույց տալիս, ուրեմն ամեն բանից ավելի սրա վրա մտածելու ու հոգ տանելու պատճառներ ունենք: Դժոխքն ու հավիտենականությունն այնպիսի վիճակ ունեն, որ եթե Աստված հրեշտակի կամ մի որևէ մարգարեի բերանով հայտնած լիներ, թե աշխարհի միլիարդավոր մարդկանց միջից միայն մի մարդ այնտեղ պիտի գնա ու դատապարտվի, դարձյալ մերզ համար մեծ հոգս ու ցավ անելու պատճառ է այս, թե միգուցե ես լինեմ հենց այդ մեկը: Բայց եթե ասված լիներ, թե այսքան բազմության միջից երկու կամ երեք մարդ պիտի դատապարտվեն, այս դատապարտելի թվի համեմատ, իհարկե, ավելի մեծ պիտի լիներ մեր ցավն ու հոգսը, բայց ինչ ասեմ երկու կամ երեք կամ չորս, հարյուր, հազար, տաս հազար, հարյուր հազար, միլիոն, թերևս մարդկանց բազմության կեսը կամ կեսից ավելին, ո՛չ, տակավին ավելի կարող ես առաջ գնալ: Այս ահռելի ճշմարտությունը հաստատեց մեր Տիրոջ անսուտ բերանը. «Կանչվածները շատ են, բայց ընտրվածները՝ քիչ» (Տեր Գաբրիել քահանա): Սակայն, որպեսզի չմտածենք և հուսահատվենք ընտրվածների սակավության համար, հիշենք, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը փրկվածների քանակի մասին. «Ես լսեցի, որ կնքվածների թիվը 144 հազար է. . . Եվ դրանից հետո տեսա մի մեծ բազմություն, որին թիվ չկար, բոլոր հեթանոսներից և բոլոր ազգերից, բոլոր լեզուներից և բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին աթոռի առաջ և Գառան առաջ՝ իրենց վրա սպիտակ զգեստներ գցած և արմավենու ճյուղեր իրենց ձեռքերին: Բարձր ձայնով աղաղակում էին և ասում. «Փրկությունը մեր Աստծունն է, որ նստում է աթոռի վրա, ինչպես և Գառանը» (Հայտ. 7:4, 9-10): Եվ այսպես, ընտրյալներն անթիվ անհամար են, սակայն շատ ավելի են լայն ճանապարհով գնացող կորստի մատնվողները, ուրեմը ջանանք փրկվել, այլ ոչ թե հուսահատվել ընտրյալների սակավության վախից: Իսկ ահա ոմանք կարծես իրենց փրկության հարցերը վերջնականապես լուծած համարելով, այժմ էլ մտածում են, թե ինչպես այլակրոններին մի ինչ-որ զարտուղի ճանապարհով երկինք մտցնեն, երբ Առաքյալը նույնիսկ լիովին վստահ չէր իր փրկության համար և ասում էր. «Ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հնազանդեցնում այն, որպեսզի գուցե ես ինքս խոտելի չլինեմ այն բանում, որ քարոզեցի ուրիշներին» (Ա Կորնթ. 9:27): Այլակրոններին առանց Քրիստոսի երկինք մտցնելու այդ մեծ ցանկությունը առաջանում է, այսօր աշխարհում լայն տարածում գտած «Նոր դար» դիվական շարժման մեջ գործող չար ոգու ներգործնեության հետևանքով, ինչի մասին իր աշխատությունում գրում է Պյոտր Ունրուն. «Անհնարին է, որ բոլորը երկրպագեն նեռին, եթե չայլակերպվի կրոնական դաշտը: «Նոր դար» շարժումը բոլոր կոնֆեսյաների ռեֆորմացման ծրագիր է մշակել: Քրիստոնյաները սպասում են Քրիստոսին, հրյաները սպասում են մեսիային, բուդդիստները սպասում են Բուդդայի հինգերորդ վերափոխմանը, մահմեդականները սպասում են Իման Մադուին, իսկ կրիշնոիդներն էլ Կրիշնային: Քրիստոնյաները, հրյաները, բուդիստները, մահմեդականները, կրիշնոիդները – սրանք բոլորը միևնույն հովվի տարբեր հոտերն են, որոնք պիտի միանան: Իսկ Հիսուսը չնայած, որ Աստծո Որդի է,

սակայն Նա Քրիստոսը չէ: Իրական Քրիստոսը դեռ պիտի գա: Իսկ որպեսզի այդ ժամը հասնի պետք է բոլորը միավորվեն դառնալով մի տիզերական եկեղեցի: Ահա այսպիսին է սրանց ուսմունքը: Վերջերս Բրազիլիայում հիցունականների մեծ հավաք էր: Հրավիրված էին նաև բուդիստներ, մահմեդականներ, հոգի կանչողներ և այլն, սրանք բոլորն էլ քարոզեցին, իսկ հետո աղոթեցին: Սա մեծ հոգևոր Բաբելոն է, մեծ պոռնիկ, որը պատրաստվում է հնազանդվել և խոնարվել նեռի առջև»:

Եվ այսպես, ի՞նչ ասենք հրեականության՝ այսինքն հուդայականության հետևորդների մասին, որ կատարյալ ատելությամբ են լցված քրիստոնեության հանդեպ, և հետևելով իրենց թալմուդին՝ թքում են խաչերի և քրիստոնյա հոգևորականների վրա. «Ով որ հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծո բարկությունը» (Հովհ. 3:36): Մի՞թե հրեաները իրենց անվավեր օրինապահությամբ պիտի փրկվեն: Ո՛չ, միևնույնն է, Մովսեսի օրենքի վրա հուսալով էլ սրանք պիտի դատապարտվեն. «Մի՛ կարծեք, որ Ես Հոր մոտ ձեզ պիտի ամբաստանեմ. կա մեկը, որ որպես ամբաստանող կկանգնի ձեր դեմ՝ Մովսե՛սը, որի վրա դուք հույս եք դրել. որովհետև, եթե դուք հավատայիք Մովսեսին, կհավատայիք այդ դեպքում ուրեմն և Ինձ, քանի որ նա հենց Իմ մասին է գրել. իսկ եթե նրա գրածներին չեք հավատում, Իմ խոսքերին ինչպե՞ս պիտի հավատաք» (Հովհ. 5:45): Եվ ուրեմն, հուդայականությանը հարող հրեաները պիտի դատապարտվեն ավելի ստորին ատյանում, նույնիսկ չհասնելով բարձր ատյանի, որտեղ Արդար Դատավորն է քննում քրիստոնյաներին՝ բաժանելով նրանց աջակողմյան ոչխարների և ձախակողմյան այծերի, չար ու բարի ծառաների, իմաստուն և հիմար կույսերի: Զարմանալի է, բայց ոմանք հակառակվում են Տիրոջ խոսքին՝ պնդելով, որ հրեականության հետևորդները այսօր էլ Աստծո ժողովուրդ են և պիտի փրկվեն անկախ այն բանից, որ Տերն ասաց նրանց. «Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել, թեև նա ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև նրա մեջ ճշմարտություն չկար: Երբ որ նա սուտ խոսի, ինքն իրենից է խոսում, քանի որ նա սուտ է և ստի հայր: Իսկ Ես, որ ճշմարտությունն եմ ասում, Ինձ չեք հավատում» (Հովհ. 8:44-45), իսկ Տիրոջը չհավատալը միանշանակ դատապարտություն է, ըստ Սուրբ Գրքի. «Ով Նրան հավատում է, չպիտի դատապարտվի, և ով Նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստծո միածին Որդու անվանը չհավատաց» (Հովհ. 3:18): Եկեղեցու հայրերն էլ միանշանակ այլ փրկության ճանապարհ չէին մատնանշում, բացի քրիստոնեությունից և ահա տիեզերական եկեղեցու 12 վարդապետներից սուրբ Հովհան Ոսկեբերանը և սուրբ Եփրեմ Ասորին ինչ են ասում այդ կրոնական ուղղության՝ հուդայիզմի հետևորդների մասին, իսկ եթե այս ամենը կարդալով, ոմանք նորից կմնան իրենց կարծիքին, ապա նրանք ընդդիմամարտներ են թե՛ Սուրբ Գրքին և թե՛ սուրբ հայրերին: «Նրանք սուրբ արմատի ճյուղերն էին, սակայն պոկվեցին, մենք չէինք պատկանում արմատին, սակայն (պատվաստվելով նրան) բերեցինք բարեպաշտության պտուղներ: Նրանք մանկուց կարդում էին մարգարեներին և խաչեցին Նրան, Ում մասին ավետում էին մարգարեները: Երբ հարկ էր պահել օրենքները, սրանք ոտնատակ արեցին այն, իսկ այժմ, երբ օրենքը դադարեց գործելուց, սրանք համառում են, որպեսզի պահեն այն: Ինչը կարող է ավելի խղճուկ լինել այն մարդկանցից, որոնք բարկացնում են Աստծուն, ոչ միայն օրենքը ոտնատակ անելու, այլև այն կատարելու համար:

Գիտեմ, որ ոմանք ինձ կհամարեն հանդուգն այն բանի համար, որ ես ասում եմ, թե չկա տարբերություն թատրոնի և սինագոգի միջև, իսկ ես նրանց եմ համարում հանդուգն, ովքեր մտածում են այլ կերպ: Եթե ես ինքս ինձանով եմ եկել այդ եզրակացության, մեղադրիր ինձ, իսկ եթե ասում եմ մարգարեների խոսքերը, ինքդ որոշում կայացրու: Գիտեմ, որ շատերը հարգում են հրեաների ներկայիս ծիսական արարողությունները, համարում են սուրբ, դրա համար էլ շտապում եմ արմատախիլ անել այդ կործանարար կարծիքը:

Ես ասացի, որ սինագոգը ավելին չէ թատրոնից և այդ բանի վերաբերյալ բերեմ օրինակ մարգարեներից, քանզի հրեաները մարգարեներից ավելի հավատ չեն ներշնչում: Եվ այսպես, ի՞նչ է ասում մարգարեն. «Պոռնիկ կնոջ կերպարանք առար և բոլորի մոտ կորցրիր քո ամոթը» (Երեմ. 3:3): Իսկ որտեղ պոռնիկը տրվում է պոռնկության, այդ վայրը համարվում է ոչ միայն անբարոյականության վայր և թատրոն, այլև ավազակների բնակատեղի և գազանների որջ: Ասվում է նաև. «Ես լքեցի Իմ տունը, թողեցի Իմ ժառանգությունը» (Երեմ. 12:7), իսկ եթե Աստված թողնում է, էլ ի՞նչ փրկության հույս կարող է լինել: Երբ Աստված լքում է, այնժամ այդ վայրը դառնում է դևերի բնակատեղի: Իհարկե, հրեաները կասեն, որ իրենք էլ են Աստծուն պաշտում: Սակայն դա սխալ է, քանզի հրեաներից ոչ ոք իրականում Աստծուն չի պաշտում: Իսկ ո՞վ է այդ ասում, Ինքը՝ Աստծո Որդին. «Ոչ Ինձ եք ճանաչում, ոչ էլ Իմ Հորը, եթե Ինձ ճանաչեիք, թերևս Իմ Հորն էլ կճանաչեիք» (Հովհ. 8:19): Ի՞նչ այլ հավաստի փաստարկ կարող եմ ես բերել սրանից առավել: Եվ այսպես, եթե չեն ճանաչում Հորը, խաչեցին Որդուն, մերժեցին Հոգու աջակցությունը, ապա ո՞վ չի կարող ասել, որ այդ վայրը (սինագոգը) դևերի բնակատեղի է: Այնտեղ չեն պաշտում Աստծուն, ոչ այնտեղ կռապաշտության վայր է: Այն ինչ քրիստոնյաներից ոմանք դա համարում են բարեպաշտության վայր: Եվ այսպես, մտածեք, թե ում հետ եք հարաբերվում, նրանց հետ, ովքեր աղաղակում էին. «Խաչը հանիր, խաչը հանիր» (Ղուկ. 23:21), Նրանց հետ, ովքեր ասում էին. «Դրա արյունը՝ մեր վրա և մեր որդիների վրա» (Մտթ. 27:25): Ես հատկապես այն բանի համար եմ ատում սինագոգը և խորշում նրանից, որ ունենալով մարգարեներին, հրեաները չեն հավատում նրանց, կարդալով Սուրբ Գիրքը, չեն ընդունում նրա վկայությունները: Սրանից ելնելով աղաչում եմ ձեզ փախչել և խուսափել դրանց հավաքույթից, հակառակ դեպքում մեծ չարիք կկրեն տկար եղբայրները և հրեաների համար հպարտանալու մեծ պատճառ կլինի: Ես ասում եմ քեզ, եթե մեկը տեսնի, որ դու գիտություն ունես և մտնում ես սինագոգ, ապա այդ տկար խղճմտանք ունեցողը ինքն էլ կսկսի հարգել այդ:

Պատժի է ենթակա նա, ով նման անկման է ենթարկվում և վիրավորում է նաև մյուսներին, հավասարապես ամուր կանգնողը պարգևատրվում է ոչ միայն իր համարձակության համար, այլ նաև արժանանում է հարգանքի այն բանի համար, որ նախանձախնդրություն է առաջացնում նաև մյուսների մեջ: Եվ այսպես, խուսափեք թե՛ այդ ժողովներից և թե՛ այն վայրերից, ուր հավաքվում են հրեաները: Ուրեմն ասա ինձ, արդյո՞ք անմաքուր չէ այն վայրը, ուր բնակվում են դևերը, եթե նույնիսկ այնտեղ կուռք չի կանգնեցված: Դա մի տեղ է, որտեղ հավաքվում են քրիստոսասպանները, որտեղ հալածում են խաչը, ուր հայհոյում են Աստծուն, չեն ճանաչում Հորը, անվանարկում են Որդուն, մերժում են Հոգու շնորհը, որտեղ գտնվում են նաև դևերը, միթե նման վայրը կործանարար չէ: Մի խոսքով, եթե դու հարգում ես ամեն հրեականը, ապա ի՞նչ ընդհանուր բան ունես մեզ հետ: Եթե հրեականը կարևոր է և արժան հարգանքի, նշանակում է, որ մերը սուտ է, իսկ եթե մերն է ճշմարիտ և նա իրականում էլ ճշմարիտ է, ապա հրեականը լի է խաբեբայությամբ: Ժամանակն է ցույց տալու, որ այնտեղ՝ սինագոգում բնակվում են դևերը և ոչ միայն այդտեղ, այլև հենց հրեաների հոգում. (Ղուկ. 11: 24-26): Ասա ինձ, եթե մեկը սպաներ քո որդուն, մի՞թե դու կարող էիր նայել նման մարդուն և լսել նրա զրույցները: Չէի՞ր խուսափի արդյոք նրանից, ինչպես չար դևից, ինչպես սատանայից: Հրեաները սպանեցին քո Տիրոջ Որդուն, իսկ դու համարձակվում ես գտնվել նրանց հետ միևնույն վայրում: Հիսուս Քրիստոսը պատվեց քեզ այնպես, որ դարձրեց Իրեն եղբայր և ժառանգակից, իսկ դու այդպես անարգո՞ւմ ես Նրան, որ հարգում ես Նրա սպանողներին և խաչը հանողներին և հաճոյանում ես նրանց» (Սբ. Հովհան Ոսկեբերան):

«Հրեաները ոչ միայն մերժեցին Հին և Նոր Ուխտերը, այլև վիրավորեցին Հորը, ատելությամբ սպանեցին Որդուն: Մարգարեն կոչ է անում Իսրայելի ամբողջ տանը փառավորել Նրան, իսկ նրանք պատրաստվում են սպանության, շտապում են կատարել չարագործություն: «Երկինքը պատմում է Նրա փառքը» (Սղմ. 18:2), սակայն սինագոգը համաձայն չէ այդ բանին, երկիրը հիանում է Նրա էջքից, բայց

հրեաները ոչ մի ուշադրություն չեն դարձնում: Բոլոր խորհուրդները ի կատար ածվեցին, բայց հրեան պնդում է, որ դրանք դեռ չեն իրականացել, ինչը պիտի կատարվեր, այն կատարվեց, իսկ նա մերժում է՝ իբր այդ նույնիսկ դեռ չի էլ սկսվել: Քրիստոսին վերագրած բոլոր մարգարեությունները մեր Փրկիչը ի կատար ածեց, իսկ համառ և խստասիրտ ժողովուրդը երդվում և պնդում է հակառակը: Հեշտ է սովորացնել դևին, քան թե դարձի բերել մոլորության որդիներին: Դևերը խոստովանում և ասում էին «Դու ես Աստծո Որդին» (Մարկ. 3: 11), իսկ դրան հակառակ այս անհավատները համառորեն պնդում են, որ Նա Աստծո Որդին չէ: Նրանց մեջ բնակվող սատանան խոստովանում է, իսկ նարնք ամուր կանգնած են իրենց համառության մեջ: Ավելի հեշտ ծառը կարող է աճել լերկ քարի վրա, քան այս ուրացողները կընդունեն ճշմարտությունը» (Սբ. Եփրեմ Ասորի):

Իսկ ինչ ասենք մահմեդականների մասին, որ միլիոնավոր քրիստոնյաների են սրի քաշել, եկեղեցիների վրայից խաչերը հանել և իրանց կիսալուսինները տեղադրել, թեև սրանք Հիսուսին որպես մարգարե են ընդունում, ի տարբերություն հրեաների, միևնույնն է, դա նրանց դատապարտությունից չի ազատում, քանզի Հիսուսն Աստված է և Աստծո Որդի և Տերը մարգարեների, իսկ երբ թագավորին սովորական պալատականի պատիվ են տալիս, դա անարգանք է թագավորի հանդեպ և ենթակա պատժի, այլ ոչ գովասանքի, եթե նույնիսկ ավելի չարերը ոչ միայն պալատականի պատիվ էլ չեն տալիս, այլ իրենց պիղծ բերաններով հայհոյում և թքում են թագավորի կողմ. «Եթե արդարը մի կերպ է փրկվելու, ապա ամբարիշտը կամ մեղավորը էլ ո՞ւր պիտի մնա» (Ա Պետրոս 4:18-19): Արդարը Քրիստոսով արդարացած քրիստոնյաներն են, ամբարիշտը՝ հերձվածողները, այլակրոնները և աղանդավորները, իսկ մեղավորը՝ անհավատ մարդիկ: Եվ եթե քրիստոնյաները մի կերպ պիտի փրկվեն, էլ ինչ ասենք այլոց մասին և ուրեմն ամեն բան թողնելով մի կողմ, ջանանք մի կերպ փրկվել: Եվ այսպես, նորից շեշտենք այն, որ որևէ ազգային պատկանելություն խոչընդոտ չէ փրկության համար, լինի դա հրեա, թուրք թե հայ, որոշիչ դեր այստեղ խաղում է միայն կրոնը, եթե հրեան ընդունի քրիստոնեություն, նա կկանգնի փրկության ճանապարհի վրա, իսկ եթե հայն ընդունի հրեականություն, նա կկանգնի կորստյան ուղու վրա:

Այս մեր ժամանակները չար են, շնորհի առատություն չկա, դրա համար էլ այսօրվա քրիստոնյան նման է մի պանդուխտի, ով ճանապարհ է ընկել և օտար բնակավայրերի միջով անցնելով ջանում է հասնել իր հայրենիք՝ Երկնային Արքայություն. «Եթե հայր եք կոչում Նրան, Ով առանց աչառության դատում է յուրաքանչյուրին ըստ գործերի, ապա երկյուղով ապրեցեք այս աշխարհում ձեր պանդխտության ժամանակը» (Ա Պետ. 2:17-18): Սակայն այդ օտարության մեջ նա գնում է անձրևի, ձյան, քամու ներքո, անոթի է, անմխիթար հագուստներ է կրում, իսկ օրը տարաժամ է, մութ, այդ երկրի բնակիչների կողմից էլ արհամարհված է և հալածված. «Աղվեսները որջ ունեն, երկնքի թռչունները՝ բույն. բայց մարդու Որդին մի տեղ չունի, որ իր գլուխը դնի» (Մատթ. 8:20): Քրիստոնյան այս պարագայում իր հոգու մեջ պիտի փնտրի ապաստարան, ջերմություն, լուսավորություն, սնունդ, ինչպես որ գրված է. «Աստծո Արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև, ահա՛, Աստծո Արքայությունը ներսում՝ ձեր մեջ է» (Ղուկ. 17:20-21): Առաքյալն ասում էր իր ժամանակվա քրիստոնյաներին. «Չգիտե՞ք, որ Աստծո տաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. 3:16). շնորհի նման առատությաբ համեմատաբար հեշտ է անցնել այդ պանդխտության երկրով, իսկ մեր ժամանակների քրիստոնյան պիտի մխիթարվի ընդամենը իր մեջ եղող, «առկայծող պատրույգի» լույսով, քանզի մեր ժամանակների համար ավելին տրված չէ. ով ձգտում է ավելիին՝ հեշտությամբ պատրվում է և պատրանքի հրով հանգցնում շնորհի առկայծող պատրույգն էլ: Իսկ եթե մենք սևեռվենք միայն առկայծող պատրույգը պահպանելու վրա՝ դրանով իսկ կարող ենք անխափան անցնել պանդխտության երկրով, քանզի գրված է. «Առկայծող պատրույգը չպիտի հանգցնի, մինչև որ արդարությունը հաղթանակի հասցնի» (Մատթ. 12:20): Վերջին այս օրերին առավել սաստկացող հոգևոր մութն ու ցուրտը ստիպում են

քրիստոնյաներին՝ նայել ոչ թե առաջ, այլ՝ այս ու այն կողմ. «Մի՛ խոտորվիր ո՛չ դեպի աջ, ո՛չ էլ՝ ձախ» (Առակ 4:27): Իսկ մարդկային ցեղի թշնամին օգտվելով այդ վիճակից՝ նրանց առաջարկում է նեղ ճանապարհի եզրին գտնվող «լուսավոր» տներից մեկն ու մեկը, որտեղ լույսը վառած, տաքության մեջ նստած մարդիկ համեղ կերակուր են ճաշակում: Այդ նրանք են, ովքեր այս շնորհի սակավության շրջանում ապրում են մի այնպիսի վիճակ, ինչը կարծես շնորհալի է՝ տեսիլքներ, երազներ, մարգարեություններ և այլ արտառոց բաներ, որոնք սրանց կյանքը լցնում են ոչ իրական, այլ՝ պատրանքային ուրախությամբ, հույսով ու հավատքով, սակայն ինչ էլ անեն, միևնույնն է՝ սրանց ընթացքը կասեցված է չարի կողմից, և նրանք նեղ ճանապարհով էլ առաջ չեն գնում, այլ նստել-մնացել են. «Ապշահար եղաք, թմրեցիք, է՛լ ավելի թմրեցիք, հարբեցիք, բայց ո՛չ գինուց և ո՛չ էլ օղուց» (Եսայի 29:9), և ահա նրանց ո՛չ աղոթքը, և ո՛չ մի այլ բարեպաշտական գործ արժեք չունի, որովհետև աղոթքը, ընթերցանությունը, եկեղեցի հաճախելը պիտի ծառայեն միայն նեղ ճանապարհով առաջ գնալուն: Եվ ուրեմն չպետք է գայթակղվել, այլ ջանալ «կատարել ընթացքը» (Գործք 20:24):

Երբ քրիստոնյան ընկնում է պատրանքի մեջ և անձի զգացմունքներն ու դիվական ներշնչումները շփոթում է շնորհից առաջացած ճշմարիտ հոգևոր զգացումների հետ, նա այլևս չի կարող հասնել ճշմարտության: Քանզի հաստատ համոզված է, որ սիրում է իր Տեր Աստծուն և մերձավորին, Աստծո ծառա է հանդիսանում և այլն, ու շատ դժվար կլինի նրան հակառակը համոզել, քանզի վերջին այս օրերին, ինչպես ասվեց, նեղ ճանապարհով գնացողները չունեն շնորհից բխած հոգևոր բարձր վիճակ, իսկ պատրանքի մեջ գտնվողը լի է կեղծ շնորհների առատությամբ: Սակայն պարզ է, որ փոքրիկ ադամանդն անհամեմատ առավել է փշրված ապակու կույտից: Փոքրիկ ադամանդը վերջին օրերում շնորհի սակավ ներգործությունն է՝ առկայծող պատրույգը, իսկ կոտրած ապակու կույտը պատրանքից առաջացած կեղծ շնորհների առատությունը, ինչը բացարձակապես ոչ մի բանի պիտանի չէ, այլ կարող է միայն վնասել:

Եվ ինչպե՞ս մարդը կարող է ճշմարիտ ադամանդ ձեռք բերելու համար ջանք թափել, երբ տեսնում է, որ միայն բազում ջանքերն ու տառապանքները կարող են այդ մի փոքրիկ ադամանդին արժանացնել, իսկ իր գտած դյուրին ուղին իրեն «ադամանդի» կույտեր է տվել, ինչը, ինչպես ասացինք, իրականում աղբ է, որը նրա աչքին ուղղակի ադամանդ է երևում: Մովսեսից 40 տարի պահանջվեց կեղծ ադամանդներից՝ կոտրված ապակու կույտերից ձերբազատվելու համար, որպեսզի արժանանար ճշմարիտին:

Քանի որ առկայծող պատրույգը չի կարող առաքելական շրջանի հրի պես ջերմացնել և լուսավորել մեզ՝ այս սառն ու խավար օրերում ապրողներիս, մնում է մխիթարվել միայն առկայծող պատրույգով փրկվողներին խոստացված երկնային վարձով, ինչի մասին վերը նշվեց. սա մեծ բախտավորություն է, սակայն դրա համար էլ հարկավոր է մեծ համբերություն. «Եվ ձեր համբերությամբ պիտի շահեք ձեր հոգիները» (Ղուկ. 21:19):

Ժամանակները չար են, պետք է առավել զգոն լինել, որպեսզի չդառնալ խամաճիկ չարի ճիրաններում և համարվել թշնամի Աստծուն, բայց երևակայել Տիրոջը բարեկամ և միայն դատաստանի ահավոր պահին, երբ ամեն ինչ արդեն անբեկանելի է, ճանաչել ինքդ քեզ և Տիրոջից լսել սարսափելի խոսքերը. «Ինչո՞ւ Ինձ հալածեցիք» (Գործ.9.5), իսկ հրեշտակներն սպառնագին ասեն. «Դու ես այդ մարդը, որ արել է այդ բանը» (Բ Թագ. 12:7) և այն ժամանակ կտիրի աննկարագրելի սարսափ, ահավոր հուսահատություն, ողբ, լաց ու կոծ, երբ թշնամական ու սպառնագին հայցքի արժանանաս այն կողմից, որտեղից ակնկալում էիր տեսնել փրկություն, բարյացկամություն, վարձք, հավիտենական փառք ու պատիվ, իսկ հիմա հողմից հալածվող տերևի պես դողալով պիտի ակնկալես միայն մերժում, լքում, արհամարհանք, արտաքին խավար, լաց ու ատամների կրճտոց: Եվ այս ամենը նրա համար, որ գտնվելով մայր Եկեղեցու ծոցում, արհամարհեցիր նրա վարդապետությունն ու ավանդությունները և մնալով Եկեղեցում՝ միտքդ սևեռեցիր օտար, խորթ, կեղծ քրիստոնեանման ուսմունքների վրա և ուրեմն հարկ է

սթափվել, ազատվել սատանայական ցանցից, իսկ եթե դու պատճառ ես դարձել նաև, որպեսզի այդ ուսմունքը քո միջոցով տարածվի Եկեղեցում՝ վարակելով շատերին, ապա պիտի պատասխան տաս ո՛չ միայն քո, այլև նրանց բոլորի համար, քանզի այդքան մարդ, որ արդեն իսկ կանգնած էին փրկության ճանապարհի վրա, քո պատճառով ընկան այդ չար որոգայթի մեջ և եթե զղջալով ետ դառնաս այդ ունայնության ուղուց, դա դեռ քիչ է. պետք է ջանաս նաև այն բոլոր թշվառներիրն էլ ետ բերես այդ կորստյան ճանապարհից դեպի փրկության՝ խաչի նեղ ճանապարհ: «Ինչո՞ւ որս դարձար մահվան ծուղակին՝ թողած արահետն ամենավստահ. ինչպե՞ս բռնվեցիր պատրանքի կարթով հաղորդ մարմնին կենդանարարի: Սակայն դու դարձյալ հուսալով Նրան՝ պաղատի Իրեն» (Նարեկ, բան ԽԶ):

Եվ այսպես, հուսանք, որ այս գիրքն օգտակար կլինի, որպեսզի շատերը, տեսնելով իրենց վիճակը, ջանան շտկվել, քանզի մենք՝ քրիստոնյաներս, պարտավոր ենք օգնել միմյանց:

Չէինք ցանկանա, որ որևէ մեկը նեղվեր այս գիրքն ընթերցելիս, որովհետև այն գրվել է եղբայրսիրությունից ելնելով, ուրախ կլինեինք, որ եթե մեկը տրտմեր՝ տրտմեր միայն ապաշխարության համար. «Եթե ձեզ տխրեցրի էլ այդ թղթով, չեմ զղջում դրա համար, թեպետև զղջացել էի. որովհետև տեսնում եմ, որ այդ թուղթը առժամանակ տխրեցրել է ձեզ: Արդ, ուրախ եմ. ո՛չ որովհետև տրտմեցիք, այլ՝ որովհետև ապաշխարության համար տրտմեցիք, քանի որ ըստ Աստծո ուզածի՛ տրտմեցիք, այնպես որ մեզնից ոչ մի բանով վնաս չկրեցիք. որովհետև տրտմությունը, ըստ Աստծո ուզածի, ապաշխարություն է առաջ բերում փրկության համար» (Բ Կորնթ. 7:8-10): Այսպիսո՛վ, ջանանք այս հոգևոր գիշերվա թմբիրից թոթափվել, քանզի «Հիմա ճիշտ ժամն է, որ մենք քնից զարթնենք» (Հռոմ. 13:11) և մեր առկայծող պատրույգներն առած՝ աշխատենք անխափան անցնել այս պանդխտության երկրով, որպեսզի արժանանանք արդարների հավիտենական հանգրվանին.

«Ի մէջ գիշերի յարուցեալ՝ խոստովանիմք զՔեզ Տ՛էր,
փառաւորելով զանուն Քո սուրբ, եւ խնդրեմք ի Քէն հեռացո՛
ի մէնջ զխաւարային խորհուրդս՝ ի պատրանաց բանսարկուին
պահելով շնորհիւ ողորմութեան Քո: Որպէս զի լուսավորեալ
մտօք՝ միշտ զհաճոյս Քո արասցուք, եւ հանդերձեալ բարեացդ
հասցուք ընդ ամենայն սուրբս Քո: Շնորհօք եւ մարդասիրութեամբ
Տեառնըդ մերոյ եւ Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք
իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Աշոտ դպիր Արևշատյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ՝ ԻԳՆԱՏԻ ԲՐՅԱՆՉԱՆԻՆՈՎ (Մաս Առաջին)……
ՀՈԳԵՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՎՈՐ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ……
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ ԿԱՐԴԱԼԻՍ ՊԵՏՔ Է ԶԳՈՒՅՇ ԼԻՆԵԼ……
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԸ ՄԱՐԴՈՒ ԸՆԿԱԾ ԲՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ……
ԵՐԱՁԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ……
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ……...
ՃԳՆԱՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ……
ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ (Մաս Երկրորդ)……...
ՃՇՄԱՐԻՏ և ՍՈՒՏ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ……
ՍԵՓԱԿԱՆ ՄԵՂՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ……..
ՄԵՐՁԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ……
ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ……...
ԱՇԽԱՐՀԻ ՏԻՐԱԿԱԼԻ ՑԱՆՑԵՐԸ……
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ՝ Ծեր Սիլուան Աթոսացի……....
ՊԱՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ՝ Միանձնուհիների Վանահայր Աբրահամ……..
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ՊԱՏՐԱՆՔ Աշոտ դպիր Արևշատյան……

Իգնատի Բրյանչանինով. «Պատրանքի մասին»
Սիլուան Աթոսացի. «Խորհուրդների և պատրանքի մասին»
Աբրահամ Վանահայր. «Պատրանքի մասին»
Ռուսերենից թարգմանեց՝ Գայանե Թերզյանը

Աշոտ դպիր Արևշատյան. «Բարեպաշտություն թե՞ պատրանք»
Համակարգչային շարվածքը՝ Գայանե Թերզյանի
Խմբագիր՝ Աշոտ դպիր Արևշատյան
Սրբագրիչ՝ Կարինե Տոնոյան